ղափարը ծնուել էր Սուրբ Կիրակոս եկեղեցու բացմանը Դիարբեքիրի հայերի հոծ մասնակցութեան շնորհիւ: Շնորհանդէսին ելոյթ է ունեցել նաեւ գիրքը կազմող Ֆերդա Բալանջարը, ով նշել է, թէ այն անձինք, որոնց պատմութիւններն ընդգրկուել են գրքում՝ Դիարբեքիրի եւ մերձակայ շրջանների իսլամացած հայ ընտանիքների զաւակներ են, ովքեր մեծացել են որպէս մահմեդական եւ միայն յետագայում են տեղեկացել իրենց հայկական ծագման մասին[18]:

2013ին հիմնադրամը թուրքերէն թարգմանեց ու հրատարակեց նաեւ *Kiliç Artiklari. Türkiye'nin Gizli ve Müslümanlaşmiş Ermenileri* (Սրից փրկուածները. Թուրքիայի ծպտեալ եւ իսլամացուած հայերը) գիրքը, որ պատրաստել էին լրագրող ու ընկերաբան Լորենս Ռիթէրը եւ լուսանկարիչ Մաքս Սվասլիեանը[19]: Գրքի հեղինակները Հայոց Ցեղասպանութեան ժամանակ կոտորածից մի կերպ փրկուած հայերի սերունդներին ուսումնասիրելու նպատակով բազմաթիւ հանդիպումներ էին ունեցել Արեւմտեան Հայաստանում, Ստամբուլում եւ Եւրոպայի որոշ երկրներում: Նոյն տարում Տինք Հիմնադրամը տպագրեց նաեւ *Diyarbakir Tebliğleri: Diyarbakir ve Çevresi Toplumsal ve Ekonomik Tarihi Konferansi* («Դիարբեքիրեան ծանուցումներ. Դիարբեքիրի եւ շրջակայքի հասարակական եւ տնտեսական պատմութեանը նուիրուած գիտաժողովի նիւթերը»[20]) եւ *Mardin Tebliğleri, Mardin ve Çevresi Toplumsal ve Ekonomik Tarihi Konferansi* (Մարդինեան ծանուցումներ. Մարդինի եւ շրջակայքի հասարակական եւ տնտեսական պատմութեանը նուիրուած գիտաժողովի նիւթերը»[21]) վերնագրերով յօդուածների ժողովածուները, որոնք բազմակողմանիօրէն ներկայացնում են տուեալ բնակավայրերը: Երկու ժողովածուներում էլ ընդգրկուել էին այդ թեմաներով նոյն հիմնադրամի կողմից կազմակերպուած գիտաժողովներին մասնակից թուրք եւ արտասահմանցի հետազօտողների զեկուցումները:

2014ին հիմնադրամը, շարունակելով «Անատոլիայի Հայերի Բանաւոր Պատմութիւն» նախագիծը, հրատարակեց *Sessizlğin sesi-III. Ankarali Ermeniler Konuşuyor* (Լռութեան ձայնը-III. Խօսում են անկարացի հայերը)[22] գիրքը, որի հեղինակները հարցազրոյցներ էին ունեցել Թուրքիայի մայրաքաղաքում ապրող 10 հայերի հետ: 2015ին նոյն նախագծի շրջանակներում տպագրուեց նաեւ *Sessizlğin sesi-IV. İzmitli Ermeniler Konuşuyor* (Լռութեան ձայնը-IV: Խօսում են իզմիթցի հայերը) ուսումնասիրութիւնը[23], որը ներկայացնում է 1915ին Օսմանեան Կայսրութեան կազմում գտնուած Իզմիթ (Նիկոմիդիա) սանջակի (մարզի) Իզմիթ, Պահչեճիկ (Պարտիզակ), Ատափազար, Քարամիւրսէլ, Կէյվէ բնակավայրերում ապրած հայերի սերունդներին: Գրքում ընդգրկուած են Բալանջարի ինը հարցազրոյցները, ֆրանսահայ պատմաբան Ռեմոն Գէորգեանի «Հայոց Ցեղասպանութիւնը» գրքի «Իզմիթի Սանջակում Կատարուած Տեղահանութիւնը» բաժինը, ինչպէս նաեւ Արաս Էրկիւնէշի հեղինակած վերջաբանը: Այս ուսումնասիրութ-

եան շրջանակներում արուել է 30 հարցազրոյց: Հարցազրոյց տուած անձանցից 5 հոգու ընտանիքները ծագումով Պարտիզակից են, իսկ միւս 4 հոգունը՝ Քարամիւրսէլից, Արմաշից, Ադափազարից եւ Իզմիթից: 2015ին հիմնադրամը լոյս ընծայեց նաեւ դեռեւս 2013ին Ստամբուլում իր կողմից կազմակերպուած՝ իսլամացուած հայութեան թեմայով գիտաժողովի զեկուցման նիւթերը[24]:

Հիմնադրամն ուսումնասիրութիւններ է կատարում նաեւ բռնագրաւուած հայկական գոյքի թեմայով, որի շրջանակներում 2016ին հրատարակուեց Կայսերիում (Կեսարիա) հայկական ու յունական լքեալ գոյքին նուիրուած մի գիրք: Այն կրում էր *Ermeni ve Rum Kültür Varliklariyla Kayseri* (-Հայկական եւ յունական մշակութային ժառանգութեամբ Կայսերին)[25] վերնագիրը: Շարունակելով Կեսարիայում հայկականութեան թեման՝ 2018ին դարձեալ «Լռութեան Ձայնը» կամ «Անատոլիայի Հայերի Բանաւոր Պատմութիւն» նախագծի շրջանակներում Տինք Հիմնադրամը տպագրեց *Sessizliğin Sesi-V. Kayserili Ermeniler Konuşuyor* (Լռութեան ձայնը-V. Խօսում են կեսարացի հայերը) ուսումնասիրութիւնը[26]: Հիմնադրամի կայքէջում հրապարակուած տեղեկութեան համաձայն՝ գրքում ներկայացուած են 28 հոգու հետ կատարուած հարցազրոյցներ: Բացի այդ՝ գրքում տեղ են գտել նաեւ Հրանտ Տինք Հիմնադրամի պատմութեան ծրագրին մասնակցած պատմաբան Մեհմէդ Փոլաթէլի առաջաբանը եւ գիրքը կազմողի՝ դոկտոր Իճլալ Այշէ Քիւչիւքքըրջայի վերջաբանը: Ըստ գրքի՝ Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ եւս Կեսարիայում դեռ շարունակել են հայեր ապրել: Այսպէս՝ 1927ի մարդահամարի տուեալներով՝ այստեղ պաշտօնապէս գրանցուած են եղել 1978 հայեր: Այդ թիւը 1932ին իջել է 1600ի, 1960ին՝ 800ի, իսկ ներկայում այստեղ գրեթէ այլեւս չկան հայեր: Յատկապէս 1950ականներին Ստամբուլ արտագաղթած կեսարացի հայերի մեծ մասը հաստատուել է Կ.Պոլսի Սամաթիա թաղամասում[27]:

ԻՍԼԱՄԱՑՈՒԱԾ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԸ՝ ԹՈՒՐՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Ինչպէս նկատելի է նաեւ Հրանտ Տինք Հիմնադրամի գիտական գործունէութիւնից, տասնամեակում թուրք ուսումնասիրողների ուշադրութեան կենտրոնում շարունակել են գտնուել իսլամացուած եւ ծպտեալ հայերին առնչուող հարցեր: Յիշեցնենք, որ նախկինում *թապու* եղած այս թեման սկսեց աւելի աշխուժօրէն քննարկուել յատկապէս Տինքի մահից յետոյ, երբ նրա թաղման արարողութեան օրը հազարաւոր մարդիկ դուրս եկան Ստամբուլի փողոցներ եւ յայտարարեցին իրենց ծագման մասին: Ինքը՝ Տինքը եւս էական դեր էր խաղացել այս *տաբուն* կոտրելու հարցում՝ *Ակօս*ի էջերում հրատարակելով նման հայերի պատմութիւններ: Այդ հայերի շարքում առանձնայատուկ տեղ են գրաւում իսլամացուած հայ կանայք, որոնք հարկադրուած են եղել ամուսնանալ թուրքերի կամ քրդերի հետ:

2012ին Թուրքիայում Համիթ Փեքէրի հեղինակութեամբ տպագրուեց նման հայ կանանցից մէկին նուիրուած մի գեղարուեստական վէպ, որը կրում էր *Ermeni Kizi Kürt Anasi* (Հայու աղջիկ, քրդի մայր) վերնագիրը[28]: Ն-մանատիպ թեմայով է գրուած Բիննազ Օնէրի՝ 2012ին լոյս տեսած *Geride Kalanlar* (Հետեւում մնացորդները) վէպը[29], որում ներկայացուած է Ուրֆայի Քայալըք գիւղի հայութիւնը: Այստեղի հայերին թուրքական իշխանութիւն-ները մահուան երթի են հանում 1915 Օգոստոսին: Հայ որոշ ընտանիքներ ստիպուած թողնում են իրենց 16 աղջիկներին: Յետագայում այդ մանկա-հասակ աղջիկներին ստիպում են ամուսնանալ իրենցից տարիքով շատ մեծ տղամարդկանց հետ եւ բռնի իսլամացնում նրանց:

Տասնամեակում այդ թեմաներով Թուրքիայում տպագրուել են նաեւ այնպիսի հեղինակների գործեր, ովքեր ներկայացրել են իրենց իսկ մայ-րերի կամ մեծ մայրերի պատմութիւնները: Այդ հեղինակներից մէկն էր - Թուրքիայում Ժամանակակից Լրագրողների Միութեան նախկին նախա-գահ Ահմէթ Աբաքայը, ում հեղինակութեամբ *Hoşana'nin Son Sözü* (Հոշանա-յի վերջին խօսքը)[30] վերնագրով 2013ին լոյս տեսած գրքում արտացոլուած են 82 տարեկան հասակում մահացած իր հայ մօր ապրումները, ով մահ-ուանից միայն րոպէներ առաջ է համարձակուել ընտանիքի առաջ բացել իր ծագման գաղտնիքը: Իդէպ՝ այս գրքի հրատարակումից յետոյ Աբաքա-յը ենթարկուել է ազգականների խիստ քննադատութեանը, ովքեր նրան նախատել են նման գիրք լոյս ընծայելու համար[31]:

Որոշ թուրք գրողներ անդրադարձել են նաեւ իսլամացուած հայ մա-նուկների ճակատագրին: Այսպէս՝ 2014ին Թուրքիայում հրատարակուել է ծագումով սասունցի Ադնան Արսլանի *Ceviz Ağaci* (Ընկուզենին)[32] վերնագ-րով վէպը, որում ներկայացւում է արեւմտահայութեան, յատկապէս հայ կանանց ու երեխաների ապրած դրաման: Թուրքական լրատուամիջոցնե-րի հետ զրոյցում իր վէպի մասին մանրամասներ ներկայացրած հեղինա-կը յայտնել է, թէ իրեն ոգեշնչել էր 96 տարեկան հայ Սուլէյմանը, որն իր հետ բնակուել էր նոյն հայկական գիւղում: Պաթմանի Սասուն գաւառին ենթակայ Թեքելէր գիւղում ծնուած Արսլանը նաեւ նշել էր, որ սոյն գրքի միջոցով ցանկանում էր ապագայ սերունդներին փոխանցել հայերի բնա-կավայրերի, նրանց կենցաղի եւ ապրած մեծ դրամայի մասին տեղեկութ-իւններ: Հեղինակը նաեւ ընդգծել էր, թէ վէպը գրել էր՝ հիմնուելով իրա-կան փաստերի եւ իրադարձութիւնների վրայ[33]:

Նոյն՝ 2014ին Թուրքիայում հրատարակուել են նաեւ թուրք հեղինակ Ա-լի Բայրամի *Arsine. Tehcirde Bir Ermeni Kizi* (Արսինէ: Աքսորի մէջ մի հայ աղ-ջիկ)[34] վէպը, որում եւս ներկայացուած է հարկադրաբար կրօնափոխ եղած մի հայ կնոջ պատմութիւնը: Կարճ ժամանակ անց սոյն վէպը յայտնուեց ամենաընթերցուած գրքերի հորիզոնականում եւ անգամ Նորէլեան Մրցանակի ներկայացուեց: Գրքում դէպքերը զարգանում են 1915ին Սամ-սունի Քաւաք գաւառում, որտեղ Ռաֆայէլ Թէյէլ ընտանիքը ստիպուած է

լինում բռնել գաղթի ճամփան: Վէպը պատմում է ընտանիքի դստեր՝ Արսինէի դժուարին կեանքի մասին:

Նոյն տարուայ մէջ հրատարակուել է նաեւ հայկական ծագում ունեցող Աբդուլլահ Գազէլի *Akbez. Son Kale* (Աքբէզ. վերջին բերդը)[35] գիրքը, որում ներկայացուում է հեղինակի ծննդավայր Հաթայ (Ալեքսանդրէթ) նահանգի Աքբէզ գիւղից հայութեան տեղահանութեան թեման: Հեղինակն ուսումնասիրել ու ներկայացրել է նաեւ Հայոց Ցեղասպանութիւնից առաջ՝ 1900ականների սկզբին կատարուած դէպքերը, զրուցել գիւղի այժմու բնակիչների հետ: Գազէլն իր հայ ազգականների հետքերով գնալիս հասել է մինչեւ Պէյրութ եւ գրքում ներկայացրել նաեւ իր հանդիպումը նրանց հետ:

2015ին Թուրքիայում լոյս տեսաւ Օմէր Աքընի *Tosbit Dağı* (Թոսբիթ լեռը)[36] վէպը, որը նուիրուած է այժմեան Թուրքիայի Քոճաէլի նահանգում գտնուող Արմաշի (ներկայիս՝ Աքմեշէ) հայերին: Վէպում հեղինակն անդրադառնում է Արմաշում ծնուած ու մեծացած հայերի պատմութեանն ու մշակութային ժառանգութեանը[37]:

Թուրքիայում իսլամացուած հայութեան թեմային առնչուող գրքեր հրատարակուել են նաեւ 2016ին: Այդ տարի երկրում գործող Իսմայիլ Բեշիքչի Հիմնադրամը լոյս է ընծայել Միւսլիւմ Իւզիւլմէզի *Ergani Tarihinin Sakli Sayfasi Ermeniler* (Էրգանիի պատմութեան թաքնուած էջը՝ հայեր)[38] վերնագրով ուսումնասիրութիւնը: Արմատներով էրգանիցի պատմաբանը աշխատութեան մէջ անդրադառնում է Հայոց Ցեղասպանութիւնից առաջ եւ յետոյ Դիարբեքիրի Էրգանի գաւառի եւ շրջակայ բնակավայրերի հայերի կեանքին:

2017ին եւս թուրքական գեղարուեստական գրականութեան մէջ պահպանուել է հետաքրքրութիւնը իսլամացուած հայ կանանց ու երեխաների թեմայի նկատմամբ: Այդ տարի Ստամբուլում տպագրուել է հայկական ծագում ունեցող լրագրող Նուէր Լազօղլուի *Kalbim Turkuaz* (Սրտիս Փիրուզը)[39] վէպը, որը նուիրուած է Հայոց Ցեղասպանութեան ժամանակ թուրք աղաներից մէկի կողմից որդեգրուած մի հայ աղջկայ՝ Փիրուզի պատմութեանը: Իրական դէպքերի հիման վրայ ստեղծուած գրքի գլխաւոր հերոսուհին Մեծ Եղեռնի տարիներին Խարբերդ էր բերուել Կիրասուն նահանգից, 6 տարեկան հասակում:

Այդ տարի հրատարակուել է նաեւ հայկական արմատներ ունեցող Հալիլ Էրհանի *Karadeniz'den Bir Ermeni Yetimi-Baybahanli Nubar* (Սեւ ծովից մի հայ որբ՝ Պայբահանցի Նուպարը)[40] վերնագրով գիրքը, որում հեղինակը ներկայացնում է Թուրքիայի Հանրապետութեան՝ Սեւ Ծովի ափամերձ հատուածում գտնուող Իւնիէ շրջանի իսլամացուած հայերից իր հարազատ պապի պատմութիւնը:

Նմանատիպ թեմայով նոյն՝ 2017ին Թուրքիայում Մուրաթ Աթաշի հեղինակութեամբ լոյս է տեսել *Armine. Çorak Dağin Sürgünü* (Արմինէ: Չորաք լեռան աքսորը)[41] վէպը, որը հրատարակել է «Արաս» Հրատարակչատու-

նը: Իրական դէպքերի վրայ հիմնուած սոյն ստեղծագործութիւնն անդրադառնում է Ցեղասպանութեան տարիներին Սեբաստիայի գիւղերից մէկի հայ բնակչութեան կրած տառապանքների թեմային:

ՀԱՅՈՑ ԵՒ ՅՈՒՆԱՑ ԼՔԵԱԼ ԳՈՅՔԻ ԹԵՄԱՆ՝ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԵԱՆ ԿԻԶԱԿԷՏՈՒՄ

Տասնամեակում թուրք հետազօտողների ուշադրութեան կենտրոնում է եղել նաեւ հայոց եւ յունաց լքեալ գոյքերի բռնագրաւման թեման: Այսպէս՝ 2010ին «Բելգէ»ն լոյս ընծայեց թուրք գիտնական Նեւզաթ Օնարանի *Emvâl-i Metrûke Olayi. Osmanli'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi* (Օսմանեան եւ հանրապետական շրջանին լքեալ գոյքի դէպքը. հայկական եւ յունական ունեցուածքի թուրքացումը)[42] հաստափոր գիրքը: Հեղինակը շուրջ 600 էջի մէջ ներկայացնում է հայերի եւ յոյների ցեղասպանութիւնների ընթացքում թուրքական իշխանութիւնների կողմից հայկական եւ յունական ունեցուածքի կողոպուտը, լքեալ գոյքը սեփականացնելու նպատակով անօրինական կերպով ընդունուած ու կիրառուած օրէնքները, ինչպէս նաեւ՝ Թուրքիայի Հանրապետութեան տարիներին պետական մակարդակով շարունակուած թալանը: Գրքի վերջում ներկայացուած են նաեւ լքեալ գոյքի վերաբերեալ ընդունուած մի շարք որոշումներ եւ օրէնքներ:

2012ին «Իլեթիշիմ»ը տպագրեց թուրք ցեղասպանագէտներ Աքչամի եւ Ումիթ Քուրթի համատեղ գիրքը, որը կրում է *Kanunlarin Ruhu: Emval-i Metruke Kanunlarinda Soykirimin İzini Sürmek* (Օրէնքների ոգին. հետեւել Ցեղասպանութեան հետքին՝ «Լքեալ գոյքի» մասին օրէնքներում)[43]: Գրքում մէջ բերուած են Տինքի հետեւեալ խօսքերը. «…եթէ հարց բարձրացուի, թէ ում միջեւ է բաժանուել հայերից մնացած գոյքը, եւ "ում ինչ է պատահել", դա շատ մեծ ցնցում կը յարուցի: Քանզի կ'արժեզրկուի երկրին յարմարեցուած մի ողջ պատմութիւն: Հասարակութեան մէջ կը տարածուի այն գաղափարը, որ եթէ այդ պատմութիւնը սխալ էր ներկայացուել, ուրեմն այլ բաներ էլ են սխալ պատմուել: Թուրքիայում կը գրանցուի մի էական փոփոխութիւն»[44]:

Աքչամը,այդ գրքի մասին ինձ տուած հարցազրոյցում մեկնաբանելով հայերի գոյքը կողոպտելու շարժառիթները, մասնաւորապէս նշել էր. «Ես նկատել եմ, որ թէեւ երիտթուրքերը հայերի բնաջնջման մասին որոշումեն ընդունել ոչ թէ տնտեսական, այլ առաւելապէս գաղափարական-քաղաքական դրդապատճառներով, այնուամենայնիւ օգտուել են իրենց բոլոր հնարաւորութիւններից՝ տնտեսական առումով եւս շահած դուրս գալու նպատակով եւ ձգտելա ռաւելագոյն օգուտ քաղել հայերից մնացած հարստութիւնից: Բացի այդ՝ տնտեսական շահի շնորհիւ նրանք տեղական մակարդակով էլ են աջակցութիւն ստացել»[45]:

Նոյն տարում Հրանտ Տինք Հիմնադրամի կողմից հրատարակուել է նաեւ *2012 Beyannamesi. İstanbul Ermeni Vakiflarinin El Konan Mülkleri* (2012իյայտարարութիւնը. Ստամբուլի հայկական հիմնադրամների բռնագրաւուած ունեցուածքը)[46] խորագրով ուսումնասիրութիւնը: Սոյն գիրքը, որի առաջաբանի հեղինակն է դոկտոր, պրոֆ. Հիւսէյին Հաթեմին, կազմուել է Փոլաթէլի, Նորա Միլդանօղլուի, Օզգիւր Լեման Էրէնի եւ Մեհմէթ Աթըլգանի կողմից: Այս խումբը 2 տարի շարունակ ուսումնասիրել է արխիւները, հին քարտէզներ, պետական ցուցակներ: Հեղինակներն օգտուել են նաեւ Տինքի անձնական արխիւից: Գրքի համար աղբիւր են ծառայել նաեւ հանգուցեալ փաստաբան Տիրան Բաքարի թղթապանակները[47]:

2013ին Թուրքիայում լոյս տեսաւ Օնարանի մէկ այլ ուսումնասիրութիւն, որը կրում էր *Osmanli'da Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi (1914-1919). Emval-i Metrukenin Tasfiyesi-I* (Հայկական եւ յունական ունեցուածքի թուրքացումը օսմանեան պետութիւնում (1914-1919 թթ.). լքեալ գոյքի լուծարումը-I) վերնագիրը[48]: Նոյն թուականին հրատարակուեց նաեւ այդ ուսումնասիրութեան միւս հատորը՝ *Cumhuriyet'te Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi (1920-1930). Emval-i Metrukenin Tasfiyesi-II* («Հայկական եւ յունական ունեցուածքի թուրքացումը հանրապետութիւնում (1920-1930). լքեալ գոյքի լուծարումը-*II*»)[49]: Հեղինակն այս գրքերում ուսումնասիրել է Թուրքիայի կառավարութեան օսմանեան ու հանրապետական արխիւները՝ ծանօթանալով տնտեսական քաղաքականութեան օրէնքներին եւ որոշումներին ու դրանց վերաբերեալ Թուրքիայի մեջլիսում տեղի ունեցած քննարկումներին: Ընթերցողին, որպէս ուղղակի փաստեր, ներկայացուում են ինչպէս օսմանեան մեջլիսում, այնպէս էլ հանրապետական խորհրդարանում այդ թեմայով կայացած քննարկումների մասին փաստաթղթեր: Երկհատորեակը լոյս ընծայած հրատարակչութեան պաշտօնական կայքէջում հրապարակուած տեղեկութեան համաձայն՝ Օնարանի գրքում շեշտւում է, որ 1920ականների Թուրքիայի նորաստեղծ Հանրապետութեան «ազգային քաղաքականութիւնը» հիմնուել է Միութիւն Եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան տնտեսական քաղաքականութեան վրայ եւ, հետեւաբար, հանդիսանում է այդ քաղաքականութեան շարունակութիւնը: Միաժամանակ աշխատութեան մէջ վերլուծութեան է ենթարկւում, թէ ինչպէս է հայոց եւ յունաց գոյքը իւրացուել թուրքական պետութեան նախաձեռնութեամբ ու վերածուել թուրք-իսլամական դրամագխլի[50]:

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ԹՈՌԸ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նշեալ տասը տարիներին Հայոց Ցեղասպանութեան եւ Հայկական Հարցի վերաբերեալ Թուրքիայում հրատարակուած ուսումնասիրութիւնների շարքում հարկ է առանձնացնել Հայոց Ցեղասպանութեան գլխաւոր պատասխանատուներից մէկի՝ Ջեմալ փաշայի թոռան՝ Հասան Ջեմալի հեղինակութեամբ 2012ին լոյս տեսած *1915: Ermeni Soykiriml* (1915. Հայոց

Ցեղասպանութիւն)[51] վերտառութեամբ գիրքը, որը հիմնականում ընդգրկում է այս թեմայով նրա գրչին պատկանող յօդուածները: Մասնագիտութեամբ լրագրող Հասան Ջեմալը եղել է Տինքի ընկերը, իսկ Երեւան այցելել է Տինքի մահից յետոյ: Գրքի շապիկին զետեղուած է Հասան Ջեմալի այն լուսանկարը, որում նա ծնկի է եկել Ծիծեռնակաբերդի յուշարձանի մօտ ու մի փունջ վարդ է դնում Մեծ Եղեռնի զոհերին յիշատակին: Ֆրանսիական *Le Monde* հեղինակաւոր պարբերականի ստամբուլեան թղթակից Գիյոմ Պերիէն, անդրադառնալով գրքին, մասնաւորապէս գրում է. «Ցեղասպանի թոռան պատմութիւնը մեկնարկում է 2006ին: Ձմեռային մի ցուրտ առաւօտ նա ջիփով ուղեւորւում է Ստամբուլի գերագոյն դատարան: Հասան Ջեմալը եւ 4 սիւնակագիրներ եւս դատւում են «թուրքական ինքնութեանը վիրաւորանք հասցնելու» համար եւ հոծ բազմութեան կողմից արժանանում «հայրենիքի դաւաճան» պիտակին (…) Կամաց-կամաց-Հասան Ջեմալը գտնում է իր ուղին: «Հրանտ Տինքն ինձ օգնեց հասկանալ անցեալի տառապանքների իմաստը: Կարեւոր է առերեսումը դրանց հետ»: Ինչպէս որ նա դա անելու էր՝ այցելելով իր պապին սպանած հայ վրիժառուին, որն ապրում էր Հայաստանում: «Օգտագործե՞լ «ցեղասպանութիւն» բառը, թէ՞ ոչ»: Բազմաթիւ թուրք մտաւորականներ կանգնած են այս երկընտրանքի առաջ: Այս բառը չասուած է մնում շատերի կողմից, իսկ այնպիսի մեղմասացութիւններ, ինչպիսիք են՝ «ողբերգութիւնը» կամ «աղէտը», ընդունելի են ոմանց կողմից: Սակայն Լոս Անճելըսում, ուր նա բանավէճի էր հրաւիրուել ամերիկացի դեսպան Հենրի Մորկընթաուի թոռան հետ, մարդ, որը դարձաւ կոտորածների մասին յայտնած առաջին անձանցից մէկը, Հասան Ջեմալը բնական կերպով օգտագործում է «ցեղասպանութիւն» բառը իրեն չվստահող հայ ունկնդիրների առաջ: Ներկայում այդ բառը վերնագրուած է գրքի կազմին՝ առանց չակերտների»[52]: - Կարճ ժամանակ անց այս գիրքը *բեսթսելլըր* դարձաւ Թուրքիայում, սակայն դրա հեղինակը ոչ-միանշանակ ընդունուեց Հայաստանում եւ Սփիւռքում, որն, ըստ իս լիովին բնական է, երբ նկատի ենք առնում նրա մեծիոր ինքնութիւնը :

ԹԱՆԷՐ ԱՔՉԱՄԻ ՀԵՏԱՁՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թէեւ վերջին տասնամեակներին Թուրքիայում եւ իր սահմաններից դուրս բնակուող բաւականին մեծ թուով թուրք մտաւորականներ[53] են անդրադարձել Հայոց Ցեղասպանութեանը եւ Հայկական Հարցին առնչուող այլ թեմաների[54], սակայն, կարծում եմ, որ հարկ է առանձնայատուկ անդրադառնալ թուրք յայտնի ցեղասպանագէտ, ԱՄՆի Քլարք Համալսարանի պրոֆեսոր Թանէր Աքչամի միքանի աշխատութիւններին, քանի որ նրա բոլոր ուսումնասիրութիւններն առանձնանում են օսմանեան բազմաթիւ կարեւոր փաստաթղթերի առատութեամբ եւ գիտական մանրազնին վերլուծութեամբ:

Այսպէս՝ 2008ին Թուրքիայում լոյս տեսաւ Աքչամի եւ միջազգային ճանաչում ունեցող ցեղասպանագէտ Վահագն Տատրեանի համատեղ կազմած գիրքը, որ կրում էր *“Tehcir ve Taktil” Divan-i Harb-i Örfî Zabitlari. İttihad ve Terakki’nin Yargilanmasi 1919-1922* (Տեղահանութիւն եւ կոտորածներ. ռազմական արտակարգ ատեանի արձանագրութիւնները: Միութիւն Եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան դատավարութիւնը 1919-1922 թթ.[55]) վերնագիրը: Իդէպ՝ սոյն արժէքաւոր եւ ստուարածաւալ աշխատութիւնը, ունենալով մեծ պահանջարկ, նոյն հրատարակչութեան կողմից վերահրատարակուել է նաեւ 2010ին: Այս գրքում, որում ներառուած են նաեւ մեծ թուով օսմանեան փաստաթղթեր, ոչ միայն ներկայացուած է երիտթուրքերի 1919-20ի դատաքննութիւնների ամբողջական արձանագրութիւնների՝ արաբատառ օսմաներէնից լատինատառի տառադարձուած տարբերակը, այլեւ դրանց ընթերցումը դիւրացուած է կից բերուած թուրքերէն հոմանիշների միջոցով: Ինչպէս աշխատութեան առաջաբանում նշում են հեղինակները, ընդհանուր թուով 13 դատական գործերի մեղադրական եզրակացութիւնները, դատական նիստերի արձանագրութիւնները եւդատավճիռներն ընդգրկող սոյն վաւերագրերը էական դեր են խաղում Հայոց Ցեղասպանութեանն առնչուող դէպքերի վրայ լոյս սփռելու գործում: Հեղինակները ներկայացնում են նաեւ հայերի կոտորածների հարցի քննարկումները ժամանակի օսմանեան մամուլում, երկպալատ խորհրդարանում, երիտթուրքերի դէմ կատարուած հետաքննութիւնները, օսմանեան խորհրդարանի Հինգերորդ Յանձնախմբի իրականացրած հարցաքննութեան նիւթերը եւ երիտթուրքերի դատավարութիւնները: Հեղինակներից Աքչամը գրքի 152-190 էջերում տեղեկութիւններ է հաղորդում Ստամբուլի ռազմական արտակարգ ատեաններում հայերի տեղահանութեան եւ կոտորածների մեղադրանքով յարուցուած դատական գործերի մասին:

2012ին ԱՄՆում անգլերէնով հրատարակուել է Աքչամի նոր գիրքը՝ *The Young Turks’ Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in Ottoman Empire* (Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկութեան դէմ. Հայոց Ցեղասպանութիւնը եւ էթնիկ զտումները Օսմանեան Կայսրութիւնում)[56] խորագրով: Այս աշխատութեան մէջ հեղինակը ներկայացնում է Թուրքիայի քրիստոնեաների ցեղասպանութիւնների մասին նոր ապացոյցներ Օսմանեան Կայսրութեան աւելիքան 600 գաղտնի փաստաթղթերից:

2014ին «Իլեթիշիմ»ը տպագրեց Աքչամի նոր ուսումնասիրութիւնը, որը վերաբերում էր յատկապէս կրօնափոխ հայերի հիմնախնդիրներին: *Ermenilerin Zorla Müslümanlaştirilmasi: Sessizlik, İnkar ve Asimilasyon* (Հայերի բռնի իսլամացումը. լռութիւն, ժխտում եւ ուծացում)[57] վերնագրով սոյն մենագրութեան մէջ նա անդրադառնում է ժամանակակից Թուրքիայի ժխտողական քաղաքականութեան ազդեցութեանը՝ թուրք հասարակութեան եւ, յատկապէս, վերջինիս՝ իրեն առաջադէմ համարող հատուածի

վրայ: Այս գրքի առաջին գլխում հեղինակը ներկայացնում է այն մեծ դժուարութիւնները, որոնց հետ Թուրքիայում բախւում է իւրաքանչիւր մտաւորական՝ Հայոց Ցեղասպանութեան հարցի անաչառ ուսումնասիրութեամբ զբաղուելիս: Գրքի երկրորդ մասում, որպէս առաջին գլխի տրամաբանական շարունակութիւն, Աքչամն անդրադառնում է այն քննարկումներին, որ միքանի տարի առաջ տեղի ունեցան Թուրքիայում, երբ այստեղ տպագրուեցին օսմանեան բանակում ծառայած հայ սպայ Սարգիս Թորոսեանի յուշերը: Վերջինիս գոյութեան փաստը բնականաբար չէր կարող ընդունելի լինել թուրք հասարակութեան համար, քանի որ թուրքական պաշտօնական պատմագրութիւնը օսմանահպատակ հայերին մշտապէս ներկայացրել էր որպէս «դաւաճանների, որոնք պատերազմի բովում հարուածել էին թիկունքից»: Ամենաճաւալուն՝ երրորդ գլխում հեղինակը, հիմնուելով գրեթէ բացառապէս օսմանեան աղբիւրների եւ յատկապէս կառավարութեան կողմից շրջաններ յղուած հեռագրերի վրայ, անդրադառնում է կրօնափոխ հայութեան հիմնահարցին:

Հարկ է նշել, որ Աքչամի գրքերը բաւականին մեծ պահանջարկ ունեն Թուրքիայում: Այսպէս, օրինակ, 2016ին նոյն՝ «Իլեթիշիմ»ն արդէն եօթերորդ անգամ վերահրատարակեց նրա *Ermeni Meselesi Hallolunmuştur* (Հայկական Հարցը լուծուած է)[58] գիրքը: Ըստ «Իլեթիշիմ»ի պաշտօնական կայքէջում հրապարակուած տեղեկատուութեան՝ Աքչամը սոյն ուսումնասիրութեան մէջ, որ նա պատրաստել է օսմանեան փաստաթղթերի վրայ հիմնուելով, կենտրոնանում է այնհարցի վրայ, թէ ինչեր են այդ մասին պատմում սկզբնաղբիւրները: Հեղինակը ներկայացնում է Թալէաթ փաշայի հրահանգներով եւ նրա անմիջական ու անընդմէջ վերահսկողութեան տակ կատարուած դէպքերը: Գրքում նշուած է նաեւ Թալէաթի հեռագրերից մէկում տեղ գտած այն արտայայտութիւնը, թէ «Հայկական Հարցը լուծուած է: Կարիք չկայ ժողովրդի եւ կառավարութեան անունն արատաւորել բռնարարքների մասին անտեղի լուրերով»[59]: Նոյն տարում Աքչամը հրատարակեց նաեւ մի նոր ուսումնասիրութիւն՝ *Naim Efendi'nin Hatirati ve Talat Paşa Telgraflari: Krikor Gergeryan Arşivi* (Նաիմ էֆենդու յուշերը եւ Թալէաթ փաշայի հեռագրերը. Գրիգոր Կերկերեանի արխիւը)[60] վերնագրով, որը 2018ին տպագրուեց նաեւ անգլերէն՝ *Killing Orders: Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide*[61]:

Այսպիսով՝ վերջին տասնամեակում՝ 2008-2018, Հայոց Ցեղասպանութեան, Հայկական Հարցի եւ յարակից թեմաներով բաւականին պատկառելի թուով աշխատութիւններ ու գեղարուեստական գրքեր են լոյս տեսել Թուրքիայում եւ նրա սահմաններից դուրս: Սակայն վերջին 2 տարում թուրքաբնակ հետազօտողներն ու գրողները սկսել են խուսափել նման աշխատութիւններ հրատարակելուց, քանի որ 2016 Յուլիսին Թուրքիայում կատարուած յեղաշրջման փորձից անմիջապէս յետոյ այստեղ յայտարարուած արտակարգ դրութեան հետեւանքով մեծապէս տուժեց նաեւ խօսքի

ազատութիւնը: Փակուեցին համեմատաբար ազատ արտայայտուող բազմաթիւ լրատուամիջոցներ, եւ շատ գիտնականներ, գրողներ, հրապարակախօսներ ու լրագրողներ սկսեցին հետապնդումների ենթարկուել:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Ներկայում փակուած թուրքական *Ռափիքալ* օրաթերթի տուեալների համաձայն՝ 2002ին Թուրքիայում արգելուել է 38 հրատարակչութեան կողմից տպագրուած 57 հեղինակի 77 գիրք (http://www.radikal.com.tr/kultur/77-kitaba-yasak-657231/):

[2] Մարի Յովհաննիսեան, *ՈւրացմանՔաղաքականութեանԱրմատները, ՆորօրեայԴրսեւորումներըեւԴրանցՀետեւանքները*, Երեւան, «Էդիտ պրինտ» Հրատ., 2017, էջ 129:

[3] https://www.sabah.com.tr/gundem/2011/11/28/turkermeni-iliskileri-24-ciltlik-ansiklopedide:

[4] Uluç Gürkan, *Ermeni Sorununu Anlamak*, Destek Yayinlari, Istanbul, 2011:

[5] Uluç Gürkan, *Ermeni Katilami Suçlamasi. Yargilama ve Karar. Malta (1919-1921)*, İstanbul, Kaynak Yayinlari, 2015:

[6] http://www.yeniturkiye.com/list.asp?c=0000&year=2002 :

[7] *Yüzüncü Yilinda Ermeni Meselesi "İddialar-Yalanlar-Gerçekler"*, Aygan Yayincilik, Istanbul, 2015:

[8] *1915'e Hapsedilen Tarih: Ermeni Meselesi*, Palet Yayinevi, Konya, 2017:

[9] Նոյն:

[10] «Ռագըփ Զարաքօլուն «Բելգէ» Հրատարակչատան Վերջին Աշխատանքների Շուրջ Տեղեկութիւններ Է Հաղորդել «Ակունքին», http://akunq.net/am/?p=28406:

[11] Prof. Dr. Verjine Svazlian, *Ermeni Soykirimi. Hayatta Kalan Görgü Taniklarinin Anlattiklari*, Belge Yayinevi, Istanbul, 2013:

[12] http://www.diken.com.tr/belge-yayinlarina-polis-baskini-2-bini-askin-kitaba-el-konuldu/:

[13] Arşaluys Mardiganyan, *Parçalanmiş Ermenistan*, Pencere Yayinlari, Istanbul,2014:

[14] Աքչամի աշխատութիւններին առաւել մանրամասն կ'անդրադառնամ ստորեւ:

[15] «Արաս» հրատարակչութիւնը հիմնուել է 1993ին, Ստամբուլում եւ արժանացել «Պատուհան դէպի հայալեզու գրականութիւն» արժեւորմանը: Թէ՛ հայերէն եւ թէ՛ թուրքերէն գրքեր հրատարակող սոյն հրատարակչատան նպատակն է՝ հայկական մշակութային արժէքները փոխանցել յաջորդ սերունդներին: Այդ մասին աւելի մանրամասն տե՛ս՝ https://www.arasyayincilik.com/ :

[16] *Sessizliğin Sesi 1 - Türkiye Ermenileri Konuşuyor Derleyen*: Mehmet Ferda Balancar, Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2011:

[17] *Sessizliğin Sesi 2 - Diyarbakirli Ermeniler Konuşuyor, Derleyen*: Mehmet Ferda Balancar, Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2012:

[18] http://bianet.org/bianet/azinliklar/143137-diyarbakirli-ermeniler-konusuyor :

[19] Laurence Ritter, Max Sivaslian, *Kiliç Artiklari. Türkiye'nin Gizli ve Müslümanlaşmiş Ermenileri*, Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2013:

[20] *Diyarbakir Tebliğleri, Diyarbakir ve Çevresi Toplumsal ve Ekonomik Tarihi Konferansi*, Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2013:

[21] *Mardin Tebliğleri, Mardin ve Çevresi Toplumsal ve Ekonomik Tarihi Konferansi*, Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2013:

[22] *Sessizlğin sesi-III. Ankarali Ermeniler Konuşuyor*. Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2014:

[23] *Sessizlğin sesi-IV. İzmitli Ermeniler Konuşuyor*. Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2015:

[24] Müslümanlaştirilmiş Ermeniler Konferans Tebliğleri, Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2015:

[25] *Ermeni ve Rum Kültür Varliklariyla Kayseri*, Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2016:

[26] *Sessizliğin Sesi-V. Kayserili Ermeniler Konuşuyor*, Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2018:

[27] https://hrantdink.org/tr/hdv-yayinlari/33-sozlu-tarih-ani/1251-kayserili-ermeniler-konusuyor :

[28] Hamit Peker, *Ermeni Kizi Kürt Anasi*, Gonca Yayinevi, Gaziantep, 2012:

[29] Binnaz Öner, *Geride Kalanlar*, Evrensel Basim Yayin, Istanbul, 2012:

[30] Ahmet Abakay, *Hoşana'nin Son Sözü*, Büyülüdağ Yayinlari, Istanbul, 2013:

[31] http://www.radikal.com.tr/hayat/abakayin_kitabina_akrabalardan_tepki-_halama_ermeni_diyemezsin-1154450 :

[32] Adnan Arslan, *Ceviz Ağaci*, Belge Yayinlari, Istanbul, 2014:

[33] http://www.batmancagdas.com/yasam/ceviz-agacini-kitapseverlerle-bulusturdu-h37366.html :

[34] Ali Bayram, *Arsine. Tehcirde Bir Ermeni Kizi*, Deva Yayincilik, Istanbul, 2014:

[35] Abdullah Gazel, *Akbez. Son Kale*, Serencam Yayinevi, Gaziantep, 2014:

[36] Ömer Akin, *Tosbit Dağı*, Usar Yayinevi, Istanbul, 2015:

[37] Վէպի մասին աւելի մանրամասն տե՛ս՝ *Ակօս* շաբաթաթերթում հրատարակուած հեղինակի հարցազրոյցը՝ http://www.agos.com.tr/tr/yazi/13444/hic-tanisamamis-olsak-da-armasli-ermeniler-bizim-komsularimizdi :

[38] Müslüm Üzülmez, *Ergani Tarihinin Sakli Sayfasi Ermeniler*, İsmail Beşikçi Vakfi Yayinlari, Istanbul, 2016:

[39] Niver Lazoğlu, *Kalbim Turkuaz*, Chiviyazilari Yayinevi, 2017:

[40] Halil Erhan, *Karadeniz'den Bir Ermeni Yetimi-Baybahanli Nubar*, İletişim Yayinlari, Istanbul, 2017:

[41] Murat Ataş, *Armine. Çorak Dağin Sürgünü*, Aras Yayinlari, Istanbul, 2017:

[42] Nevzat Onaran, *Emvâl-i Metrûke Olayi. Osmanli'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi*, Belge Yayinlari, Istanbul, 2010:

[43] Taner Akçam, Ümit Kurt, *Kanunlarin Ruhu: Emval-i Metruke Kanunlarinda Soykirimin İzini Sürmek*, İletişim, Istanbul, 2012:

[44] Նոյն:

[45] Աքչամի հարցազրոյցը տե՛ս՝ http://akunq.net/am/?p=26815 :

[46] *2012 Beyannamesi. İstanbul Ermeni Vakiflarinin El Konan Mülkleri*, Hrant Dink Vakfi Yayinlari, Istanbul, 2012:

[47] http://www.radikal.com.tr/Radikal.aspx?aType=RadikalDetayV3&ArticleID=1110219&CategoryID=77 :

[48] Nevzat Onaran, *Osmanli'da Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi (1914-1919). Emval-i Metrukenin Tasfiyesi-I*, Evrensel Basim Yayin, Istanbul, 2013:

[49] Nevzat Onaran, *Cumhuriyet'te Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi (1920-1930). Emval-i Metrukenin Tasfiyesi-II*, Evrensel Basim Yayin, Istanbul, 2013:

[50] http://www.evrenselbasim.com/tanim.asp?sid=MIKLIYY1214Q71XNZIT1:

[51] Hasan Cemal, *1915: Ermeni Soykirimi*, Everest Yayinlari, 2012: Գիրքը թարգմանուել եւ տպագրուել է նաեւ հայերէն՝ Հասան Ջեմալ, *1915. Հայոց Ցեղասպանութիւն*, թարգմանիչ՝ Ռուբէն Մելքոնեան, Հրանտ Տինք Հիմնադրամ, «Անտարես» հրատարակչութիւն, Երեւան, 2014:

[52] http://www.lemonde.fr/culture/article/2012/10/18/le-turc-face-au-genocide_1777659_3246.html:

[53] Գերմանաբնակ թուրք մտաւորականների՝ այս թեմայով հեղինակած գրքերի մասին տե՛ս՝ Ռուբէն Մելքոնեան, Նայիրա Պօղոսեան, *Հայկական Թեմատիկան Ժամանակակից Թուրք Գրականութեան Մէջ (XX դ. Երկրորդ Կէսին-XXI դ. Սկզբին)*, Երեւան, ԵՊՀ Հրատ. 2016, էջ 124-142:

[54] Այս թեմայի վերաբերեալ իրենց ուսումնասիրութիւններով եւ գեղարուեստական գրքերով յայտնի են նաեւ Սայիթ Չեթինօղլուն, Էլիֆ Շաֆաքը, Քեմալ Եալչընը, Դողան Աքհանլըն, Այշէ Հիւրը եւ շատ ուրիշներ:

[55] Vahakn N. Dadrian, Taner Akçam, *"Tehcir ve Taktil" Divan-i Harb-i Örfî Zabitlari. İttihad ve Terakki'nin Yargilanmasi 1919-1922*, İstanbul Bilgi Üniversitesi Yayinlari, Istanbul, 2008:

[56] Taner Akçam, *The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in Ottoman Empire*, Princeton University Press, New Jersey, *Գործած Ոճիրը Մարդկութեան Դէմ. Հայոց Ցեղասպանութիւնը Եւ Էթնիկ Զտումները Օսմանեան Կայսրութիւնում*, թարգմանիչ՝ Յասմիկ Յարութիւնեան, Երեւան, Տիգրան Մեծ Հրատ., 2015:

[57] Taner Akçam, *Ermenilerin Zorla Müslümanlaştirilmasi: Sessizlik, İnkar ve Asimilasyon*, İletişim Yayincilik, 2014: Գիրքը թարգմանուել ու հրատարակուել է նաեւ հայերէն՝ Թանէր Աքչամ, *Հայերի Բռնի Իսլամացումը. Լռութիւն, Ժխտում Եւ Ուծացում*, թարգմ.՝ Մելինէ Անումեան, Երեւան, Տիգրան Մեծ Հրատ. 2016:

[58] Taner Akçam, *Ermeni Meselesi Hallolunmuştur*, İletişim Yayinlari, Istanbul, 2016:

[59] http://www.iletisim.com.tr/kitap/%E2%80%98ermeni-meselesi-hallolunmustur/8110#.VuZoo32LRki :

[60] Taner Akçam, *Naim Efendi'nin Hatirati ve Talat Paşa Telgraflari: Krikor Gergeryan Arşivi*, İletişim, Istanbul, 2016: Վերջերս Աքչամը, Քլարկ Համալսարանի միքանի հայ եւ թուրք ուսումնասիրողների հետ մէկտեղ ուսումնասիրելով եւ դասակարգելով հայր Գրիգոր Կերկերեանի արխիւում գտնուած որոշ արժէքաւոր նիւթեր, հրապարակեց դրանք առցանց տիրոյթում՝ այդպիսով բոլոր հետազօտողների համար հասանելի դարձնելով դրանք:

[61] Taner Akçam, *Killing Orders: Talat Pasha's Telegrams and the Armenian Genocide*, Palgrave Macmillan, London, 2018:

BOOKS ABOUT THE ARMENIAN GENOCIDE AND THE ARMENIAN QUESTION PUBLISHED BY SCHOLARS IN TURKEY BETWEEN 2008 AND 2018
(Summary)

MELINE ANUMYAN
melanumyan@gmail.com

The author focuses on books dedicated to topics which were previously considered to be taboos, like the Armenian Genocoide, the Armenian Question, Islamized Armenians and the *Emvale Metruke,* published in Turkey between 2008 and 2018.

The author explains that the reason for this tolerance was the negotiations which were supposed to eventually lead to Turkey's membership in the EU. She notes that after the Turkish-Armenian rapprochement initiated by Turkish-Armenian Football diplomacy in 2008 and the signing of the Turkish-Armenian protocols in October 2009 in Zurich, the *Ermeni Açilimi*, "Armenian initiative," which triggered a relatively tolerant contemporary Armenian discourse in Turkey, was started.

Thus, between 2008 and 2018 the Armenian Genocide, the Armenian Question and a set of relevant topics became the subject of a significant number of research and literary books published in Turkey. The author notes, however, that in the last two years researchers and writers living in Turkey have avoided publishing such books due to the aftermath of the failed coup attempt in July 2016. Indeed, the extraordinary measures imposed on the country have led to the curtailment of freedom of speech and several other human rights, in turn leading to the closure of news agencies with relatively free expression and the persecution of a number of researchers, writers, journalists and pamphleteers.

Having said this, one should stress as well that during the said decade the traditional denialist policy of the state and Turkish official historiography continued unabated.

ARMENIANS IN POLAND IN THE 20TH CENTURY

GRZEGORZ PEŁCZYŃSKI
grzegorz.pelczynski@uwr.edu.pl

As early as the Middle Ages, Armenians had been settling in Russian territories which later became parts of Poland. Their main settlement centers at the time were Lvov and Kamieniec Podolski, and these settlers concerned themselves predominantly with trade and craftsmanship. In 1630, Armenians entered into union with the Roman Catholic Church and became Catholics, maintaining a separate Archdiocese of the Catholic Armenian Rite in Lvov. The union was conducive to their assimilation, particularly of families that had become ennobled. When Poland collapsed at the end of the 18th century, its territory was divided between Russia, Prussia and Austria. Its southeastern areas, where there were clusters of Armenians, were occupied by Austria.

The history of Armenians in old Poland is relatively well known. Scholars, however, have shown less interest in their recent history. It was often thought that the Polish Armenians were completely assimilated; however this was not right as the Armenians in Poland were still there. This article highlights aspects of their history in the 20th century, which was often tragic both for Poles and Armenians.

THE TIMES OF ARCHBISHOP TEODOROWICZ (1901-1938)

During the 19th century the Armenians settled in Eastern Galicia and Bukowina, which were parts of Austria. These Armenians no longer resembled their ancestors from the times of the first Polish Republic, as they already in the 18th century had been extensively integrated and had acquired Western European cultural traits. Neither were they the exotic merchants trading with countries of the East. Some of them had gained noble titles in the previous century while others had managed to do so in the Austrian times (after 1795). As nobles and landowners they had evolved into landed gentry. Most of them, however, became representatives of the intelligentsia. The assimilation process of the Polish Armenians intensified during the 19th century. They identified themselves with the Polish nation whilethey intentionally preserved some autonomy, which was strongly grounded on their affiliation with the Catholic Armenian Rite.

In 1901 archbishop Józef Teodorowicz, a great Polish politician,[1] became head of the Lvov Archdiocese of the Catholic Armenian Rite (i.e. Catholic Armenian Church). For almost forty years he was also the leader of the Armenian community settled on Polish territory. The Archdiocese which he administered was the oldest and most esteemed institution of the Polish Armenians, having its center in Lvov, where the cathedral was located and the Armenian Benedictine nuns had their convent. The Archdiocese consisted of three deaneries[2] and nine parishes. The parishes in Lvov and Brzeżany belonged to the Lvov deanery, the parishes in Stanisławów, Tyśmienica and Łyściec were part of the Stanisławów deanery. The Kuteńsk deanery included parishes in Kuty, Horodenka, Śniatyń, and also in Bukowina (which had a parish in Czerniowice and a chaplaincy in Suczawa). The latter two were formally separated from the Lvov Archdiocese after WWI, as Bukowina was ceded to Romania. Nonetheless, the ties between Armenians from Galicia and Bukowina were preserved. Some landowning members of the parishes lived in areas around the settlement centers, while some lived outside Galicia and Bukowina.[3]

The number of followers of the Lvov Archdiocese of the Armenian Rite was estimated between 5 and 10 thousand, which made it the smallest Archdiocese on Polish territory.[4] Membership in the Armenian Rite was quite complex. There was no controversy about the affiliation of those whose parents were both followers of the Armenian Rite and always received the sacrament in the Armenian Rite. However, during the leadership of archbishop Teodorowicz this was no longer the rule. Armenians increasingly frequently received sacraments in churches of other rites because of friendly or family-related contacts with the Latin rite followers, and to a lesser extent with Greek Catholics. Thus the process of inclusion into other rites had begun. The matter was more complicated when one of the spouses was not of the Armenian rite. In such cases the spouses had to decide on the rite of the wedding ceremony. They could each preserve their own rite or choose one for them both. In the former case, their children would often choose the rite of the parent of the same sex; however, even if they were formally attached to the Latin rite, they would still in some manner remain connected with the Armenian rite.

The sites of the parishes of the Archdiocese of the Armenian Rite and the number of followers correspond to the location and population of the Polish Armenians. This concerned less those Armenians who came to Poland at the beginning of the 1920s from Western Armenia, escaping bloody Turkish persecutions[5] or the revolution in Russia.[6] Their total number was little more than one thousand. They arrived in various parts of the country, often to stay temporarily for a period while en route to the West. On the other hand, those

who settled in Poland slowly integrated with the Armenians who had come earlier or were the descendants of earlier settlers and identified with their Armenian rite.

The Lvov Archdiocese of Armenian Rite managed to preserve the Armenian Rite and other Armenian traditions in the south-eastern Poland of the time and in Bukowina. One of those traditions was the famous St. Anthony's feast held in the very traditional town of Kuty,[7] which attracted Armenians from all Polish parishes.[8] The rite was gradually Latinized. Although the liturgy was still performed in classical Armenian (grabar), it was hardly comprehensible to its followers, and gradually more and more liturgical elements stemmed from the Latin rite. The Armenians themselves as well as their rite were highly were highly integrated into Polish society, no longer talking Armenian, marrying non-Armenians, etc..

Polish Armenian cultural institutions were connected with the church. The Józef Torosiewicz Scientific Institution in Lvov, the most renowned, was a dormitory for boys of the Catholic Armenian Rite, who learnt or studied in the town. It was founded in 1865 by Józef Torosiewicz, a well-known philanthropist, and a medical doctor, who donated to it all his capital. The dormitories were paid, but poorer students could receive a scholarship. Thirty to forty boys from various Armenian parishes lived in the dormitory, and their friendly relations were retained long after they had left it, which contributed to their networking and the integration and coherence of the Armenian community. Such strong ties with the Armenian Church were possible as the dormitories were located close to the cathedral and Armenian priests.

A similar institution by the name of the Archbishop Isakowicz, a Catholic Armenian Dormitory, was established by the priest Kajetan Kasprowicz in Czerniowce at the end of the 19th century. After his death, his name became part of the institution's name. Unlike the Torosiewicz institution, the dormitory in Czerniowce enrolled male students of all Catholic rites.

The Public Primary School and Junior High School in Lvov run by the Armenian Benedictine nuns was the oldest female school in Lvov, as it had probably been founded in the 18th century. The Benedictine nuns could not conduct lessons as it was against the rules. Most of the female students came from Polish families, and, therefore, the school had a less Armenian character than the Scientific Institution. The curriculum was the same as in Polish schools. Sometimes, however, the girls were taken to attend mass in the nearby Armenian Cathedral and received visits from the Archbishop.

During archbishop Teodorowicz's time, (early decades of the 20th century) Armenians were called "Kabzany" [pouches], which, according to folk etymology, was associated with the desire for money (lining one's

pockets).[9] From older times Armenians maintained the "Mons Pius" Public Pawnbroking Company at the Armenian Cathedral in Lvov. This bank, a small but prosperous financial institution, was founded at the end of the 18th century. [10] Armenian landowners or company owners were still enterprising people.

In 1927 Polish Armenians started publishing their periodical *St. Gregory's Messenger* in Lvov. It was published only in Polish, which was the main language spoken by the Armenians, and was edited by Priest Dionizy Kajetanowicz. *Gregoriana*, a theological periodical edited by priest Adam Bogdanowicz, was issued in 1935.

The founding of these periodicals was a reflection of revival within the Armenian community in the newly established country of Poland. The publication facilitated contacts among those who wished to keep Armenian traditions alive in Poland, aware that these traditions were increasingly difficult for the old church structures to uphold. Besides, new challenges requiring new solutions appeared. Discussions among Armenians toward the end of the 1920s paved the way for the idea of founding an association which would unite the dispersed Polish Armenians. The Archdiocesan Association of Armenians (AAA) was founded in 1930 in Lvov, its name intentionally pointing to the close connection of its members with the Lvov Archdiocese of the Armenian Rite. Jan Antoniewicz was the president of the association, while priest Dionizy Kajetanowicz and engineer Henryk Mikuli were vice-presidents. In the mid-1930s, the AAA had already gathered about five hundred members, including Armenians who had recently arrived from Armenia or Russia. The official journal of the association was the "Posłaniec w. Grzegorza" (Messenger of Saint Gregory).

A special Committee of Amusement was designated to organize Armenian Balls, which were among the most spectacular events launched by the association. These were held in the halls of the Artistic and Literary Casino of Lvov and were so spectacular that they were regarded as a part of the Lvov carnival. Both Armenians and the Lvov elite attended them. Funds gathered at these Armenian Balls were allocated to the Torosiewicz Scientific Institute and to needy students and pupils of the Benedictine school.

The AAA was involved in cultural activities too. The editorial board of the *St. Gregory's Messenger* and the Literary–Scientific and Artistic Committee were mainly engaged in this. Their members, in addition to editorial work, organized lectures by experts on Armenian topics as well as concerts by Armenian artists. These events mostly took place on the premises of the AAA in Lvov. Armenian activists also prepared radio programs about Armenians, which were broadcast in 1931 and 1932. But, above all, they organized the

Exhibition of Armenian Monuments in Lvov in 1932, at which there were numerous exhibits showing Armenian history on Polish territory.

THE WAR PERIOD (1939-1945)

The death of archbishop Teodorowicz in December 1938 marked the end of an era in the history of the Polish Armenians. The Pope did not manage to designate a successor before the outbreak of WWII, so Kajetanowicz fulfilled the duties of the administrator of the Lvov Archdiocese during the war years.

The German army entered Eastern Galicia in September 1939 but soon turned it over to the Soviet Union, which did not tolerate the activities of the Armenian institutions and organizations. In 1941 the Archdiocese lost two priests: Adam Bogdanowicz, most probably tortured to death,[11] and Bogdan Agopsowicz, who was shot dead while crossing the border in Czeremosz. Most of the Polish Armenians, including prewar civil servants, landowners and entrepreneurs, found themselves in a life-threatening situation. Constituting a social system oppressed by the Communist rule, they were robbed, sent to prisons and labor camps and often killed.

With the reoccupation of Galicia by German troops in June 1941 the Armenians faced new challenges. Although they often entered into mixed marriages, they generally preserved Armenian hereditary physical traits, which made them look like Jews. Hence, German soldiers often harassed Armenians, mistaking them for Jews. Whenever Armenians left their houses, they always had to carry documents to show that they were so-called Aryans. On the other hand, some Jews were saved from death by Armenian priests who provided them with Armenian birth certificates.

German soldiers formed collaborating troops of soldiers of various nationalities. On the other hand, the soldiers of the allied Armenian troops were Armenian nationalists who wished to liberate Soviet Armenia from Soviet control and occupation. The latter were garrisoned near Lvov, where they made contacts with Polish Armenians. These soldiers, mostly non-Catholics, followers of the Armenian Apostolic Church, attended mass in the Lvov Cathedral, where Priests Kajetanowicz and Kazimierz Romaszkan conducted pastoral service. Armenian soldiers probably tried to persuade young Polish Armenians into military service, but with no result, since the Polish Armenians did not identify with their goals. In fact, many worked as spies for the Polish government in London.[12]

After the Red Army re-occupied Lvov in July 1944, Romaszkan and Kajetanowicz were accused of cooperation with the Nazis and were sent to Soviet concentration camps. It was a false accusation if one considers the complicated and ever-changing situation in the territories settled by the Armenians during the war.

THE YEARS OF DISPERSAL (1945-1979)

As a result of WWII, Galicia and North Bukovina became parts of the USSR. The Armenians, like most of the Polish population living there, left their houses to resettle farther west in Poland, to become citizens of the Polish People's Republic (PRL). They settled mainly in Upper Silesia and Lower Silesia, but many also settled in Cracow, Warsaw, Tricity (Trójmiasto) and other towns. Some tried to settle where their relatives or acquaintances had lived before WWII. However, they did not manage to create close-knit settlements and were broadly scattered throughout Poland. Such a dispersion affected not only members of parishes but also closest relatives, and contact was often lost.

Although many missed Lvov, Kuty or Śniatyń, some, although hoping for a quick return to their homeland, had to settle in new places. Gradually they became an integral part of the new communities joined after the displacement.

As before WWII, affiliation with the Armenian group was connected to the Catholic Armenian rite. However, in later years membership became a mere formality. In the Soviet Ukraine, both the Armenian rite and the Greek-Catholic rite were abolished.[13] Kajetanowicz, the administrator of the Lvov Archdiocese, died in exile in Abież in the arctic in 1954. All Armenian churches were deprived of their sacral character: the beautiful Lvov Cathedral was transformed into a warehouse, the church in Stanisławów was turned into a Museum of Religion and Atheism.[14] These persecutions affected only those Polish Armenians who, for various reasons, remained in West Ukraine, while most had migrated to Poland. There, however, the church authorities, preoccupied with more important issues during the difficult post-war period, did not show enough care to meet the needs of the followers of the Catholic Armenian rite.

In the 1940s two centers for the followers of the Catholic Armenian rite were established, one at the small Dominican St. Idzi church, where Andrzej Łukasiewicz, a priest from Bukovina, served until his death in 1951. His duties were taken over by priest Franciszek Jakubowicz, who, after becoming seriously ill, celebrated mass only in his room, with Archbishop Karol Wojtyła's (later Pope John Paul II) permission. After Jakubowicz's death in 1972, the Catholic Armenian liturgy was occasionally offered by priests commuting from Gliwice.

After WWII, the Armenians in Gliwice became the owners of the small Holy Trinity church, where priest Kazimierz Roszko conducted mass until 1964, before his emigration to Italy, then the USA, Canada and eventually Israel. While in exile, he left the Armenian rite for the Greek-Catholic one. Between 1969 and 1973, the Holy Trinity church was administered by priest

Kazimierz Romaszkan, who had survived the labor camps. After his death, priest Krzysztof Staniecki, previously connected with the Latin and Greek rites, took over his duties and conducted mass for both the Armenians and Greek-Catholics (the Ukranians) in the Holy Trinity Church until 1985.[15]

The third center for the followers of the Catholic Armenian rite was established towards the end of the 1950s on the initiative of Filipiak, the former parish priest of Stanisławów. Filipiak had moved from one place to another for many years. Eventually, he was granted a ruined St. Peter and Paul's Church in Gdansk in 1958, which he renovated and gradually rebuilt by the mid-1970s. However, only one of the chapels was made available for the Armenians, while the main church was designated for the major Roman-Catholic rite. A sanctuary of the Heavenly Mother of Mercy, whose painted portrait Filipiak had brought from Stanisławów, was founded in the church.[16]

One of the most noteworthy institutions of the Archdiocese was the Benedictine convent and school in Lvov. The convent, however, was relocated to Poland in 1946, where it stayed in Lubiń for ten years, before finally relocating to Wołów in Lower Silesia. Of the dozen or so sisters who came to Poland not all were of Armenian origin. Over time, not even one Armenian was left, and in 1961 the convent officially adopted the Latin rite.[17]

In the pre-WWII period Polish Church institutions could not sustain Armenian traditions. Families, too, could do so only to a certain extent, due to the fact that during the inter-war period endogamy was already in decline, while during the post-WWII decades exogamy became the rule rather than the exception. Consequently, in families where only one of the parents or grandparents was Armenian, Armenian traditions were barely maintained.

Իրանական պատուիրակութիւնը առաջին եւ վերջին անգամ ԻԻՀ վերադարձաւ Նախիջեւանի տարածքով: 1992 Ապրիլի 1ին Իջեւանում տեղի են ունենում ՀՀի եւ ԱՀի (պատուիրակութեան ղեկավարն էր նախագահի խորհրդատու Ռասիմ Մուսաբէկովը) պատուիրակութիւնների միջեւ բանակցութիւններ՝ ԻԻՀի պատուիրակութեան մասնակցութեամբ եւ միջնորդութեամբ: Ըստ պայմանաւորուածութեան՝ պէտք է բացուէին երկաթուղային ճանապարհները եւ ԱՀից ՀՀ եկող գազամուղը[5]: Սակայն Ապրիլի 2ին ԱՀն խախտեց պայմանաւորուածութիւնը: ԱՀ վարչապետ Հասան Հասանովը ՀՀի վարչապետի պաշտօնատար Գագիկ Յարութիւնեանին հեռախօսազրոյցում յայտնեց, որ իջեւանեան բանակցութիւններին ԱՀի պատուիրակութիւնը լիազօրուած չի եղել՝ կնքելու նման համաձայնութիւն:

Չնայած 1992 Մայիսի 8ին Թեհրանի համատեղ յայտարարութիւնը մնաց թղթի վրայ, սակայն ԻԻՀն շարունակում էր ՀՀի եւ ԱՀի միջեւ երկաթուղային կապի վերականգնման միջնորդական գործունէութիւնը: Փոխադրամիջոցների կապի վերականգնումը շահեկան էր ԻԻՀին. այդպիսով Թեհրանը ազդեցութիւն ձեռք կը բերէր Բաքուի եւ Երեւանի վրայ: ԻԻՀն ունէր իր շահը, քանզի նա Նախիջեւան-ՀՀ երկաթգծով կապ էր հաստատում Սեւ Ծովի վրացական նաւահանգիստների հետ եւ դուրս գալիս Արեւելեան Եւրոպայի շուկաներ:

1992 Հոկտեմբերի 2ին եւ 3ին Նախիջեւանում, իսկ Հոկտեմբերի 6ին՝ Երեւանում հանդիպում են ՀՀ, ԻԻՀ եւ ԱՀ պատուիրակութիւնները[6]: Եռակողմ բանակցութիւնների արդիւնքում ՀՀ երկաթգծի վարչութեան մասնագէտները Հոկտեմբերի 8ից ձեռնարկելու էին Մեղրու շրջանում երկաթգծի վերականգնման աշխատանքներ: Սակայն համաձայնագիրը ստորագրած ԱՀն, չպահպանելով համաձայնագրով նախատեսուած հրադադարը, Զանգելանի եւ Օրդուբադի շրջաններից կրակի տակ առաւ երկաթգծի վերականգնման աշխատանքների հատուածները, ինչպէս նաեւ Մեղրու շրջանի մի շարք բնակավայրեր:

Նոյն թուականի Հոկտեմբերի 22ին ՀՀ կառավարութիւնը իրանական կողմին առաջարկեց օգտագործել Իջեւան-Երեւան-Նախիջեւան երկաթգիծը՝ ԱՀում կուտակուած բեռների փոխադրման համար[7]: Հոկտեմբերի 29ին ԻԻՀի ԱԳՆում քննարկւում է երկաթուղու ապաշրջափակման հարցը: Ըստ իրանական աղբիւրների՝ ՀՀն, ի տարբերութիւն ԱՀի, լրջօրէն չէր

մօտենում երկաթուղու բացման հարցին, աւելին, իրանական կողմի պնդմամբ ԱՀի կողմից չէին եղել յարձակումներ եւ գնդակոծութիւններ[8]:

Նոյեմբերի 11-15ը Երեւանում ԻԻՀի ԱԳՆի Արեւելեան Եւրոպայի վարչութեան պետ Բահրամ Ղասեմին ՀՀ ղեկավարութեան հետ քննարկում է երկաթգծի բացման եւ իրանական բեռների տեղափոխման հարցերը, որոնք լուծում չստացան: Ղասեմին իրանական աղբիւրներում շրջանառուող տեսակէտը ԻԻՀի ԱԳՆի պաշտօնական դիրքորոշումը չէր համարում, սակայն այդ հարցում տիրող կարծիքը հայանպաստ չէր: Եթէ ՀՀն շահագրգռուած չլինէր երկաթուղու բացմամբ, ԱՀի բանուորներին չէր առաջարկի մասնակցել շինարարութեանը եւ իրանական միջնորդներին չէր հրաւիրի: Իրականում Բաքուն Թեհրանին մոլորութեան մէջ էր գցել միակողմանի, հակահայ ուղղուածութեամբ եւ սխալ տեղեկատուութեամբ:

Երկաթուղու վերաբացման վերաբերեալ ԻԻՀի նախաձեռնութիւնը վերսկսուեց 1993 Օգոստոսի սկզբին: Թեհրանն առաջարկում էր Նախիջեւանի տարածքով անցնող Ջուլֆա-Երեւան երկաթգիծը բաց յայտարարել իրանցի գործարարների համար[9]: Առաջարկւում էր այդ ճանապարհով ՀՀ արդիւնաբերական ձեռնարկութիւններին հումք եւ վառելանիւթ տրամադրել ու փոխարէնը պատրաստի ապրանք տեղափոխել ԻԻՀ: Այդ քայլը հետապնդում էր երկու նպատակ. ա) քաղաքական՝ ԻԻՀն ցանկանում էր Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործում իր վճռորոշ դերն ունենալ. այդ ճանապարհի վերաբացումը կարող էր նման հնարաւորութիւն ընձեռել, եւ բ) տնտեսական՝ ուսումնասիրելով ՀՀի արդիւնաբերութեան ներուժը՝ ԻԻՀն համոզուել էր, որ ՀՀի օգնութեամբ կարող է լուծել իր ԻԻՀի շրջանների տնտեսական հիմնահարցերը: ԱՀի կեցուածքի պատճառով իրանական այս առաջարկը եւս ձախողուեց:

ԱՀում կուտակուած վերոնշեալ 2700 վագոն բեռների տեղափոխման հարցով՝ ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանը 1992 Դեկտեմբերի 22-25ը բանակցութիւններ է վարում ԻԻՀի ղեկավարութեան հետ[10]: Յարութիւնեանը յայտարարեց. *«ՀՀն պատրաստ է ցանկացած պահին ԱՀում կուտակուած վերոնշեալ բեռները տեղափոխել Իջեւանի հանգոյցով՝ իր վրայ վերցնելով տեղափոխման հարցերը: Ինչ վերաբերում էր Մեղրիի տարածքով այդ բեռների տեղափոխմանը, ապա ՀՀն պատրաստ էր դա անել անվտանգութեան երաշխիքներ ստեղծելու դէպքում»*[11]:

ՀՀի պատուիրակութեանը յաջողւում է իրանական կողմին հաւաստել հայերի բարի կամեցողութեան եւ ցրել նրանց կասկածները: Դա խթանեց բանակցութիւնների աշխուժացմանը եւ հնարաւոր դարձրեց Յարութիւնեանի հանդիպումները ԻԻՀի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի, փոխնախագահ Հասան Հաբիբիի, խորհրդարանի նախագահ Նաթէղ Նուրիի, ԱԳ նախարար Ալի Աքբար Վիլայաթիի, նրա տեղակալ Մահմուդ Վայեզիի հետ: Հայկական կողմը իր առջեւ դրուած գլխաւոր խնդիրը յաջողութեամբ իրագործեց: Ստորագրուեցին մի շարք տնտեսական նշանակութեան

պայմանագրեր, այդ թւում՝ ՀՀի եւ ԻԻՀի օդային կապի մասին, որով շաբաթը մէկ կազմակերպուելու էր Երեւան-Թեհրան չուերթը:

1992 Հոկտեմբերի 6ին Երեւանում ստորագրուեց ՀՀ եւ ԻԻՀ կառավարութիւնների միջեւ միջազգային փոխադրումների համաձայնագիր[12]: Նոյեմբեր ամսին ՀՀն մեծ ուշադրութիւն է դարձնում ԻԻՀով անցնող ճանապարհին: Նախատեսում էր, որ հացի մի մասը ՀՀն ստանալու էր Պարսից Ծոցով, ԻԻՀի տարածքով: ՀՀ նախագահը կարեւորում էր, որ եթէ նոյնիսկ հնարաւոր լինի բեռները մէկ ճանապարհով տեղափոխել, այդ դէպքում էլ ՀՀն պէտք է աշխատի դրանք բերել 3-4 ճանապարհով, որպէսզի առաքումները երաշխաւորուած լինեն[13]:

1992 Դեկտեմբերի 25ին Թեհրանում ստորագրուած արձանագրութեամբ տարանցիկ փոխադրումների համար ՀՀն օգտագործելու էր ԻԻՀ երկաթուղային, ցամաքային ուղիների եւ նաւահանգիստների հնարաւորութիւնները: Ի կատարումն այդ փաստաթղթի՝ 1993 Յունուարի 27ին ՀՀի եւ ԻԻՀի միջեւ կնքւում է տարանցիկ փոխադրումների պայմանագիր: ԻԻՀն պարտաւորւում էր Էնզելի նաւահանգստում ստացած ռուսական հեղուկ վառելիքի դիմաց Ջուլֆայում ՀՀին տրամադրել նոյն որակի վառելիք, եւ որպէս այդ գործարքի վճար վերցնել վառելիքի 25%ը: ԻԻՀն վառելիքի մատակարարումը ՀՀին պէտք է սկսէր ռուսական վառելիքը ստանալուց յետոյ 48 ժամուայ ընթացքում՝ օրական 200-300 տոննա ծաւալով:

Առաջին հեղուկանաւը Էնզելիում դատարկուեց 1993 Մայիսի 6ին: Ստացուած վառելիքի դիմաց ՀՀն պէտք է ստանար 2000 տ. բենզին, հեղուկ վառելիք, սակայն մինչեւ 1993 Յուլիսի 5ը ՀՀն ստացաւ 1583 տ. վառելիք: Իրանական թերացման պատճառով մէկ ամսից աւելի Մեղրիում պարապուրդի մէջ էին 42 հեղուկատար մեքենաների կէսից աւելին[14]:

1993 Յուլիսի 5ին Յարութիւնեանը դիմում է Նուրբախշին՝ ԻԻՀից ՀՀ հեղուկ վառելիքի տեղափոխման ձգձգումները վերացնելու համար[15]: Հարցը կարգաւորուեց երկար բանակցութիւններից յետոյ, երբ Արլ. Ատրպատականի փոխնահանգապետ Մոհամմադ Ալի Խաթիբին այցելեց ՀՀ: Փաստօրէն, հարցի լուծման հանգոյցը Թաւրիզում էր, ոչ թէ Թեհրանում:

1993 Օգոստոսի 4ին ՀՀ փոխադրութեան նախարար Հենրիկ Քոչինեանի եւ Մ. Խաթիբիի ստորագրած պայմանագրի համաձայն՝ Էնզելիով փոխադրուած ՌԴի հեղուկ վառելանիւթը ՀՀ հասցնելու համար իրանական կողմը Ջուլֆայում պէտք է ՀՀին յանձնէր օրական 200 տ. հեղուկ վառելիք: Բայց մինչեւ 1993 Սեպտեմբերի 14ը իրանական կողմը բաց չէր թողել ՀՀին հասանելիք 850,000 լիտր վառելանիւթը: Հայկական կողմը դիմեց ԻԻՀ փոխադրութեան նախարար Ա. Թորքանին, որ իրանական կողմից աւտօմեքենաներ չընդունելը եւ հեղուկ վառելանիւթ բաց չթողնելը կը դիտուի որպէս պայմանագրի չկատարում՝ դրանից բխող հետեւանքներով[16]: Ստեղծուած իրադրութիւնը պայմանաւորուած էր ԼՂ

ճակատում ընթացող ռազմական գործողութիւններով, որոնց պատճառով իրանական կողմը թոյլ չէր տալիս բեռների փոխադրումը ՀՀ:

Յատուկ նշանակութիւն ունէր հիմնական կամուրջի կառուցումը, որի ֆինանսաւորումը ՀՀի համար լուծուեց Աւստրալիայի եւ Նոր Զելանդայի հայ համայնքների «Հայրենի Աղէտեալների Օգնութեան Ֆոնդ»ի յատկացրած 1 մլն. դոլար գումարով: Այն սկզբում նախատեսուած էր ՀՀ աղէտի գօտում բնակարաններ կառուցելու համար, սակայն շրջափակման եւ պատերազմի հետեւանքով որեւէ ապրանք չէր փոխադրւում ՀՀ, ուստի աղէտի գօտում աշխատանքներ չէին կատարւում: 1992 Յունիսի 28ին ֆոնդի նախագահ, Աւստրալիայի եւ Նոր Զելանդայի հայոց թեմի առաջնորդ Աղան Եպս. Պալիոզեանը գումարը յանձնեց ՀՀ կառավարութեանը[17]: Մինչդեռ իրանական կողմը ֆինանսաւորման իր մասը յետաձգեց:

1993 Յունիսի 17ին եւ Յուլիսի 8ին Հայ-Իրանական Կապերի Համաձայնեցման Յանձնաժողովը (ՀԻԿՀՅ) քննարկում է կամուրջի շինարարութեան, Երեւան-Թեհրան չուերթերի կազմակերպման, Վայք-Սիսիան ճանապարհային եւ Քաջարան-Մեղրի հատուածում վերակառուցման աշխատանքների հարցերը[18]: Միաժամանակ ապահով կապի ստեղծման ուղղութեամբ տեղի ունեցան այլ հանդիպումներ եւս[19]:

1994 Յունուարին բացուեց Երեւան-Թեհրան ցամաքային երթուղի: Իսկ Թեհրան-Երեւան ուղիղ հեռախօսակապի կայան ստեղծելու համար ՀՀ կառավարութեան որոշմամբ յատկացուել էր անհրաժեշտ գումար: 1994 Սեպտեմբերի 5ին կողմերը կնքեցին փոխըմբռնման յուշագիր՝ 8 մեգաբիթ վայրկեան թուային ռադիո-ինքնանջատիչ եւ միացուցիչ տեսակի միջազգային հեռախօսակապ ստեղծելու մասին[20]:

1994 Ապրիլի 20ին ՀՀի դեսպանութիւնում Իրան-Հայաստան առեւտրաարդիւնաբերական պալատի անդամներ Լ. Ահարոնեանը եւ Ն. Շահբազեանը[21], իսկ Մայիսի 16-18ը ՀՀի փոխնախագահ Յարութիւնեանը Զանգեզուրի շրջանում Արեւելեան Ատրպատականի նահանգապետի[22] հետ քննարկում են կամուրջի շինարարութեան, համատեղ փոխադրութեան ընկերութիւն ստեղծելու մասին հարցերը:

Կամուրջի կառուցման աշխատանքները տեւեցին միքանի տարի՝ ռազմաքաղաքական եւ ֆինանսական խնդիրների պատճառով: 1994 Սեպտեմբերի 13ին Քոչինեանը իրանական կողմին բողոքում է, որ երկու տարի է՝ Արաքս գետի վրայ կառուցւում է կամուրջ, սակայն իրանական կողմը չէր փոխանցել իր ֆինանսական մասնաբաժինը[23]: Նրա մէկ այլ դիմումում նշւում էր, որ 1993 Հոկտեմբերի 18ին իր եւ ԻԻՀի փոխադրութեան ու ճանապարհների շինարարութեան նախարարի տեղակալ Ք. Ֆ. Հալուայի հանդիպման ժամանակ որոշում էր ընդունուել, որ հիմնական համաձայնագրի կնքման համար իրանական կողմը կը հրաւիրի ՀՀի ներկայացուցիչներին: Սակայն անցել էր մէկ տարի եւ համաձայնագրի հարցը չէր լուծուել: ՀՀն իր բաժնեմասը յատկացրել էր,

իսկ իրանական կողմը դրամական ներդրում չէր կատարում, որի հետեւանքով կամուրջի շինարարութիւնը դադարել էր[24]:

1994 Սեպտեմբերի 15ին ՀԻԿՀՅն քննարկում է իր ստորագրած յուշագիրը[25]: Վերջինս առաջարկում էր կազմակերպել Երեւան-Թեհրան-Սպահան-Քիշ կանոնաւոր չուերթեր, Երեւան-Թաւրիզ ցամաքային ուղերթեր: Նոյն նպատակն ունէր նաեւ Նոյեմբերի 25-27ը ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանի այցը Թեհրան եւ Քիշ կղզի[26]: Նոյեմբերի 27ին Թեհրանում ստորագրուեց Արաքսի կամուրջի կառուցման մասին պայմանագիր, որով լուծուեց կամուրջի ֆինանսաւորման հարցը: Որոշւում է բանակցել Թեհրան-Երեւան եւ Թաւրիզ-Երեւան ցամաքային երթուղիներ բացելու շուրջ[27]: Զուգահեռ քննարկւում էր նաեւ Մեղրի-Երեւան աւտօճանապարհի շինաշխատանքներում ԻԻՀին մասնակից դարձնելու հարցը: Մինչդեռ Թեհրանն առաջ էր քաշում ԻԻՀ-Նախիջեւան-ՀՀ-ԱՀ-Վրաստան երկաթուղու վերագործարկման հարցը:

1994 Նոյեմբերի 11ին ԻԻՀի դեսպան Համիդ Ռեզա Էսֆահանին ՀՀի վարչապետ Հրանդ Բագրատեանին յայտնում է, որ իրանական կողմը լուծել է Մեղրիի կամուրջի կառուցման հարցը եւ պէտք է կնքուի համաձայնագիր գումարի մասին: Դեսպանը անդրադառնում է երկու երկրների միջեւ օդային կապ ստեղծելու կարեւորութեանը, քանզի Երեւան-Մեղրի 400 կմ. տարածութիւնը միայն բեռնատար մեքենաների միջոցով անցնելը խոչընդոտում էր հրատապ հարցերի արագ լուծմանը[28]: Փաստօրէն իրանական կողմը առաջ էր քաշում ռազմավարական հարց, որի լուծումը մեծ նշանակութիւն ունէր ՀՀի զարգացման համար:

1995 Օգոստոսի 20ին ԻԻՀ խորհրդարանի փոխնախագահ Հասան Ռոհանին՝ ՀՀ կատարած այցի ընթացքում պայմանաւորւում է Օգոստոսի 29ին Մեղրիում կազմակերպել հանդիպում: Սակայն նշուած օրը Մեղրիում ՀՀի պատուիրակութեանը իրանական կողմից ոչ ոք չէր եկել դիմաւորելու, իսկ Թաւրիզում գտնուող ԻԻՀ փոխադրութեան նախարարը հանդիպման գալու փոխարէն վերադարձել էր Թեհրան: Դեսպան Էսֆահանին նոյնպէս աւելորդ էր համարել այցելել Մեղրի: Օգոստոսի 31ին ՀՀ փոխնախագահ Յարութիւնեանը դիմեց ՀԻԿՀՅի նախագահ, ԻԻՀ տնտեսութեան եւ ֆինանսների նախարար Մ. Մոհամմադխանին, ԻԻՀ ԱԳ նախարար Վիլայաթիին եւ ԻԻՀ Ռոհանիին եւ յայտնեց իր մտահոգութիւնը, քանզի աշխատանքներ չէին կատարւում ԻԻՀի կողմից ֆինանսական պարտաւորութիւնները չկատարելու պատճառով[29]: Իրանի մեղքով քանիցս ձախողուել էին նախապէս պայմանաւորուած տարբեր մակարդակի հանդիպումները:

Հայկական կողմի դիմումներից յետոյ միայն 1995ի աշնանը ԻԻՀն կատարեց ֆինանսական իր պարտականութիւնները: Շինարարութիւնն աւարտուեց 1995 Դեկտեմբերին: Ամսի 26ին Արաքսի վրայ գցուած 192 մ. երկարութեամբ կամուրջը կապեց ՀՀն ԻԻՀին: Կամուրջի ընդհանուր արժէքը 2,46 մլն. դոլար էր, որի 1 մլն.ը ներդրել էր իրանական կողմը:

Հայկական կողմի բազմաթիւ դիմումների՝ մինչեւ 1995ի աշուն անպատասխան մնալն ունէր ոչ թէ ֆինանսական, այլ քաղաքական պատճառներ: Իրականում Թեհրանը ձգտում էր բաւարարել ԻԻՀում ադրբեջանական լոպիի ցանկութիւնը, իսկ Լեռնային Ղարաբաղում հաստատուած հրադադարից յետոյ բացել Երեւան-Նախիջեւան-Ջուլֆա երկաթգիծը, որի համար յետաձգում էր կամուրջի ֆինանսական յատկացումը: Եւ միայն երբ պաշտօնական Թեհրանի համար այլեւս պարզ էր, որ Նախիջեւանի ուղղութեամբ հեռահաղորդակցութեան հարցը փակուած է, վերջապէս, որոշեց ընթացք տալ կամուրջի կառուցման գործին:

1996 Յունուարի 9ին տեղի ունեցաւ Արաքսի վրայ ՀՀ-ԻԻՀ 400 տ. բեռնատար հիմնական կամրջի հանդիսաւոր բացումը, մասնակցութեամբ ՀՀ-ԻԻՀ բարձրաստիճան պաշտօնեաների: Սա առաջին համատեղ կառոյցն էր եւ ՀՀի համար արտաքին աշխարհ դուրս գալու բացառիկ ուղի[30]:

Կամուրջը նպաստեց առեւտրաշրջանառութեան ընդլայնմանը: ԻԻՀն ՀՀի համար դարձաւ Պարսից Ծոցի, Ծայրագոյն Արեւելքի, Հարաւարեւելեան Ասիայի երկրներից բեռների փոխադրման տարանցիկ ճանապարհ: Բեռնափոխադրումները աւելացան 3-4 անգամ: Բաւական է նշել, որ եթէ 1994ին երկկողմ առեւտրաշրջանառութիւնը 57 մլն. էր, 1995ին՝ 94 մլն., ապա 1996ին, կամուրջի շահագործումից յետոյ այն հասաւ 193 մլն. դոլարի, որը մինչեւ 2011 մնաց անգերազանցելի: 1997ին ՀՀ նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի խօսքով՝ եթէ մէկ շաբաթով դադարի կամուրջի գործունէութիւնը, ապա գները ՀՀում կ'աճեն երկու անգամ, այսինքն՝ տեղի կ'ունենայ բնակչութեան կենսամակարդակի 100 տոկոսանոց անկում[31]:

Տնտեսական կապերի զարգացման համար կարեւոր էր ՀՀ Մեղրիի մաքսակէտի համալիրի կառուցումը, որը շահագործման է յանձնուել 1998ին, կամրջի հարեւանութեամբ, իսկ ԻԻՀի մաքսատան համալիրը՝ 1996ին[32]:

Չնայած վերոնշեալին Թեհրանը շարունակում էր հետաքրքրուել երկաթուղու վերագործարկմամբ: Ինչ խօսք, այս տարբերակն աւելի ձեռնտու էր Իրանին՝ աւելի մեծ քանակով բեռներ տեղափոխելու եւ զուգահեռ իր ազդեցութիւնը տարածաշրջանում ամրապնդելու տեսակէտից: Այդ նպատակով ԻԻՀն շարունակում էր տնտեսական բնոյթի առաջարկները ՀՀին եւ ԱՀին: 1995 Փետրուարի 16ին Բագրատեանը ընդունում է ԻԻՀ դեսպան Էսֆահանիին: Վերջինս կարեւորում էր երկաթուղն: ԻԻՀի կառավարութիւնը բանակցում էր ԱՀի հետ Նախիջեւանով անցնող երկաթուղու ճանապարհը բացելու ուղղութեամբ: Դեսպանը առաջարկում է մեծացնել չուերթերի քանակը՝ Երեւան-Թաւրիզ, Երեւան-Սպահան նոր չուերթեր ստեղծելու համար: ԻԻՀ անգամ պատրաստ էր տարանցիկ վիզաներ տրամադրել ՀՀ քաղաքացիներին ԻԻՀ տարածքով այլ երկրներ մեկնելու համար[33]:

Երկկողմ կապերի զարգացման գործում կարեւոր էր օդային հաղորդակցութեան հարցը: Թեհրան-Երեւան չուերթի իրականացման

գործում մեծ է եղել Ահարոնեանի դերը: Նա 6 տարի գործարարների համագումարի փոխնախագահն էր եւ 1993ին հիմնադրել է Իրան-Հայաստան Առեւտրի Պալատը, որի խորհրդի նախագահն է մինչեւ օրս[34]: Պալատն աշխատում է ԻԻՀ Առեւտրի Եւ Հանքարդիւնաբերութեան Պալատին կից: Պալատի կանոնադրութեան կարգաւորման եւ գրանցման մէջ մեծ դեր է ունեցել Ժ. Աբրահամեանը[35]: Սակայն Երեւան-Թաւրիզ օդային կամուրջը երկար կեանք չունեցաւ, փոխարէնը՝ 1997 Դեկտեմբերի 29ին ԻԻՀ «Դիդարէ Սէյրգիթի» եւ Երեւանի միջքաղաքային ուղեփոխադրութեան ընկերութեան միջեւ կնքուած պայմանագրով 1998 Հոկտեմբերի 25ից սկսեց գործել Երեւան-Թեհրան ցամաքային երթուղին[36]:

Երկկողմ կապերի զարգացման գործում որոշակի նշանակութիւն ունէր բեռների փոխադրման հարցը: 2000 Ապրիլի 8ին ԻԻՀ դեսպանութիւնը յայտնում է, որ ըստ բեռնափոխադրումների համաձայնագրերի՝ ՀՀի բեռնատար մեքենաների միջանցիկ երթեւեկը ԻԻՀի տարածքով դէպի երրորդ երկրներ (օրինակ՝ Իրաք) ենթակայ չէ որեւէ սահմանափակման[37]: Ոլորտում առկայ հարցերը քննարկելու նպատակով Յունիսին ՀՀ այցելեց ԻԻՀ փոխադրութեան նախարար Մ. Հոջաթին: Իսկ Օգոստոսի 9ին Երեւանում ՀԻԿՀՅն քննարկում է Աստրախան-Էնզելի ծովային ուղով ՀՀի հետ գործակցութեան աշխուժացման հարցը[38]:

1999 Յունուարի 22ին ՀԻԿՀՅն՝ Երուանդ Զախարեանի նախագահութեամբ, բազմիցս քննարկուած Մեղրի-Քաջարան փապուղու հարցը հանեց օրակարգից՝ իրանական կողմի ֆինանսաւորման անհամաձայնութեան պատճառով: Իրանական կողմը չհամաձայնուեց այն կառուցել սեփական ներդրումների հաշուին:

Քաջարանի փապուղու շինարարութեան շուրջ նոր քննարկումներ սկսուեցին 2001ին: Իրանական կողմն առաջարկում էր 50% ներդրում կատարել, հակառակ դէպքում իրանական ներդրումները 30%ից չեն անցնի[39]: Նոյեմբերի 14ին ՀՀ ուժանիւթի նախարար Կարէն Գալուստեանը ընդունեց ԻԻՀ ԱԳՆ ԱՊՀի հետ համագործակցութեան գլխաւոր վարչութեան պետ Մեհդի Սաֆարիին եւ ԱՊՀ Ա. վարչութեան պետի տեղակալ Նաջաֆի Խոշրուդիին: Սաֆարին ՌԴում դեսպան եղած ժամանակ մեծ աւանդ էր ունեցել Հիւսիս-Հարաւ Առանցքի ձեւաւորման մէջ[40]: Կողմերը քննարկեցին ՀՀ նախագահի՝ ԻԻՀ այցի ընթացքում Քաջարանի փապուղու շինարարութեան մասին փաստաթղթի ստորագրման հարցը: Յիրաւի, սա կարող էր դառնալ որակապէս նոր ու խոստմնալից նախագիծ:

2001 Դեկտեմբերի 25-27ը ՀՀ նախագահի այցի աւարտին Թեհրանում ստորագրուեց նաեւ Քաջարանի փապուղու կառուցման մասին համաձայնագիր[41]: Սակայն գործնական քայլեր այդ հարցում չէին կատարւում: 2004 Սեպտեմբերի 8-9ը, երբ ԻԻՀ նախագահ Մոհամադ Խաթամիի՝ ՀՀ այցի շրջանակներում ստորագրուեցին տնտեսական մի շարք կարեւոր համաձայնագրեր, դրանց թւում նաեւ՝ Քաջարանի

փապուղու նախագիծը[42] իրագործելու համար հնարաւոր լուծումներ գտնելու վերաբերեալ փաստաթուղթը: Սակայն փապուղու նախագծային աշխատանքները դադարեցուեցին. փապուղու կառուցման համար անհրաժեշտ էր 50-60 մլն. դոլար: Իրանական կողմի խոստացած վարկի պայմաններն անընդունելի էին հայկական կողմի համար, քանի որ դրանք *բիզնէս*-վարկեր էին: ՀՀն միայն ճանապարհների վերականգնման համար տարեկան տրամադրում էր 20 մլն. դոլար, հետեւաբար ՀՀի միջոցներով աշխատանքները կատարել հնարաւոր չէր[43]:

Նոր կապուղիների ստեղծման նպատակով 2002 Մայիսի 21ին Սանկտ Պետերբուրգում ՀՀ փոխադրութեան եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկեանը մասնակցեց «**Հիւսիս-Հարաւ**» փոխադրութեան միջանցքի նախագծի իրականացման խորհրդակցութեանը[44]: Նոյն տարուայ Յունիսի 11-12ը հայկական կողմը Թեհրանում մասնակցեց «Իրան-Տրանզիտ-2002» միջազգային համաժողովին: Կողմերի համար ընդունելի էր համակցուած փոխադրութեան հնարաւորութիւնների օգտագործումը, որի համար իրական պայմաններ կարող էր ստեղծել «Տրասեկա»[45] ծրագրի շրջանակներում վերանորոգուած Կարմիր Բլուր երկաթգծային բեռնահամալիրը, որի բացումը տեղի ունեցաւ 2000 Յուլիսի 15ին: Այն հնարաւոր էր դարձնում բեռնափոխադրումների իրականացումը Սեւ Ծովից Վրաստանի, ՀՀի եւ ԻԻՀի տարածքով դէպի Պարսից Ծոց, որոնց ծաւալներն աճել էին՝ 2000ի 156,000 տոննայից 2001ի 231,000 տոննայի[46]: Բեռնահամալիրի արդիականացման դրամաշնորհային ծրագիրը իրագործուել է 1 մլն. եւրօ արժողութեամբ:

Բեռնափոխադրումների կտրուկ աճին կարող էր նպաստել, եթէ իրանական կողմը Վրաստանի եւ ՀՀ տարածքով ԻԻՀ փոխադրուող ու ԻԻՀից առաքուող բեռների համար սահմանէր յատուկ սակագնային զեղչեր: Աւելին, իրանական կողմը պէտք է պարզեցնէր վիզայի տրամադրման կարգը, քանզի հայկական մեքենաները ԻԻՀ տարածք արտօնուած էին մտնել ոչ աւել քան 60 կմ., այնինչ՝ իրանական մեքենաները ՀՀ տարածքով անցնում էին Վրաստան: Թեհրանը այս հարցերում այլ մօտեցում ունէր եւ լուրջ քայլեր՝ այդ ուղղութեամբ չարուեցին:

Տնտեսական կապերի զարգացման համար բացարձակապէս նոր նշանակութիւն կարող է ունենալ Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը: Ադրբեջանական շրջափակման պայմաններում, երբ չի գործում Երեւան-Նախիջեւան-Ջուլֆա-Թաւրիզ երկաթգիծը, նոր երկաթգիծ կառուցելու հարցը կենսական նշանակութիւն ունի ՀՀ զարգացման համար[47]:

Այս խնդրով բանակցութիւնները մեկնարկել են դեռեւս 1992ին, մշակուել են դրա կառուցապատման վերաբերեալ միքանի նախագծեր, սակայն դրանք այդպէս էլ կեանքի չկոչուեցին: Իրանական

երկաթուղիների հետ կապի հաստատման դէպքում ՀՀն հնարաւորութիւն կը ստանար մուտք գործելու հաղորդակցման նոր ուղիներ, դուրս գալու Պարսից Ծոց ու Միջին Ասիա: Իր հերթին Իրանը կապ կը հաստատէր Սեւ Ծովի աւազանի եւ ԱՊՀ երկրների հետ: Նախնական հաշուարկներով՝ երկաթգծի շինարարութեան ընդհանուր ծախսը 1,8 մլրդ. դոլար էր, որից 1,4 մլրդ.ը պէտք է հոգար Իրանը, մնացած մասը՝ «Ռուսական Երկաթգծեր» ԲԲԸն: Երկաթգծի շինարարութեան բանակցութիւնները վերականգնուեցին միայն 2009 Ապրիլին՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի՝ Իրան կատարած այցի ընթացքում: Որոշուեց աշխուժացնել քայլերը շինարարական աշխատանքների մեկնարկի վերաբերեալ, սակայն այս անգամ էլ բանակցութիւններից գործնականին անցնելուն խոչընդոտեց համաշխարհային տնտեսական ճգնաժամը:

Այսպիսով տնտեսական յարաբերութիւնների զարգացման համար մեծ նշանակութիւն ունեցաւ Արաքսի հիմնական կամուրջի կառուցումը, ինչպէս նաեւ երկու երկրներն իրար կապող օդային եւ ցամաքային հաղորդակցութեան հաստատումը: Այդ ամէնի շնորհիւ մեղմուեց ՀՀին սպառնացող շրջափակումը:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ, ՀԻՆ ՀԱՐՑԵՐ ՆՈՐ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1998 Նոյեմբերի 19-25ը Երեւանում տեղի ունեցաւ հայ-իրանական գործարար համաժողով, որին մասնակցեցին աւելի քան 300 գործարարներ: Նրանցից 80ը իրանական տարբեր ոլորտների ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ պատասխանատուներ էին Արեւելեան Ատրպատական եւ Քերման նահանգներից: Ջուգահեռ կազմակերպուեց նաեւ իրանական 50 ընկերութիւնների արտադրանքների ցուցահանդէս:

Հայաստանի Արդիւնաբերողների Եւ Գործարարների Միութեան նախագահ Ա. Վարդանեանը եւ Իրան-Հայաստան Առեւտրի Պալատի նախագահ Աւարոնեանը ստորագրեցին գործակցութեան եւ գործընկերութեան պայմանագիր, որով հիմք դրուեց այդ կառոյցների երկարաժամկէտ փոխյարաբերութեանը[48]:

Համաժողովի մասնակիցներն ընդունեցին «Դիմում Երկու Երկրների Օրէնսդիր Եւ Գործադիր Մարմինների Բարձրաստիճան Պաշտօնեաներին» բանաձեւ: Այն առաջարկում էր.-

Ա) մշակել եւ ընդունել միջկառավարական այնպիսի համաձայնագրեր, որոնք բարենպաստ պայմաններ կը ստեղծէին երկու երկրների գործարարների կողմից արտադրական համատեղ ձեռնարկութիւնների ստեղծման համար, կը նպաստէին ներդրումային ծրագրերի իրականացմանը.

Բ) նոյնացնել տարանցիկ բեռնափոխադրումների տարիֆները.

Գ) կազմակերպել արդիւնաբերական ապրանքների ամէնամեայ ցուցահանդէսներ Երեւանում եւ Թեհրանում.
Դ) պարզեցնել գործարարների մուտքի եւ ելքի վիզաների ձեւակերպումը.
Ե) օժանդակել ԻԻՀ նահանգների եւ ՀՀ մարզերի միջեւ գործակցութեան զարգացմանը.
Զ) պայմաններ ստեղծել տնտեսական տեղեկատուութեան փոխանակման համար.
Է) ապահովել երկու երկրների չափանիշերի համապատասխանութիւնը[49]:

Արտահանման եւ ներմուծման օրէնքների պարզեցումը, մաքսային եւ հարկային տոկոսադրոյքների իջեցումը զգալիօրէն կը նպաստէր տնտեսական գործակցութեան զարգացմանը: Վերջին հարցին է անդրադառնում ԻԻՀ դեսպանութեան գործերի հաւատարմատար Մոհամմադ Ֆարհադ Քոլէյնին 1998 Դեկտեմբերի 16ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանի հետ հանդիպմանը: Նա դժգոհում էր, որ ՀՀ ճանապարհների շահագործման համար իրանական ծանր բեռնատարներից գանձւում էր հարկ: Բանակցութիւններից պարզ է դառնում, որ հայկական կողմը տրանզիտից շահոյթ ստանալու նպատակ չունէր: Աւելին, նշուած հարկը գանձւում էր սոսկ մէկ պատճառով՝ ՀՀն 1998ին Մեղրի-Կապան ճանապարհը նորոգելու համար ծախսել էր 4,5 մլն. դոլար, պէտք է ծախսուէր եւս 8-9 մլն. դոլար, մինչդեռ ամավարկը չունէր նման միջոցներ: Այդ գումարն անհրաժեշտ էր ճանապարհի միւս հատուածները նորոգելու համար:

ՀՀ նախագահը եւ ԻԻՀ գործերի հաւատարմատարը քննարկում են նաեւ գազամուղի կառուցման հարցը[50]: Իրանական կողմը սպասում էր, որ ՀՀն Մոսկուայի հետ յստակեցնէր ծրագրի իրականացման համատեղ ընկերութեան հարցը եւ քննարկէր իրանական կողմի հետ, որտեղ էլ առաջանում էին մի շարք խնդիրներ: Նման դէպքում իրանական կողմը չէր կարող ներդրումներ անել: Քոլէյնին առաջարկում էր ստեղծել ժամանակաւոր կոմիտէ՝ լուծելու բոլոր հարցերը: Չնայած՝ Քոլէյնիի բարձրացրած հարցերը տեղին էին, սակայն հայկական կողմի համար խնդիրն այն էր, որ դրանք կեանքի կոչելու համար նախատեսուող 100 մլն. դոլարը բացակայում էր: Փաստօրէն, գազամուղի շինարարութիւնը յետաձգւում էր ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով:

Հայ-ռուսական բանակցութիւններն արդիւնք չտուեցին: Աւելին, ՌԴն շահագրգռուած չէր, որ իրանական գազը մտնի ՀՀ: ՌԴի ընդդիմութիւնը բացատրւում էր նրանով, որ գազամուղի գործարկման հետեւանքով ՀՀն յաւակնում էր դառնալ տարանցիկ երկիր իրանական գազը Եւրոպա փոխադրելու համար: Այստեղ արդէն բախւում էին ՌԴ-ԻԻՀ շահերը: Այդպիսով ՀՀն զրկւում էր իրանական գազից օգտուելու հնարաւորութիւնից, որն անվտանգութեան տեսակէտից աւելի ապահով էր:

Իրանական մամուլն անդրադառնում էր տնտեսական կապերին: Թեհրանում լոյս տեսնող *Ասիայէ Միանէ* տնտեսական ուղղուածութեամբ շաբաթաթերթի թղթակիցը ՀՀ կատարած այցի ընթացքում պատրաստել էր յօդուած՝ «ՀՀ. Նրանց Կանաչ Լոյսերը Եւ Մեր Կրիայի Քայլերը» վերնագրով[51]: Յօդուածից յայտնի է դառնում, որ ՀՀում գործող իրանցի առեւտրականների միութեանը անդամակցել ցանկացողներից ստիպողաբար վերցւում էր 500 դոլար: Շարունակելով նիւթը՝ յօդուածագիրը յաւելում էր. «*ՀՀ ասելով, մենք ոչ միայն հասկանում ենք Կովկասում գտնուող եւ հարեւանի հետ վիճելի հարցեր ունեցող հանրապետութիւն՝ «Ղարաբաղ», այլեւ շուկայ, որտեղ ոչ-հեռու ապագայում, ԻԻՀն լուրջ շահեր կ'ունենայ: Լինելով իրանամէտ՝ ՀՀն դեռեւս յոյս ունի տեսնելու ԻԻՀի ներկայութիւնը իր տնտեսութեան տարբեր ոլորտներում*»[52]:

Իրանական կողմը գոնէ մամուլի մակարդակով եզրակացրեց, որ ՀՀի ակնկալիքները ԻԻՀից մեծ էին, սակայն վերջինս յապաղեց եւ նուազ ներդրումային քաղաքականութեամբ նշանաւորեց 1990ականները: Հակառակը՝ նոր խնդիրներ առաջացան տնտեսական կապերում[53]: Այսպէս, 1998ին իրանական կողմը որոշ սահմանափակումներ մտցրեց Ջուլֆայից ԻԻՀ տարածք երթեւեկող հայկական բեռնատարների համար[54]:

Վերը նշուած խնդիրների պատճառով՝ նաեւ 1997ի համեմատ 1998ին ՀՀի եւ ԻԻՀի միջեւ ապրանքաշրջանառութիւնը նուազեց մօտ 30-35%ով[55]: Այն ունէր քաղաքական պատճառներ՝ Թեհրանը դէմ էր ՀՀի նոր իշխանութեան քաղաքականութեանը Լեռնային Ղարաբաղի հարցում: Ահա թէ ինչու իրանական կողմը բարձրացրեց մաքսատուրքերը եւ ճանապարհային վճարները, որոնք խոչընդոտում էին բնականոն յարաբերութիւններին եւ որոնց շուրջ կողմերն ընդհանուր յայտարարի չէին գալիս: Ուշագրաւ է, որ Երեւանում կազմակերպուած ցուցահանդէսվաճառքից յետոյ պատասխան ցուցահանդէսը Թեհրանում ձգձգուեց: Երեւանում կազմակերպուած ցուցահանդէսի համար էլ եղան բարդութիւններ մաքսազերծման հարցում: Չնայած պայմանաւորուածութեանը՝ ՀՀ ֆինանսների նախարարութիւնն այն չազատեց մաքսատուրքից: Հայկական կողմն առաջարկեց կառուցել մետաղական ջարդօնի վերամշակման համատեղ գործարան, որը իրանական կողմը մերժեց եւ փոխարէնը առաջարկեց գիւղատնտեսական ծրագրեր՝ ոռոգման ցանց 200,000 դոլար ներդրումով, տրակտորների հաւաքման գործարանի կառուցում, անասնաբուծական ագարակ՝ 10,000 գլուխ անասուններ՝ 7000-8000 լիտր կաթնատուութեամբ, ԻԻՀում թռչնաբուծական ագարակների վարձակալութիւն[56]: Իրանական կողմը խուսափում էր խոշոր ներդրումներից եւ շեշտը դնում գիւղատնտեսութեան վրայ:

1990ականների 2րդ կէսին առեւտրի ոլորտում անցում կատարուեց ապրանքների քանակական ցուցանիշից որակականին: Թէեւ առեւտրաշրջանառութիւնը 1999ին հասաւ 112 մլն. դոլարի, սակայն յաջորդ

տարիներին այն կրկին նուազեց, 2004ին կազմեց 107 մլն. դոլար: Այդ տարիներին առեւտրի ոլորտում պահպանւում էր մօտ 30-70%ի յարաբերակցութիւնը յօգուտ ԻԻՀի:

Այսպիսով, 1998-2000՝ տնտեսական յարաբերութիւններում տիրեց անորոշութիւն: Անհրաժեշտ էին նոր քայլեր՝ դուրս գալու փակուղուց:

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՈՒԺԱՆԻՒԹԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ

Ուժանիւթի ոլորտում յաջողուած կարելի է համարել երկկողմ գործակցութիւնը:

ԻԻՀն որոշակի ռազմավարական նպատակներ էր հետապնդում՝ կառուցելով ԻԻՀ-ՀՀ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը, որը շահագործման յանձնուեց 1997ին: Ենթադրւում էր, որ այդ գիծը կը շարունակուի դէպի Վրաստան, որը, սակայն, չիրականացաւ Թբիլիսիի մերժման պատճառով[57]: Նախատեսւում էր 1997 Փետրուարի վերջին ԻԻՀից սկսել ՀՀ ուժանիւթի մատակարարումը: Սկզբում պէտք է ՀՀ մատակարարուէր 65 մգվտ. հոսանք, իսկ 1997ի վերջին՝ 200 մգվտ.: Ակնկալւում էր տարեկան ստանալ 330 մլն. կվտ. ելեկտրականութիւն[58]: Սակայն հոսանքացանցի միացումը յետաձգուեց, քանի որ հայկական կողմն իր պարտաւորութիւնը չէր կատարել եւ ՀՀ պատուիրակութիւնը չէր մեկնել Թեհրան: Մայիսի 1ից ՀՀն ԻԻՀից ստացաւ ելեկտրականութիւն:

1999 Ապրիլին «Հայհիդրօէներգանախագիծ» հիմնարկը մշակեց Մեղրիի ՀԷԿի[59] յատակագիծը[60]: Սակայն Մայիսի 24-25ը Մեղրիում «Հայհիդրօէներգանախագիծ» եւ ԻԻՀ «Մահաբ Ղոդս» ընկերութիւնների մասնագէտների հանդիպումից պարզ դարձաւ, որ «Մահաբ Ղոդս»ի հետ համաձայնեցուած չէր հայկական կողմի կազմած յատակագիծը: Ըստ յատակագծի՝ ընդունուած էր Մեղրիի ՀԷԿը ՀՀ, իսկ Ուժտաբի ՀԷԿը ԻԻՀի տարածքում հաւասար հզօրութիւններով կառուցելու տարբերակը[61]: Այս հարցում աշխուժացում նկատուեց միայն 2012 Նոյեմբերի 8ին, երբ սկսուեց ՀԷԿի շինարարութիւնը[62]:

ՀԷԿի շինարարութիւնը պէտք է տեւէր 5 տարի եւ աւարտուէր 2017ին: Անհրաժեշտ ներդրումները (մօտ 325 մ. դոլար) պէտք է անէր իրանական կողմը: Տարեկան ՀԷԿը պէտք է արտադրէր մօտ 800 մ. կվտ./ժ. ուժանիւթ, որը ՀՀ ընդհանուր տարեկան ուժանիւթի արտադրութեան 10 տոկոսից աւելին է: Շահագործման յանձնուելուց յետոյ, ըստ ծրագրի, ՀԷԿը պէտք է 15 տարի շարունակ ելեկտրականութիւնը արտահանէր Իրան, իսկ դրանից յետոյ այն պէտք է անհատոյց փոխանցուէր ՀՀին[63]:

Սակայն 2016 եւ 2017ին ՀՀ կառավարութեան գործունէութեան ծրագրում Մեղրիի ՀԷԿին վերաբերող որեւէ դրոյթ չներառուեց[64]. Մեղրիի ՀԷԿի ծրագիրը հանուեց օրակարգից: Աւելին, Մեղրիի ՀԷԿի շինարարութեան հարցը չքննարկուեց անգամ ԻԻՀ նախագահ Ռոհանիի՝ 2016 Դեկտեմբերի 21ին Հայաստան կատարած այցի ժամանակ[65]:

Գազամուղի շուրջ բանակցութիւնները նոր աշխուժացում ունեցան 1990ականների վերջին: 1999 Յուլիսի 22ին Կիեւում տեղի ունեցած Ինոգէյթի[66] գագաթաժողովում հայկական կողմի ներկայացրած փաթէթով առաջարկւում էր ՀՀ տարածքով ածխաջրածինների փոխադրման արդիւնաւէտ եւ էժան տարբերակ: Այդ ծրագիրը 2000 Յունիսի 29-30ը Բրիւսէլում կայացած «Էներգետիկ Ուխտ»[67] կազմակերպութեան հանդիպմանը ստացաւ Եւրոպական յանձնաժողովի համաձայնութիւնը: 2000 Յուլիսի 14ին Երեւանում տեղի ունեցաւ ՀՀ-ԻԻՀ-ԵՄ եռակողմ հանդիպումը՝ քննարկելու ԻԻՀ-ՀՀ գազամուղի կառուցման հեռանկարները: Օգոստոսի 9ին Երեւանում տեղի ունեցած հայ-իրանական կապերի յանձնաժողովի նիստում կարեւորուեց գազատարի շինարարութեան հարցը[68]:

Մինչ ընթանում էին ՀՀ-ԻԻՀ բանակցութիւնները, 1999 Նոյեմբերի 18ին ԱՀ, Թուրքիայի եւ Վրաստանի նախագահները ԵԱՀԿ Ստամբուլի գագաթաժողովում ստորագրեցին միջկառավարական համաձայնագիր: ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթընը եւս ստորագրեց այդ համաձայնագիրը որպէս դէտ[69]: ԱՄՆը շահագրգռուած էր Բաքու-Թբիլիսի-Ջէյհան նաւթամուղի կառուցմամբ որպէս այլընտրանք՝ գոյութիւն ունեցող Բաքու-Նովոռոսիյսկ նաւթամուղին: ԱՄՆի նպատակն էր թուլացնել ՌԴի եւ ԻԻՀի կշիռը տարածաշրջանում եւ ուժեղացնել Թուրքիայի դերն այդ հարցում:

2000 Մայիսի 13-15ը *Թեհրան Թայմզ* գործակալութիւնն անդրադարձաւ ՀՀ-ԻԻՀ գազամուղի շուրջ քննարկումներին: Բանակցութիւններ էին վարւում Ճապոնիայի, Չինաստանի, ՌԴի եւ մի շարք օտարերկրեայ դրամատների հետ՝ ԻԻՀ-ՀՀ գազամուղի ծրագրի ֆինանսաւորման համար[70]: Թեհրանը տարածաշրջանում տնտեսական զարգացման համար առաջնային էր համարում նաւթային արդիւնաբերութիւնը, որի հետեւանքով անտեսւում էր գազի արդիւնաբերութիւնը:

Գազամուղի կառուցման նպատակով 2000 Նոյեմբերի 8-9ը ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը, իսկ 2001 Փետրուարին ԱԳ նախարար Վարդան Օսկանեանը Թեհրանում բանակցեցին ԻԻՀ ղեկավարութեան հետ: Նաւթի նախարար Բիժան Զանգանէն յանձնարարել էր սկսել գազատարի շինարարութիւնը եւ անգամ քննարկւում էր, որ ՀՀին առաջարկուի գումարի փոխարէն ԻԻՀին տրամադրել ՀՀում արտադրուող ապրանքներ՝ լամպ, «Նայիրիտ»ի եւ Վանաձորի գործարանների արտադրանք[71]: Այդպէս լուծուելու էր նաեւ գնի հետ կապուած տարակարծութիւնը:

2001 Ապրիլի 15ին ՀՀ ուժանիւթի նախարար, հայ-իրանական կապերի միջկառավարական յանձնաժողովի նախագահ Գալուստեանը մեկնեց ԻԻՀ[72]: ԻԻՀի շահագրգիռ նախարարների հետ տեղի ունեցած հանդիպումներին մասնակցում էր ԻԻՀ ԱԳՆի Իրան-Հայաստան գազամուղի յատուկ յանձնարարականներով դեսպան Թահերին: Հայկական կողմի համար կարեւոր էր, թէ ով է ստորագրելու պայմանագիրը եւ ինչ բովանդակութեամբ՝ միջգերատեսչական յուշագի՞ր, թէ՞ միջկառավարական համա-

ձայնագիր: Խնդիրն այն էր, որ առաջինի դէպքում շահագրգռուած կը լինէին գերատեսչութիւնները, իսկ երկրորդի դէպքում՝ կառավարութիւնները: Կառավարութիւնների ծրագրում ներառելու դէպքում գազամուղի հարցի լուծումն աւելի իրատեսական կը լինէր: Սակայն իրանական կողմը հակուած էր կնքել միջգերատեսչական համաձայնագիր:

2001 Նոյեմբերի 14ին Երեւանում ԻԻՀ ԱԳՆ ԱՊՀ վարչութեան պետ եւ Կասպից Ծովի հարցերով նախագահի լիազօր-ներկայացուցիչ Մեհդի Սաֆարին եւ Խոշրուդին հանդիպեցին Գալուստեանին[73]: Սաֆարիի ջանքերով գազամուղի ֆինանսաւորումը ամրագրուել էր ԻԻՀ կառավարութեան 2002ի ամավարկում[74]: Սաֆարին խորհրդարանում մի խումբ էր ձեւաւորել, որը լոբիիստական աշխատանք էր տանում այդ հարցերով:

Բանակցութիւնների ընթացքում հայկական կողմն ուզում էր աւելի մեծ վարկեր վերցնել «Մելլաթ» Բանկից, բայց իրանական կողմը նախատեսում էր վարկեր տրամադրել այն պայմանով, որ դրանցով գնուէին միայն իրանական ապրանքներ: Հայկական կողմն ակնկալում էր ստանալ մօտ 7-10 մլն. դոլարի առեւտրային վարկ եւ պատրաստ էր դրա դիմաց տալ պետական երաշխիք: Մինչդեռ «Մելլաթ»ը համաձայն էր տալ ընդամէնը 2-2,5 մլն. դոլար[75]: Միայն Սաֆարիի աջակցութեամբ 2002 Յունիսի 1ին ԻԻՀ Արտահանման Երաշխաւորման Հիմնադրամը պատրաստակամութիւն յայտնեց 20 մլն. դոլարի ապրանքային վարկ տրամադրել հայկական կողմին[76]:

2001 Դեկտեմբերի 4ին Իրանի Գազի Արտահանման Ազգային Ընկերութիւնը պատրաստակամութիւն յայտնեց բանակցելու հայկական կողմի հետ ԻԻՀ տարածքով թուրքմէնական գազի՝ ՀՀ տարանցման մասին փոխըմբռնման յուշագրի նախագծի կապակցութեամբ[77]:

2001 Դեկտեմբերի 25-27ը տեղի ունեցաւ նախագահ Քոչարեանի այցը ԻԻՀ: ՀՀ նախագահի շեշտադրումները վերաբերում էին համատեղ ծրագրերին, գործակցութեան բազմազանութեանը, ՀՀում իրանական ներդրումներին: ՀՀ նախագահի այցին անդրադարձաւ իրանական մամուլը: *Նոռուզ* օրաթերթը տպագրեց ԻԻՀում ՀՀ դեսպան Գէորգ Ղարիբջանեանի հարցազրոյցը՝ «Իրանը եւ Հայաստանը Համագործակցութեան 11 Փաստաթղթեր Են Ստորագրելու» վերնագրով: Թերթը տպագրեց նաեւ ԻԻՀ ԱԳՆ խօսնակ Հ. Ասեֆիի խօսքը «Իրան-Հայաստան՝ Հակամարտութիւնից Զերծ Հարեւանութիւն» վերնագրով: *Հայաթէ Նօ* օրաթերթը գրեց որ Թեհրան-Երեւան յարաբերութիւնները ուրիշներին չեն վնասում: Խօսքն, իհարկէ, վերաբերում էր ԱՀին[78]:

Կողմերը փոխըմբռնման յուշագրի տեսքով պայմանաւորուեցին գազամուղի կառուցման մասին: ԻԻՀ-ՀՀ գազատարին անդրադառնալիս ՀՀ նախագահը նշում է, որ այն փոխշահաէտ է, եւ ԻԻՀն հաւասարապէս օգտուելու է դրանից: Փաստօրէն նախկին տեսակէտը, թէ իբր այն բխում է միայն ՀՀ շահերից, վերանայւում էր եւ այժմ գնահատւում էր իբրեւ

փոխշահաւէտ, հեռանկարային եւ ռազմավարական նշանակութեան գործօն: Այցի աւարտին ստորագրուեց նաեւ Արաքս գետի համատեղ ՀԷԿի նախագծման մասին փաստաթուղթը[79]: Այսպիսով, այցի ձեռքբերումը գազամուղի շինարարութեան համաձայնագրի ստորագրումն էր:

Ուժանիւթի շուրջ գործակցութեան յուշագրով իրականացուելու էին Ագարակի փոխանջատիչ կէտի շինութեան աւարտի, Սիւնիք-Կենտրոն բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի կառուցման եւ Արաքս գետի հիդրօէներգետիկ ներուժի օգտագործման տեխնիկատնտեսական հիմնաւորման ծրագրերը: Իրանական կողմը 2 մլն. դոլար էր տրամադրում այլընտրանքային՝ քամուց արտադրուող ելեկտրականութեան ծրագրի համար:

2002 Ապրիլին «Սանիր» ընկերութիւնը եւ հայ ելեկտրագէտները յստակեցրին Ագարակի փոխանջատիչ կէտի շինարարութիւնն աւարտելու եւ «Սիւնիք-Կենտրոն» բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի՝ Ագարակ-Շինուհայր հատուածը կառուցելու հարցերը: Ստորագրուած պայմանագրով՝ Ագարակի փոխանջատիչ կէտի շինարարութիւնն աւարտելու համար անհրաժեշտ էր 585,000 դոլար, իսկ Ագարակ-Շինուհայր հատուածի համար՝ 10 մլն. դոլար: Երկուսն էլ յատկացնելու էր «Սանիր»ը: Հայկական կողմը փոխհատուցելու էր համարժէք ուժանիւթով: Յուլիսի 8-11ը Երեւանում ԻԻՀ ուժանիւթի նախարար Հաբիբոլլաի Բիթարաֆի գլխաւորած ելեկտրագէտների պատուիրակութիւնը քննարկեց ոլորտում գործակցութեան յուշագրի կատարման ընթացքը: Նախագահ Քոչարեանի խօսքով՝ երկկողմ յարաբերութիւններում ուժանիւթը այն շարժիչ ուժն է, որն իր ետեւից կարող է տանել բազմաթիւ այլ ոլորտներ[80]: 1998 Սեպտեմբեր-2002 Յուլիս՝ իւրաքանչիւր ուղղութեամբ փոխանցուել է աւելի քան 1,3 մլրդ. կվտ./ժ. ելեկտրականութիւն: Կողմերը պայմանաւորուեցին ելեկտրականութեան փոխանակման համատեղ ծրագրերի իրականացման եւ ՀԷԿերի կառուցման հարցերի շուրջ: Ըստ Բիթարաֆի՝ այդ ծրագրերը ոչ թէ առեւտրային, այլ տարածաշրջանային հեռահար նպատակ էին հետապնդում[81]:

2002 Սեպտեմբերի 19ին տեղի ունեցաւ «Ագարակ 220 կվ» փոխանջատիչ կէտի բացումը[82], որի արժէքը 377,300 դոլար էր: Փոխանջատիչ կէտի նախագծումը, սարքաւորումների մատակարարումը իրագործել է «Սափթա» ընկերութիւնը: Նրա շինարարութիւնը սկսուել էր 1996ին:

2004 Մայիսի 13ին ստորագրուեց ԻԻՀ-ՀՀ գազատարի կառուցման վերջնական պայմանագիրը: Բանակցութիւններում քննարկուեցին գազի որակը, սակագինը եւ մատակարարման ծաւալը[83]: Իսկ 2004 Սեպտեմբերի 8-9ը նախագահ Խաթամիի՝ ՀՀ այցի ընթացքում ստորագրուեց նաեւ գազատարի Մեղրի-Քաջարան հատուածի ֆինանսաւորման եւ գազատարի կառուցման կապալի մասին փաստաթուղթը:

Գազամուղի կառուցման արագացումը որոշակիօրէն կապուած էր ԱՄՆի շահերի հետ: 2004 Հոկտեմբերի 4ին Ուաշինկթընում տնտեսական

գործակցութեան հայ-ամերիկեան աշխատանքային խումբն իր նիստում մշակեց փաստաթղթի նախագիծ, որի 2րդ կէտը վերաբերում էր ԻԻՀ-ՀՀ գազամուղի շինարարութեան ծրագրին: ՀՀ կառավարութեանն առաջարկւում էր ստանալ իրաւական խորհրդատուութիւն՝ ԱՄՆի կողմից ԻԻՀի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու մասին օրէնքի ազդեցութիւնից խուսափելու նպատակով[84]: Փաստօրէն նոր պայմաններում իրանական կողմը դարձաւ աւելի շահագրգռուած այս հարցի լուծման օգտին:

Գազատարի առաջին հատուածը պաշտօնապէս բացուեց 2007 Մարտի 19ին՝ նախագահներ՝ Քոչարեանի եւ Մոհամադ Ահմադինեժադի մասնակցութեամբ: Նոյն օրը ստորագրուեց «Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան Կառավարութեան Միջեւ Արաքս Գետի Վրայ ՀԷԿեր Կառուցելու Եւ Շահագործելու Բնագաւառում Համագործակցութեան Մասին» համաձայնագիրը: Իրան-Հայաստան գազատարը շահագործման յանձնուեց 2008ին: Շինարարութեան ընդհանուր ծախսերը հասան 250 մլն. դոլարի[85]:

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԵՒ ԻԻՀ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԻՋԵՒ, ՓՈԼ ԳՈԲԼԻ ԱՌԱՋԱՐԿԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՎԵՐԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ

1990ականների վերջ-2000ականների սկզբում երկու երկրներում ստեղծուեցին առեւտրական բազմաթիւ ընկերութիւններ, որոնք գործում էին անհատապէս կամ՝ «Իրանցի Առեւտրականների Եւ Արտադրողների Միութիւն» հասարակական կազմակերպութեան շրջանակներում եւ կամ՝ Իրան-Հայաստան Առեւտրի Պալատի հովանու ներքոյ: Դրանցից էին՝ «Փաք Գազ»ը, որը 500,000 դոլար ներդրումով շահագործման էր յանձնել մաքրող եւ լուացող նիւթերի գործարան, «Թաժ» ընկերութիւնը, որը 1 մլն. դոլար ներդրումներով հիմնել էր մաքրող նիւթերի արտադրութիւն, «Արմէն Փարս» դեղագործական ընկերութիւնը, որը կատարել էր 1 մլն. դոլար ներդրումներ, հայկական «Գրանդ» Հոլդինգը, որի ներդրումներով ԻԻՀ Ջուլֆայի ազատ առեւտրի գօտում իրանական կողմի հետ համատեղ ներկայացւում էր արդիւնաբերական արտադրանք:

Համատեղ նախագծերից էին նաեւ իրանական դրամագլխով եւ «Գրանդ» Հոլդինգի գործակցութեամբ Երեւանում օճառի արտադրութիւնը, Սիւնիքի մարզում կաշուի, պայուսակի եւ կօշիկի գործարանի գործարկումը: 2002 Յունուարի 1ի դրութեամբ իրանական ներդրումների ծաւալը ՀՀում հասել է աւելի քան 17 մլրդ. ՀՀ դրամի կամ օտարերկրեայ ներդրումների ընդհանուր ծաւալի 26,8%ին[86]:

ԻԻՀի հետ արտահանման ծաւալը 2001ին եղել է 162,5 մլրդ. ՀՀ դրամ, ներմուծումը՝ 44,5 մլրդ. ՀՀ դրամ: Արտահանուել է յատկապէս սեւ մետաղ՝ 1053,3 մլն. դրամ, պղինձ եւ պղնձէ իրեր՝ 1156,6 մլն. ՀՀ դրամ,

ներմուծուել են պոլիէթիլենային իրեր՝ 3177,1 մլն. ՀՀ դրամի[87]: 2002ին ԻԻՀն ՀՀի առեւտրական 3րդ գործընկերն էր՝ ՌԴից եւ Բելգիայից յետոյ:

Սակայն իրանական մաքսային սակագները շարունակում էին չափազանց բարձր մնալ ՀՀից ապրանքներ ներմուծելու համար: Միւս կողմից՝ 2002 Յունուար-Յունիս ամիսներին ՀՀ ներմուծուող իրանական ապրանքների ծաւալը մօտ 6%ով կրճատուել էր նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ: Աւելի քան 14,000 բեռնատար մեքենայ էր երթեւեկել ՀՀ եւ ԻԻՀ տարածքով, որը գերազանցում էր նախորդ տարուայ տուեալները: Օդային ճանապարհից (շաբաթական 4-5 չուերթ) օգտուել էին ՀՀ եւ ԻԻՀ 50,000 քաղաքացիներ:

2002 Սեպտեմբերի 25ից Հոկտեմբերի 5ը Երեւանում տեղի ունեցաւ իրանական արտադրանքի հերթական ցուցահանդէսը: Դեսպան Քոլէյնիի խօսքով՝ ԻԻՀն ամենախոշոր դրամական առեւտրային ներդրումներն ունէր ՀՀում: 2003 Յունիսի 13ին Երեւանում բացուած իրանական 8րդ ցուցահանդէսին ներկայացուած էին շինանիւթի արտադրութեան 30 ընկերութիւնների ցուցանմուշներ:

Տնտեսական կապերի զարգացման գործում կարեւոր նշանակութիւն ունեցաւ Թեհրանի կողմից նոր շահագրգռութիւնը ՀՀում իր տնտեսական ներկայութիւնը խորացնելու ուղղութեամբ՝ ի հեճուկս ԱՄՆ պետքարտուղարութեան նախկին ԽՍՀՄ գծով յատուկ խորհրդական Փոլ Գոբլի առաջարկի:

2000 Յունիսին ամերիկացի վերլուծաբան Գոբլը առաջարկեց նոր գաղափար, որի վերաբերեալ յետագայում խոստովանում է. *«Հայերի համար Իրանի հետ սահման ունենալու կարեւորութիւնն անգնահատելի է: 1992ին ՀՀ-ԻԻՀ ճանապարհով առեւտուրը շատ քիչ էր, եւ կարծում էի, որ հայերը Մեղրին յանուն խաղաղութեան կը զոհաբերեն՝ դրա դիմաց սպանալով Լաչինը: Բայց այժմ հասկանում եմ դրա հոգեբանական իմաստը, դա կարեւոր է ոչ միայն առեւտրի յետագայ զարգացման համար, այլ յատկապէս որպէս ելք՝ դէպի ոչ-թուրքական աշխարհ: Այդ ժամանակ թերագնահատել էի այդ հանգամանքը»*[88]: Ըստ Գոբլի առաջարկի՝ ՀՀն Մեղրիի մի հատուածը, Արաքս գետի երկարութեամբ՝ 48 կմ., յանձնում էր Ադրբեջանին, իսկ վերջինս էլ Լաչինի միջանցքը *դէ եուրէ* յանձնում էր ՀՀին, նաեւ՝ Նախիջեւանի Հանրապետութեան ծայրագոյն հիւսիսի մի հատուած:

Այս առաջարկը ժամանակին հայ հասարակական-քաղաքական շրջանակներում բուռն քննարկման արժանացաւ եւ մերժուեց: Այդ ամենին կտրուկ արտայայտուեցին Թեհրանում եւս: Սակայն այս առաջարկը դրդեց իրանական կողմի որոշակի աշխուժացման. նկատուեց ՀՀ տնտեսութեան մէջ նոր ներդրումներ կատարելու միտում:

2000 Նոյեմբերի 7-9ը ՀՀ Ազգային Անվտանգութեան Խորհրդի քարտուղար, պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը երկօրեայ այցով մեկնեց ԻԻՀ[89]: Հանդիպման ընթացքում ԻԻՀի Ազգային

Անվտանգութեան Գերագոյն Խորհրդի քարտուղար Ռոհանիի խօսքով՝ ԻԻՀն իրեն համարում է տարածաշրջանի պատասխանատու եւ բնական չէր համարում, որ մի շարք երկրներ (ԵԱՀԿ Մինսկի խումբ - Կ.Մ.) դրսից փորձում են կարգաւորել Լեռնային Ղարաբաղի հարցը[90]: Նա ակնարկում էր միջնորդների առաջարկած Մեղրիի տարածքի փոխարէն ստանալ ԼՂն: Դրանով կը վերանար ՀՀ-ԻԻՀ միջպետական սահմանը. դա սպառնալիք էր երկու պետութիւնների ազգային անվտանգութեանը: Սարգսեանը յայտնում է, որ այդ առաջարկութիւնը մերժուել է:

Միւս կողմից նշելի է, որ Ադրբեջանը փորձում էր ԼՂ հակամարտութեան կարգաւորման գործընթացը տեղափոխել ԵԱՀԿից ՄԱԿ, որտեղ բազմաթիւ գործօններ են իրենց օգտին աշխատում՝ նրանց դաշնակցութիւնը ՎՈՒԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա) կազմակերպութեան հետ, Իսլամական Համաժողով Կազմակերպութեան անդամների (այդ թւում՝ ԻԻՀի) աջակցութիւնը, Թուրքիայի եւ Պակիստանի անվերապահ համերաշխութիւնը[91]:

2001 Ապրիլին Քի Ուեստի բանակցութիւններից յետոյ ԵԱՀԿ ամերիկեան համանախագահ Քերի Քաւանօն յայտնեց, որ անհրաժեշտ է բանակցային գործընթացի մասին տեղեակ պահել ԻԻՀին[92]: Միաժամանակ ԱՄՆի ջանքերով ԼՂ հակամարտութեան կարգաւորման գործընթացից մի կողմ դրուած Թուրքիան Մեղրու միջանցքի խնդիրը դարձնում էր ՀՀին դէպի Եւրոպա ճանապարհ տալու նախապայման: ԱՄՆը պատրանք էր ստեղծում, որ ԼՂ հակամարտութեան կարգաւորման գործընթացում հաշուի են առնուելու անգամ ԻԻՀ շահերը[93]:

2001ին Խաթամին վերընտրուեց ԻԻՀ նախագահ, ԻԻՀ եւ ՀՀ այցելեցին մի շարք պատուիրակութիւններ[94]: Երկկողմ յարաբերութիւններում տեղի էին ունենում որակական փոփոխութիւններ, որոնց նախաձեռնողը Թեհրանն էր: ԻԻՀի համար անընդունելի էին ԼՂ հակամարտութեան կարգաւորման համար շրջանառութեան դրուած եւ հայկական կողմից մերժուած վերոնշեալ տարածքային փոխանակումները: ԻԻՀն ՀՀի հետ ընդհանուր սահմանը դիտում էր ազգային անվտանգութեան տարրերից մէկը: Ահա թէ ինչու Թեհրանը մերժել էր Գոբլի ծրագիրը: Աւելին, շրջանառւում էր միջոցառումների մի փաթէթ, որն առնչւում էր Մեղրիի հետ.-

Ա) Իրան-Հայաստան գազատարի կառուցում.
Բ) Քաջարանի փապուղու շինութիւն.
Գ) Արաքս գետի վրայ համատեղ երկու ՀԷԿի նախագծում.
Դ) Բարձրավոլտ էլեկտրահաղորդակցման երեք գծերի անցկացում.
Ե) Թաւրիզ-Մեղրի-Երեւան-Թբիլիսի ճանապարհի գործարկում.
Զ) Մեղրիի սահմանամերձ շուկայի վերագործարկում եւն.:

15 Յուլիս 2000ին նախագահ Քոչարեանը եւ վարչապետ Մարգարեանն ընդունեցին ԻԻՀ ԱԳՆ տեղակալ Մ. Հ. Ադէլի գլխաւորած պատուիրակութեանը: Բանակցութիւնների ընթացքում ուշագրաւ էր Ադէլի

ջերմ հաւանութիւնը, որ նա արտայայտել է Մեղրու շրջանում ՀՀ կառավարութեան միջոցառումների կապակցութեամբ: Նրա խօսքով՝ իրականացուող ծրագիրը հետաքրքրութեամբ է ընդունուել ԻԻՀում, արձագանգները շատ են գործարար շրջանակներում[95]:

Տարածաշրջանի անվտանգութեան եւ տնտեսական զարգացման հարցերում իրանական կողմի զգօնութեան մասին է վկայում նաեւ այն, որ 3 Յուլիս 2001ին ԻԻՀ Ազգային Անվտանգութեան Բարձրագոյն Խորհրդի քարտուղար Ռոհանին Թեհրանում Ադրբեջանի դեսպան Աբբաս Հասանովի հետ հանդիպման ընթացքում յայտարարեց, որ Իրանը Հարաւային Կովկասը համարում է իր ազգային անվտանգութեան գօտին եւ չի կարող անտարբեր լինել այնտեղի զարգացումների նկատմամբ: Ռոհանիի խօսքով՝ Կովկասում ցանկացած փոփոխութիւն իր դրսեւորումը կ'ունենայ նաեւ ԻԻՀում, հետեւաբար կովկասեան բոլոր հիմնախնդիրները պէտք է լուծուեն ի շահ այդ տարածաշրջանի բնակչութեան եւ արդարութեան ու կայունութեան հիման վրայ[96]:

Ռոհանիի մատնանշած կայուն տարածաշրջան ունենալուն էր միտուած 7 Յուլիս 2001ին երկօրեայ պաշտօնական այցով ՀՀ Սիւնիքի Մարզ ժամանումը ԻԻՀ Արեւելեան Ատրպատական Նահանգի պատուիրակութեան, նահանգապետ Եահիա Մոհամմադզադէի գլխաւորութեամբ: Պատուիրակութիւնը այցելեց Գորիս եւ Սիսիան քաղաքները, ինչպէս նաեւ Կապանի ձեռնարկութիւններ: Ստորագրուեց փոխըմբռնման յուշագիր[97]:

Սիւնիքի մարզպետարանում տեղի ունեցաւ հայ եւ իրանցի գործարարների հանդիպում, որի ընթացքում քննարկուեցին դեռեւս 2000ից սկսուած գործակցութեան արդիւնքները: Դրա շրջանակներում գործում են սահմանամերձ շուկաները, իրանական կողմը մարզ էր ներկրել պարարտանիւթ, թէլ եւ 800 տոննա վառելանիւթ:

Նոյն օրերին իրանցի պաշտօնեան հանդիպեց նաեւ ՀՀ արդիւնաբերութեան եւ առեւտրի նախարար Կարէն Ճշմարիտեանի հետ[98]: ՀՀում գործում էին իրանական դրամագլխով 416 ձեռնարկութիւն, սակայն զարգանալու տեղ ունէր նրանց մասնակցութեան ձեւաչափը ՀՀ արդիւնաբերական ձեռնարկութիւնների սեփականաշնորհման ծրագրերին: Միաժամանակ իրանական կողմի նախաձեռնութեամբ նոյն թուականի Օգոստոսի 12-19ը Թաւրիզի Արդիւնաբերական Միջազգային Ցուցահանդէսում ՀՀին տրամադրուեց անվճար տաղաւար:

Նոյն թուականի Հոկտեմբերին կողմերի միջեւ կնքուած պայամնագրով՝ ԻԻՀ Արեւելեան Ատրպատական նահանգում հիմնադրուած լամպերի արտադրութեան համատեղ ձեռնարկութեան կանոնադիր դրամագլխի 51%ը իրանական կողմինն է, իսկ 49%ը՝ հայկական, կատարուել է 1,4 մլն. դոլարի ներդրում[99]: Հայկական կողմը ներկայացնում էր «Գրանդ Սան» ընկերութիւնը:

2002ի դրութեամբ կողմերը Սիւնիքի մարզում գործակցում էին քիմիական արդիւնաբերութեան, գիւղատնտեսութեան, թռչնաբուծութեան եւ գազի բնագաւառներում:

ԻԻՀ նահանգների եւ ՀՀ մարզերի միջեւ գործակցութեան խթանման ուղղութեամբ ձեռք բերուեցին նոր պայմանաւորուածութիւններ: Այսպէս, 2003 Հոկտեմբերի 22ին ՀՀ նախագահին ընդունուեց ԻԻՀ Արեւելեան Ատրպատականի նահանգապետ Մոհամմադ Ալի Սոբհանոլլահին, որին ուղեկցում էին շուրջ 20 գործարարներ[100]: Իրանական կողմն առաջարկում էր վերացնել սահմանափակումները, ինչպէս վարուել է ԻԻՀն, այսինքն՝ եթէ նախկինում իրանական կողմը թոյլատրում էր մինչեւ 500 դոլարի առեւտուր կատարել, ապա այժմ հանուել էր այդ սահմանափակումը:

Այսպիսով, ՀՀ-ԻԻՀ տնտեսական գործակցութեան մէջ նկատելի դարձան որոշակի յաջողութիւններ: Մեղրիի տարածքում իրականացուած շուրջ 10 մլն. դոլարի ուժանիւթի ծրագրերը նպաստեցին, որ Մեղրին քաղաքական շահարկումների առարկայ չդառնայ: Արդիւնաւէտ գործակցութիւն ծաւալուեց նաեւ փոխադրամիջոցների, գիւղատնտեսութեան բնագաւառներում, ինչպէս նաեւ միջմարզային գործակցութեան ոլորտում: Սկսեցին կեանքի կոչուել ռազմավարական բնոյթի նախագծեր:

2004 Նոյեմբերի 30ին շահագործման յանձնուեց Ագարակ-Շինուհայր էլեկտրահաղորդման Հայաստան-Իրան բարձրավոլտ օդային Բ. գիծը: 2004 Դեկտեմբերի 2ին կողմերը Երեւանում ստորագրեցին փոխըմբռնման յուշագիր՝ ՀՀ-ԻԻՀ միջեւ նոր երկշղթայ էլեկտրահողորդման գիծ կառուցելու վերաբերեալ: 2004ին շարունակուեցին նաեւ Պուշկինի Լեռնանցքում հողմաէլեկտրակայանի կառուցման աշխատանքները, որի նպատակով Իրանի զարգացման աջակցութեան ծրագրի շրջանակներում ՀՀին անհատոյց տրամադրուեց 2,5 մլն. դոլար ֆինանսական օգնութիւն, որին աւելացաւ 2004ին տրամադրուած 1 մլն. դոլարի դրամաշնորհը:

Պուշկինի Լեռնանցքում շահագործման յանձնուած ՀԷԿը ոչ միայն Հայաստանում, այլեւ Կովկասում առաջին ցանցային հողմաէլեկտրակայանն է՝ 2,6 մգվտ./ժ. ընդհանուր հզօրութեամբ: Այնտեղ 2005ին գործարկուած չորս հողմաէլեկտրակայանները 2007ին արտադրել են 2,84 մլն. կվտ./ժ. ելեկտրականութիւն[101]:

Չնայած 2004ին Քաջարանի փապուղու նախագիծի յուշագրի ստորագրմանը՝ փապուղու կառուցման նախագիծը չգտաւ իր լուծումը, որի համար ՀՀ 2004ի պետական վարկի ծախսային մասում նախատեսուած 40 մլն. դրամն ուղղուեց Իրանը Հայաստանին կապող երկրորդ՝ Մեղրի-Շուանիձոր-Ծաւ-Դարաւան ճանապարհի նախագծմանը[102]:

2007 Հոկտեմբերի 26ին ՀՀ նախագահի մասնակցութեամբ տեղի ունեցաւ Իրան-Հայաստան այլընտրանքային ճանապարհի բացման արարողութիւնը: Մեղրի-Կապան էապէս աւելի էժան նոր ճանապարհի երկարութիւնը 91 կլմ. է[103]:

Երկկողմ տնտեսական կապերում առկայ դրական միտումներն իրենց թուային որոշակի արտացոլումը գտան ԻԻՀ-ին սահմանակից ՀՀ Սիւնիքի Մարզում: Այս մարզում 2007-11՝ աւելացել է բեռնափոխադրումների ծաւալը. եթէ 1998ին Սիւնիքին բաժին էր ընկնում ՀՀ-ում ինքնաշարժային միջոցներով փոխադրուած բեռների աւելի քան 44%ը, ապա 2010ին՝ շուրջ 80%ը: 2010ին Սիւնիքի Մարզում ինքնաշարժային միջոցներով փոխադրուել են աւելի մեծ ծաւալով բեռներ, քան 1998-2005ի իւրաքանչիւր տարի ՀՀ-ում: 2007-10՝ չորս տարում, Սիւնիքի Մարզում ինքնաշարժային միջոցներով փոխադրուել են աւելի մեծ ծաւալով բեռներ, քան ողջ հանրապետութիւնում 1998-2003՝ վեց տարում: 2010ին Սիւնիքի Մարզում ինքնաշարժային միջոցներով փոխադրուել են երեք անգամ աւելի մեծ ծաւալով բեռներ, քան 2000ին, կրկնակի աւելի քան՝ 2004ին եւ մէկ երրորդով աւելի քան՝ նախաճգնաժամային 2007ին:

2010ին ՀՀ մարզերում ինքնաշարժային բեռնաշրջանառութեան 40%ից աւելին կատարուել է Սիւնիքում: 2010ին Մարզում ինքնաշարժային բեռնաշրջանառութեան ծաւալը 2005ի համեմատ կրկնապատիկն էր[104]:

Տնտեսական կապերի խորացման համար կարեւոր է 2016 Յունիսի 5ին Թեհրանում ստորագրուած մուտքի արտօնագրի վերացման մասին փոխըմբռնման յուշագիրը[105]: Վերջին տարիներին ՀՀ են այցելում հազարաւոր իրանցիներ: Միայն Նովրուզի տօնի ընթացքում տարեկան ՀՀ են այցելում մինչեւ 30,000 իրանցի զբօսաշրջիկներ: Միւս կողմից ստորեւ բերուած աղիւսակի թուային պատկերը վկայում է, որ յաճախ տատանումներ են նկատւում այցելութիւնների տոկոսային յարաբերակցութեան մէջ: Դրա պատճառ կարելի է տեսնել նաեւ ոչ-կանոնաւոր զբօսաշրջութիւնը, այսինքն՝ տարբեր նպատակներով ՀՀ տարածք մուտք գործած իրանցիներն են: 2018ին գրանցուած այցելուների նուազումը կապուած է Իրանի տնտեսական վիճակի հետ:

ԻԻՀից ՀՀ ժամանումները[106]

Տարին	Ժամանում	Աճը նախորդ տարուայ համեմատ
2009	87214	
2010	120863	+38.5%
2011	134063	+10.9%
2012	111028	-20%
2013	94736	-17%
2014	116324	+22.7%
2015	144160	+24%
2016	188851	+31%
2017	220147	+16.6%

Այս ենթահողում կարեւոր է նկատի ունենալ, որ Սիւնիքի Մարզի Մեղրի քաղաքը հարուստ է պատմութեան եւ մշակոյթի յուշարձաններով, որի ցանկը 2002ին հաստատուել է ՀՀ կառավարութեան կողմից[107]: Ցանկում

ներառուած է 97 յուշարձան (5 միաւոր): Մեղրու ինքնատիպ ճարտարապետութիւնը, կենցաղի եւ մշակոյթի աւանդոյթները պահպանելու մտահոգութեամբ 2000ին ԻԽՆԵՍԿՕի ուշադրութեանն է ներկայացուել «Հայաստանի Ամենահարաւային Շրջանի Տնտեսութեան Վերանորոգում» ծաւալուն ծրագիրը, որը հաւանութեան է արժանացել ու ներգրաւուել նուիրատուների 2001ի «Մշակոյթը Զարգացման Համար» համաժողովում:

Մեղրու շրջանում գրանցուած յուշարձաններն անկրկնելի են ոչ միայն ճարտարապետութեամբ, այլեւ որմնանկարներով, ինչպիսիք հազուադէպ են հայկական եկեղեցիներում ու վանքերում: Քաղաքի հին ու նոր թաղերի եկեղեցիների պատերը կրում են Յովնաթանեան[108] տոհմի նկարիչների զարդանախշ հետքերը:

Անկասկած, երկկողմ կապերում հեռանկարային նշանակութիւն ունի զբօսաշրջութիւնը, իսկ Սիւնիքի Մարզն իր հարուստ պատմամշակութային կոթողներով կարող է դառնալ ՀՀի այցեքարտը իրանցի զբօսաշրջիկների համար:

Տնտեսական կապերի զարգացմանը կարող է նպաստել ազատ տնտեսական գօտիների ստեղծումը, որոնք կարող են օտարերկրեայ ձեռնարկատէրերին ու ներդրողներին թոյլատրել առաւել ազատ պայմաններով ծաւալել տնտեսական գործունէութիւն: Դրա համար ստեղծւում են բարենպաստ օրէնսդրական, հարկային, վարձակալման եւ այլ պայմաններ:

2017 Դեկտեմբերի 15ին տեղի ունեցաւ ՀՀ կառավարութեան նախաձեռնութեամբ ստեղծուած «Մեղրի Ազատ Տնտեսական Գօտու» (ՄԱՏԳ) բացման արարողութեանը[109]: Գօտու կազմակերպիչ է ճանաչուել պետութեան կողմից ստեղծուած ՄԱՏԳ փակ բաժնետիրական ընկերութիւնը: ՄԱՏԳը նախատեսուած է կառուցապատել երկու փուլով:

Առաջին փուլով ստեղծուել են նուազագոյն անհրաժեշտ ենթակառուցուածքներ եւ նախապայմաններ՝ աշխատանքները մեկնարկելու եւ ՄԱՏԳում գործունէութիւն ծաւալելու հետաքրքրութիւն ունեցող ընկերութիւնների հետ տեղում գործունէութիւնը կազմակերպելու համար:

Երկրորդ փուլով նախատեսւում է ՄԱՏԳ գործունէութեան, ենթակառուցուածքների, տարածքի 70 հեկտարով ընդլայնում՝ ստեղծելով նախապայմաններ շահութաբեր գործարք ծաւալելու համար: Վերոնշեալ տարածքներից շուրջ 50 հեկտարը կը տրամադրուի շահագործողների գործունէութեան, 10 հեկտարը՝ պահեստային տարածքների, մնացած տարածքները՝ գրասենեակային եւ այլ ծառայութիւնների համար[110]:

Տնտեսական գօտում նախատեսւում է աշխուժացնել ԻԻՀի հետ սահմանային առեւտուրը, զբօսաշրջութիւնը, ակնկալւում է որ իրանցի գործընկերներ տեղակայուելով այստեղ, դուրս գան ԵՄն եւ ԵԱՏՄ շուկաներ:

2017 Յունուարի 17ին Երեւանում Հայաստանի Զարգացման Հիմնադրամի աջակցութեամբ տեղի ունեցաւ սննդարդիւնաբերութեան ոլորտի

50ից աւելի հայկական ընկերութիւնների եւ ԻԻՀից ժամանած «Արաս» Ազատ Տնտեսական Գօտու[111] (ԱԱՏԳ) պատուիրակութեան հանդիպումը:

ԱԱՏԳ գործադիր տնօրէն եւ տնօրէնների խորհրդի նախագահ Մոհսէն Խադէմ Արաբ Բաղին նկատել է, որ 80 միլիոն բնակչութիւն ունեցող Իրանը կարող է լաւ շուկայ դառնալ հայ արտադրողների համար. «*Մեր ազատ տնտեսական գօտին սահմանակից է Հայաստանին եւ ունի 51 հազար հեկտար մակերես: Այստեղ աշխուժ գործում են մօտ 400 ընկերութիւններ՝ արդիւնաբերութեան տարբեր ոլորտներից: Ունենք գիւղատնտեսական ապրանքների արտադրման, վերամշակման գործարաններ, ջերմոցային տնտեսութիւն ... նաեւ լաւ պոտենցիալ մեր տարածքում զբօսաշրջութեան ոլորտը զարգացնելու համար*»[112]:

Այսպիսով, առկայ են նպաստաւոր պայմաններ «Մեղրի» եւ «Արաս» ազատ տնտեսական գօտիների գործակցութեան համար:

Պէտք է նշել, որ ՀՀ-ԻԻՀ առեւտրաշրջանառութիւնը 2017ին աճել է ԻԻՀից ներմուծման ծաւալների աւելացման շնորհիւ: Մինչդեռ փոփոխութիւններ չեն նկատւում առեւտրի ապրանքախմբերի կազմում: Այս առեւտրում շարունակում է առանցքային դեր խաղալ գազ՝ ելեկտրականութեան դիմաց փոխանակման ծրագիրը, որի համար էլ ՀՀից ԻԻՀ արտահանման գլխաւոր ապրանքը մնում է ելեկտրականութիւնը: ՀՀն աւանդականօրէն ներմուծողի դերում է: 2017ի տուեալներով՝ ԻԻՀն ՀՀ արտաքին առեւտրի գործընկերների շարքում 6րդ տեղում է, ՀՀ արտաքին առեւտրաշրջանառութեան 4.1%ը բաժին է ընկնում ԻԻՀ հետ առեւտրին:

Ըստ Ազգային Վիճակագրական Ծառայութեան տուեալների՝ ՀՀի եւ ԻԻՀի միջեւ ապրանքների առեւտրաշրջանառութիւնը 2017ին եղել է մօտ 237 մլն. դոլար (7.8% աճ): 2017ի Յունուար-Նոյեմբերին ՀՀից ԻԻՀ արտահանումը եղել է մօտ 74 մլն. դոլար (4.4% աճ): ՀՀի արտահանման կազմում ԻԻՀ կշիռը կազմել է 3.7%: Նոյն տարուայ կտրուածքով ԻԻՀից ՀՀ է ներմուծուել աւելի քան 163 մլն. դոլարի ապրանք (9.4% աճ): Իսկ ներմուծման կազմում ԻԻՀի կշիռը 4.3% է:

Ամփոփելով՝ կարող ենք հաւաստել, որ այսօր ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարութեան տուեալների համաձայն՝ ՀՀում 2019 Յունուար 1ի դրութեամբ գրանցուած է իրանական դրամագլխի մասնակցութեամբ 5301 ընկերութիւն, գլխաւորապէս՝ անհատ ձեռնարկատէրեր, ինչը կազմում է ՀՀում գրանցուած օտարերկրեայ ընկերութիւնների 36.6%ը[113]: Իրանական դրամագլխով խոշոր ընկերութիւնները ներկայացնում են տեղեկատուական արհեստագիտութիւնների, մշակող արդիւնաբերութեան, շինարարութեան եւ անշարժ գոյքի, առեւտրի, գիւղատնտեսութեան, զբօսաշրջութեան, փոխադրութեան ոլորտները:

ՀՀ առեւտրաշրջանառութիւնը ԻԻՀ հետ 2018ին եղել է 363.62 մլն. դոլար (2017ի համեմատ 40.5% աճ): 2018ին արտահանումը ՀՀից ԻԻՀ եղել է 94.2 մլն. դոլար (2017ի համեմատ 12% աճ): Իսկ ներմուծումը, ըստ

ծագման երկրի յատկանիշի, 2018ին եղել է 269.42 մլն. դոլար (2017ի համեմատ 54.2% աճ):

ՀՀ-ԻԻՀ առեւտրաշրջանառութեան վերջին 3 տարիների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ վերջին 2 տարիներին առեւտրաշրջանառութեան աճ է գրանցուել: ԻԻՀն ՀՀ արտաքին առեւտրի հիմնական գործընկերների ցանկում 2017ին զբաղեցրել է 6րդ տեղը, իսկ 2018ին՝ 5րդ:

ՀՀ-ԻԻՀ առեւտրաշրջանառութեան ծաւալները (միլիոն դոլար[114])

Տարեթիւ	*Արտահանում*	*Ներմուծում*	*Ընդհանուր ծաւալը*
1993	5.5	15.8	21.3
1994	14.6	42.5	57.1
1995	35.0	59.8	94.8
1996	43.9	149.8	193.7
1997	42.6	88.7	131.3
1998	31.4	63.9	95.3
1999	34.2	78.5	112.7
2000	27.1	82.9	110.7
2001	31.870.400	78.120.100	109.990.500
2002	31.468.600	62.150.400	94.084.100
2003	22.478.400	70.187.300	92.666.100
2004	30.559.600	72.270.100	107.837.700
2005	25.354.900	101.951.900	127.306.800
2006	29.642.900	114.399.500	144.042.400
2007	38.499.000	141.663.000	526.662.000
2008	25.056.300	202.991.200	228.047.500
2009	33.025.900	162.398.000	195.133.900
2010	84.831.200	199.884.700	284.715.900
2011	106.250.400	216.792.300	323.042.700
2012	108.512.100	219.413.100	327.925.200
2013	94.955.200	198.492.000	293.447.200
2014	84.630.600	206.542.000	291.172.600
2015	81.727.500	198.361.400	280.088.900
2016	65.043.700	133.949.000	198.992.700
2017	84000	174000	258.000

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կարող ենք եզրակացնել.

1. ՀՀ-ԻԻՀ տնտեսական կապերի զարգացումը բխում է երկու կողմերի ե՛ւ ռազմավարական ե՛ւ քաղաքական ե՛ւ տնտեսական շահերից: Այն կենսական նշանակութիւն ունի, եթէ նկատի ունենանք աշխարհաքաղաքական եւ ռազմավարական այն իրավիճակը եւ տարածաշրջանը, որտեղ գտնւում են ՀՀն եւ ԻԻՀն:

2. Արաքսի վրայ կառուցուած, ԻԻՀն ՀՀին կապող կամուրջը ճեղքեց Թուրքիայից եւ ԱՀից ՀՀին պարտադրած շրջափակումը: Այսօր էլ կամուրջն ունի ռազմատնտեսական նշանակութիւն ՀՀի համար:
3. Կապուղիները լիարժէք գործելու հնարաւորութիւն կը ստանան եթէ տարիներ շարունակ քննարկուած Քաջարանի փապուղու եւ երկաթուղու կառուցման նախագծերը իրականացուեն: Իրանական կողմը խուսափում է խոշոր ներդրումներ կատարելուց, իսկ տնտեսական զարգացումն առնչւում է հեռահաղորդակցութեան յուսալի եւ մշտական ուղիների հետ:
4. 2000ականների սկզբին իրականացրած ներդրումային նոր քաղաքականութեամբ ԻԻՀն իր մասնաբաժնով չէզոքացրել է տարածքային հնարաւոր փոփոխութիւնների՝ Մեղրին Լաչինի դիմաց Գոբլի ծրագիրը:
5. ՀՀում իրանական եւ ԻԻՀում հայկական ներդրումների ցուցանիշերը հաստատում են, որ չնայած հայ-իրանական առեւտրատնտեսական յարաբերութիւնների ներուժը չի իրացւում իր ողջ ծաւալով, սակայն որոշակի աշխատանքներ կատարուել են կապերի զարգացման գործում:
6. ՀՀ մարզերի եւ ԻԻՀ նահանգների միջեւ գործակցութիւնը կարող է դառնալ սահմանամերձ շրջանների զարգացման շարժիչ ուժը:
7. ՀՀի տնտեսական զարգացման շրջանակներում որոշակի տեղ է յատկացուած զբօսաշրջութեանը: Վերջին 1,5 տասնամեակում ոլորտի զարգացումը կախուած է նաեւ իրանցի զբօսաշրջիկների՝ ՀՀ պատմամշակութային վայրեր այցելութիւններով եւ հանգստի կազմակերպմամբ:
8. Չնայած ՀՀ-ԻԻՀ տնտեսական յարաբերութիւնները զգալիօրէն ետ են ընկնում քաղաքական յարաբերութիւնների մակարդակից: Այնուամենայնիւ կողմերը ջանքեր են գործադրում տնտեսական գործակցութեան մէջ նոր յաջողութիւններ արձանագրելու ուղղութեամբ, ինչպիսիք են՝ ՀՀ մտնող իրանական գազի ծաւալների մեծացումը, հիւսիս-հարաւ (ԻԻՀ-ՀՀ-Վրաստան-ՌԴ) էներգահամակարգերի միաւորումը, ՀՀում հողմային էլեկտրակայանների կառուցումը, ազատ տնտեսական գօտիների ստեղծումը, ՀՀ տարածքով Պարսից Ծոց-Սեւ Ծով փոխադրումների ուղու կայացումը եւ այլ ենթակառուցուածքների զարգացումը:
9. ԻԻՀին սահմանակից ՀՀ Մեղրու Ազատ Տնտեսական Գօտին կարող է կամուրջ դառնալ Իրանի համար՝ կապ հաստատելու ԵԱՏՄ եւ ԵՄ երկրների հետ՝ հաշուի առնելով աշխարհագրական դիրքը, առեւտրային հնարաւորութիւնները, ՀՀ բազմուղի առեւտրային արտօնեալ ռեժիմները: Այս տեսակէտից ԻԻՀի հիւսիսային երկու՝ Արեւելեան եւ Արեւմտեան Ատրպատական նահանգների համար բացւում են որակապէս եւ քանակապէս սպառման նոր շուկաներ, զարգացման նոր ուղիներ:
10. ՄԱՏԳն կը նպաստի ոչ միայն Մեղրու ընկերատնտեսական խնդիրների լուծմանը, այլեւ ՀՀ օտարերկրեայ դրամագլխի ներհոսքին, ԻԻՀի հետ տնտեսական կապերի ամրապնդմանը եւ ԵԱՏՄ հետ կապերի

խորացմանը, ԵՄ հետ յարաբերութիւնների եւ ներուժի առաւել արդիւնաւէտ օգտագործմանը:

11. Իրականացուած հետեւեալ ծրագրերը պէտք է դիտարկել որպէս ձեռքբերումներ.

- 1996՝ Արաքսի վրայ կառուցուած, Իրանը Հայաստանին կապող հիմնական կամուրջ.
- 2005՝ Պուշկինի լեռնանցքի հողմաէլեկտրակայաններ.
- 2007 Հոկտեմբեր՝ Մեղրի-Շուանիձոր-Ծաւ-Դարաւան ճանապարհը.
- 2007՝ Իրան-Հայաստան գազատարի առաջին հատուածի բացում (140 կլմ. երկարութիւն եւ 700մմ. տրամագիծ ունեցող գազատարի կառուցման վերաբերեալ համաձայնագիրն ստորագրուել է 2004ին).
- 2008 Նոյեմբեր՝ Գազատարի Բ. հատուածի շինարարութեան աւարտ.
- ՀՀ-ԻԻՀ բարձրավոլտ էլեկտրահաղորդման Ա. եւ Բ. գծերը.
- ԻԻՀի հետ սահմանամերձ գիւղերի գազաֆիկացման 2016ին իրականացուած ծրագիրը (դրամաշնորհ).

12. 2012ին ԱՄՆի յորդորով եւրոպական մի շարք պետութիւնների կողմից նոր պատժամիջոցների սահմանումը իրանական նաւթի, գազի եւ դրամատնային համակարգի վրայ, որոշակիօրէն նուազեցրին այդ երկրի տնտեսական աշխուժութիւնը տարածաշրջանում.

13. Վերջին տարիներին կրկին որոշակի աշխուժութիւն է նկատւում, որն էլ պայմանաւորուած է 2015ին վերոնշեալ պատժամիջոցների մասնակի թուլացման կամ վերացման հետ[115]:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. ՄԱՏԳն դարձնել ՀՀ կառավարութեան առաջիկայ տարիների զարգացման ծրագրերի առանցք: Այդ նպատակով արտադրական գործարաններ հիմնել Սիւնիքի մարզում:

2. Աջակցել մասնաւոր/հանրային հատուածի ներդրումներին Մեղրիում:

3. ՀՀում իրանցի զբօսաշրջիկների հանգստի կազմակերպումը դարձնել առաւել նպատակային ու ծրագրուած՝ հաշուի առնելով իրանական զբօսաշրջութեան առանձնայատկութիւնները:

4. Մշակել զբօսաշրջութեան զարգացման ծրագրեր ՀՀ Սիւնիքի Մարզի կենսաբազմազանութեամբ եւ բնական ժառանգութեամբ հարուստ «Արեւիկ» Ազգային Զբօսավայրի 340 կլմ.^{2} տարածքը:

- Մեղրիում ներդրումային գրաւչութիւն ունեցող ուղղութիւններն են.- ա) պատմամշակութային, բ) կենսոլորտային եւ գ) ժամանցային զբօսաշրջութիւնը: Այդ նպատակով՝ ա) համալրել հիւրանոցների ցանցը, բ) բարեկարգել պատմամշակութային կոթողները, հնավայրերը, գ) մշակել զբոօսաշրջային երթուղիներ դէպի 30ից աւելի եկեղեցիներ, պաշտպանական կառոյցներ, ջրանցոյցներ, միջնադարեան բնակելի տներ,

դ) նորոգել ճանապարհները, ե) կազմակերպել մասնագիտացուած շրջապտոյտներ բարձրորակ աշխատակիցների կողմից, զ) ստեղծել բարեկարգ հանգստի գօտիներ եւ ենթակառուցուածքներ, է) կազմակերպել մարզի տարածքով տարեկան 130,000ից աւելի զբօսաշրջիկների սպասարկման ծառայութիւնները, ը) ստեղծել իրանցի զբօսաշրջիկներին հետաքրքրող պայմաններ, թ) առանձնացնել մշակութային եւ երիտասարդական միջոցառումների կազմակերպման համար տարածքները, ժ) կազմակերպել իրանական սննդի սպասարկման եւ առեւտրի ծառայութիւնները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Լ. Ահարոնեան, *Փոթորկուտ Կեանքիս Օրերը (Հասարակական Եւ Քաղաքական Յուշեր)*, խմբ.՝ Կ. Ասատրեան, Թեհրան, «Սալէս» Հրատ., 2010, էջ 885:

[2] Գ. Բադալեան, *Իրան. Հանրագիտարան*, Երեւան, հեղինակային հրատ., 2011, էջ 447:

[3] ՀՀ Արտաքին Գործերի Նախարարութեան Պատմա-Դիւանագիտական Արխիւ ԱԳՆ ՊԴԱ, ց. 8, գ. 86, թթ. 1-6:

[4] Վահան Բայբուրդեան, «Հայ-Իրանական Յարաբերութիւնները Հայաստանի Անկախութեան Ձեռքբերումից Յետոյ», *Մերձաւոր Եւ Միջին Արեւելքի Երկրներ Եւ Ժողովուրդներ, Հտր. 17*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1998, էջ 17:

[5] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 45, թ. 26:

[6] Նոյն, գ. 170, թ. 37:

[7] Նոյն, թ. 41:

[8] Նոյն, գ. 84, թթ. 103-6:

[9] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 283, թ. 88:

[10] *Ազգ Օրաթերթ*, 29 Դեկտեմբերի 1992:

[11] Նոյն:

[12] Նոյն, 7 Հոկտեմբերի 1992:

[13] Լ. Տէր-Պետրոսեան, *Ընտրանի. Ելոյթներ, Յօդուածներ, Հարցազրոյցներ*, կազմ., խմբ., առաջ. եւ վերջ.՝ Ա. Բ. Սարգսեան, Երեւան, «ՓՐԻՆԹԻՆՖՕ» ՀՁ ՍՊԸ Հրատ., 2006, էջ 322:

[14] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 283, թթ. 75-6:

[15] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 176, թթ. 38-39, թթ. 49-50:

[16] Նոյն, թ. 80:

[17] ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թթ. 6-15:

[18] Նոյն:

[19] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 283, թթ. 138-139. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 1177, ց. 1, գ. 52, թթ. 67-73: 10 Հոկտեմբեր 1993ին ՀՀի դեսպանութեան խորհրդական Գրիգոր Առաքելեանը հանդիպում ունեցաւ ԻԻՀ տնտեսութեան եւ ֆինանսների նախարարութեան արտաքին կապերի վարչութեան պետ, ՀԻՀՅի նախագահ Մ. Բիաբանիին հետ եւ քննարկեց օդագնացութեան, կապի եւ կամուրջի շինարարութեան հարցերը: Հոկտեմբերի 12ին Թաւրիզ ժամանեց ՀՀ կապի նախարար Քոչինեանը ՌԴից վառելանիւթի տարանցիկ փոխադրման հարցերի շուրջ բանակցելու

նպատակով: Հայկական կողմն առաջարկում էր նախարարների մակարդակով հանդիպել Թեհրանում՝ քննարկելու կամուրջի հետ կապուած հարցերը:

11-12 Յունուար 1994ին ՀԻՀՅն արտագնայ նիստեր է գումարում Կապան ու Մեղրի քաղաքներում եւ քննարկում նախկինում ստորագրուած, գործնականում չիրագործուած, պայմանագրերի կատարման ընթացքը: Անհրաժեշտ էր վերջնական պայմանաւորուածութիւն ձեռք բերել եւ իրանական ափում շտապ սկսել կամուրջի շինաշխատանքները: Իրանական կողմն անտեսեց հայկական կողմի նշանակած վերջնաժամկէտը՝ կամուրջը շահագործման յանձնել 31 Օգոստոս 1994ին:

[20] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 285, թթ. 84-86:

[21] Նոյն, թթ. 57-58:

[22] ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թ. 55:

[23] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 285, թ. 107:

[24] Նոյն, թթ. 123-124:

[25] ՀԱԱ, ֆ. 827, ց. 1, գ. 137, թթ. 67-70:

[26] Նոյն, թ. 88:

[27] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 285, թ. 139:

[28] Նոյն, թ. 148:

[29] Նոյն, գ. 286, թթ. 125-126:

[30] Կամուրջի կառուցման գործում մեծ դեր ունեցան ՀՀ ազգային ժողովի պատգամաւոր, «Հրազդանմաշ» ՓԲԸ նախագահ, Հայաստանի Արդիւնաբերողների Եւ Գործարարների Միութեան խորհրդի անդամ, Թելման Տէր-Պետրոսեանը (1937--1997), էլեկտրադինամիկայի բնագաւառի գիտնական, պրոֆեսոր, ՀՀ Ճարտարագիտական Ակադեմիայի թղթակից անդամ Ժորա Միրզաբէկեանը, ճարտարագէտ Աւետիք Աւետիսեանը, նախարար Հենրիկ Քոչինեանը, ՀՀ շինարարութեան նախարար Ֆելիքս Ֆ. Փիրումեանը, ԻԻՀ խորհրդարանի հայազգի պատգամաւորներ՝ Վարդան Վարդանեանը, Արտաւազդ Բաղումեանը եւ գործարար Լեւոն Ահարոնեանը: Վերջինիս՝ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի կողմից 26 Սեպտեմբեր 2003ին շնորհուեց շնորհակալագիր:

[31] Տէր-Պետրոսեան, էջ 496:

[32] Բադալեան, էջ 448:

[33] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 286, թթ. 24-26:

[34] *Իրանահայոց Հանրագիտարան*, կազմող Ժանէտ Տ. Լազարեան, Երեւան, «ՎՄՎ-Պրինտ», 2012, էջ 141:

[35] Նոյն, էջ 423:

[36] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 2, գ. 186, թ. 10:

[37] Նոյն, ց. 2, գ. 158, թ. 38:

[38] Նոյն, ց. 11, գ. 182, թթ. 48-49:

[39] Նոյն, ց. 1, գ. 285, թ. 120:

[40] Նոյն, ց. 8, գ. 86, թ. 92:

[41] Նոյն, ց. 11, գ. 182, թ. 78:

[42] Փապուղին նախագծուած էր անցկացնել 2070 մ. բարձրութեան վրայ՝ Մեղրու լեռնանցքի տակ, որը գտնուում է ԻԻՀի հետ սահմանից 20 կլմ. հիւսիս: Նախագիծը մշակել է «Հայգիպրոտրանս» հիմնարկը: Փապուղու երկարութիւնը

3 կմ է: Փապուղու գործարկումը կ'ապահովի ՀՀի եւ ԻԻՀի միջեւ ինքնաշարժային հաղորդակցութիւնն ամբողջ տարուայ ընթացքում, քանի որ Մեղրու լեռնանցքում ձիւնը Նոյեմբերից մինչեւ Ապրիլ ամիսներին խոչընդոտում են փոխադրամիջոցների անխափան երթեւեկութիւնը:

[43] http://www.armworld.am/detail.php?paperid=70&pageid=2406&lang=%E2%80%8E դիտուել է 06.08.2018:

[44] ՀՀն շահագրգռուած էր նախագծի իրականացմամբ եւ մտադիր էր դառնալ դրա լիիրաւ անդամ: Նախագծի հեղինակներն են ՌԴ, ԻԻՀ եւ Հնդկաստանը: Այն Հնդկաստանից ԻԻՀով եւ ՌԴով անցնում է հիւսիսային Եւրոպայի երկրներ՝ ներառելով երկաթուղային եւ ծովային փոխադրութիւնը:

[45] ՀՀ-ԵՄ յարաբերութիւնների համակարգում կարեւորւում էր «Տրասեկա» ծրագրին ՀՀի լիարժէք մասնակցութիւնը: Ըստ «Տրասեկա» հիմնական բազմակողմ համաձայնագրի՝ ստեղծուել է միջկառավարական յանձնաժողով, որի նպատակն է բազմակողմ համաձայնագրի իրագործումը:

[46] *Հայաստանի* Հանրապետութիւն Պաշտօնաթերթ, 15 Յունիսի 2002:

[47] Վ. Ա. Բայբուրդեան, *Իրանն Այսօր, (Տեղեկատու),* Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1999, էջ 323:

[48] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 11, գ. 182, թ. 10:

[49] Նոյն, թթ. 10-11:

[50] Նոյն, ց. 2, գ. 242, թթ. 260-264:

[51] Նոյն, ց. 5, գ. 239, թթ. 133-137:

[52] Նոյն, թ. 133:

[53] Ըստ երկու երկրների միջեւ գործող համաձայնագրերի՝ փոխադրամիջոցների երթեւեկը կատարւում էր առանց փոխադրութեան անցագրի թոյլտուութեան: Հայկական փոխադրութեան միջոցները երթեւեկում էին մինչեւ Ջուլֆա: Ներմուծուող, արտահանուող եւ տարանցիկ ապրանքների տեղափոխումն ու ընդունումը կատարւում էր Ջուլֆայի մաքսատանը: Իրանական փոխադրութեան միջոցների մի մասի կողմից բեռնափոխադրումը կատարւում էր մինչեւ Ջուլֆա, իսկ միւս մասը մուտք էր գործում ՀՀ տարածք: Հայկական փոխադրամիջոցներից Նորդուզ-Ջուլֆա ճանապարհահատուածում վառելիքի գնի տարբերութեան գումար չէր գանձւում: ԻԻՀում օտարերկրեայ փոխադրամիջոցների երթեւեկութեան վերաբերեալ օրէնքը հայկական բեռնատարների նկատմամբ չէր կիրառւում: Իրանական կողմի հաւաստիացմամբ այդ քայլը ազդել էր ԱՀի հետ յարաբերութիւնների վրայ: Իրանական կողմը յայտնում էր, որ ՀՀ փոխադրամիջոցները փոխադրութեան Միջազգային երթեւեկութեան մաքսային պահանջներին չհամապատասխանելու դէպքում, երկրի միւս վայրերը երթեւեկելիս պարտաւոր են ապահովել մաքսային տուրքը:

[54] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 2, գ. 158, թ. 2:

[55] Նոյն, ց. 11, գ. 182, թ. 14:

[56] Նոյն, թ. 15:

[57] Վ. Բայբուրդեան, «Հայաստանի Հանրապետութեան Տեղը Եւ Դերը Իրանի Իսլամական Հանրապետութեան Տարածաշրջանային Քաղաքականութեան

Ոլորտում», *Հայագիտութեան Արդի Վիճակը Եւ Զարգացման Հեռանկարները Զեկուցումների Ժողովածու*, Երեւան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2004, էջ 146:

[58] *Ազգ Օրաթերթ*, 30 Յունուարի 1997:

[59] ՀԷԿի նախագծային հզօրութիւնը 75,5 մգվ. էր, ելեկտրականութեան տարեկան արտադրանքը՝ 410 մլն. կվտ./ժ.: Միջազգային կոնսորցիումը՝ Գազ դէ Ֆրանս, Սիմենս, Գազպրոմ եւ այլ ընկերութիւններ, պէտք է իրականացնէին այս համատեղ նախագծերը մինչեւ 2008: Նախագծի ընդհանուր արժէքը 120 մլն. դոլար էր, որից 42 մլն.ը՝ ԻԻՀ տարածքի շինարարութեան արժէքն էր:

[60] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 5, գ. 238, թ. 51:

[61] Նոյն, ց. 11, գ. 182, թ. 42:

[62] Մեղրու ջրաէլեկտրակայանը Արաքս գետի վրայ կառուցուող ՀԷԿ է, որը տարեկան պէտք է արտադրի 793 մլն. կվտ./ժ. ելեկտրականութիւն: ՀԷԿի հաշուարկային հզօրութիւնը 130 մգվտ. է: Կառուցուելու է 18,200 մ. երկարութեամբ փապուղի՝ Ծիրանիձորից մինչեւ հայ-իրանական սահմանային տեղամաս, որը գտնւում է նախկին երկաթուղու փապուղու մօտ: ՀԷԿի վայրում կառուցուելու է 65 մգվտ. հզօրութեամբ 2 ջրելեկտրակայաններ:

Արաքս գետի վրայ ՀԷԿեր կառուցելու եւ շահագործելու նպատակով ՀՀ եւ ԻԻՀ կառավարութիւնների միջեւ 2007ին եւ 2008ին ստորագրուել են միջկառավարական երկու համաձայնագրեր, որոնք վաւերացրել են երկու պետութիւնների խորհրդարանները: 14 Ապրիլի 2009ին ՀՀ նախագահի՝ Իրան կատարած այցի ընթացքում ՀՀ ուժանիւթի եւ բնական պաշարների նախարարութեան եւ Իրանի ուժանիւթի նախարարութեան միջեւ ստորագրուել է փոխըմբռնման յուշագիր՝ Մեղրի ՀԷԿի կառուցման ֆինանսաւորման յատակագծի վերաբերեալ: Իրանական կողմը պատրաստակամութիւն է յայտնել գնել Մեղրի ՀԷԿի արտադրած ելեկտրականութեան ամբողջ ծաւալը:

16 Սեպտեմբեր 2010ին ՀՀ կառավարութիւնը լիազօրեց ուժանիւթի եւ բնական պաշարների նախարարութեանը՝ իրանական «Ֆարաբ-Սեփասաղ» ընկերութեան հետ Արաքս Գետի վրայ ջրելեկտրակայան կառուցելու պայմանագիր ստորագրել: Ներդրող ընկերութիւնն ինքնուրոյն լուծելու էր Մեղրի ՀԷԿի կառուցման եւ շահագործման հետ կապուած ֆինանսական միջոցների հայթայթման եւ կազմակերպական հարցերը: Շինարարութիւնը պէտք է իրականացուէր 5 տարուայ ընթացքում, որից յետոյ 15 տարի Մեղրի ՀԷԿի արտադրած ելեկտրականութիւնը պէտք է տեղափոխուի Իրան՝ ներդրողի կողմից կառուցուող 230 կվ լարման էլեկտրահաղորդման գծով: Շահագործման 15րդ տարուայ աւարտին Մեղրի ՀԷԿը պէտք է անհատոյց փոխանցուէր հայկական կողմին:

Արաքս գետի վրայ պէտք է կառուցուի 2 ՀԷԿից բաղկացած կասկադ՝ յաջորդաբար կառուցուած էլեկտրակայանների շարք, որից մէկը կը պատկանի ՀՀին (Մեղրի ՀԷԿը), միւսը՝ ԻԻՀին (Ղարաչինարի ՀԷԿը): Հայկական կայանը հանդիսանալու էր գլխամասային հանգոյց եւ արտադրելու էր տարեկան 180 մլն. կվտ./ժ. ելեկտրականութիւն: Ներդրումների ընդհանուր արժէքը, 2009ի գներով, կազմելու էր 323 մ. դոլար:

[63] «Արաքս Գետի Վրայ Կը Կառուցուեն Հայ-Իրանական Հիդրոկայաններ» 16.09.2010 https://news.am/arm/news/31125.html դիտուել է 06.08.2018:

[64] «Մեղրիի ՀԷԿ-ի Շինարարութիւնն Այլեւս Մեր Տնտեսական Կեանքի Օրակարգում Չէ», *Հայկական Ժամանակ*, 19 Յունուարի 2017, https://armlur.am/639840/ դիտուել է 06.08.2018:

[65] «Հայաստանի Եւ Իրանի Նախագահներն Ամփոփել Են Բանակցութիւնների Արդիւնքները», 21.12.2016 http://www.president.am/hy/press-release/item/2016/12/21/President-Serzh-Sargsyan-Iran-President-Hassan-Rouain-announcements-for-Mass-Media/ դիտուել է 02.09.2018:

[66] ԵՄի INOGATE ծրագիրը տարածաշրջանային խոշորագոյն ծրագրերից է, որին ՀՀն հիմնման սկզբից եւեթ իր մասնակցութիւնն է բերել: Այն հնարաւորութիւն կ'ընձեռի միանալ էներգակիրների՝ Կենտրանական Ասիայից դէպի Եւրոպա փոխադրման խողովակաշարային ցանցին:

[67] Այն հիմնադրուել է 1991ին՝ Հաագայում ստորագրուած քաղաքական հռչակագրով: Կազմակերպութեանն անդամակցում են 51 երկրներ: Կենտրոնը գտնւում է Բրիւսէլում: ՀՀն Ուխտի պայմանագիրը ստորագրել է 1994ին: Ուխտի նպատակը միասնական իրաւական դաշտի եւ կանոնների սահմանումն ու ամրապնդումն է: Ուխտի որոշումնառու մարմինը տարեկան համաժողովն է:

[68] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 11, գ. 182, թթ. 48-49:

[69] Գ. Արշակեան, *Թուրքիայի Քաղաքականութիւնը Հարաւային Կովկասում 1991-2001 թթ.*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., էջ 155:

[70] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 6, գ. 67, թ. 40:

[71] Նոյն, g. 7, գ. 308, թ. 30:

[72] Նոյն, g. 8, գ. 86, թ. 91:

[73] Նոյն, թ. 92:

[74] Նոյն, թ. 93:

[75] Նոյն, թ. 93:

[76] Նոյն, թ. 108:

[77] Նոյն, g. 7, գ. 308, թ. 168:

[78] Գ. Բադալեան, *Հայաստան-Իրան. Յարաբերութիւնները 20 Տարեկան Են*, Թեհրան, «Ալիք» Հրատ., 2012, էջ 88:

[79] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 11, գ. 182, թ. 78:

[80] *Հայաստանի Հանրապետութիւն Պաշտօնաթերթ*, 11 Յուլիսի 2002:

[81] Նոյն, 17 Հոկտեմբերի 2002:

[82] Նոյն, 21 Սեպտեմբերի 2002:

[83] Գ. Իսկանդարեան, «Հայաստան-Իրան Յարաբերութիւնները Էներգետիկայի Ոլորտում», *Հայաստան-Իրան. 20 Տարի Համագործակցութեան Ճանապարհով, Միջազգային Գիտաժողովի Նիւթեր*, Երեւան, «Զանգակ» Հրատ., էջ 92:

[84] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 11, գ. 183, թ. 22:

[85] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 13, գ. 123:

[86] *Հայաստանի Հանրապետութիւն Պաշտօնաթերթ*, 17 Մայիսի 2002:

[87] Նոյն, 22 Մայիսի 2002:

[88] «Ինչ Էր Առաջարկում Գոբլը», *Լոյս Մշակութային Եւ Հասարակական Երկշաբաթերթ*, N 24, 15 Մարտի 2001, էջ 7-8:

[89] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 8, գ. 86, թ. 89:

[90] Բադալեան, *Հայաստան-Իրան,* էջ 81:

[91] Վ. Օսկանեան, *Անաւարտ Տասնամեակ, Ելոյթների Ընտրանի*, Երեւան, «Սիփլիթաս» Հիմնադրամ, 2009, էջ 33:

[92] *Արաքս Ամսագիր*, Թեհրան, Մայիս-Յունիս 2001, թիւ 99-100, էջ 27:

[93] Գ. Խուդինեան, «Ղարաբաղեան Հիմնահարց. Կարգաւորման Պատրանքներն Ու Սառեցման Հնարաւորութիւնները», *Դրօշակ*, թիւ 3, Յունիս 2001, էջ 143:

[94] ԻԻՀ այցելեցին ՀՀ ԱԳ նախարար Օսկանեանը, ԱԳ փոխնախարար Ռուբէն Շուգարեանը (3 անգամ), ՀՀ Սահմանադրական Դատարանի նախագահ Յարութիւնեանը, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշէս Թումանեանը, ՀՀ էներգետիկայի նախարար, ՀԻՏԿՀՅի նախագահ Գալուստեանը (2 անգամ), ՀՀ նախագահի այցը նախապատրաստող պատուիրակութիւնը, կրթութեան եւ գիտութեան նախարար Էդուարդ Ղազարեանը, արդիւնաբերութեան եւ առեւտրի նախարար Ճշմարիտեանը, քաղաքաշինութեան նախարար Դաւիթ Լոքեանը, քաղաւիացիայի վարչութեան պետի տեղակալ Սամուէլ Մարգարեանը, տրանսպորտի եւ կապի փոխնախարար Վաղինակ Քոչարեանը, Մաքսային Պետական Կոմիտէի, Արտակարգ Իրավիճակների Վարչութեան, գիւղատնտեսութեան նախարարութեան ներկայացուցիչները, «Հայռուսգազարդ»ի փոխտնօրէն Աշոտ Յովսէփեանը, «Գրանդ Հոլդինգ»ի նախագահ Հրանտ Վարդանեանը:

[95] *Լոյս Մշակութային Եւ Հասարակական Երկշաբաթերթ*, N 10, 15 Օգոստոսի 2000, էջ 3-4:

[96] *Ալիք Օրաթերթ*, 8 Յուլիսի 2001:

[97] *Ալիք Օրաթերթ*, 14 Յուլիսի 2001:

[98] *Ալիք Օրաթերթ*, 16 Յուլիսի 2001:

[99] *Ալիք Օրաթերթ*, 22 Հոկտեմբերի 2001:

[100] *Հայաստանի Հանրապետութիւն Պաշտօնաթերթ*, 23 Հոկտեմբերի 2003:

[101] «Լոռու Մարզում Շարունակւում Են Հողմային Էներգիայի Իրացման Աշխատանքները», 14 Փետրուար 2008, Վանաձոր, Արմենպրէս (սեփ. թղթ. Վահագն Անտոնեան), https://armenpress.am/arm/print/503294/ դիտուել է 25.08.2018:

[102] Ամփոփ տեղեկանք 2004 թուականի ընթացքում միջկառավարական յանձնաժողովների գործունէութեան վերաբերեալ, փաստաթուղթ, Երեւան, 2004, էջ 4-5:

[103] «Շահագործման Յանձնուեց Կապան-Մեղրի Այլընտրանքային Ճանապարհի Առաջին Հատուածը», https://armenpress.am/arm/news/421082/shahagortsman-handznvec-kapan-mexri-aylyntranqayin-tchanaparhi.html 23 Նոյեմբերի 2006 Արմենպրէս (սեփ. թղթ. Գոհար Իսախանեան), դիտուել է 02.09.2018:

Կապան-Մեղրի այլընտրանքային ճանապարհը երրորդ կարգի ճանապարհ է, անցնում է լեռնային բարդ տեղանքով: Այդ ճանապարհի 2,5 կիլոմետրը կառուցուել է Արաքս գետի հունի նեղացման հաշուին, որը եւ եղել է ամենաբարդ հատուածը: Ճանապարհի կառուցման համար պետամավարկից տրամադրուել է 26,5 մլն. դոլար, եւս 6 մլն. դոլար յատկացուել լրացուցիչ:

[104] *Սիւնիք. Հայաստանի Հանրապետութեան Սիւնիքի Մարզի Ձեռքբերումները 2007-2011 թթ.*, Երեւան, Տնտեսական Բարեփոխումների Վերլուծական-Տեղեկատուական Կենտրոն, 2012, էջ 31:

[105] http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1281.pdf , դիտուել է 02.09.2018:

[106] Տուեալները ներկայացուած են ըստ հետեւեալ կայքի՝ https://www.mfa.am/hy/bilateral-relations/ir դիտուել է 25.08.2018:

[107] «ՀՀ Կառավարութեան Որոշումը Սիւնիքի Մարզի Պատմութեան Եւ Մշակոյթի Անշարժ Յուշարձանների Պետական Ցուցակը Հաստատելու Մասին», http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=36406 դիտուել է 30.09.2018:

[108] Յովնաթանեան ընտանիքի նկարիչները գործել են ԺԷ.-ԺԹ. դարերում: Մօտ երկու հարիւրամեակի ընթացքում տոհմի միքանի սերնդի ներկայացուցիչներ մեծ դեր են կատարել հայ ու հարեւան ժողովուրդների մշակութային կեանքում: Տոհմը նոր աստիճանի է բարձրացրել հայ կերպարուեստը:

[109] http://hetq.am/arm/news/84367/trvel-e-mexri-azat-tntesakan-gotu-gortsuneutyan-meknarky.html դիտուել է 25.08.2018:

[110] «ՀՀ Սիւնիքի Մարզի Մեղրի Համայնքի Միկրոռեգիոնալ Մակարդակի՝ Համակցուած Տարածական Պլանաւորման Փաստաթղթերի Մշակման Նախագիծ», նախնական գնահատման հայտ, Սիւնիք-3, (Մեղրի համայնք), Երեւան, 2018, էջ 13:

[111] http://www.arasfz.ir/en դիտուել է 27.08.2018:

[112] Սննդի ոլորտի հայկական ընկերութիւնները ծանօթացել են «Արաս» տնտեսական գօտում գործելու հնարաւորութիւններին (https://armenpress.am/arm/news/876406/snndi-olorti-haykakan-ynkerutyunnery-tsanotacel-en-aras.html) դիտուել է 30.09.2018:

[113] ՀՀում դրամագլխի մասնակցութեամբ գործում է 5000ից աւելի ընկերութիւն. Իրանը ՀՀի արտաքին գործընկերների առաջին հնգեակում է, 26 Փետրուար, 2019,
https://armenpress.am/arm/news/965500.html?fbclid=IwAR27x5s05RHfF1ofkd-Sy0o_rb1MpHL2RkU79s0tDsTdOV5mr8qMp6mAfyo դիտուել է 07.03.2019:

[114] Ըստ ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայութեան Կայքի տուեալների (https://www.armstat.am/am/?nid=82) դիտուել է 20.02.2019:

[115] Սակայն պէտք է նշել, որ 2018 Հոկտեմբերի 16ին ԱՄՆն ընդլայնել է Իրանի նկատմամբ գործող պատժամիջոցների ցուցակը: Այս նոր պատժամիջոցները կարող են որոշ դանդաղկոտութիւն մտցնել երկկողմ տնտեսական ծրագրերում:

ECONOMIC RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE ISLAMIC REPUBLIC OF IRAN AS A FACTOR IN SECURITYIN THE REGION (Summary)

KAREN MKRTCHYAN
K86Mkrtchyan@gmail.com

The development of economic ties and the promotion of cooperation between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran in various fields stems from the two sides' strategic, political and economic interests. This political direction has a vital importance, if we take into consideration the geopolitical and strategic situation and the region in which the RA and the IRI are located.

The deepening of cooperation between Turkey, Georgia and Azerbaijan in the post-Soviet era, in the 2000's and today has a certain impact on developments in the South Caucasus. All this in turn affects the national security of the Republic of Armenia. The form of the three neighboring states' cooperation in the region excludes only Armenia, as a result of which Armenian interests are ignored in the South Caucasus. Under these conditions, Iran's policy towards Armenia obtains special importance.

The article presents issues related to the beginning of new Iranian investments in the Republic of Armenia as well as new spheres of cooperation between provinces of the Islamic Republic of Iran and the regions of the Republic of Armenia. Also discussed are prospective directions of bilateral development.

ՕՁՈՒՆ. ԹԵՄԻ ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ ԵՒ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԳԻՒՂԵՐԻ ՏԵՂԱՎԱՅՐԵՐԸ (XVIII Դարի Վերջին Քառորդ-ԻԱ. Դարասկիզբ)

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԵԱՆ
armanmaloyan1976@gmail.com

ՄՈՒՏՔ

Յօդուածի մէջ փորձել ենք ներկայացնել Օձունի թեմի պատմութիւնը: Օձունի թեմը կարճատեւ կեանք էր ունեցել, ու ցայժմ հայագիտութեան մէջ ոչ միայն ոեւէ քիչ թէ շատ հանգամանալից ուսումնասիրութիւն, յօդուած, այլեւ գիտական անդրադարձ կամ ակնարկ իսկ կատարուած չէ, յամենայն դէպս՝ գոնէ մեզ յայտնի չէ: Ցաւօք, թեմի վանքապատկան օրուայ գիւղերի բնակչութեան թուաքանակի վերաբերեալ կաթողիկոսական կոնդակում կամ այլուր տուեալներ չենք գտնում: Կոնդակում թուարկուած գիւղերի մեծ մասը, բացառութեամբ՝ միքանիսի, այժմ էլ կան: Յօդուածի մէջ անդրադարձել ենք նաեւ այդ բնակավայրերի յետագայ պատմութեանն ու ժողովրդագրական պատկերի փոփոխութեանը՝ բաւարարուելով միայն վերոյիշեալ գիւղերի տեղորոշման լուսաբանմամբ եւ 1831-2018ին այդ գիւղերի բնակչութեան վիճակագրական որոշ տուեալներ ներկայացնելով:

Հայաստանի Հանրապետութեան Լօռու Մարզի հնագոյն բնակավայրերից է Օձունը: Հայ մատենագրութեան մէջ այն յիշատակւում է Ը. Դարից[1]: Օձունը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի չորրորդ գաւառ Տաշիրի գիւղերից էր: Ըստ Սուրէն Երեմեանի՝ Օձունը Տաշիր գաւառի կենտրոնն էր[2]:

Հայոց Ղուկաս Ա. Կարնեցի կաթողիկոսի (1780-99) հրամանով կազմուած եւ վրաց Հերակլ Բ. թագաւորի կնիքով հաստատուած 1782 Յունուարի 21 թուակիր կոնդակում Օձունը, ի շարս 23 գիւղերի, յիշուած է որպէս Օձունի թեմի վանքապատկան գիւղ:

Համառօտ ներկայացնենք այն հանգամանքները, որոնցով պայմանաւորուած էր վերոյիշեալ կոնդակի կազմումը: Գեանջեցի Սիմէոն վարդապետը (ապա արքեպիսկոպոս), որը Լօռու Մելիքեան տոհմից էր, դիմել էր Ղուկաս Ա. Կարնեցի հայրապետին, ցանկութիւն յայտնելով նորոգել ու բարեկարգել Ս. Յովհաննէս Օձնեցու վանքը՝ Օձունի վանքը, որը գտնւում էր Հաղպատի եւ Սանահինի թեմերի միջեւ: Այն վաղուց (հաւանաբար՝ կա՛մ մոնղոլների, կա՛մ լեզգիների արշաւանքների հետեւանքով՝ ԺԳ.–ԺԸ. դդ.), աւերուել էր, իսկ նրա թեմն անցել էր Հաղպատին կամ Սանահինին: Այս փաստը, ինչպէս կը տեսնենք, մի քանի կոնդակներում եւ հրամաններում վաւերացուած է հայոց կաթողիկոսների կամ աշխարհիկ իշխողների կողմից: Սիմէոն վարդապետը կամենում էր վրաց Գէորգի արքայազնի օժանդակութեամբ վերաշինել վանքը եւ նշանակուել թեմի առաջնորդ՝ իր հոգեւոր ենթակայութեան տակ ունենալով շրջակայ տարածքները: Սա-

կայն բարեմիտ եւ խորագիտակ Ղուկաս Ա. Կարնեցի կաթողիկոսը չի շտապում բաւարարել Գէորգի արքայազնի միջնորդութիւնը:

Օրէնք էր, որ եթէ մի վանական դիմում է կաթողիկոսին, որպէսզի առաջնորդ կարգուի, նա պէտք է իր հետ ունենայ այդ վանքի հնագոյն կոնդակները: Կաթողիկոսը պէտք է տեսնի այդ կոնդակները, իմանայ վանքի եւ նրա թեմի կարգավիճակի մասին, ապա նոյնաբովանդակ կոնդակ տայ եւ այդ վարդապետին կարգի թեմի առաջնորդ:

Կռահելով, որ Օձունի թեմի գոյութիւնը վաւերացնող եւ առաջնորդ նշանակելու շուտափոյթ որոշումը կարող է շփոթ կամ յուզում առաջացնել Հաղպատի ու Սանահինի թեմակալ առաջնորդների եւ ժողովրդի շրջանում, կաթողիկոսը յանձնարարում է Թիֆլիսի առաջնորդ Կարապետ վարդապետին եւ Սուրբ Աթոռի *վեքիլ* (գործակատար) Տէր Ղազարին, որ ժողովեն տեղացի տարեցներին եւ ճշտեն, թէ պահպանուե՞լ է արդեօք որեւէ թուղթ կամ վկայութիւն՝ վանքի մօտիկ անցեալի մասին: Եթէ այն շէն վանք է եղել եւ ունեցել է թեմ, ապա հայոց հայրապետը կոնդակ կը տայ, որպէսզի վանքը վերաշինուի: Այդ դէպքում Սանահինի եւ Հաղպատի առաջնորդների կողմից բողոք չի լինի: Իսկ եթէ որեւէ վկայութիւն չգտնուի, դա եւս ծանուցեն կաթողիկոսին: Ապա յաւելում, որ անպայման հրաւիրեն ժողով՝ Հաղպատի, Սանահինի, Հաղարծինի առաջնորդների, Թիֆլիս քաղաքում ու թեմում գտնուող վարդապետերի, քահանաների, իշխանների, բանիմաց տարեցների մասնակցութեամբ եւ արդարօրէն քննեն, թէ այդ վանքը ե՞րբ է շէն եղել, թեմ ունեցե՞լ է, թէ ինքնագլո՞ւխ վանք է եղել, թէ՞ գտնուել է Հաղպատի կամ Սանահինի իշխանութեան ներքոյ[3]:

Օձունի թեմի մասին որեւէ գրաւոր յիշատակութիւն Թիֆլիսի առաջնորդ Կարապետ վարդապետին եւ Տէր Ղազարին չի յաջողւում գտնել, քանի որ թեմի բոլոր կալուածագրերն ու յիշատակարանը կորել էին լեզգիների աւերիչ արշաւանքի[4] եւ վանքն աւերուելու հետեւանքով: Թէ ինչպէս են հիմնաւորել իրենց պատասխանը Թիֆլիսում գումարուած ժողովի մասնակիցները՝ չունենալով համապատասխան փաստեր, չենք կարող նոյնիսկ մօտաւոր ենթադրութիւններ անել: Այնուամենայնիւ՝ ենթադրելի է, որ ժողովականները վկայել են, թէ Օձունի վանքն ունեցել է թեմ եւ վանքապատկան գիւղեր: 1782 Յունուարի 21ին կայացրած այդ որոշման հիման վրայ Ղուկաս Ա. Կարնեցին տուել է համապատասխան կոնդակ եւ Սիմէոն Արք.ին կարգել թեմի առաջնորդ: Այս մասին իմանում ենք 1805 Հոկտեմբերի 14ին վիրահայոց առաջնորդ Յովհաննէս Արք.ի՝ Օձունի վանքի եւ Հոռոմայրի[5] անապատի համայնքներին ուղղուած թղթից, որտեղ եւ արձանագրուած են Օձունի թեմի վանքապատկան գիւղերի անունները՝ Հակուի, Ամոճ, Օձուն, Արտուի, Մղարդ, Իգահատ, Քարինճ, Մարց, Բեթարկ, Քոլակիրան, Արտաքան (?), Վարդաբլուր, Կտեւան, Կուրթան, Ջկրաշէն, Չինիաքարակ, Աչքոհան, Լեճան, Կողէս, Եղիտանք, Դարմանաթաղ, Աղեկի եւ Ծաթեր: Այնուհետեւ յիշատակւում է, որ վանքի նոր ա-

ռաջնորդն է Յարութիւն վարդապետը եւ յորդորում համայնականներին՝ «*ընկալջիք զսա արժանաւոր պատուով եւ օրինաւոր յարգանօք, ընկալեալ զդա որպէս Առաջնորդ եւ հովիւ հոգեւոր ձեր, հնազանդ հպատակ լիջիք ամենայն բարի հրամանաց դորին, եւ զոր ինչ վանքական եւ Առաջնորդական հաս եւ իրաւունք եղիցի, եթէ պտղի եւ եթէ Աթոռահաս, եթէ գանձանակադրամ, եթէ խոստմունք, եթէ քառասնից, եթէ հոգեբաժին, եւ եթէ այլ զինչ եւ իցէ արդիւնք զամենայն լիալիր հասուսջիք անթերի Առաջնորդիդ ձերում Յարութիւն վարդապետիդ…*»[6]:

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԸ

Արշակունեաց Թագաւորութեան ժամանակաշրջանում Գուգարքը Մեծ Հայքի չորս կողմնապահ իշխանութիւններից (բդեշխութիւն) էր, որի կառավարչի՝ բդեշխի նստավայրը Յուրտաւն էր: Այն նաեւ եպիսկոպոսանիստ աթոռ էր:

Բագրատունեաց թագաւորութեան ժամանակաշրջանում Գուգարքի եկեղեցական իշխանութիւնը հաստատւում է Տաշիր գաւառում: Բացառուած չէ, որ դեռեւս Արշակունեաց Թագաւորութեան ժամանակաշրջանում Տաշիր գաւառն առանձին եպիսկոպոսական թեմ լինէր՝ Յուրտաւի եպիսկոպոսական աթոռի ենթակայութեամբ: 972ին Սանահինում ընդօրինակուած՝ Բարսեղ Կեսարացու *«Յաղագս Ճգնաւորաց»* աշխատութեան յիշատակարանում Սիմէոն գրիչը յիշատակում է ժամանակի հայոց կաթողիկոս Խաչիկ Ա. Արշարունու, Սանահինի վանահայր Յովհաննէսի եւ Տաշիր Գաւառի Գրիգոր եպիսկոպոսի անունները[7]: Յետագայում Տաշիր Գաւառի բնակավայրերի յիշատակումներ են հանդիպում Սանահինի եւ Հաղպատի թեմերի հոգեւոր ենթակայութեամբ գտնուող տարածքների թուարկումներում: Այսպէս, Շահնշահ սպասալարի (մօտ 1251-59) տուած նուիրագրի մէջ գրուած է, որ « *…զՆերքին Տաշիր՝ իւծուն, յԱմաւճ, զՀակու… լերամբ եւ դաշտով, ջրով եւ ջրաղացով փուաք սուրբ Աստուածածնիս եւ ի մեր գերեզմանատանս փուինք իւծուն իւր ամեն բոլոր սահմանաւն…*»[8]:

Ստեփանոս Ե. Սալմաստեցի (1545-67) եւ Միքայէլ Ա. Սեբաստացի (1567-76) կաթողիկոսների անունից տրուած շրջաբերականում (1556) նշուած է թէ՝ «*Եւ ընդ աւրհնութիւնս ծանուցումն լինի ձեզ, հոգեւոր որդիքդ մեր իւծուն, Ամաւճ, Հակու, Ծորդայ, Կատաւէթ… – ձեր ամեն գեղի բոլաւրէանքովդ փուինք Սանահնու սուրբ Աստուածածնին…*»[9]: 1576ին Գրիգոր ԺԲ. Վաղարշապատեցի կաթողիկոսի (1576-90) յղած գրութեան մէջ եւս նշուած է, որ Տաշիրի մի մասը Սանահինի թեմն է[10]: Նոյնպէս եւ 1570, 1577, 1656, 1661, 1677, 1687, 1692, 1734 թուականներին տրուած կոնդակներում կամ գրուածքներում Տաշիրը յիշատակուած է որպէս Սանահինի թեմին ենթակայ տարածք[11]:

Սանահինի վանքի յիշատակարանում ամփոփուած փաստաթղթերից միայն մէկում է յիշատակւում Օձունի թեմ՝ հետեւեալ նշումով. « *…Օձնու*

փախչին իւրեան թէմին...»[12]: Սակայն փաստաթղթի վաւերականութեանը վերապահումով է վերաբերւում Պարոյր Մուրատեանը՝ այն համարելով յօրինուածք՝ ուշ միջնադարի Հաղբատի միաբաններից մէկի, որը բաւական ծանօթ է եղել ԺԱ. դարի աղբիւրներին[13]:

Յետագայում նման վկայութիւնների ի յայտ գալու պարագայում, թերեւս, հիմնաւորուի, որ միջնադարում գոյութիւն է ունեցել Օձունի թեմ: Հաւանական է՝ թեմը գործել է Սանահինի թեմի հոգեւոր ենթակայութեամբ, քանզի վրաց Գէորգի արքայազնի՝ 1795ի հրովարտակը նշում է. «*...եւ նմանապէս ամենայն հայասեռ ազանց բնակելոց ի Փամբակ կամ ի Լօռի եւ կամ ի գիւղօրայս թէմին Փամբակու, այսու օրինակաւ յայտնել եւ նոցա, զի նոքա իւրաքանչիւր ոք ըստ կարգին տացեն Սանահնու վանաց զսահմանեալն սովորութիւն, որպէս ի վերոյ գրեալ եմք. եւ եթէ Սիմէօն վարդապետն եւ կամ այլք ունիցին զթուղթս ինչ տուեալ ի մէնջ, ամենայն թուղթք նոցա գտցին խափանեալք, եւ ոչ ոք կարասցէ ձեռնամուխ լինել*»[14]: Ամէն դէպքում՝ Դանիէլ Ա. Սուրմառեցի կաթողիկոսի (1807-8) տուած 1808ի կոնդակում Լօռին, Տաշիրը, Բամբակաձորը (Փամբակ) յիշատակուած են որպէս Սանահինի թեմին պատկանող տարածքներ[15]:



Լօռի, Օձունի Թեմ

ՕՁՈՒՆԻ ԹԵՄԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԳԻՒՂԵՐԸ

Օձունի թեմի վանքապատկան գիւղերի ցանկում նշուած **Հակուի**ն ներկայիս ՀՀ Լօռու մարզի Թումանեանի տարածաշրջանի Հագուի գիւղն է՝ Վանաձորից մօտ 75 կմ. հիւսիս-արեւելք, Ալավերդի քաղաքից մօտ 5 կմ. հարաւ-արեւմուտք եւ Օձունից մօտ 5 կմ. հիւսիս-արեւմուտք: ԺԹ. դարում Հագուին պատկանում էր Լօռու Մելիքեաններին[16]: Գիւղում պահպանուել են ԺԲ.-ԺԳ. դարերի Ս. Աստուածածին եկեղեցին եւ «Խելի Քար» գերեզմանոցը (ԺԴ.-Ի. դարեր)[17]:

Ամոճ գիւղը եւս Լօռու մարզի Թումանեանի տարածաշրջանում է՝ Օձուն գիւղից մօտ 1 կմ. հիւսիս-արեւմուտք: ԺԹ. դարում Ամոջը պատկանում էր Լօռու Մելիքեաններին[18]: Գիւղի հիւսիսային եզրին գտնւում է Ս. Յակոբ ուխտատեղին (ԺԳ. դար)[19]:

Օձունի թեմի վանքապատկան գիւղերի բնակչութեան թուաքանակը (1831-2018)[1]											
Գիւղ/տարի	1831	1886	1897	1926	1939	1959	1970	1979	1989	2001	2018
Հակուի (Հագուի)	-	225	298	509	669	533	612	516	-	543	437
Ամոճ (Ամոջ)		45	-	157	163	110	219	219	-	201	133
Օձուն	691		2435	4418	4566	4315	4951	4787	4777	4834	4876
Արտուի (Արդվի)	37	154	115	232	-	279	236	188	-	213	164
Մղարդ (Մղարթ)		340	401, 1ը՝ իսլամ	534	863	628	628	459		523	384
Իգահատ (Դանուշաւան, Այգեհատ)	88	337	338, 1ը՝ իսլամ, 3ը՝ ուղղ.	387	-	391	366	295	478	332	195
Քարինճ (Քարինջ)	-	373	536, 1ը՝ իսլամ, 2ը՝ այլ	966	1086	817	894	655	745	747	535
Մարց	197		578	876	1037	937	896	671	-	652	449
Բեթարկ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Քոլակիրան (Անտառամուտ)		223		539	637	641	499	407	494	410	289
Արտաքան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վարդաբլուր	75	830	1019	1597	1810	1517	1906	1146	1390	1353	1307
Կտեւան	-	-	11	-	14	-	-	-	-	-	-
Կուրթան	187	-	1159	1831	2297	2143	-	1818	-	2032	1711
Ջկրաշէն (Ջիգրաշեն)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Չինիաքարակ (Ագարակ)	56	-	654	847	1581	1366	-	1273	-	1431	1104
Աչքոհան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Լեճան (Լեջան)	-	587	698	1347	1549	1250	-	868	-	896	654
Կողէս	-	-	639	438	684	461	338	347	-	401	329
Եղիտանք (Յաղդան)	-	-	495	540	888	917	856	785	-	354	
Դարմանաթաղ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Աղեկի (Կարմիր Աղեկի)	-	-	-	70	-	223	209	175	-	214	145
Ծաթեր	90	212	254	444	624	560	557	475	-	489	388

[1] Վիճակագրական տուեալները քաղել ենք հիմնականում հետեւեալ աղբիւրներից. https://www.aniarc.am, http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=61&dt=HY_HY&query, https://www.armstat.am/file/Map/MARZ_06.pdf, http://lori.mtad.am/about-communities/ 29. 12. 2018:

Լօռու մարզի Թումանեանի տարածաշրջանի Օձուն գիւղը գտնւում է ծովի մակարդակից մօտ 1125 մ. բարձրութեան վրայ, մարզկենտրոնից մօտ 50 կմ. հիւսիս-արեւելք, Երեւանից մօտ 175 կմ. հեռաւորութեան վրայ:

Օձունը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Տաշիր գաւառի հնագոյն բնակավայրերից է՝ տարածուած Դեբէդ գետի ձախափնեայ բարձրադիր սարահարթի վրայ: Գիւղը եւ շրջակայքը հարուստ են պատմաճարտարապետական յուշարձաններով: Նշանաւոր Ս. Աստուածածին գմբէթաւոր բազիլիկ եկեղեցին (Ե.-Զ. դդ.) գտնւում է գիւղի կենտրոնում: Սա յօրինուածքային ընդգծուած ընդհանրութիւն ունի վաղ միջնադարեան եռանաւ բազիլիկների հետ: Հիմք ընդունելով ԺԳ. դարի պատմիչներ Կիրակոս Գանձակեցու եւ Վարդան Արեւելցու վկայութիւնները՝ աւանդաբար հայոց կաթողիկոս Յովհաննէս Գ. Օձնեցուն (717-28) են վերագրել եկեղեցու կառուցումը, սակայն դա մասնագէտ գիտնականները հաւաստի չեն համարում: Ճարտարապետական յօրինուածքի եւ յարդարման գեղարուեստական ոճի վերլուծութեան հիմամբ եկեղեցու կառուցումը թուագրուել է Զ. դարավերջով[20]: Եկեղեցին յիշատակուել է Ս. Աստուածածին, Ս. Նշան, Ս. Յովհաննէս, Խաչգոնդ, Խաչգունդ անուններով: Վերջին անուանումը կապուած է եկեղեցու բակում թաղուած Խաչգունդ քահանայի անուան հետ, որի յիշատակին 1291ին կանգնեցրել են քանդակազարդ խաչքար՝ արձանագրութեամբ: Եկեղեցու մօտ գտնւում է վաղ քրիստոնէական շըրջանի, Հայաստանում քրիստոնէութեան յաղթանակը նշանաւորող կողող:

Ս. Աստուածածին եկեղեցին բազմիցս նորոգուել է. այդ մասին պահպանուել են գրաւոր յիշատակութիւններ: 1888ին թիֆլիսաբնակ Զաքարիա եւ Բաղդասար Աբովեան եղբայրների բարերարութեամբ վերանորոգուել են եկեղեցին եւ շրջապարիսպը: Խորհրդային տարիներին յուշարձանի վերանորոգման եւ բարեկարգման աշխատանքներ են իրականացուել 1938ին, 1949-50ականներին, 1977ին[21]:

Ս. Աստուածածին եկեղեցու արեւելեան ճակատային հարթութիւնից քիչ վեր ԺԹ. դարում կառուցել են երկու համաչափ զանգաշտարակներ: Օձնեցի շինարար վարպետ, ճարտարարուեստ Նալբանդ Սերգոյի կերտած զանգաշտարակները, թէեւ ուշ շրջանի յաւելումներ են, սակայն չեն խաթարում յուշարձանի ընդհանուր տեսքը:

Օձունի Ս. Աստուածածին եկեղեցուց մօտ 10 մ. հիւսիս-արեւելք կանգուն կոթողը (Ե.-Զ. դդ.) վաղ քրիստոնէական արուեստի կարեւոր յուշարձաններից է: Հայաստանում քրիստոնէութեան յաղթանակը նշանաւորող հոյակապ յուշակոթող: Կարծիք կայ, որ այն խորհրդանշում է քրիստոնէութեան ընդունումը ոչ միայն Հայաստանում, այլեւ Վրաստանում եւ Աղուանքում: Կառուցման ստոյգ ժամանակը յայտնի չէ: Ըստ կառուցողական արուեստի եւ պատկերագրական ոճի՝ ոչ-ուշ, քան Զ. դարի կառոյց է: Ժամանակակից է գմբէթաւոր բազիլիկ եկեղեցուն: Կառուցուած է բաց շագանակագոյն ֆելզիտի սրբատաշ քարերով: Աստիճանաձեւ պատուանդանի

վրայ, երեք մոյթերով կամարակապ բացուածքներում տեղադրուած են մօտ 4 մ. բարձրութեամբ երկու քառակող սիւներ՝ քանդակազարդ նիստերով: Կամարներից վերեւ գեղաքանդակ քիւն է: Կոթողը, հաւանաբար, պսակուած է եղել թեւաւոր խաչով, որի մասին վկայում են վերին քիւի հարթակում պահպանուած ելուստները: Քառակող նիստերն ամբողջովին քանդակազարդ են: Հիւսիսային սեան արեւմտեան նիստին պատկերուած են տասներկու առաքեալները՝ լուսապսակներով, ձեռքներին՝ Աւետարան: Սիւների արեւելեան նիստերին պատկերուած են Տրդատ Գ. Մեծի խոզակերպ դառնալը, նրա բուժուելը, թագաւորի քոյր Խոսրովիդուխտը, Հռիփսիմէի վկայարանը, Տրդատ Գ. Մեծի եւ Գրիգոր Ա. Լուսաւորչի երթը, նաեւ որոշ դրուագներ Հին եւ Նոր Կտակարաններից՝ Իսահակի զոհաբերութեան տեսարանը, երեք մանուկները հնոցում, գահին նստած Տիրամայրը՝ մանուկ Յիսուսը գրկում, Կոյս Մարիամը՝ ժայռից բխող աղբիւրի մօտ աւետիս ստանալիս եւն.: Պատկերաքանդակները զետեղուած են կոթողի արեւելեան եւ արեւմտեան նիստերին՝ ուղղանկիւն շրջանակների մէջ: Հիւսիսային եւ հարաւային նիստերը յարդարուած են բուսական եւ երկրաչափական պատկերաքանդակներով: Օձունի կոթողի քանդակները պատկերում են քրիստոնէութեան յաղթանակը Հայաստանում եւ Բիւզանդիայում[22]: Իրենց ինքնատիպութեամբ կոթողի քանդակները վաղ քրիստոնէական արուեստի լաւագոյն ստեղծագործութիւններից են:

1938ին եւ 1950ին կատարուել են կոթողի նորոգման եւ ամրակայման աշխատանքներ:

2012-14՝ ընթացել են Օձունի Ս. Աստուածածին եկեղեցու վերականգնման առաջին փուլի աշխատանքները, որոնք իրականացուել են պետութեան, եկեղեցու եւ բարերարների համագործակցութեամբ: Աշխատանքները վստահուել էին ճարտարապետ Միշա Յակոբեանին, ֆինանսական բոլոր միջոցները տրամադրել է մոսկուաբնակ բարերար Մովսէս Ձաւարեանը: 2017ին որոշուել է շարունակել եւ աւարտել եկեղեցու վերականգնման ընդհատուած աշխատանքները[23]:

Եկեղեցու շուրջը տարածուած է բաւական ընդարձակ գերեզմանատունը, ուր պահպանուել են ԺԳ.-Ի. դարերի խոշոր տապանաքարեր, գեղաքանդակ խաչքարեր[24]:

Արդուի գիւղը եւս Լօռու մարզի Թումանեանի տարածաշրջանում է՝ մարզկենտրոնից մօտ 75 կմ. հիւսիս-արեւելք, Օձունից մօտ 5 կմ. հարաւ: Հնում կոչուել է Մելիքգիւղ եւ պատկանել է Լօռու Մելիքեան եւ Քալանթարեան ազնուականական տներին[25]: Գիւղում պահպանուել են Ս. Յարութիւն եկեղեցին (Ժ. դար) եւ Ս. Կիրակի մատուռը (Ժ.-ԺԴ. դարեր)[26]:

Մղարթը եւս Լօռու մարզի Թումանեանի տարածաշրջանի գիւղերից է՝ մարզկենտրոնից մօտ 60 կմ. հիւսիս-արեւելք, Ալավերդի քաղաքից մօտ 25 կմ. հարաւ-արեւմուտք: Գիւղի շրջակայքում պահպանուել են ուշագրաւ հնութիւններ եւ գիւղատեղիներ: Գիւղում են գտնւում «Հողացիր» եկեղե-

ցին (Է. դար), Ս. Սարգիս (ԺԳ.-ԺԴ. դդ.) եւ «Ծաղկավանք» (ԺԴ. դար) մատուռները[27]:

Իգահատը ներկայիս ՀՀ Լոռու մարզի Թումանեանի տարածաշրջանի Այգեհատ գիւղն է՝ Վանաձորից մօտ 65 կմ. հիւսիս-արեւելք, Ալավերդի քաղաքից մօտ 10 կմ. հարաւ-արեւմուտք: Գիւղում են գտնւում Ս. Սարգիս եկեղեցին (Զ.-Է. դդ.), «Գողգոթավանք» եկեղեցին (Ժ.-ԺԳ. դդ.) եւ Ս. Սարգիս մատուռը (ԺԶ.-ԺԷ. դդ.): Գիւղից ոչ հեռու գտնւում է Քոբայրի Վանքը[28]:

Քարինջը Լոռու մարզի Թումանեանի տարածաշրջանի գիւղերից է՝ մարզկենտրոնից մօտ 40 կմ. հիւսիս-արեւելք, Ալաւերդի քաղաքից մօտ 15 կմ. հարաւ-արեւելք: Գիւղում պահպանուել են եկեղեցի (ԺԳ. դար) եւ մատուռ (Ժ.-ԺԳ. դդ.)[29]:

Մարցը եւս Լոռու մարզի Թումանեանի տարածաշրջանի գիւղերից է՝ մարզկենտրոնից մօտ 40 կմ. հիւսիս-արեւելք, Ալավերդի քաղաքից մօտ 20 կմ. հարաւ-արեւելք: Գիւղի շրջակայքում գտնւում են Իգատակ եւ Մօտկոր հին գիւղատեղիները: Գիւղից 5 կմ. հարաւ-արեւմուտք գտնւում է Իգատակի վանքը (1255), գիւղի մէջ՝ «Տէրտէր» եկեղեցին եւ ԺԳ.-ԺԴ. դարերի մատուռներ[30]:

Օձունի թեմի վանքապատկան գիւղերի ցանկում յիշատակուած **Բեթարկ** անունով բնակավայր ներկայումս գոյութիւն չունի: Պէտք է նշենք, որ այդ անունով բնակավայր ժամանակին, թերեւս, եղել է, գոնէ մինչեւ 1890ականներ, որովհետեւ այդ բնակավայրի կողքին Գիւտ քահանայ Աղանեանցը հարցական նշան չի դրել, ինչն արել է ցանկում յիշատակուած **Արտաքան** բնակավայրի անուան կողքին: *Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*ի հեղինակները «Բեթարկ» բառայօդուածի տակ գրել են հետեւեալը. «*Գիւղ: Յիշատակւում է 18րդ դ. վերջերին Օձունի վանքի գ[իւղերի թւում* (*Դիւան Հայոց Պատմութեան, Հւրր. Դ.*, էջ 765): *Տեղն ու աշխարհագրական դիրքը՝ անորոշ*»[31]: Հաւանաբար գիւղի անունը Բերթաղ կամ Բերթակ է եղել եւ գտնուել է կամ Դսեղ եւ Չկալով գիւղերի մօտակայքում՝ Բերդակ Սարի լանջերին, կամ էլ ներկայիս Եղէգնուտ Գիւղի մօտ՝ գիւղի հարաւարեւելեան կողմում՝ «Կարմիր Քարի Տալ» կոչուող վայրում գտնուող «Բերդաղ» ամրոցից (Ք.ա. 4-3րդ հազարամեակներ) մօտ 500 մ. հեռաւորութեամբ «Մասրէք» վայրում նշմարուող գիւղատեղում:

Օձունի թեմի վանքապատկան գիւղերի ցանկի **Քոլակիրան** բնակավայրը աւելի հաւանական ենք համարում, որ ոչ թէ Քոլակիրան կամ Քոլագերան փոքրիկ գիւղն էր՝ համանուն երկաթուղային կայարանին կից, որը յետագայի Թումանեան բանաւանն էր, այլ քիչ աւելի հեռու գտնուող Քոլագիրան գիւղը, որը ներկայիս Լոռու մարզի Անտառամուտ գիւղն է՝ մարզկենտրոն Վանաձորից մօտ 30 կմ. հիւսիս-արեւմուտք: Գիւղի շրջակայքը հարուստ է պատմաճարտարապետական յուշարձաններով, որոնցից նշանաւոր են Ս. Աստուածածին եկեղեցին (ԺԸ.-ԺԹ. դդ.), «Թուխ Մանուկ» եւ

«Սուրբ Կիրակի» («Ջօրաւոր Ծառ», ԺԳ. դար կամ ԺԸ.-ԺԹ. դդ.) մատուռները[32]:

Վանքապատկան գիւղերի ցանկի **Արտաքան** բնակավայրը հաւանաբար գտնուել է ներկայիս Լօռու մարզի Անտառամուտ գիւղի մերձակայքում: Անտառամուտ գիւղից մօտ 3 կմ. արեւմուտք պահպանուել է Արզական կամ Արզաքան անունով գիւղատեղին[33]:

Վարդաբլուր գիւղը ներկայիս Լօռու մարզի Ստեփանաւանի տարածաշրջանում է՝ մարզկենտրոն Վանաձորից մօտ 35 կմ. հիւսիս-արեւմուտք, իսկ Ստեփանաւան քաղաքից մօտ 10 կմ. հարաւ-արեւելք: Գիւղի արեւելեան կողմում գտնւում է «Ս. Սարգիս» ամրոցը, հիւսիսային կողմում՝ Ձորագետի Վտակի ափին, գտնւում է «Ջգրաշէն» եկեղեցին (Զ. դար), գիւղում՝ Ս. Աստուածածին եկեղեցին (ԺԱ. դար), Ս. Խաչ (ԺԲ. դար), Ս. Սարգիս (Ժ. դար), Ս. Գէորգ (ԺԲ. դար) մատուռները[34]:

Ջկրաշէն (Ջիգրաշէն) եւ **Կտեւան** (Կետեւան) բնակավայրերը ներկայումս չկան: Դրանք գտնուել են Վարդաբլուր եւ Կուրթան գիւղերի մօտակայքում[35]:

Ցանկի յաջորդ բնակավայրը **Կուրթան**ն է, որը ներկայիս Լօռու մարզի Ստեփանաւանի տարածաշրջանում է՝ մարզկենտրոն Վանաձորից մօտ 40 կմ. հիւսիս-արեւելք, իսկ Ստեփանաւան քաղաքից մօտ 20 կմ. հարաւ-արեւելք: Կուրթանից արեւելք՝ ձորում է գտնւում Հնեվանք վանական համալիրը (Ժ.-ԺԴ. դդ.): Գիւղի շրջակայքը հարուստ է պատմաճարտարապետական յուշարձաններով[36]:

Օձունի թեմի վանքապատկան գիւղերի ցանկի **Չինիաքարակ** բնակավայրի մասին *Տեղանունների Բառարան*ում, ընդ որում՝ ոչ թէ «Չինիաքարակ», այլ «Չինիքարակ» բառայօդուածի տակ, կարդում ենք հետեւեալը. «*Գիւղ Մեծ Հայքի Գուգարք աշխ[արհ]ում: Յիշատակուած է Օձունի վանքի գ[իւղ]երի թւում* (*Դիւան Հայոց, Հփր. Դ.*, էջ 765)»[37]: Մեր խորին համոզմամբ՝ ցանկի Չինիաքարակ բնակավայրը ներկայիս Լօռու մարզի Ստեփանաւանի տարածաշրջանի Ագարակ գիւղն է: Թէ ինչ կապ ունի Չինիաքարակ բնակավայրի առաջին՝ «չինի»[38] բաղադրիչը հայերէնի միքանի բարբառներում կաւէ աման՝ ներսից եւ դրսից ապիկած, ջնարակած կամ յախճապակի, յախճապակեայ նշանակութիւնն ունեցող բառերի հետ, կարող ենք ընդամէնը ենթադրութիւններ անել: Ներկայիս Ագարակ գիւղի Դարմանաթաղ եւ Աչքահան գիւղատեղիներում էլ գտնուել են Օձունի թեմի վանքապատկան գիւղերի ցանկում յիշատակուած **Դարմանաթաղ** եւ **Աչքոհան** բնակավայրերը: Ըստ Երուանդ Լալայեանի՝ Ագարակից ոչ-հեռու՝ Աչքուհանք գետի ձորակում կան քարայրներ, որոնցից մէկի մէջ կառուցուած է մի մատուռ: Մատուռի խորշում, ըստ աւանդութեան, ամփոփուած է Բաղրաամ ճգնաւորը[39]:

Օձունի թեմի վանքապատկան գիւղերի ցանկի յաջորդ բնակավայրը՝ **Լեճան**ը, ներկայիս Լօռու մարզի Ստեփանաւանի տարածաշրջանի Լե-

ջան գիւղն է՝ Վանաձորից մօտ 45 կմ. հիւսիս-արեւելք, Ստեփանաւանից՝ մօտ 8 կմ. հարաւ-արեւելք: Գիւղում պահպանուել է եկեղեցի, որը հաւանաբար Ե. դարի կառոյց է, վերանորոգուել է ԺԹ. դարում: Լեջանի հարաւ-արեւելքում նշմարւում են հին գիւղատեղիի աւերակներ[40]:

Օձունի թեմի վանքապատկան գիւղերի ցանկի **Եղիտանք** գիւղը ներկայիս Լոռու մարզի Ստեփանաւանի տարածաշրջանի Եաղդան գիւղն է՝ մարզկենտրոն Վանաձորից մօտ 50 կմ. հիւսիս-արեւելք, իսկ Ստեփնաւան քաղաքից մօտ 15 կմ. հարաւ-արեւելք: Պահպանուած նշանաւոր յուշարձաններից են ԺԱ.-ԺԳ. դարերով թուագրուող կամուրջը, «Կարմիր Խաչ» (ԺԳ.-ԺԴ. դդ.) եւ Ս. Պօղոս (1862) եկեղեցիները, Ս. Գրիգոր մատուռը[41]: Գիւղը Եղիտակ անունով յիշատակում է Սարգիս վարդապետ Ջալալեանցը. «*Եղիտակ է գիւղ Լօռու, յորում այժմ բնակին Յոյնք: …Աստ պահեցաւ յաւազակաց Քեօթիւկ անուանեալ կալուածագիրն Սանահնի վանից ժամանակ առ ժամանակ*»[42]: Իսկ Գրիգորիս քահանայ Երզնկեանցը 1895ին գրում է, որ Եղիտանքը բաւական ժամանակ ամայի էր, որովհետեւ հին հայ բնակիչները զանազան հրոսակներից փախուստ են տուել տարբեր կողմեր: Վերջին ժամանակներս այստեղ բնակուեցին Պղնձահանք-Մադանի բանուոր յոյները[43]: Լալայեանը եւս վկայում է, որ ռուսական կառավարութիւնը 1822ին Արեւմտեան Հայաստանի Գիւմուշխանէ քաղաքից յոյներ է բնակեցրել Կողէս եւ Եաղդան գիւղերում[44]: Փաստօրէն, հայաթափուած այս գիւղերը յոյներով վերաբնակեցուել են 1822ից:

Ըստ Երզնկեանցի՝ Եղիտանք գիւղի հիւսիսային կողմում կային ընդարձակ հանգստարաններ, որոնցից միքանիսի տապանաքարերի վրայ կային հայերէն արձանագրութիւններ: Այդտեղ կային նաեւ խաչարձաններ, որոնցից մէկի վրայ կարդացւում էր Գրիգոր ամիրա Մամիկոնեան[45]: Այս յուշարձանը տեսել եւ իր աշխատութեան մէջ յիշատակել է նաեւ Ջալալեանցը[46]: Երզնկեանցը հաղորդում է մէկ այլ արժէքաւոր տեղեկութիւն, որ ստացել էր բնիկ հաղպատեցի, տփխիսաբնակ բժշկապետ Գրիգոր Քուչորեանից: Վերջինս 1867ի Լօռուայ այն ժամանակուայ *պրիսպաւ*[47] Սիպկոյի հետ եղել է Տուտէ իշխանի դամբարանում եւ նկատել մի սալաքար՝ «Վահան Մամիկոնեան» արձանագրութեամբ: Վերոյիշեալ տեղեկութիւններից Երզնկեանցը եզրակացնում է, որ Եղիտանքը, իսկ Տուտէի ցեղից առաջ էլ Կողէսը եւ դրանց սահմանակից տարածքները պատկանել են Մամիկոնեան ցեղին, որի հին ննջեցեալների հանգստարաններն ապացուցում են իր ասածը[48]: Մենք հակուած ենք կարծելու, որ Տուտէ իշխանը, հետեւաբար եւ իր որդին՝ նշանաւոր հոգեւոր-մշակութային գործիչ Գրիգոր Տուտէորդին խնամիացել-բարեկամացել էին Մամիկոնեան-Համազասպեան իշխանական տան ներկայացուցիչների հետ:

Օձունի թեմի վանքապատկան գիւղերի ցանկի **Կողէս** գիւղը ներկայիս Լոռու մարզի Ստեփանաւանի տարածաշրջանում է՝ մարզկենտրոն Վանաձորից մօտ 55 կմ. հիւսիս-արեւելք, Ստեփանաւան քաղաքից մօտ 20

կմ. հարաւ-արեւելք: Գիւղում եւ շրջակայքում պահպանուել են քառակող կոթող (Զ. դար), եկեղեցի (ԺԱ. դար), խաչքարերով գերեզմաններ (ԺԲ.-ԺԳ. դդ.), կամուրջ (ԺԳ. դար), Տուտիկ իշխանի կառուցած յուշակոթողը (1241)[49]:

Տուտիկ իշխանի մասին որոշ տեղեկութիւններ է հաղորդում Լալայեանը. «*Յովհաննաձորից փոքր ինչ հեռու, Կողէս յունաբնակ գիւղի հիւսիսային կողմը, գիւղից մօտ 40 սաժէն հեռու, մի փոքրիկ ձորակի մէջ, հայկական մի հին գերեզմանատուն կայ, ուր գտնւում է ի միջի այլոց եւ Գրիգորի եպիսկոպոս Տուտէորդու հօր՝ Տուտէ իշխանի դամբարանը: Այս իշխանի սերունդը յայտնի չէ թէ որ ժամանակից ի վեր իշխել է այս կողմերում եւ ունեցել է սեպհական կալուածներ, յայտնի է միայն, որ Տուտէ իշխանի միւս որդին՝ Տուտիկ իշխանը մեծ համարումն է վայելել ամբողջ Լօռում, եւ նրա անուամբ կոչուել են թէ Կողէսի մօտի վտակը եւ թէ նրա շրջակայքը՝ Տուտկաջուր: Այժմ այս կալուածքը պատկանում է Լօռիս Մելիքեանին, իսկ Կողէսը թագաւորական է: Այս իշխանական ցեղի մասին, բացի վերոյիշեալ կցկտուր տեղեկութիւնը, ուրիշ ոչինչ յայտնի չէ*»[50]: Նշենք, որ Հրաչեայ Աճառեանը որեւէ յիշատակում չունի Տուտէ իշխանի որդի Տուտիկի մասին:

On February 26, 2018, at the Boustros Palace, Foreign Minister Bassil, Pakradouni and Nader Hariri examined the electoral situation and the possibility of concluding electoral alliances (*Aztag*, February 27, 2018, p. 1).

[67] *Aztag,* January 11, 2018, p. 1.
[68] *Ibid.,* November 2, 2017, p. 1.
[69] *Ibid.,* January 11, 2018, p. 1.
[70] *Ibid.*
[71] *Ibid.,* February 6, 2018, p. 1.
[72] *Ibid,* September 9, 2017, p. 1.
[73] *Ararad,* February 8, 2018; *Aztag,* February 8, 2018.
[74] *Zartonk,* February 7, 2018, p. 1.
[75] *Ibid.,* February 8, 2018, p. 7.
[76] *Ibid.,* April 12, 2018, p. 2.
[77] *Ibid.,* December 4, 2017.
[78] *Ibid.,* February 16, 2018.
[79] *Ibid.*, March 10, 2018.
[80] *Aztag*, March 6, 2018, p. 1.
[81] *Ararad*, December 4, 2017, p. 1.
[82] *Ibid.*, February 17, 2018, p. 1.
[83] *Ibid.*, March 6, 2018, p. 1.
[84] *Aztag*, February 12, 2018.
[85] Website of the Ministry of Interior Affairs of Lebanon. (May 15, 2018).
[86] *L'Orient-Le Jour*, February 7, 2018, p. 3.
[87] *Aztag, March 23, 2018, p. 1.*
[88] *Zartonk*, February 16, 2018; March 29, 2018, p. 1.
[89] *Aztag*, March 23, 2018, p. 1.
[90] *Zartonk*, March 29, 2018, p. 3.
[91] Ibid.
[92] *Aztag*, March 23, 2018, p. 1.
[93] *Baikar*, April 8, 2018, p. 11.
[94] *Aztag*, March 23, 2018, p. 1.
[95] *Baikar*, March 4, 2018, p. 12; June 17, 2018, p. 13.
[96] *L'Orient-Le Jour*, January 27, 2018, p. 8.
[97] *Ibid.*, February 14, 2018, p. 2.
[98] *Ibid.*, April 20, 2018, p. 3.
[99] Ibid., May 3, 2018, p. 3.
[100] *Zartonk*, March 26, 2018, p. 1.
[101] *L'Orient-Le Jour*, April 6, 2018, p. 3.
[102] *Aztag,* April 14, 2018, p. 1.
[103] *Ararad*, March 27, 2018, p. 1.
[104] Ibid; April 13, 2018, p. 1.
[105] *Aztag,* April 27, 2018, p. 1.
[106] Ibid., March 26, p. 1.
[107] *L'Orient-Le Jour*, March 10, 2018, p. 3.
[108] Ibid.

Yorgui Teyrouz remarked on social media that the Armenian Genocide had not succeeded, that he is a living proof that the Armenian spirit continues (*The Daily Star*, April 25, 2018).

[109] *L'Orient-Le Jour*, March 10, 2018, p. 3; *The Daily Star*, May 3, 2018.

[110] *L'Orient-Le Jour*, March 10, 2018, p. 3.

[111] *Baikar*, April 8, 2018; *Khosnag*, April 2018, # 4, p. 75; *Zartonk*, April 12, 2018, p. 4; *Ararad*, April 13, 2018.

[112] Before Hariri's support for Michel Aoun, Serge Toursarkissian had visited Aoun and later, after the latter's election, he attended the consultations for the nomination of a new PM as an independent MP and not with the Mustaqbal Current. The last time he was with the Henchag MP in an official visit was their visit to the Mufti of the Republic in November 2017, after Hariri's resignation and forced stay in Saudi Arabia.

[113] *Diar* Daily, Beirut, April 4, 2018, p. 10.

[114] *Ibid.*, April 18, 2018.

[115] The Ramgavar Baikar Club had held a social event under the patronage of Mr. and Mrs. Sebouh Mekhjian at Nakhil Restaurant in Dbaye on January 6, 2013. Mekhjian's presence was noted at the 95th anniversary of the Ramgavar party celebrations at the Tekeyan Center.

[116] *Khosnag*, April 2018, p. 75.

[116] *Aztag*, February 20, 2018, p. 1.
AnNahar wrote on February 20, 2018 that a Murr-Tashnag and Free Patriotic Current alliance was being formed in Northern Metn. Voice of Lebanon Radio Station (92.3) also said the same in its broadcast.

[118] *L'Orient-Le Jour*, March 17, 2018, p. 3.

[119] *Aztag*, March 17, 2018, p. 2.

[120] Ibid., March 26, 2018, p. 1.

[121] *Ararad*, March 31, 2018, p. 2.

[122] *Hask*, March-April 2018, p. 196.

[123] *The Daily Star*, April 25, 2018.

[124] *Zartonk*, March 19, 2018, p. 1; *L'Orient-Le Jour*, March 19, 2018, p. 3.

[125] *Zartonk*, September 11, 2017, p. 1.

[126] *Aztag*, December 4, 2017.

[127] Ibid., December 18, 2017.

[128] Ibid., December 27, 2017, p. 1.

[129] Ibid., March 23, 2018, p. 1.

[130] *Diar*, April 18, 2018, p. 5.

[131] *L'Orient-Le Jour*, April 6, 2018, p. 2.

[132] *Zartonk*, April 24, 2018, Special issue, p. 20.

[133] *Aztag*, March 30, 2018, p. 2.

[134] *Ibid.*, April 3, 2018, p. 2.

[135] *Ibid.*, April 11, 2018, p. 5.

[136] *L'Orient-Le Jour*, April 11, 2018.

[137] *Diar*, April 18, 2018, p. 5.

[138] Anne Marie El-Hage, "Zahlé, une Bataille Charnière qui gagne tous les jours en Fièvre", *L'Orient-Le Jour*, April 6, 2018, p. 5.
[139] *Aztag*, April 2, 2018.
[140] Ibid., April 16, 2018.
[141] Ibid., April 19, 2018.
[142] Ibid., April 21, 2018.
[143] Ibid., April 27, 2018, p. 2.
[144] Ibid., May 2, 2018.
[145] Ibid., May 5, 2018.
[146] Ibid., April 20, and April 30, 2018, p. 1.
[147] *Ararad*, April 16, 2018, p. 1.
[148] Ibid.
[149] Ibid.
[150] *Zartonk*, April 13, 2018, p. 4.
[151] *Zartonk*, April 30, 2018, p. 1.
[152] *L'Orient-Le Jour*, May 3, 2018, p. 3.
[153] *Zartonk*, April 23, 2018, p. 1.
[154] *Baikar* Weekly, April 8, 2018, p. 10.
[155] *Aztag*, March 13, 2018.
[156] *Aztag*, April 20, 2018, p. 3, and March 23, 2018.
[157] *L'Orient-Le Jour*, March 30, 2018, p. 2.
[158] *L'Orient-Le Jour*, April 28, 2018, p. 2; *Aztag*, April 30, 2018.
[159] *Aztag*, May 3, 2018, p. 3.
[160] *Zartonk*, May 5, 2018, p. 7.
[161] *The Daily Star*, April 26, 2018.
[162] *L'Orient-Le Jour*, April 21, 2018, p. 2.
[163] *Ibid.*, April 11, 2018, p. 2.
[164] *The Daily Star*, April 11, 2018, p. 2.
[165] *L'Orient-Le Jour*, May 3, 2018, p. 1. On election eve, May 5, 2018, the Horizon program of Shant Armenia TV Station in Yerevan mentioned in its news the Tashnag and Henchag alliance with Mustaqbal and the Free Patriotic Current and added "the Ramgavars have allied with the extreme rightist Lebanese Forces." Two individual candidates, Paula Yacoubian and Sebouh Mekhjian, were given particular attention.
[166] *L'Orient-Le Jour*, May 7, 2018, p. 1.
[167] *The Daily Star*, May 7, 2018, p. 1.
[168] *Aztag*, May 7, 2018, p. 1.
[169] *Zartonk*, May 7, 2018. The newspaper mistakenly printed May 1.
[170] *Ararad*, May 7, 2018, p. 1.
[171] *Baikar* Weekly, May 13, 2018, p. 1.
[172] *Khosnag* Monthly, # 5, May 2018, p. 4.
[173] Roupen Avsharian lecture at the Tekeyan Center on January 24, 2018.
[174] *Aztag*, June 17, 2017, p. 1.

Hagop Pakradouni in vain asked the parliament to have the Protestant (Evangelical) seat moved to Beirut I, as it had 3900 Evangelical votes, while Beirut II had 2968 votes (*Aztag*, June 17, 2017, p. 1).

[175] *L'Orient-Le Jour*, May 11, 2018, p. 3.

[176] Website of the Ministry of Internal Affairs of Lebanon. (May 15, 2018).

[177] *L'Orient-Le Jour*, May 11, 2018, p. 3 gave Alina Clonsian 123 preferential votes.

[178] It was generally assumed by well-informed sources that between 2000 and 3000 Lebanese Armenians from abroad voted for candidates in Beirut, Metn and Zahle, in Lebanese embassies or in Lebanon, to which they had traveled through the efforts of, essentially, the Tashnag Party.

[179] The above results were received from the Ramgavar electoral machine, through Dr. Avedis Dakessian. The present writer tried to secure the preferential results of the Tashnag party in Beirut, through MP Hagop Terzian and the Henchag Party results from the Henchag Executive Body member Paul Yacoubian, but could not succeed in obtaining them.

[180] Discussions with Mr. Paul Yacoubian and Mr. Jirayr Tanielian.

[181] *Aztag*, October 1, 2018, p. 2.

[182] *L'Orient-Le Jour*, May 16, 2018, p. 2.

[183] *Aztag*, October 1, 2018, p. 2.

[184] *L'Orient-Le Jour*, May 12, 2018, p. 3.

[185] Discussion with the president of the municipal council of Anjar, Mr. Vartkes Khoshian, on November 9, 2018.

[186] *L'Orient-Le Jour*, May 11, 2018.

[187] Website of the Ministry of Internal Affairs of Lebanon, biographies of all candidates. (May 15, 2018).

[188] *L'Orient-Le Jour*, May 9, 2018, p. 4.

[189] Voice of Lebanon Radio broadcast news, June 12, 2018, 8:15 pm.; *L'Orient-Le Jour*, June 13, 2018.

[190] *L'Orient-Le Jour*, June 13, 2018.

[191] *Ibid.*, May 12, 2018, p. 2.

[192] H. Pakradouni, "Bidi Sharounagenk Dzarayel Ampoghch Lipananahayoutian [We shall continue to serve all the Lebanese Armenians], *Aztag*, May 9, 2018, p. 1.

[193] *Ararad*, May 9, 2018, p. 1.

[194] *Zartonk*, May 9, 2018, p. 3.

[195] *Aztag*, May 8, 2018, p. 1.

[196] Barouyr Aghbashian, "Nor Khorhertarane Gerna Ellal Joghovertagan Yev Joghovertamadouyts?" (Can the new parliament be popular and people serving?), *Baikar*, June 10, 2018, p. 5.

[197] *Hask*, # 5-6, May-June 2018, p. 300; *Aztag*, May 11, 2018, p. 1.

[198] *Aztag*, May 12, 2018, p. 1.

[199] *Ararad*, May 12, 2018, p. 1.

[200] "Reception in Honor of Lebanon's newly elected MP General Jean Talouzian", *Khosnag*, # 5, May 2018, p. 15.

[201] *Baikar*, June 3, 2018, p. 3.

[202] "Paula Yacoubian," *Spurk*, January-December 2018, p. 16.
[203] *Zartonk*, June 12, 2018, p. 1.
[204] *Zartonk*, June 21, 2018, p. 1.
[205] *Khosnag*, June-July 2018, p. 73; *Baikar*, May 27, 2018, p. 12.
[206] *Aztag*, October 19, 2018, p. 1; *Ararad*, October 19, 2018, p. 1; *Zartonk*, October 19, 2018, p. 1.
[207] *Zartonk*, November 2, 2018, p. 1.
[207] *Aztag*, February 2, 2019, p. 1.
[208] *Aztag*, February 2, 2019, p. 1.
[209] *Zartonk*, February 4, 2019, pp. 1-2.
[210] Ibid., February 8, 2019, p. 1.
The RDCL delegation did not include Dr. Avedis Dakessian, the party candidate in the elections, as he had apparently resigned from his position as co-chairman of the RDCL and from membership in the RDCL, since his name did not appear on the new list of the RDCL published in *Zartonk* on January 29, 2019, on page 2.

ՀԱՅՈՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԻՇԷԼ ԱՈՒՆԻ (2016-) ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
(Ամփոփում)

ՋԱՒԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

Նախքան 2018ի խորհրդարանական ընտրութիւններուն անդրադառնալը, հեղինակը տուած է ընթացքը 2009ին ընտրուած խորհրդարանին պաշտօնավարու-թեան երկարաձգումին եւ 2013 ու 2014ին ծրագրուած ընտրութիւններուն, ո-րոնք չկայացան: Իվերջոյ նախագահ Միշէլ Աունի ընտրութենէն ետք, գրեթէ մե-տասաներորդ ժամուն, համեմատական դրութեամբ եւ մէկ թեկնածուի քուէար-կութեան դրութեամբ ընտրական նոր օրէնքի մը շուրջ համաձայնութիւն գոյացաւ:

Ընտրական նոր օրէնքը արգելք եղաւ հայկական միասնական ցանկի մը Պէյ-րութի մէջ: ՀՅԴ եւ ՍԴՀԿ գործակցեցան Պէյրութի Ազատ Հոսանք-Մուսթաքպալ ցանկին հետ: ՌԱԿ գործակցեցաւ Լիբանանեան Ուժերու հետ Պէյրութի եւ Մեթնի մէջ: Իսկ ՀՅԴ Մեթնի մէջ գործակցեցաւ Ազատ Հոսանք եւ Ղովմի Կուսակցութեան Դաշինքին հետ:

Ընտրական նոր օրէնքին բերումով անհատ թեկնածուներ տեղ գտան քաղաքացիական ընկերութեան եւ Զահլէի մէջ հակընդդէմ ցանկերու վրայ: Ընտրութեանց արդիւնքն այն եղաւ, որ ՀՅԴ ունեցաւ երեք երեսփոխաններ (Յակոբ Բագրատունի, Յակոբ Թերզեան եւ Ալեքսանտր Մաթոսեան) եւ վերակազմեց Հայկական Պլոքը, գործակցելով Ազատ Հոսանքին կազմած «Հզօր Լիբանան» խումբին հետ: Հայկական աւանդական միւս երկու կուսակցութիւնները աթոռ չունեցան: Երեք անհատական թեկնածուներ՝ Ժան Թալուզեան (որ ստացաւ ՀԲԸՄ-ՀԵԸի նեցուկը), Փոլա Եագուպեան եւ Էտի Տեմիրճեան ընտրուեցան:

Նախորդ ընտրութիւններուն նման, միթինկներ եղան, բայց բուռն վէճեր ու կծու ընտրապայքար չմղուեցաւ:

Ընտրութիւններէն ետք կառավարութեան կազմութիւնը ձգձգուեցաւ: Նոր կառավարութեան մէջ մտան Աւետիս Կիտանեան (Դաշնակ) եւ Րիշար Գույումճեան (Լիբանանեան Ուժեր): ՌԱԿ այս վերջինին դահլիճ ընդգրկուիլը նկատեց Լիբանանեան Ուժերու հետ իր համաձայնութեան դափնեպսակը:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՔԱՐԱՇԱՄԲԻ ԳԱՒԱԹԻ ՇԵՓՈՐՆԵՐՈՒՆ ԱՌԵՂՇՈՒԱԾԻՆ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ

ԶԱՒԷՆ ԿՆԵԱՋԵԱՆ
zavenkniasian@yahoo.com.ar

ՄՈՒՏՔ

Հայկական հնագիտութեան համար անկիւնադարձային երեւոյթ մը հանդիսացաւ՝ Հայաստանի Հանրապետութեան Կոտայքի մարզի Քարաշամբ բնակավայրի շրջակայքը կատարուած պեղումներու ընթացքին, դրուագազարդ գաւաթի մը յայտնաբերումը հնագէտ Վահան Յովհաննիսեանի կողմէ 1987ին: Այս եզակի «գանձը» գտնուեցաւ միջին պրոնզէդարեան ժամանակաշրջանի իշխանաւորի մը դամբարանէն[1]:

Արծաթեայ գաւաթի իրանը գլանաձեւ է, բարձրութիւնն է 13.2 սմ., լայնութիւնը՝ 10,6 սմ. եւ ծանրութիւնը՝ 215 կրամ:

Ք.ա. ԻԲ.-ԻԱ. դարերուն ստեղծուած այս գտածոն մկրտուեցաւ «Քարաշամբի Գաւաթ» անունով եւ ընդգրկուեցաւ Հայաստանի Պետական Պատմութեան Թանգարանի հաւաքածոյին մէջ՝ թիւ 2867-1 պիտակով:

Գաւաթին վրայ կը գտնենք վեց հորիզոնական գօտիներ, որոնց վրայ կան զանազան պատկերներ՝ առիւծներու եւ յովազներու շարք, վարազի որսի տեսարան, որսորդական շուն, նիզակակիրներ, սուսերակիրներ, մարտի տեսարան, զինաթափուած գերիներ, պարտուածներու մահապատիժի տեսարան, ռազմական աւար, գլխատուած թշնամիներու գլուխներ, դիցաբանական առիւծագլուխ արծիւ, այծ մը յօշոտող առիւծ եւն.: Այս հարուստ պատկերները նիւթ կը պարունակեն այդ ժամանակաշրջանի ընկերային համակարգի, մշակոյթի մանրամասնութիւններուն եւ մասնաւորապէս՝ տիրող դիցաբանական-առասպելաբանական ըմբռնումներուն մասին:

Հիմնական նիւթերէն զատ, Քարաշամբի Գաւաթը հարուստ տեղեկութիւններ կը պարունակէ այսպէս կոչուած «կողմնակի» նիւթերու մասին, օրինակ՝ սպառազինութիւն, կահոյք, հագուստեղէն, ծիսագիտութիւն, երաժշտագիտութիւն եւն.:

Իր առանձնայատկութիւններուն բերմամբ, Քարաշամբի Գաւաթը հին արեւելեան կիրառական արուեստի գլուխգործոց մը համարուած է մասնագէտներու կողմէ: Նկատի ունենալով թէ՛ դրուագազարդ գօտիներուն բովանդակութիւնը եւ թէ՛ մետաղամշակման որակը, ինչպէս նաեւ օգտագործուած գեղագիտական սկզբունքներու ամբողջութիւնը՝ գտածոն եզա-

կի երեւոյթ մըն է տարածաշրջանի հնագիտութեան պատմութեան համար:

ՔԱՐԱՇԱՄԲԻ ԳԱՒԱԹԻ «ԱՆԾԱՆՕԹ ԻՐԵՐԸ»

Երաժշտագիտութեան համար շատ կարեւոր են Քարաշամբի Գաւաթի երկրորդ գօտիին պատկերները: Այստեղ դրուագուած են երեք տեսարան՝ ծիսական արարողութիւն, զինուած ընդհարում եւ պարտուած թշնամիի գերեվարութիւն: Առաջին տեսարանին գլխաւոր անձը գահին բազմած «մեծաւոր» մըն է (իշխա՞ն, թագաւո՞ր, աստուա՞ծ): Անոր դիմաց զոհասեղաններ կան՝ ծիսական անօթներով եւ արարողութեան սպասարկող քուրմերով: Քուրմերը արու եղջերու կը բերեն դէպի զոհասեղան որպէս զոհաբերումի կենդանի: Ծիսական այս արարողութիւնը կ'ամբողջացնեն «մեծաւոր»ին ետեւը տեղադրուած նուագածու մը՝ քնարը ձեռքին, եւ երկու անծանօթ իրեր բռնած անձեր:

Մեր կարծիքով, այս 'անծանօթ իրեր'ը օդահունչներու (փչողական) ընտանիքէն երաժշտական գործիքներ են՝ անծանօթ տեսակի շեփորներ[2]:

Այս նուագարանները անտարակոյս օդահունչներ են, բայց չեն նմանիր Հայկական Բարձրաւանդակի եւ շրջակայ տարածքի որեւէ հին կամ նոր նուագարանի: Ինքնին տարաշխարհիկ երաժշտական գործիքներու առջեւ կը գտնուինք: Ահա թէ ինչու նիւթին անդրադարձողները մեծ վերապահութեամբ մօտեցած են եւ, բացի նշելէ թէ անոնք պատկերուած են գաւաթի երկրորդ գօտիին վրայ, ո՛չ հնագէտները, ո՛չ արուեստաբաններ եւ ո՛չ ալ երաժշտագէտները ուրիշ խօսք կամ մեկնաբանութիւն ըրած են: Պարզապէս գաւաթը նկարագրելու ժամանակ խնդրոյ առարկայ շեփորները նշուած են իբրեւ «անծանօթ իրեր» կամ «հովահարներ» կամ ալ կասկածով՝ «փողային նուագարաններ (՞)»:

Ընդհանրապէս, գաւաթի մասին շրջանառութեան մէջ եղած տեղեկութիւնները ուրիշ բան չեն, քան Յովհաննիսեանի 1988ի ռուսերէն աշխատութեան կից հայերէն ամփոփումին ընդօրինակումը կամ վերաշարադրումը[3]: Քիչ մը աւելի ծաւալուն նկարագրութիւնները պարզապէս օգտուած են Յովհաննիսեանի բուն գրութենէն**:**

Ինչպէս նշեցինք, շատ քիչեր անդրադառնած են այս «անծանօթ իրեր»ու մանրամասնութեանց, մեծաւ մասամբ իբրեւ «հովահար»[4] ներկայացնելով զանոնք, անշուշտ հետեւելով նոյն Յովհաննիսեանի աշխատութեան՝

> За спиной «царя» изображениы двое, повидимому, коленопреклонных слуг с опахалами в правых руках[5] - («Արքայի» պատկերին ետեւը, ըստ երեւոյթին, երկու ծնրադիր ծառաներ իրենց աջ ձեռքերուն հովահարներով):

Բայց ինչպէ՞ս հովահարներ տեսնել երբ կարելի է անորոշութենէ փրկել այս «անծանօթ իրեր»էն գոնէ մէկը: Երկրորդ՝ այսինքն վարի նուագածուի պարագային, յստակ կարելի է նշմարել գործիքէն դուրս ցցուող խողովակաձեւ ձողիկ մը եւ այս ձողիկին հպած նուագածուի շուրթերը: Պարզ է, որ կը գտնուինք բերանոցի[6] մը առջեւ: Իսկ եթէ կը գտնուինք բերանոցի մը առջեւ, ուրեմն դէպի վեր ներկայացուած մասը՝ աստիճանաբար լայնցող եւ մեծաձաւալ փողալայնուկով աւարտող հին շեփորի մը նուագափողն է:

Առաջին նուագածուի բերանին մասը քիչ մը անորոշ է, բայց բոլոր միւս տարրերը կը նմանին երկրորդին:

Այս փաստերուն ակնյայտութեան պատճառով, նոյն Յովհաննիսեանը իր առաջին աշխատութենէն չորս տարի ետք նոյն պատկերումներուն համար արդէն «... կարծես փողային նուագարաններ կը փչեն...»[7] գրած է:

Յամենայն դէպս, կասկածները յարատեւած են այն աստիճան որ, օրինակ, Ֆրանսայի մէջ 1996ին տեղի ունեցած "Arménie des origines au IVe siècle" մեծաշուք ցուցահանդէսին առիթով հրատարակուած գիրք-ուղեցոյցին մէջ գրուած է՝ «... les deux autres soufflent (?) dans des instruments à vent (?) ...»[8], այսինքն «... միւս երկուքը կը փչեն(՞) փողային գործիքներ(՞)...»:

Փղոսկրեայ նուագափողով սիուա շեփորի գեղեցիկ օրինակ մը,
Լամու կղզիի թանգարան, Քենիա

ՔԵՆԻԱՅԻ «ՍԻՈՒԱ (SIWA) ՇԵՓՈՐԸ

Առեղծուածին բացայայտման սկիզբը կը գտնենք հայաշխարհէն շատ հեռու, Ափրիկէի մէջ: Քենիայի ափամերձ Lamu - Լամու եւ Pate - Փաթէ կղզիներու բնիկները, որոնք սուահիլի խօսող ժողովուրդներու զանգուածին կը պատկանին, կ'օգտագործեն բաւական տարաշխարհիկ օդահունչ մը, զոր սիուա - siwa կը կոչեն: Մեր կարծիքով, սիուաները եւ Քարաշամբի շեփորները գրեթէ նոյն կառուցուածքն ունին:

Սիուա շեփորները կը բաղկանան երեք հատուածներէ՝

1) աստիճանաբար լայնցող նուագափող

2) փչանցքի հատուած

3) ստորին հատուած

Առաջին հատուածը աստիճանաբար լայնցող գործիքին նուագափողն է, որ կը պատրաստուի մետաղէ՝ ընդհանրապէս արոյրէ: Օգտուելով փիղերու ժանիքներու բնական կոր ձեւէն, գործիքը կը պատրաստուի նաեւ փղոսկրէ, մակերեսը գեղեցկացնելով երկայնակի ակօսներու քանդակումով: Երկրորդ եւ երրորդ հատուածները պատրաստուած են արոյրէ կամ փայտէ, շատ գեղեցիկ տաշուած փորագրութիւններով:

Երկրորդ հատուածը շատ կարեւոր է, որովհետեւ հոն կը գտնուի փչանցքը: Թէեւ սիուան բերանոցաւոր նուագարաններու ընտանիքին կը պատկանի, անոր բերանոցը անջատ բաղադրամաս մը չէ, այլ նոյն սնամէջ գլանաձեւ երկրորդ հատուածին վրայ տաշուած բացուածք մը: Իսկ երրորդ հատուածը միակտոր է եւ իր ծանրութեամբ կը հաւասարակշռէ ընդհանուր գործիքը:

Քարաշամբի գաւաթն ու շեփորահարները

Երաժշտագիտութեան տեսանկիւնէն, այս նուագարանը կը պատկանի «բնական շեփոր»ներու ընտանիքին, որոնք հնարաւորութիւն ունին արտաբերելու բնական հնչիւնաշարի ձայնաստիճանները: Սիուան կողմնա-

յին փչանցքով բնական շեփոր մըն է, որովհետեւ բերանոց/փչանցքը տեղադրուած է ո՛չ թէ նուագարանի ա-ռանցքին վրայ այլ անոր աջ կողմը:

Այս ծիսական շեփորները կը գոր-ծածուէին Արեւելեան Ափրիկէի ծովեզերեայ շրջաններու եւ մերձակայ կղզիներու մէջ, մինչեւ ԺԹ. դարը, ազդարարելու համար կրօնական եւ տօնական այլեւայլ գործողութիւններ, կամ վտանգի պարագային համայնքը զգուշացնելու համար: Հին ժամանակ, սիուան տիրող դասի իշխանութեան խորհրդանիշը եղած է, այն աստիճան

նուագածուները բարձր կարգավիճակ վայելելով, որ անոր կորուստը կառավարիչին համար իշխանութեան կորուստի համազօր էր:

Ներկայիս սիուաները պահպանուած են Լամու եւ Փաթէ կղզիներու մէջ, բայց կը գործածուին միայն ժողովրդական տօնախմբութիւններու ժամանակ[9]:

ՔԱՐԱՇԱՄԲԻ ԳԱԽԱԹԻՆ ՇԵՓՈՐՆԵՐԸ

Ձեռքի տակ ունենալով ափրիկեան սիուաներու մասին տեղեկութիւնները եւ Քարաշամբի գաւաթի պատկերները, կրնանք յստակացնել եւ յաւելել Քարաշամբի շեփորներուն մասին մեր պատկերացումները:

Ափրիկեան սիուաներուն պէս, Քարաշամբի շեփորներուն առաջին հատուածը աստիճանաբար լայնցող գործիքին նուագափողն է, որ կ'ա-ւարտի մեծածաւալ փողալայնուկով: Ըստ քանդակուած պատկերներուն, նուագափողը սկսելով իր միջին մասէն պարոյկածեւ գալար մը կը կատարէ նախ դէպի վար եւ յետոյ դէպի վեր: Այսպէս, երբ ընդհանուր գործիքը դիտենք իր ամբողջութեամբ՝ մեծածաւալ պարոյկի ձեւ ունի ան:

«Քարաշամբի Գաւաթ»ը կը վերագրուի պրոնզէդարեան ժամանակաշրջանին, ինչ որ մեզի կը թելադրէ, որ շեփորի նուագափողին պատրաստութեան հաւանական նիւթը պրոնզը կրնայ եղած ըլլալ:

Երկրորդ կամ միջին հատուածը, ինչպէս նշեցինք, դուրս ցցուող խողովակաձեւ ձողիկ մը կը կրէ որ հպած է նուագածուի բերնին: Պարզ է որ այս հատուածը սնամէջ է, հոն կ'ամրանան թէ՛ բերանոցը եւ թէ՛ նուագափողը, ապահովելով անհրաժեշտ օդային շրջանառութիւնը: Նուագածուները այս հատուածէն բռնած են Քարաշամբի մեծածաւալ շեփորները:

Քարաշամբի Գաւաթի շեփորները նուագելու դիրքը, ըստ պատկերման, եղած է հետեւեալը.- նախ գործիքը կը բռնէին միջին մասէն, պահելով զայն ուղղահայեաց դիրքով, նուագափողը դէպի վեր, իսկ գործիքի կորութեան կիզակէտը դէպի առաջ: Յետոյ կը բարձրացնէին զայն մինչեւ որ բերանոցը հասնէր նուագածուի շրթներուն: Գործիքը չէր տատաներ շնորհիւ ստորին մասի ծանրութեան հաւասարակշռող դերակատարութեան:

Դատելով գաւաթի պատկերներու ընձեռած տուեալներէն, պարզ է որ Քարաշամբի շեփորները կ'օգտագործուէին բնոյթով կրօնածիսական, մարտական եւ հանդիսաւոր ազդանշաններ կատարելու համար: Նուագարանին բարձր կարգավիճակը եւ պատուաւոր ըլլալը կը բխի գաւաթի երկու նուագածուներուն տեղադրութենէն՝ ճիշտ «մեծաւորի» ետեւը: Նուագածուները այնպիսի ձեւով ներկայացուած են, որ կրնանք որոշ վստահութեամբ հաստատել, թէ «մեծաւորի» թիկունքի աջ եւ ձախ կողմերը կը գտնուին: Այս նուագածուները ո՛չ թէ ծառաներ պէտք է եղած ըլլան, այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ, որոնք շեփորները ձեռք պահած, պատուաւոր պահակներու պէս կանգնած են:

Քարաշամբի շեփորներն ալ կը պատկանին «բնական շեփոր»ներու ընտանիքին, հնարաւորութիւն ունենալով արտաբերել բնական հնչիւնաշարի ձայնաստիճաններ: Այս գործիքները պէտք է ունեցած ըլլան հզօր եւ ուժեղ ձայն:

Քարաշամբի շեփորները կը տարբերին ափրիկեան սիուաներէն որովհետեւ ունեցած են մեծ բերանոց մը, որ բաւական կը նմանի ժամանակակից **բերանոցաւորներու**[10]՝ շեփորներու[11], գալարափողերու[12], թրոմպոններու[13] եւն.:

Պատկերները շատ փոքր են, եւ պարզ է որ մետաղագործ վարպետին դժուար եղած է իւրաքանչիւր բաղադրամաս ներկայացնել իր իսկական համաչափութեամբ, այդուամենայնիւ կարելի է գոնէ նուագարաններուն մօտաւոր չափերը պատկերացնել, նկատի ունենալով մարմին/նուագարան չափերու յարաբերութիւնը: Քարաշամբի շեփորները, ըստ մեր չափումներուն, մօտաւորապէս 1.40 մեթր երկարութիւն ունեցած են, գուցէ նաեւ քիչ մը աւելի երկար՝ նկատի ունենալով գործիքին կորութիւնը եւ նուագափողին գալարը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այս միջին պրոնզէդարեան երաժշտական գործիքը դարերու ընթացքին լիովին անհետացած է ամբողջ տարածաշրջանէն, ինչ որ դժուարացուցած է գաւաթի պատկերներուն՝ առեղծուածային շեփորներուն էութեան բացայայտումը:

Ներկայիս, շնորհիւ բաղդատական նուագարանագիտութեան, կրնանք հաստատել, որ Քարաշամբի Գաւաթի «անծանօթ իրեր»ը մեծածաւալ շեփորներ եղած են:

[1] В. Э. Оганесян, “Серебряный кубок из Карашамба” (Վ. Է. Յովհաննիսեան, Քարաշամբի արծաթէ գաւաթը), *Պատմաբանասիրական Հանդէս*, Երեւան, 1988:4, էջ 145-61:

[2] Շեփոր ներկայիս կը համապատասխանէ ֆր. trompette, գերմ. trompete, անգլ. trumpet, ռուս. труба, եւ այլ բառերու:

[3] Յովհաննիսեան, էջ 161:

[4] *«Թագաւորի թիկունքին հովիարներ պահած երկու ծառայ եւ քնարահար նուագածու»* (Wikipedia - Վիքիպեդիա՝ «Գաւաթ (մ.թ.ա. 22-21-րդ դարեր, Քարաշամբ)»:

[5] Յովհաննիսեան, էջ 151:

[6] Բերանոց՝ որոշ տեղեր նաեւ մունդշտուկ՝ գերմ. Mundstuck, ռուս. мунштук, անգ. Mouthpiece:

[7] V. E. Oganesian, “A Silver Goblet from Karashamb”, *Soviet Anthropology and Archeology,* 1992, էջ 84-102:

[8] Jacques Santrot, *Arménie: Trésors de l'Arménie Ancienne, des Origines au IVe Siècle,* Nantes, Editeur Somogy, 1996, էջ 65:

[9] R. R. Marett, “The Siwa in East Africa”, *Folklore Journal*, Vol. 25, No. 4, Dec. 31, 1914, London, էջ 499-500:

[10] Բերանոցաւոր՝ որոշ տեղեր նաեւ մունդշտուկաւոր:

[11] Շեփոր՝ տե՛ս ծնթ. 2:

[12] Գալարափող՝ ներկայիս կը նշանակէ ինչ որ իտալ. corno, ֆր. cor կամ cor d’harmonie, գերմ. Horn կամ Waldhorn, անգլ. French horn, ռուս. валторна եւն.:

[13] Trombon (արեւելահայ. տրոմբոն):

RESOLVING THE ENIGMA OF THE KARASHAMP HORNS
(Summary)

ZAVEN KINASIAN
zavenkniasian@yahoo.com.ar

During an excavation in the Karashamb Village of Godayk District, Armenia in 1987, archeologist Vahan Hovhannssian discovered a silver rhyton which was immediately dated as a relic of the Bronze age. The relic, which was found in the tomb of a prince, was 13.2 cm. high, had a width of 10.6 cm. and weighed 215 grams.

Among its seven rows of s pictures one depicts a scene that shows two similar musical instruments. These have no similarity whatsoever with any of the traditional musical instruments of Armenia or the Caucasus, which made Hovhannisian describe them as "unfamiliar instruments". However, in a second article Hovhannisian considered them to be musical instruments.

Basing his conclusion on comparative musicology, the author finds a similarity between these instruments and the Siwa musical instrument of Kenya still in use during popular traditional celebrations on the islands of Lamou and Pate. The author concludes that the Karashamb musical instruments can be considered huge horns.

ՍՈՒՐԲ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՒՍԱՆՈՑՆԵՐԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

ՀԵՂԻՆԷ ՄԿՐՏՉԵԱՆ
heghmk@yahoo.com

Տէրունակոխ սրբավայրերում Հայ Առաքելական Եկեղեցու բազմադարեայ պատմութեան մէջ որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում Հայ Եկեղեցու կուսանոցների հնարաւոր գոյութեան հարցը:

Խնդրի քննութեան համար փորձել ենք ի մի բերել մատենագրական ու պատմագրական աղբիւրներում այդ մասին վկայութիւններ՝ հարցի էութիւնը հնարաւորինս տեսանելի դարձնելու համար:

Յիշատակուած աղբիւրներն առաւել հարուստ են միանձնուհիների կամ, «հաւատաւոր կանանց» մասին հաղորդումներով: Աւելին, նրանց ներկայութիւնը սուրբ վայրերում, իբրեւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան անդամներ, մեզ առաւել ծանօթ «մայրապետ»[1] անուամբ, ձգւում է մինչեւ մեր օրերը:

Հակառակ այս իրողութեան, սուրբ վայրերում Հայ Եկեղեցու կուսանոցների մասին տեղեկութիւնները չափազանց սակաւ են, եթէ ոչ՝ եզակի:

Ըստ Դ.-Ե. դարերի բիւզանդական պատմիչ Սոկրատ Սքոլաստիկոսի՝ Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինէ իշխանուհին, գալով Երուսաղէմ, ոչ միայն հիմնում է եկեղեցիներ, այլեւ իր շուրջն է խմբում բազմաթիւ կանանց եւ նրանց ուսուցանում կոյսերին վերաբերող եկեղեցական կանոններ. «*Իսկ մայր թագաւորին արարեալ զՆոր Երուսաղէմն, եւ ի յայրին Բեդղաեմա, ուրանաւր ըստ մարմնոյ ծնունդն Քրիստոսի. միւս այլ շինէր եկեղեցի. եւ ոչ զայս միայն. այլ եւ ի լերինն Համբարձման: Եւ այսպէս ունէր երկիւղածաբար յԱստուծոյ առ այս. որպէս զի աղաւթել նմա հանդերձ բազում կանանց դասու. եւ զկուսանսն վերագրեալս եկեղեցեացն կանոնաւ ի գիտութիւն յորդորելով, ընքեամբ իւրովի գործեալ. զերեկորնական սեղանսն մատուցանելով*»[2]:

Երուսաղէմի պատմութեան հեղինակ Տիգրան Սաւալանեանցը, վկայակոչելով բիւզանդական այս աղբիւրը, Եկեղեցու կողմից սրբացուած բարեպաշտ իշխանուհուն համարում է Երուսաղէմում կանանց մենաստանների հիմնադիր. «*Նաեւ կոյսերու յատուկ մենաստաններ կը հիմնէ, ու անոնց անունները արձանագրելով՝ ամէն մէկուն արքունի գանձէն ռոճիկներ կը սահմանէ: Տեղ տեղ մենակեացներու վանքեր ալ կը կառուցանէ...*»[3]:

Խօսքն այստեղ, սակայն Հայ Եկեղեցու կուսանոցների մասին չէ:

Իր պատմականութեամբ հանդերձ անորոշ է նաեւ Ձիթենեաց Լեռան վրայ գտնուած կուսանոցի հայկական լինելու հարցը:

Հայր Վարդան Հացունու վկայակոչած աղբիւրի համաձայն՝ այդ կուսանոցը Պաղեստինի 137 մենաստանների թւում եղել է միակ հայկականը: Հացունին, սակայն, չհերքելով յիշատակուած կուսանոցի պատմականութիւնը, կասկածի տակ է առնում դրա հայկական լինելը՝ առաւել հաւանական նկատելով վերջինի յունական լինելը: «*Պատմական կրնայ նկատուիլ հայ մենանոցի մը գոյութիւնը՝ բնակուած կուսաններէ Զիթենեաց լերան վրայ՝ միայն յանուն Աւետեաց. միակն իբր հայ՝ ամբողջ Պաղեստինի 137 ամենազգի խառն մենաստանաց մէջ...*[4]*: Թէեւ յիշեալ կուսաստրանի առաջնորդ Մօր յունարէն տապանագիրը՝ Վայլհէի կասկած կու տայ նաեւ կուսանաց յոյն լինելու*»[5]՝ գրում է Հացունին:

Նոյն կուսանոցը յիշատակում է նաեւ Սաւալանեանցը: Սակայն նա եւս չի անդրադառնում կուսանոցի պատկանելութեանը: Է. դարում Երուսաղէմում պարսից զօրքերի կատարած ասպատակութիւնների մասին խօսելիս՝ Սաւալանեանցը, իբրեւ սկզնաղբիւր նշելով *Հարանց Վարք*ի մի ձեռագիր, նշուած կուսանոցում կատարուած պղծութիւնների մասին ի մասնաւորի գրում է. «*Այն ժամանակ Զիթենեաց լերան վրայ կուսանաց վանք մը կար, որ Փարախ կը կոչուէր, ու ինչպէս կը կարծուին, այն մենաստանն էր՝ ուր երբեմն ճգնած էր Սրբուհին Պարասկեւի: Քաղաքին պաշարման օրերը հոն 400 հաւատաւոր կոյսեր կային, որոնք աշխարհէն ձեռք քաշած՝ ճգնողական կեանքի նուիրուած էին: Պարսից զօրքերը երբ կը տեղեկանան, ներս կը մտնեն, ու բոլոր կոյսերը դուրս հանելով՝ մէջերնին կը բաժնեն ու տեսակ տեսակ պղծութիւններու կը մատնեն զանոնք*»[6]:

Որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ Երուսաղէմի կուսանոցներում ապրած Կիլիկեան Հայաստանի իշխանուհիների մասին օտար պատմիչների յիշատակումները, որոնք սակայն, կրկին չեն հաստատում Երուսաղէմում Հայ Եկեղեցու կուսանոցների առկայութիւնը, քանի որ խօսքն այս դէպքում կաթոլիկ վանքերի մասին է:

Այսպէս, Սաւալանեանցը, վկայակոչելով եւրոպացի մի շարք պատմիչների, անդրադառնում է Տափնոս[7] անունով հայ իշխանի դստեր՝ Արտայի եւ Խաչակրաց արշաւանքների մասնակից, Եդեսիայի կոմս Բոդուէնի (Բալդուին, ըստ հայ պատմիչների նաեւ՝ Պաղտին) ամուսնութեան պատմութեանը: Ըստ այդմ՝ Բոդուէնը, որ 1100ին դառնում է Երուսաղէմի թագաւոր, չստանալով կնոջ համար խոստացուած հարուստ օժիտը, հեռացնում է նրան արքունիքից՝ արգելափակելով Ս. Աննայի Բենեդիկտուհիների վանքում՝ իբրեւ կրօնաւորուհի[8]:

Սաւալանեանցը, ըստ նոյն աղբիւրների, գրում է, որ Գաբրիէլ անուամբ հայ իշխանի դուստր Մորփիի եւ Եդեսիայի յաջորդ կոմս Բոդուէն Բ.ի ամուսնութիւնից ծնուած չորս դուստրերից կրտսերը՝ Ճիոյա կամ Ճիոյէդ անուամբ, նոյնպէս հրաժարուելով աշխարհիկ կեանքից, «*Սուրբ Աննայի*

Բենեդիկտուհիներու սքեմը առաւ վրան»[9]: Շուտով աւագ քոյրը, «*անարժան համարելով թագաւորի աղջկան մը՝ աննշան տոհմէ աբբասուհիի մը հրամանին տակ գտնուիլը, Բեթանիայի մէջ իր շինել տուած Ս. Ղազարի վանքը տարաւ իր քոյրը, որ ժամանակ մը այնտեղ առաքինի մայրապետի մը ձեռքին տակ դաստիարակուելէ յետոյ եղաւ աբբասուհի նոյն մենաստանին*»[10]:

Միակ աղբիւրը, որը վկայում է Հայ Եկեղեցու կուսանոցի մասին՝ Հերապոլսեցի Անաստաս Վարդապետին վերագրուող Երուսաղէմի հայկական վանքերի յայտնի ցուցակն[11] է, որ հանդիպում է ԺԶ.-ԺԷ. դարերի ձեռագրերում:

Անաստաս Վարդապետը, որ մի շարք ուսումնասիրողների կարծիքով, ապրել է Է. դարում[12], գալով Երուսաղէմ, իշխան Համազասպ Կամսարականի պատուէրով ցուցակագրել է աւելի քան 70 հայկական վանք («Վասն Վանորէից, Որ Ի Սուրբ Քաղաքն Յերուսաղէմ»): Համաձայն ցուցակի՝ դրանցից մէկը կանանց մենաստան է. «*Այլ վանք Ամատունեաց, ուր հաւատաւոր կուսանք բնակէին, ի կողմն Սիոնի*»[13]:

Կուսանոցի մասին յաւելեալ տեղեկութիւն է փոխանցում Սաւալանեանցը, նշելով որ, ըստ, ձեռագիր մէկ այլ օրինակի, այնտեղ շուրջ 100 կոյսեր են բնակուել[14]:

Ամատունեաց կոչուած կուսանոցը թւում է իրական: Սակայն պատմագրութիւնը որեւէ այլ տեղեկութիւն չի հաղորդում այդ մասին՝ տեղի տալով միայն տարբեր վարկածների ու ենթադրութիւնների:

Այսպէս, Մկրտիչ եպիսկոպոս Աղաւնունին, ելնելով Ամատունեաց վանքի տեղագրութիւնից («ի կողմն Սիոնի»), որոշակի երկմտութեամբ այն փորձում է նոյնացնել Ս. Հրեշտակապետաց Վանքի հետ՝ անմիջապէս բերելով նաեւ նման վարկածին հակասող փաստարկներ՝ այդպիսով հերքելով իր իսկ ենթադրութիւնը. «*Կայ նաեւ Անաստաս վրդ.ին յիշատակութիւնը որ է հետեւեալը*. Այլ վանք Ամատունեաց, ուր հաւատաւորքն բնակէին ի կողմն Սիոնի. *վասն զի այս վանքին մէջ շատ անգամներ բնակած են հաւատաւոր կիներ, որ են մայրապետք. բայց յիշատակարանները ցոյց կու տան միւս կողմէն թէ վանականներ նոյնպէս բնակած են հոն պարբերաբար: Կը թուի թէ հին դարերուն՝ կոյսեր կը բնակէին այս վանքին մէջ. բայց ԺԴ. դարու մեր ձեռագրական յիշատակարաններէն, ինչպէս նաեւ 1479 եւ 1483ին Դոմինիկեան Ֆելիքս Ֆապրիի Ուղեգրութենէն կ'իմանանք որ վանականներու բնակութիւնը կը շարունակուէր, եւ երկու հարիւր տարի վերջը միայն մայրապետներ կը հաստատուին հոն*»[15]:

Զերծ մնալով Աղաւնունու ենթադրութիւնը հաստատելու մտքից՝ արժէ նշել, որ վերջինի օգտին խօսում է ոչ միայն երկու վանքերի տեղագրական նոյնութիւնը:

Մասնաւորապէս, առնուազն ԺԴ.-ԺԵ. դարերի միքանի ձեռագիր յիշատակարաններ վկայում են Ս. Հրեշտակապետաց Վանքում հաւատաւոր կանանց աւելի վաղ ներկայութեան մասին, քան եզրակացնում է Աղաւնունին:

Այսպէս, ըստ դոմինիկեան միաբանի ուղեգրութիւնների, 1331ին Երուսաղէմի այս վանքում ընդօրինակած *Ճառընտիր*ում Ներսէս Կրակցին խնդրում է յիշել եւ «*ճգնազգեաց միակեցունքս, եւ* զհոգեւոր հաւատվորքս, *եւ զայլ բնակիչքս Սբ. Յակոբայ եւ Սբ. Հրեշտակապետացս, զառաջինս եւ զմիջինս եւ զվերջինս*»[16]:

Նոյն կերպ Երուսաղէմի Ս. Յակոբ եկեղեցում 1419ին ընդօրինակուած *Ճառընտիր*ի յիշատակագիր Մանուէլ Աբեղան խնդրում է յիշել «*այլ եւ առհասարակ միաբանք եւ բնակիչք Սբ. Յակոբա եւ Սբ. Փրկիչն եւ Սբ. Հրեշտակապետացն. թէ որք որ ի կրաւնաւորաց եւ յաշխարհականաց, եւ որ* ի հաւատաւոր կանանց, *թէ միով հացիւ, կամ միով դրամով, կամ սպասաւորել գրագրողն*»[17]:

Աւելին, այս նոյն ձեռագրի յիշատակարաններից մէկում հանդիպում է նաեւ «մայրապետ» անուան ամենավաղ արձարձումներից մէկը. «*Այլ եւ … մայրապետ … շատ աշխատել է ի սպասաւորութիւն… եւ զՄելքեսէթ աբեղայն եւ զմայրն իւր զապաշխարողն որ յոյժ աշխատութեամբ սպասաւորէր մեզ յեփել ի թափել, հանապազ սպասաւորութիւն մեզ, յիշեսջիք ընդ նմա եւ զՄարեմ ապաշխարողն …* »[18]:

Առնուազն ԺԴ. դարից ընդհուպ մինչեւ ոչ-վաղ անցեալը Ս. Հրեշտակապետաց Վանքի հովանու ներքոյ բնակուող հաւատաւոր կանանց կամ մայրապետերի գոյութեան մասին վկայութիւններ են հանդիպում եւ յետագայ դարերի պատմիչների աշխատութիւններում, ուղեգրութիւններում:

Նրանց մասին յատկապէս արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում Սիմէոն Լեհացին (ԺԷ. դար): Ըստ Ներսէս Վրդ. Ակինեանի՝ Լեհացին Երուսաղէմում է եղել 1615 Սեպտեմբեր-1616 Ապրիլ շրջանում: Իր ուղեգրութիւններում նա պատմում է հաւատաւոր կանանց բարեպաշտութեան մասին, որոնց աղօթական կեանքն ուղեկցւում է հիմնականում հայոց վանքի համար աշխատելով ու վանականներին սպասաւորելով:

«*Կային եւ ի սուրբ Փրկիչ կանայք եւ այրիք: Եւ ի Հրեշտակապետ հաւատաւոր կանայք եւ պառաւք, որ ցայգ եւ ցերեկ աղօթէին ի պաք եւ ի ճգնութիւնս. եւ չորապաք գոլով աշխատէին, դատէին. ոմանք պաշախ ժողովէին, այլք մանէին վուշ, եւ վարձն վանաց տային: Եւ կէսք քաղէին ձիթոյ պտուղ եւ աղէին. զի Երուսաղէմայ բոլորն սարուձոր զէյթուն է. եւ երբ ուխտաւոր գային, ծախէին նոցա եւ դրամն տային վանաց: Այլք քախնէին կամ զօրայս ժողովէին կամ հնձէին կամ այլ ծառայութիւն առնելով. ամենայնիւ զմարմինս անփոյթ արարեալ՝ միայն զհոգիս եւ*

զսուրբ Երուսաղէմ հոգային»[19]՝ գրում է Լեհացին՝ բերելով նաեւ ճգնակեցութեան բացառիկ օրինակներ:

«*Այլ եւ կայր ծեր կին մը Ուղիտայ անուն, որ իր ճգնութենէն եւ բազում ծնրադրութենէն կզացեալ էր. եւ ասին թէ այս քառսուն ամ է, որ բազում ինչս բերեալ եփ ի վանս եւ ինքն մնացեալ ճգնի աստ ի մանկութենէ, աշխատի եւ ձեռաց վաստակէն դեռ տայ պատարագի եւ ժամուց: Եւ ասաց Պարոնտէրն թէ Ես յորժամ վանացս կերակուր առաքեմ սմա, ոչ ուտէ, ասելով թէ Ես պիտի վանից տամ, թող թէ ուտեմ: Վասն սորայ ասին թէ կոյս է, այլ եւ խստակրօն, զի շաբաթն մի անգամ ճաշակէ, այլ եւ այն՝ չափով եւ կշռով: ...Կին մի այլ կայր, որ ուխտ էր եդեալ՝ վանացն դուրս չելնել եւ բնաւ չերդնուլ: Եւ այլ ոմն, զի ընդ անհաւատսն չխօսէր եւ պտուղ բնաւ չուտէր: Եւ այլ բազում վարս տեսաք եւ մաքուր լուաք մաքուր ծառայից Աստուծոյ՝ արանց եւ կանանց. որ զցայգ եւ զցորեկ ժամաց եւ աղօթից չի դադարէին, զԱստուած միշտ օրհնէին, աշխարհի խաղաղութիւն հայցէին եւ Հայոց մեղաց թողութիւն*»[20]:

Յայտնի է, որ Ս. Հրեշտակապետաց Վանքը շարունակում է մնալ հաւատաւոր կանանց բնակատեղի նաեւ յետագայ ժամանակներում[21]:

Եւ, թերեւս, սա է պատճառը, որ Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան ներկայ անդամներից Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեանն իր Vardapet բլոգում գրում է, թէ «*Ս. Հրեշտակապետաց Վանքը եղած է Կուսանոց, ուր մինչեւ XX դարու վերջերը ունեցած է մայրապետ բնակիչներ*»[22]:

Սակայն, պէտք է հաւաստել, որ թէ՛ վերը բերուած յիշատակարանները, թէ՛ պատմագրութիւնը որեւէ կերպ չեն հաստատում Ս. Հրեշտակապետաց Վանքի կուսանոց լինելու ենթադրութիւնը:

Աւելին՝ ԺԸ. դարում վանականութեան հարցերին նուիրուած իտալական մի հրատարակութիւն[23], խօսելով վանքերից դուրս բնակուող հայ միանձնուհիների մասին, իբրեւ օրինակ է բերում Երուսաղէմի միանձնուհիներին՝ ի մասնաւորի նշելով. «*Այս միանձնուհիներէն շատեր վանքերու մէջ չեն բնակիր, ինչպէս անոնք որ Երուսաղէմի մէջ են եւ որոնք կ'ապրին աշխատելով եւ հայ ուխտաւորներու կողմէ տրուած ողորմութիւններով*»[24]:

Այսինքն՝ հաւատաւոր կանանց կամ մայրապետերի համար Ս. Հրեշտակապետաց Վանքը Երուսաղէմի հայոց պատրիարքութեան կողմից յատկացուած բնակատեղի էր միայն եւ ոչ՝ կուսանոց: Մայրապետերը, որ Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան կանոնադրութեամբ համարւում էին նաեւ միաբանութեան անդամներ, իրենց ծառայութեամբ համահաւասար էին քրձազգեաց եղբայրներին: Իսկ նրանց հիմնական աշխատանքը միաբանութեան անդամների կենցաղային կարիքները հոգալն էր:

Վերադառնալով Անաստաս Վարդապետի թղթին՝ այն Ամատունեաց Վանքից զատ պարունակում է ուշագրաւ այլ հաղորդումներ եւս, որոնք

ենթադրել են տալիս Երուսաղէմում (թէեւ անանուն ու անհասցէ) հայկական այլ կուսանոցների առկայութեան մասին:

Այսպէս, ձեռագրում նշւում է, թէ աւելի ուշ, երբ հայերն ենթարկուել են քաղկեդոնական հալածանքների, յոյներին են անցել շատ վանքեր, թէ՛ արանց եւ թէ՛ կանանց. «*Թափեցին յիշխանութենէ հայրապետացն [յունաց] զամենայն վանորայս Հայոց, եթէ արանց վանք, եթէ կանանց վանք, եւ եթէ խրճիթք միանձանց, անդէն զինքեանս առնելով իշխեցողս*»[25]:

Մէկ այլ հաղորդման համաձայն՝ հայ վանականները, արդէն արաբական տիրապետութեան շրջանում, Երուսաղէմի պարսպին կից վանքերը բնակեցրել են կանանցով ու սարկաւագուհիներով, քանի որ նման տեղակայութեամբ կանանց վանքերը [նոյնն է թէ՝ կուսանոցները], ազատուած էին հարկապահանջութիւնից. «*Դարձեալ եւ էր զի ինքեանք իսկ վանականքն Հայոց թողեալ զիւրեանց վանսն կամաւ ի բաց գնային յաղագս ծանրութեական տաճկական հարկացն. եւ էր զի ի վանս իւրեանց զկանայս եւ զսարկաւագուհիս բնակեցուցանէին, որք էին ընդ պարսպօք, զի ինքեանք ազատ լիցին ի հարկապահանջութեանց, իբրեւ զվանս հաւատաւոր կանանց*»[26]:

Բոլոր այս հաղորդումներն, անշուշտ, խօսում են Երուսաղէմում Հայ Եկեղեցու կուսանոցների հնարաւոր գոյութեան օգտին՝ ենթադրել տալով, որ սուրբ վայրերում Ամատունեաց Վանքից զատ գործել են նաեւ Հայ Եկեղեցու այլ կուսանոցներ, որոնք եկեղեցական բաժանումից յետոյ քաղկեդոնական հալածանքների պատճառով աստիճանաբար դատարկուել են՝ հասնելով ընդհուպ արաբական տիրապետութեան ժամանակներ՝ առնուազն մինչեւ Է. դար:

Սակայն պատմագիտութիւնը խիստ վերապահօրէն է մօտենում Անաստաս Վարդապետի ցուցակի իսկութեանը, ինչը հարցականի տակ է դնում նաեւ Երուսաղէմում Հայ Եկեղեցու կանանց վանքերի գոյութիւնը:

Մասնաւորապէս, Անաստաս Վարդապետի այս հաղորդումներին առաւել քան թերահաւատ է մօտենում Հացունին. «*Այսպէս յանուն Անաստաս վարդապետի նորահնար կամ խաթարուած ռամկալեզու գրութիւն մը, լի ազգայնամոլ մեծաբանութեամբ ու երեւակայութեամբ, Երուսաղէմի մէջ Տրդատայ՝ Լուսաւորչի եւ անոնց ժամանակակից հայ իշխանաց կողմէն կառուցուած կը նշանակէ յանուանէ եօթանասուն մենաստան, «եթէ արանց վանք, եթէ կանանց վանք, եթէ միանձանց խրճիթ». եւ կուսանոցաց մէջ յատկապէս կը յիշէ Ամատունեացը Սիոնի մօտ՝ «ուր հաւատաւորքն բնակէին»: Եւ թէ յետոյ Հայք զանազան պատճառներով կորուսին անոնց մէկ մասը: Իսկ տաճկական տիրապետութեան շրջանին՝ հայ կրօնաւորք պարսպին քով դեռ իրենց ձեռք մնացածները «կանանց վանքեր արարին եւ սարկաւագուհիս կարգեցին, զի անհարկ լիցին եւ*

ազատ որպէս եւ զայլ կանանց վաներն»: Բայց ուստի՞ ժողովեցին այդքան պատրաստ հայ հաւատաւոր-ներ եւ լեցուցին վանքերդ»[27]:

Որքանո՞վ է միանշանակ Հացունու այս ժխտողականութիւնը՝ դժուար է ասել: Սակայն արժէ յիշատակել նաեւ Անաստաս Վարդապետին վերագրուող Երուսաղէմի աղուանական վանքերի ցուցակը, որ հանդիպում է Կաղանկատուացու *Պատմութիւն Աղուանից Աշխարհի* գործում՝ «Անուանք Վանորայիցն, Որք յԵրուսաղէմ Են Շինեալ յԱղուանից Անուն, Զոր Ի Թըղթոյ Երանելւոյն Անաստասայ Առ Վահան Մամիկոնեան Առեալ Ուսաք»[28]:

Ցուցակում ընդգրկուած վանքերից ուշագրաւ են երկուսը՝ Պարտաւի Ս. Աստուածածինը եւ Ամարասի Ս. Գրիգորը. «*Պարտաւայ վանք Սուրբ Աստուածածինն, որ առ աշտարակին Դաւթի, այժմ ունի*[29] *կին ոմն Մարիամ անուն Շամքորեցի, եւ զկէսն փաճիկ ունի» եւ «Ամարասայ վանք Սուրբ Գրիգոր, այժմ ունի կին մի Գրիգորի անուն, եւ զկէսն փաճիկ ունի*»[30]:

Ակնյայտ է, որ դրանք կիսովի տնօրինել են կանայք տաճիկների հետ միասին: Առաւել ուշագրաւ է այն, որ վանքերից առնուազն մէկը՝ Պարտաւի Վանքը («առ աշտարակին Դաւթի»), գտնուել է Երուսաղէմի մուտքի մօտ: Կարելի՞ է ենթադրել, որ գոնէ այս վանքը, նախկինում լինելով արական, յայտնուել է կանանց եւ արաբների տնօրինութեան տակ հարկապահանջութիւնից խուսափելու հետեւանքով: Թերեւս:

Այսպէս թէ այնպէս, կարող ենք արձանագրել, որ սուրբ վայրերում Հայ Եկեղեցու կուսանոցների մասին միակ աղբիւրը Անաստաս Վարդապետի թուղթն է, որի վաւերականութեան մասին պնդումներն[31] անգամ, նոր լոյս չեն սփռում այս մասին, իսկ հարցի վերջնական պատասխանը շարունակում է պարուրուած մնալ դեռեւս մեզ անյայտ պատմութեան էջերով:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] *Հայկազեան Բառարան*ը «մայրպետ» բառին հետեւեալ բացատրութիւնն է տալիս. «*Մայրապետ. պետմայր, եւ պետ մարց, այսինքն հաւատաւոր կանանց. մայր վանից կուսանաց, աբբասուհի*»: Ժամանակակից հայերէնի բառարաններում «մայրապետ»ը նաեւ որբանոցներում երեխաներին եւ հիւանդանոցներում հիւանդներին խնամող կինն է: Երուսաղէմում մայրապետերը սոսկ վանականներին սպասաւորող հաւատաւոր տնտեսուհիներ են (*Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հ. 2*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1981, էջ 202. նաեւ՝ *Ժամանակակից Հայոց Լեզուի Բացատրական Բառարան, Հտր. 3*, Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատ., 1969, էջ 472):

[2] *Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն, Հտր. Ա.*, աշխատասիրութեամբ Մեսրոպ Վ. Տէր Մովսէսեան, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 1897, էջ 49-50:

[3] Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, *Պատմութիւն Երուսաղէմի*, գրաբարից աշխարհաբարի փոխադրութիւնը՝ Մեսրոպ Եպս. Նշանեանի, Երուսաղէմ, 2000, էջ 212:

[4] Նման հեղինակ մեզ անյայտ է: Հաւանաբար Հացունին նկատի ունի ֆրանսիացի լուսանկարիչ Լուի դէ Քլերքին (Louis de Clercq): Յայտնի է, որ նա 1859ին ֆրանսիացի հնագէտների հետ մասնակցել է Սիրիա եւ Փոքր Ասիա կատարած գիտարշաւների եւ իր լուսանկարներն ամփոփել *Voyage en Orient* ընդհանուր խորագիրը կրող 6 հատորանոց ալբոմում:

[5] Վ. Հացունի, «Կուսաստանք Հայաստանի Մէջ», *Բազմավէպ*, 1923, Մարտ, էջ 77:

[6] Սաւալանեանց, էջ 251: Այս մասին կայ նաեւ ժողովրդական մի աւանդութիւն, թէ ինչպէս կոյսերից մէկը պղծութիւնից խուսափելու համար մոլորեցնում է երիտասարդ պարսիկ զինուորին եւ ընդունում նահատակութեան պսակը (irates.am/hy/1401436260, 30.05.2014):

[7] Սաւալանեանցը, ոչ-հայեցի նկատելով Տափնոս անունը, հաւանական է համարում, որ Տափնոսը նոյնինքը Կոնստանդինն է, որին օտար պատմիչներն այլ անունով են կոչել: Ըստ Կ. Բասմաջեանի՝ յիշատակուած անձը Ռուբէն Ա. Իշխանի որդի եւ պարոն Կոնստանդինի եղբայր Թորոսն է. «*...Թորոս այս օրինակին հետեւելով՝ իր Արտա անուն աղջիկը կարգեց Երուսաղէմի ապագայ թագաւոր Պաղտինի (Baudouin de Boulogne) հետ, որ խաչակիրներու բանակին առաջնորդ Կոնդոփրէի (Godefroy de Bouillon) եղբայրն էր*»: Լեւոն Տէր Պետրոսեանը համոզիչ է համարում Ժերար Տետէեանի ասորական աղբիւրների վրայ հիմնուած ապացոյցը, ըստ որի լատին աղբիւրներում նշուած Taphnouz, Tafroc կամ Tatos անունով իշխանը Կոնստանդին Կարկառացի իշխանի եղբայր Դաւթուկն է (Կ. Յ. Բասմաջեան, *Լեւոն Ե Լուսինեան. Վերջին Թագաւոր Հայոց*, 1908, Պարիս, Տպ. S. Soղրամաճեան, էջ 11. նաեւ՝ Սաւալանեանց, էջ 1194 (տողատակում). նաեւ՝ Լեւոն Տէր Պետրոսեան, *Խաչակիրները Եւ Հայերը, Հտր. Ա.*, Երեւան, Նախագահ Տէր Պետրոսեանի արխիւի եւ գրադարանի հիմնադրամ, 2005, էջ 39):

[8] Սաւալանեանց, էջ 320, 1193-6: Հմմտ՝ Claude Mutafian, "Les Princesses Arméniennes et le Liban Latin (XIIe-XIIIe siècle)," *Լիբանանի Հայերը. Անցեալի Իշխանուհիներ Ու Գաղթականներ Եւ Ժամանակակից Համայնք Գիրքժողովի Նիւթեր*, Պէյրութ, 2009, էջ 4-6: Հայ իշխանուհիների հետ Երուսաղէմի արքաների ամուսնութեան մասին տե՛ս նաեւ՝ Ղեւոնդ Ալիշան, *Սիսուան*, 1885, Վենետիկ. նաեւ՝ Տէր Պետրոսեան, *Հտր. Ա.*, էջ 39, 152-3, 220, 229, 374-5:

[9] Սաւալանեանց, էջ 1196:

[10] Անդ:

[11] Ցուցակին առաջին անգամ անդրադարձել է Հ. Ղ. Ինճիճեանը, ապա՝ Ալիշանը: Աւետիս Սանճեանը կազմել է ձեռագրի համեմատական բնագիրը՝ Sanjian Avedis K., "Anastas Vardapet's List of Armenian Monasteries in Seventh-Century Jerusalem: A Critical Examination", *Le Muséon*, 1969:82: Հմմտ.՝ *Մատենագիրք Հայոց, Ե. Հատոր*, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1275-9:

[12] Պաւէլ Չոբանեանը թուագրում է Զ. դարի 70ականներ (Պաւէլ Չոբանեան, «Ա-նաստաս Վարդապետի Կազմած Երուսաղէմի Հայկական Վանքերի Ցուցակի Ժամանակի Հարցի Շուրջ», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2001, թիւ 1, էջ 27-46:

[13] Sanjian, էջ 270. հմմտ.՝ *Մատենագիրք Հայոց*, էջ 1276:

[14] Սաւալանեանց, էջ 244, տողատակ:

[15] Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի, *Հայկական Հին Վանքեր եւ Եկեղեցիներ Սուրբ Երկրին Մէջ, Ուսումնասիրութիւններ*, 1931, Երուսաղէմ, էջ 110:

[16] Անդ, էջ 100:

[17] *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց,* կազմ.՝ Նորայր Եպս. Պողարեան, *Հտր. 1*, Երուսաղէմ, 1966, էջ 40:

[18] Անդ, էջ 40:

[19] *Սիմէոն Դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն. Տարեգրութիւն եւ Յիշատակարանք*, ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ակինեան, Վիեննա, Մխիթարեան տպարան, Ազգային մատենադարան ՃԽԱ., 1936, էջ 303-304:

[20] Անդ, էջ 304-305:

[21] *Գիրք Պատմութեան Սբ եւ Մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս, եւ Սրբոց Տնօրինականաց Տեղեաց Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի*, Կ.Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի, 1731, էջ 270. նաեւ՝ Մկրտիչ Վարդապետ Արծրունեան, *Սկզբնագրութիւն Սրբոյ Քաղաքին Երուսաղէմի Քննութեամբ Համառօտեալ Ի Հաննա Եւ Մարինոս Պատմագրաց Ընդ Որս Եւ Յաւելեալ Բազում Բանս Հանդերձ Կարեւոր Ծանօթագրութեամբք*, Յերուսաղէմ, 1859, էջ 182. նաեւ՝ Խորէն Վ. Վանեցի Մխիթարեան, *Համառօտ Պատմութիւն Երուսաղէմի Եւ Սկզբնագրութիւն Սրբազան Տեղեաց*, Երուսաղէմ, 1867, էջ 94:

[22] «Սուրբ Հրեշտակապետաց Վանք», http://ghevondvardapet.com/multimedia-archive/ :

[23] Աշխատութեան Հայ Եկեղեցու վանական կեանքին վերաբերող հատուածները թարգմանաբար հրապարակել է Մխիթարեան միաբան Տաճատ Եարտըմեանը: Ըստ նրա՝ բնագիրն հաւանաբար եղել է ֆրանսերէն: Ինքը՝ Եարտըմեանը, հայ վանականութեան մասին նիւթերը քաղել է երկի իտալերէն թարգմանութիւնից՝ *Storia degli Ordini Monastici Religiosi e Militari e delle Congregazioni Secolari* (Պատմութիւն միանձնական կարգերու, կրօնական եւ զինուորական, եւ աշխարհական միաբանութիւններու): Այն տպուել է 1737ին Իտալիայի Լուկա (Lucca) քաղաքում: 8 հատորանոց գրքի առաջին հատորի հինգերորդ գլուխը հայ վանականների մասին է (Հայր Տաճատ Եարտըմեան, *Նիւթեր Հայ Վանականութեան Պատմութեան (ԺԴ-ԺԷ դար)*, Վենետիկ-Ս. Ղազար, Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», թիւ 30, 1989:

[24] Անդ, էջ 26:

[25] Sanjian, էջ 272-3. հմմտ.՝ *Մատենագիրք Հայոց*, էջ 1277:

[26] Sanjian, էջ 273, հմմտ.՝ *Մատենագիրք Հայոց*, էջ 1278:

[27] Վ. Հացունի, «Կուսաստանք Հայաստանի Մէջ», *Բազմավէպ*, 1923, Մարտ, էջ 76:

[28] Պօղոս Խաչատրեանի ենթադրութեամբ Անաստաս Վարդապետին վերագրուող այս ցուցակն առանձին մի ցուցակ է, որ կազմուել է Վահան Մամիկոնեանի խնդրանքով: Չոբանեանի պնդմամբ՝ Կաղանկատուացին օգտուել է ցուցակի առաւել անխաթար օրինակից՝ առանձնացնելով միայն աղուանական վանքերը (Պօղոս Խաչատրեան, *Հայ Հին Գրականութեան Մատենագիտութիւն*, Երեւան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2016, էջ 37. նաեւ՝ Չոբանեան, էջ 27-8):

[29] Ըստ *Հայկազեան Բառարանի*՝ «ունիմ» բայն ունի միքանի նշանակութիւններ, այդ թւում՝ «առնուլ», «տիրել», «առնել», «տէր ըլլալ» (*Նոր Բառգիրք*, էջ 550):

[30] Մովսէս Կաղանկատուացի, «Պատմութիւն Աղուանից Աշխարհի», *Մատենագիրք Հայոց, ԺԵ. Հատոր, Գիրք Բ*, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 356-7: Վարագ Առաքելեանի՝ բնագրի արեւելահայերէն թարգմանութեամբ՝ «*Պարտաւի Սուրբ Աստուածածինը, որ Դաւթի աշտարակի մօտ է, այժմ մի շամքորեցի Մարիամ անունով կին է կառավարում, իսկ կէսին տիրում է արաբ*» եւ «*Ամարասի Սուրբ Գրիգորի վանքին այժմ տիրում է Գրիգորի անունով մի կին. իսկ կէսը պատկանում է արաբի*» (Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից Աշխարհի*, թարգմ., առաջ. եւ ծանօթ.՝ Վարագ Առաքելեան, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1969, էջ 222:

[31] Չոբանեան, էջ 27-45:

THE LIKELIHOOD OF FEMALE ARMENIAN CHURCH CONVENTS IN THE HOLY LAND
(Summary)

HEGHINE MKRTCHYAN
heghmk@yahoo.com

The paper examines the data on the existence of female Armenian Church convents in the Holy Land.

Such data are very scarce. The earliest and perhaps the most valuable source is the list concerning the Armenian monasteries of Jerusalem prepared by the 7th century priest Anastas. This list is found in a manuscript dating back to the 16th-17th centuries.

After examining all available and indirect data and sources, the author concludes that the existing information cannot confirm (or negate) the presence of female Armenian convents in the Holy Land and that further evidence is needed to clarify this unresolved issue.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՔԱՐՏԷԶԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ
vardan_gm@yahoo.com

ՄՈՒՏՔ

Հետազօտելով եւ ուսումնասիրելով մասնաւորապէս Հայաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ռուսաստանի գրադարաններն ու արխիւների Հայաստանի եւ Այսրկովկասի ֆրանսերէն քարտէզները, եզրակացրել ենք որ տարածաշրջանի առաջին ֆրանսերէն քարտէզը ստեղծուել է ԺԷ. դարի կէսերին՝ ֆրանսիացի յայտնի քարտէզագիր Սանսոն Նիկոլայի (1600--67) կողմից[1]:

Մերձաւոր Արեւելքը, այդ թւում նաեւ Հայաստանը եւ Այսրկովկասը, վաղուց էին գրաւել եւրոպացիների ուշադրութիւնը, ուստի տարածաշրջանային առաջին ֆրանսիական քարտէզի հրատարակութիւնը 1650ականներին՝ ամենեւին պատահական չէր: Այստեղ կը փորձենք քննարկել թէ ինչո՛վ էր տուեալ պատմական ժամանակաշրջանը նպաստաւոր, եւ որո՛նք էին քարտէզի ստեղծման հիմնական դրդապատճառները:

Մարդկութեան պատմութիւնը կարելի է դիտել որպէս աշխարհաքաղաքական դարաշրջանների օրինաչափ հերթափոխ: Այդ դարաշրջանների սկիզբը եւ վերջը, որպէս կանոն, ամրագրում են միջազգային համապարփակ պայմանագրերը: Ա. միջազգային աշխարհաքաղաքական դարաշրջանի սկիզբ է համարւում 1494ին Իսպանիայի եւ Պորտուգալիայի միջեւ կնքուած Տորդեսիլիասի Պայմանագիրը՝ համաշխարհային ազդեցութեան տիրոյթները միմեանց միջեւ բաժանելու մասին, Բ.ը՝ Ուեստֆալիայի Պայմանագիրը[2], որով Եւրոպայում հիմք է դրւում նոր կարգերին[3]:

1653ին, Ֆրանսիայում կազմւում է տարածաշրջանի առաջին ֆրանսերէն քարտէզը՝ «Թուրքոմանի[4], Ժէորժի[5], Կոմանի[6] (Turcomanie, Georgie, Commanie)»[7] վերնագրով, որի երկու բնօրինակները այժմ պահւում են երկրի Ազգային Գրադարանում: Նախքան թեմայի քննարկումը, ներկայացնենք այդ քարտէզը ընդհանուր գծերով եւ նիւթին առնչուող միքանի կարեւոր հարցերի մասին տանք որոշ եզրայանգումներ:

Ուշագրաւ է այն փաստը, որ տարածաշրջանի ֆրանսերէն քարտէզի առաջին օրինակի վերնագրի այն հատուածը, որտեղ նշուած է հեղինակի անունը, խնամքով կտրել են եւ փակցրել մի փոքր վեր: Իսկ քարտէզի վերնագրի մաս կազմող Կոմմանի (Commanie) անուանումը ընդհանրապէս տեղ չի գտել այս փոփոխութիւններում: Կտրուած հատուածը գոցելու համար որոշել են քարտէզն անբողջութեամբ սոսնձել նոր թղթի վրայ: Այ-

նուիեետեւ վերնագրից ներքեւ՝ արդէն ազատուած մասում, որպէս վերնագրի շարունակութիւն ֆրանսերէնով ձեռագիր յաւելել են հետեւեալ տողերը. «*որոնք համապատասխանում են նախկին Մեծ Հայքին, Կոլխիդային (Կողքիս - Վ.Մ.), Իբերիային (Վիրք - Վ.Մ.) եւ Ալբանիային (Աղուանք - Վ.Մ.)*»[8]: Այստեղ շատ կարեւոր է հաստատել նաեւ այն իրողութիւնը, որ քարտէզի վրայ որեւէ բովանդակային փոփոխութիւն արուած չէ: Այսպիսով, քարտէզի վերնագիրն ամբողջութեամբ ընթերցւում է հետեւեալ կերպ՝ «*Թուրքոմանի, Ժէորժի, [որոնք համապատասխանում են նախկին Մեծ Հայքին, Կոլխիդային, Իբերիային եւ Ալբանիային]*»: Սակայն, այս ամենով հանդերձ, Ֆրանսիայի Ազգային Գրադարանի գրացանկում քարտէզի վերնագիրը գրանցուած է ամբողջութեամբ՝ նշուած յաւելումով հանդերձ (տե՛ս՝ քարտէզ 1. քարտէզի խնդրայարոյց հատուածը մեր կողմից առանձնացուած է շրջանակով)[9]:

Քարտէզի վրայ փակցուած թուղթը, որի վրայ շարադրուել էր գրութիւնը, զննելուց եւ բնագիր քարտէզի թղթի հետ համեմատելուց յետոյ նկատեցինք, որ այդ փոփոխութեան համար օգտագործուել է գրեթէ նման որակի թուղթ: Այսինքն՝ այդ գործողութիւնը կատարուել է քարտէզի տպագրութիւնից շատ չանցած:

Այդ ենթադրութեան օգտին է վկայում նաեւ հետեւեալ իրողութիւնը. Ֆրանսիայի Ազգային Գրադարանում մեր յետագայ փնտռտուքները պսակուեցին յաջողութեամբ. այնտեղ կայ Նիկոլայի լատիներէնով հեղինակած մէկ այլ քարտէզ՝ «Մեծ Հայք, Կոլխիդա, Իբերիա, Ալբանիա» վերտառութեամբ, հրատարակուած 1655ին[10]: Ուշագրաւ է այն փաստը, որ երկու տարի անց կազմուած այս քարտէզը ունի աշխարհագրական ճիշտ նոյն հիմքն ու աստիճանացանցը: Տարբերութիւններ նկատւում են միայն բովանդակային ծանրաբեռնուածութեան մէջ՝ պայմանաւորուած քարտէզագրուող ժամանակաշրջանով:

Ինչ վերաբերւում է այս քարտէզի վերնագրին, ապա դա կրկնութիւնն է առաջին քարտէզի աւելացուած հատուածի՝ հիմք ունենալով պատմական պետական կազմաւորումների անուանումները (Մեծ Հայք, Կոլխիդա, Իբերիա, Ալբանիա):

Փաստօրէն, քարտէզի վրայ փոփոխութիւններ կատարողը առաջնորդուել է ոչ միայն պատմական ճշմարտութիւնը արձանագրելու մղումով, այլեւ ձեռքի տակ ունեցել է Նիկոլայի կողմից երկու տարի անց հրատարակած քարտէզը:

Ամփոփելով վերոբերեալը՝ կարող ենք ենթադրել, որ առաջին քարտէզի վերնագրիը բովանդակային մեծ փոփոխութիւն չի կրել, մանաւանդ որ Ազգային գրադարանի գրացանկում վերնագիրը տրուած է ամբողջութեամբ՝ աւելացուած հատուածի հետ միասին (*Turcomanie, Georgie, Commanie* [qui répondent à la Grande Arménie, à la Colchide, Iberie et Albanie des Anciens]): Այստեղ ընդամենը, դուրս է մնացել Կոմմանի ան-

ուանումը, որը տեղեկատուական առումով երկրոդական նշանակութիւն ունի: Սակայն, եղածին աւելացուել է բացատրութիւն, որով փորձ է արուել յուշել նախկինում այդ տարածքները դարերով զբաղեցրած պետութիւնների գոյութեան փաստը:

Այս քարտէզի վերնագրում կատարուած անմեղ լրացման առիթով կովկասեան թաթարները (ադերբեջանցիները) մեծ աղմուկ աղաղակ էին բարձրացրել. իբր հայերը կեղծում են պատմական քարտէզները՝ թիւրիմացութեան մէջ գցելով հանրութեանը: Նմանօրինակ հիւանդ երեւակայութեան ու մտավարժանքների արդիւնք է Էմիր Էյվազի՝ համացանցում տեղադրած հրապարակումների շարքը. ««Մեծ Թուրանի» Երկիւղը Ստիպում է Հայերին Նենգափոխել Հին Քարտէզները»[11] խորագրով: Դա վերաբերում է տարածաշրջանին առնչուող ֆրանսիական հին քարտէզներին:

Ինչպէս նշել էինք, համանուն քարտէզի երկրորդ բնօրինակը՝ առանց որեւէ փոփոխութիւնների, եւս գտնւում է Ֆրանսիայի Ազգային Գրադարանում: Այս դէպքում քարտէզը առանձին միաւոր չէ, այլ համալրել է «Ասիա, Մաս I» վերտառութիւնը կրող ատլասը[12]:

Այժմ հարկ է քննութեան առնել միքանի կարեւոր վարկածներ, որոնք հաւանաբար նպաստել են տարածաշրջանի ֆրանսերէն առաջին քարտէզի ստեղծմանը:

1. Թռուցիկ անդրադարձանք արդէն կարեւոր դրդապատճառներից մէկին՝ Ուեստֆալիայի Պայմանագրին, որով, փաստօրէն, սկիզբ են առնում Բ. աշխարհաքաղաքական դարաշրջանն ու Եւրոպայում նոր կարգերի հաստատումը (պետութիւնների հասկացութիւնը խորանում է նաեւ՝ դրանց սահմանների անձեռնմխելիութեան ու պետութեանց ներքին կեանքին այլ պետութեանց կողմից չմիջամտելու պայմանաւորուածութիւնը): Քարտէզի ստեղծումը կարող էր պայմանաւորուած լինել Եւրոպայում, մասնաւորապէս Ֆրանսիայում եւ կովկասեան տարածաշրջանում տիրող քաղաքական ու ընկերատնտեսական իրավիճակով:

   Այդ վարկածի օգտին են վկայում հետեւեալ փաստարկները.-

   Ա) ԺԷ. դարի կէսերին Ֆրանսիան Արեւմտեան Եւրոպայի ամենամեծ եւ զարգացած երկրներից էր: Միջազգային իրադրութիւնը Լուի ԺԴ.ի թագաւորութեան առաջին կէսում անչափ բարենպաստ էր երկրի համար: Ուեստֆալեան եւ Ֆրանսիայի ու Իսպանիայի միջեւ 1659ին կնքուած Պիրենեան պայմանագրերը վկայում են Ֆրանսիայի դարաւոր թշնամիների՝ Եւրոպայում գերմանական եւ իսպանական ամենահզօր թագաւորական ընտանիքներից՝ Հաբսբուրգների ջախջախման մասին: Իսկ Անգլիայի թագաւոր Կարլ Բ.ը, երկրի խորհրդարանի հետ շարունակական առճակատման մէջ էր եւ իր հպատակներին դիմագրաւելու համար դրսից աջակցութիւն էր փնտռում՝ ի դէմս Լուի ԺԴ.ի, որից, կարելի է ասել, ֆինանսապէս կախուած էր:

Ստեղծուել էր այնպիսի իրավիճակ, երբ Ֆրանսիան Եւրոպայում չունէր մրցակից, որի հետ կարելի լինէր հաշուի նստել: Ֆրանսիական արքունիքը ամենափայլունն էր Եւրոպայում. թագաւորից վախենում էին եւրոպական բոլոր տիրակալները, ֆրանսերէնը դառնում է դիւանագիտութեան պաշտօնական եւ միջազգային լեզու[13]:

Եւրոպայի քաղաքական շրջանակներում, մերթընդմերթ առաջ էին քաշւում նորանոր ծրագրեր՝ համաեւրոպական խաչակրաց արշաւաք սկսելու օսմանների դէմ: Այս անգամ փորձ էր արւում նման արշաւանք սկսել ֆրանսիական «ամենաքրիստոնեայ» թագաւորի գլխաւորութեամբ:

Բնականաբար ֆրանսիական կողմն ինքն էր տեղիք տալիս այդպիսի խօսակցութիւնների: Այս ենթախորքում շատ օրինաչափ է թւում Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը նոր նկրտումների ծիրում յայտնուած Արեւելեան Հարցի շուրջ: Ֆրանսիական արքունիքում քննարկման նիւթ դարձաւ Բեռլինի Գիտութիւնների Ակադեմիայի հիմնադիր եւ առաջին նախագահ, Ֆրանսիայի Գիտութիւնների Ակադեմիայի օտարերկրեայ անդամ Գ. Վ. Լայբնիցի (1646-1716) առաջարկած ծրագիրը՝ «Եգիպտական Ծրագիր»ը, որով առաջարկում էր արշաւանք սկսել դէպի Արեւելք՝ Օսմանեան Կայսրութիւն: Լայբնիցը նշում էր, որ եթէ Ֆրանսիան ցանկանում է քրիստոնեայ աշխարհում հասնել գերիշխանութեան, ապա անհրաժեշտ է գրաւել Եգիպտոսը: Սակայն, որոշ ժամանակ անց, ֆրանսիական խորաթափանց դիւանագիտութիւնը կռահում է ծրագրի հեղինակի իրական մտադրութիւնները, այն է՝ Ֆրանսիային հեռու պահել եւրոպական բախումներից: Դա արդէն բաւական էր, որ ֆրանսիական կողմը կասկածէր նրա անկեղծութեանը եւ ճիշտ գնահատէր ծրագրի իրականացման դժուարութիւնները եւ հրաժարուէր այդ գաղափարից[14]:

Բ) ԺԶ. դարի վերջերին Արեւմտեան Հայաստանում ծայր առած զանգուածային արտագաղթը, բռնութիւններն ու ճնշումները, հարստահարումների քաղաքականութիւնը, որ իրականացւում էին հայ հպատակների հանդէպ, 1630ականներին մղեցին, որ «*Արեւմտեան Հայաստանի ժողովրդական մասսաների մեջ զարթնէր ազատագրութեան պահանջը եւ առաջ գային ազատագրական ձգտումներ*»[15]:

Ֆրանսիացի դիւանագէտներն ու միսիոներները ազդեցութեան յենակէտեր էին որոնում ոչ միայն արեւմտահայութեան, այլեւ արեւելահայութեան միջավայրում (Յակոբ Ջուղայեցի, Յովհաննէս Թութունջի, Եղիազար Այնթապցի, Խաչատուր Գաղատացի, Հաջի Մուրատ եւն.): 1660-70ականներին ինչպէս Արեւմտեան, այնպէս էլ Արեւելեան Հայաստանում Լուի ԺԴ.ի անուան հետ էին կապում լաւագոյն ակնկալիքները: ԺԷ. դարի երկրորդ կէսի սկզբներում այսպիսին էր քաղաքական իրադրութիւնը Եւրոպայում:

«*Խաչակրութիւն թուրքերի դէմ:*

Այս էր լսւում ամէն կողմից: Այս էր վերտառութիւնն այն դրօշի, որ պարզել էր Հռոմի պապը «յանուն վտանգուած քրիստոնէութեան պաշտպանութեան». եւ այդ դրօշի առաջապահ կրողն էր Լուի ԺԴ. «Արեւ-Արքան»...»[16]:

ԺԷ. դարի 60ականներից արեւմտահայութեան մէջ թուրքական տիրապետութեան դէմ սկսուել էր ազատագրական շարժում, որն օրգանապէս կապուած էր յոյն, ասորի եւ վրաց ժողովուրդների ձգտումների հետ եւ տեւել էր մինչեւ 80ականները[17]:

Գ) Ի տարբերութիւն Ֆրանսիայի՝ ԺԷ. դարի կէսերին՝ միջազգային առեւտրի ովկիանոսային ուղիների յայտնագործումից յետոյ, Մերձաւոր Արեւելքի երկրները, այդ թւում նաեւ Օսմանեան Կայսրութիւնը, վայրէջք էին ապրում[18]: Յստակ նկատւում էր կայսրութեան փլուզումը, որը սկսուել էր դեռեւս նախորդ դարում: Այս պետութիւնը շարունակում էր իր տիրապետութեան տակ պահել հսկայական տարածքներ Ասիայում, Եւրոպայում եւ Աֆրիկայում, նրա իշխանութեան ներքոյ կային բազմաթիւ ժողովուրդներ եւ ցեղեր, նրան էին պատկանում առեւտրային կարեւոր ճանապարհներ եւ ռազմավարական դիրքեր: Թուրք սուլթանը՝ «Մեծ սենիորը» կամ «Մեծ թուրքը», ինչպէս նրան անուանում էին եւրոպական փաստաթղթերում, դեռեւս համարւում էր ամենահզօր տիրակալներից մէկը: Ահեղ էր թւում նաեւ կայսրութեան ռազմական ուժը: Բայց իրականում նախկինում հզօր սուլթանական կայսրութեան հիմքերն արդէն խարխլուել էին[19]:

Դ) Մինչեւ ԺԷ. դարի երկրորդ կէսերը Սեֆեան Պետութիւնում նկատուող յարաբերական տնտեսական վերելքը անկում էր ապրում: Աֆղանական եւ թուրքական ներխուժումները ամայացրին երկրի մի շարք տարածքներ: Սեֆեան Պետութիւնը, որն իր ծաղկման գագաթնակէտին էր հասել շահ Աբաս Ա.ի (1589-1629) օրօք, դեռ բաւական ուժեղ էր նաեւ նրա յաջորդների՝ Սէֆի (1629-49) եւ Աբաս Բ.ի (1649-66) ժամանակաշրջանում: Սեֆեանները վարում էին աշխուժ քաղաքականութիւն, բայց արդէն նկատւում էին տէրութեան անկման նախանշաններ[20]:

Ե) Հայաստանը Կասրէ-Շիրինի 1639ի պայմանագրի կնքումից յետոյ, որը մասնակի փոփոխութիւններով վերահաստատում էր 1555ին Ամասիայի Պայմանագրով նշուած սահմանները, կրկին բաժանուած էր Օսմանեան Կայսրութեան եւ Սեֆեանների Պետութեան միջեւ:

2. Տարածաշրջանի առաջին ֆրանսերէն աշխարհագրական քարտէզների հրատարակման շարժառիթներից կարող էր լինել այն, որ դրանց հեղինակ Նիկոլան - ենթադրում ենք - ծանօթ էր տուեալ ժամանակաշրջանում շատ յայտնի վաճառական եւ ճանապարհորդական գրքի հեղինակ Ժան Բատիստ Տաւերնիէին (1605-89) եւ նրա «Վեց Ճանապարհորդութիւն ...» խորագրով աշխատութեանը[21]: Չի բացառւում նաեւ, որ վերջինիս ճանապարհորդական պատմութիւններից ոգեշնչուած ու հետաքրքրուած՝ նա որոշել էր կազմել տարածաշրջանի քարտէզը:

Այս վարկածի օգտին են վկայում.-

Քարտէզ 1

Քարտէզ 2

Ա) Բնական է, որ յայտնի քարտէզագրին եւ աշխարհագէտին կը հետաքրքրէր Ֆրանսիայից՝ Հայաստանով մինչեւ Հնդկաստան կատարուած ճանապարհորդութեանը նուիրուած Տաւերնիէի աշխատութիւնը, որն արժանացել էր Լուի ԺԴ.ի հաւանութեանը, եւ որին նա, շատ հաւանական է, քաջածանօթ էր: Սկզբնական շրջանում տարածաշրջանի հետ եւրոպացի-

ների ծանօթութիւնը լինում էր համապատասխան երկրներ այցելած ճանապարհորդների օգնութեամբ, որոնք հիմնականում կրօնական միսիոներներ, դիւանագիտական ներկայացուցիչներ եւ վաճառականներ էին, որոնց մի մասը նաեւ լրտեսներ էին[22]:

Բ) Մեր հետազօտութիւնների արդիւնքում պարզուեց, որ Տաւերնիէն Նիկոլայի առաջին կարեւոր՝ «Ֆրանսիայի Փոստերը»[23] քարտէզի հրատարակիչ, գրավաճառ եւ աշխարհագրութեան մասնագէտ Մելշիոր Տաւերնիէի եղբօրորդին էր[24], եւ այդ իսկ պատճառով նրանց անձնական ծանօթութիւնը նոյնպէս շատ հաւանական է:

3. ԺԷ. դարի երկրորդ կէսին տարածաշրջանի առաջին ֆրանսիական քարտէզի կամ քարտէզների ստեղծումը հնարաւոր է պայմանաւորուած լինէր նաեւ Ֆրանսիայում աշխարհագրական գիտութեան զարգացման վերելքով եւ քարտէզների հրատարակութեան համար արհեստագիտական միջոցների բարելաւմամբ, որոնց շնորհիւ համեմատաբար աւելի դիւրին էր դարձել դրանց տպագրութիւնը:

Ամփոփելով, հակուած ենք այն կարծիքին, որ ԺԷ. դարի երկրորդ կէսին ֆրանսիացիների կազմած՝ տարածաշրջանի առաջին աշխարհագրական ֆրանսերէն քարտէզի ի յայտ գալը պայմանաւորուած էր գլխաւորապէս տարածաշրջանի նկատմամբ Ֆրանսիայի քաղաքական եւ տնտեսական հետաքրքրութեամբ:

Ֆրանսիայի ծաւալապաշտական քաղաքականութեան համար առկայ էին բոլոր նախադրեալները. մի կողմում, Եւրոպայում մրցակից չունեցող ֆրանսիական հզօր պետութիւնն էր, իսկ միւս կողմում՝ անկում ապրող երբեմնի զօրեղ Օսմանեան ու Սեֆեան պետութիւնները, որոնց միջեւ բաժանուած էր Հայաստանը: Աւելին, ինչպէս Արեւմտեան, այնպէս էլ Արեւելեան Հայաստանում ժողովրդական զանգուածների մէջ արթնացել էր ազատագրութեան պահանջ ընդդէմ բռնութիւնների ու ճնշումների: Օտար տիրապետութեան տակ գտնուող ժողովուրդների մօտ իյայտ էին եկել ազատագրական ձգտումները, որոնք իրենց ակնկալութիւնները կապում էին Լուի ԺԴ.ի անուան հետ:

Քարտէզ 3

Վերոյիշեալի ենթախորքում ամբողջովին տեղաւորւում է տարածաշրջանի առաջին ֆրանսերէն քարտէզը հեղինակած Նիկոլայի գործունէութիւնը, որը ինչպէս նշեցինք, փաստօրէն, պետական եւ քաղաքական գործիչ էր եւ վայելում էր թագաւորի վստահութիւնն ու յարգանքը, եւ որի գործունէութիւնը միտուած էր պետական շահերի պաշտանութեանը եւ ծրագրերի իրականացմանը:

Անշուշտ, քարտէզի լոյս աշխարհ գալուն ինչ-որ չափով նպաստել էին նաեւ այն ժամանակ Ֆրասիայում աշխարհագրութեան եւ քարտէզագրութեան զարգացման բարձր մակարդակը, ինչպէս նաեւ գիտական եւ ճանաչողական նպատակներով քարտէզներ հրատարակելու միտումը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Սանսոն Նիկոլան/Նիկոլա Սանսոն դ'Աբեւիլ/Սանսոն դ'Աբեւիլ (Փարիզ, 1600--67): 18 տարեկանում կազմում է Ֆրանսիայի քարտէզը, որը գրաւում է կարդինալ Ռիշելիոյի ուշադրութիւնը: Նրա առաջարկով Նիկոլան աշխարհագրութիւն է դասաւանդել Լուի ԺԳ.ին (1610--43), աւելի ուշ՝ Լուի ԺԴ.ին (1643--1715): Զբաղեցրել է պալատական քարտէզագրի պաշտօնը, եղել Ֆրանսիայի Պետական Խորհրդի անդամ: Իր առաջին կարեւոր քարտէզը՝ «Les Postes de France», հրատարակել է 1632ին: Հրատարակիչը Մելշիոր Տաւերնիէն է (https://fr.wikipedia.org/wiki/Nicolas_Sanson_(cartographe) (հասանելի էր 21.01.2019):

[2] Ուեստֆալեան Հաշտութեան (1648ին) երկու պայմանագրերով (միւնստէրեան եւ օսնաբրիւկեան), Եւրոպայում վերջ դրուեց 1618-48՝ Երեսնամեայ պատերազմին:

[3] Տե՛ս՝ Н. А. Баранов, "Лекции по курсу «Геополитика»" (Ն. Բարանով, Աշխարհագրաքաղաքագիտութեան դասախօսութիւններ) (http://nicbar.ru/politology/study/kurs-geopolitika) (հասանելի էր 21.01.2019):

[4] *Թուրքոմանի, թուրքումանի* կամ *թուրքմանի* եզրի ծագման վերաբերեալ կան մի շարք մեկնաբանութիւններ: Առաջին անգամ այն հաւանաբար յիշատակուել է Ը.-Թ. դարերի չինական սկզբնաղբիւրներում: Թուրքմէն եզրի տարածումը պայմանաւորուած էր իսլամ ընդունած օղուզների բնակութեան տարածքի ընդարձակումով (С. Агаджанов, *Очерки Истории Огузов и Туркмен Средней Азии IX-XIII вв.* [Ս. Աղաջանով, Ակնարկներ Կենտրոնաֆկկան Ասիայի օղուզների եւ թուրքմէնների պատմութեան, Թ.-ԺԳ դդ.], Աշխաբադ, 1969. նաեւ՝ В. В. Бартольд, *Сочинения, Очерк Истории Туркменского Народа,* [Վ. Բարդոլտ, Երկեր, Ակնարկ թուրքմէն ժողովրդի պատմութեան] *Հւյր. II, Մաս I*, Մոսկուա, 1963, էջ 558): *Թուրքման* եզրի տարածումը մեծ չափերի հասաւ սելջուկեան նուաճումների շրջանում: Օղուզ մուսուլմանները, համախմբուելով սելջուկ ցեղի շուրջ, դարձան սելջուկեան ցեղային միութեան, յետագայում՝ նաեւ պետութեան միջուկը: Սելջուկեան դարաշրջանից սկսած՝ սուլթանները իշխանութեան ամրապնդման նպատակով ստեղծեցին ռազմական բնակավայրեր Մերձաւոր եւ Միջին Արեւելքի տարբեր մասերում՝ Սիրիայում, Իրաքում եւ Արեւմտեան Հայաստանում: 1071ի Մանազկերտի ճակատամարտից յետոյ օղուզները զանգուածաբար բնակութիւն հաստատեցին Անատոլիայում (յոյները պատմականօրէն այդպէս են անուանել Փոքր Ասիան), Արեւմտեան Հայաստանում, Ատրպատականում (ներ-

կայիս Իրանի հիւսիս-արեւմուտքում տեղակայուած պատմական երկրամաս եւ հին պետութիւն) ու Առանում (երկրամաս Մեծ Հայքի արեւելքում):
Միջնադարում՝ մօտաւորապէս Թ.-ԺԴ. դարերում, Արեւմտեան Հայաստանը եւրոպական սկզբնաղբիւրներում յայտնի էր *Թուրքոմանիա*, իսկ օսմանականում՝ *Թուրքման էլի* ձեւերով (P. Golden, "The Turkic Peoples and Caucasia", *Transcaucasia, Nationalism and Social Change: Essays in the History of Armenia, Azerbaijan, and Georgia*, ed. by Ronald G. Suny, Michigan, 1996, էջ 45-67. նաեւ՝ https://ru.wikipedia.org/wiki/Туркоманы (հասանելի էր 21.01.2019):

[5] Եւրոպական աղբիւրներում Վրաստանի արտանուանումը:

[6] Պոլովցիները (ինքնանուանումը՝ կիպչակներ, ղփչաղներ) թիւրքալեզու քոչուոր ժողովուրդ էին, եւրոպական եւ բիւզանդական սկզբնաղբիւրներում յայտնի էին *կոմանի* (լատ. comani), իսկ աւելի ուշ՝ թաթարներ ձեւով, թիւրքալեզու քոչուոր ցեղեր էին (А. Н. Гаркавец, *Кыпчакские Языки* [Ա. Գարկավէց, ղփչաղ լեզուները], Ալմա Աթա, 1987, էջ 18. նաեւ՝ *Большой Энциклопедический Словарь* [մեծ հանրագիտարանային բառարան] [https://www.vedu.ru/bigencdic/49209/. նաեւ՝ https://ru.wikipedia.org/wiki/Половцы#cite_note-4 (հասանելի էր 21.01.2019)]:

[7] Sanson Nicolas d'Abbeville, *Turcomanie, Georgie, Commanie*, 1653:

[8] « Qui répondent à la Grande Arménie, à la Colchide, Iberie et Albanie des Anciens":

[9] Nicolas, *Turcomanie, Georgie, Commanie (qui répondent à la Grande Arménie, à la Colchide, Iberie et Albanie des Anciens)*, 1653:

[10] Sanson Nicolas d'Abbeville, *Armenia Maior, Colchis, Iberia, Albania*, 1655:

[11] Амир Эйваз, "Страх Перед «Великим Тураном» Заставляет Армян Искажать Старинные Карты" (Ամիր Էյվազ, Մեծ Թուրանից վախը ստիպում է հայերին խեղաթիւրել հնագոյն քարտէզները), http://pan.turkist.org/2012/04/blog-post.html (հասանելի էր 18.03.2018 (այժմ նա գրանցուած է մէկ այլ հասցէով, փոխել է նաեւ կայքի կառուցուածքը, 21.01.2019):

[12] Reiner et Josua Ottens, *L'Asie I^re Partie, vol. XVIII*, 1740:

[13] *Всемирная История. История Дипломатии, Дипломатия в Новое Время (XVI-XVIII века), Дипломатия в XVII Веке, Время Французской Гегемонии в Европе в XVII веке, Дипломатия Людовика XIV (Համաշխարհային պատմութիւն. դիւանագիտութեան պատմութիւն, դիւանագիտութիւնը նոր շրջանում (ԺՋ.-ԺԸ.դդ.), դիւանագիտութիւնը ԺԷ. դարում, Եւրոպայում Ֆրանսիայի առաջատարութեան շրջանը, Լուդովիկոս ԺԴ.ի դիւանագիտութիւնը)*, Գ. մաս, Գ. գլուխ (http://www.diphis.ru/diplomatiya-c48.html (հասանելի էր 21.01.2019):

[14] М. М. Филиппов, *Готфрид Лейбниц. Его Жизнь, Общественная, Научная и философская Деятельность (Մ.Մ. Ֆիլիպովա, Գոտֆրիդ Լայպնից. կեանքը հասարակական, գիտական եւ փիլիսոփայական գործունէութիւնը)*, Սանկտ Պետերբուրգ, 1893:

[15] Յակոբ Անասեան, *XVII Դարի Ազատագրական Շարժումներն Արեւմտեան Հայաստանում*, Երեւան, հայկ. ՍՍՌ ԳԱ, 1961, էջ 39:

[16] Նոյն, էջ 92-3:

[17] Նոյն, էջ 4:

[18] Աշոտ Յովհաննիսեան, «Գրախօսութիւն» *Պատմաբանասիրական Հանդէս*, 1963:1, էջ 235-48:

[19] *Всемирная История. Энциклопедия. Страны Азии во Второй Половине XVII И в XVIII веках. Австралия И Океания. Колониальная Политика Европейских Держав, Начало Распада Османской Империи. Балканские И Арабские Народы во Второй Половине XVII И в XVIII в.* (Համաշխարհային պատմութիւն հանրագիտարան, Ասիայի երկրները ԺԷ. դ. Բ. կէսին եւ ԺԸ. դարում, Աւստրիա եւ Ովկիանիա, եւրոպական գերտէրութիւնների գաղութատիրական քաղաքականութիւնը, Օսմանեան Կայսրութեան փլուզման սկիզբը, բալկանեան եւ արաբական ժողովուրդները ԺԷ. դ. Բ. կէսին եւ ԺԸ. դ.), *Մաս Բ., Գլուխ Թ., Հլդ. 5,* (http://historic.ru/books/item/f00/s00/z0000034/index.shtml (հասանելի էր 21.01.2019):

[20] Նոյն, *Иран Во Второй Половине XVII и в XVIII в., Часть II, Глава IX, Том 5 (Իրանը ԺԷ. դարի Բ. կէսին եւ ԺԸ. դարում)*:

[21] J.B. Tavernier, *Les Six Voyages de Jean Baptiste Tavernier,… : Qu'il a Fait en Turquie, en Perse, et aux Indes…*, Փարիզ, 1676:

[22] Այդ առումով հետաքրքրական է Բերտրանդո դը լա Բրոքէրի աշխատութիւնը (Bertrandon de la Broquère, *Le voyage d'Orient. Espion en Turquie*, Anacharsis, 2010): Տարածաշրջան՝ Հայաստան, կատարած ճանապարհորդութիւնների վերաբերեալ ֆրանսերէն հրատարակուած աշխատութիւններից կարելի է յիշատակել նաեւ Ս. Երասիմոսի (S. Yerasimos, *Les Voyageurs dans l'Empire Ottoman (XIV-XVI^e siècle)*, Bibliographie, itinéraires et inventaire des lieux habités, Ankara, 1991) եւ Դ. Վինսոնի (D. Vinson, *Histoire et Voyage, & Histoires de Voyages, Le Français, l'Orient, & l'Arménien au XIX^e Siècle*, Վալանս, 2004) աշխատութիւնները:

Բնականաբար, օտարերկրեայ այդ ճանապարհորդները իրենց այցելած երկրների ժողովուրդների կեանքը պէտք է դիտարկէին իրենց պետութեան քաղաքատնտեսական շահերից՝ նախադրեալներ ստեղծելով յետագայ զարգացումների համար: Բացի քաղաքատնտեսական տեղեկութիւններից, ուղեգիրները հաղորդում են կենցաղային ու ազգագրական տուեալներ, ինչպէս եւ պատմական արժէք ունեցող հետաքրքիր տեղեկութիւններ: Նրանք կազմում էին նաեւ տարածաշրջանի եւ ճանապարհների քարտէզները ու խոշոր քաղաքների յատակագծերը:

[23] Sanson Nicolas, *Les Postes de France, chez Melchior Tavernier*, 1632:

[24] Melchior Tavernier (1594--1665) (http://fr.wikipedia.org/wiki/Melchior_Tavernier (հասանելի էր 21.01.2019):

THE FIRST FRENCH MAP OF THE CAUCASUS AND RELATED GEOPOLITICAL CONSIDERATIONS
(Summary)

VARDAN MKHITARYAN
vardan_gm@yahoo.com

Basing his conclusion on extensive archival research in the national libraries of Armenia, France, Germany and Russia, the author finds that the first French map of the Caucasus, titled "Turcomanie, Georgie, Commanie", was printed in 1653. The paper examines the author of this map, the French cartographer, geographer and statesman Sanson Nicholas (1600--67), and proposes a number of the reasons why cartographic attention was paid to the Caucasus in the 17th century.

ՍԵԽԱՆԻ ԱԽԱՉԱՆԻ ԵՐԿԱԹԷԴԱՐԵԱՆ ԽՄԲԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ԵՐԵՒՈՅԹԸ

ՅԱՍՄԻԿ ՍԻՄՈՆԵԱՆ, ՌՈՒԶԱՆ ՄԿՐՏՉԵԱՆ, ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ
hassimonyan89@gmail.com; ruzantrop55@mail.ru; piliposyan@yahoo.com

ՄՈՒՏՔ

Մոթբի Ձորի եւ Քանագեղի երկաթէդարեան Քա. 12/11-9րդ դդ. դամբարանային համալիրները, որոնք հնագէտ Աշոտ Փիլիպոսեանի մեկնաբանութեամբ միաժամանակեայ գործողութեամբ իրագործուած խմբային թաղումներ են, պարունակում են ներկայացուցչական հնամարդաբանական տեղեկատուութիւն: Մոթբի Ձորի դամբարանադաշտը նախապէս պեղուել է 1906-8ին Երուանդ Լալայեանի[1], ապա 1987-92ին ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի Սեւանի հնագիտական արշաւախմբի կողմից: Մոթբի Ձորի դամբարանադաշտը ժամանակին զբաղեցրել է Արծուաքար, Կարմիրգիւղ եւ Կամօ բնակավայրերի միջեւ ընկած հսկայական տարածքը: Ներկայումս դամբարանադաշտից պահպանուել է մի փոքր հատուածը վեց հսկայական դամբարաններով: Վեց դամբարաններն էլ մեծ տրամագծերով 15-20 մ. կրոմլէխներով (քարերի սրբազան շրջան), արեւելք-արեւմուտք կողմնորոշմամբ քարարկղային հսկայական թաղումներ են՝ 4-10 մ. ծածկասալերով: Դամբարաններում բացուել են խմբային թաղումներ[2]:

Քանագեղի դամբարանադաշտը 1999-2002՝ ուսումնասիրել է Ա. Փիլիպոսեանը:

Քանագեղի դամբարանադաշտը գտնուում է Սեւանայ լճի ափամերձ տարածքում՝ Սեւան-Վարդենիս մայրուղուն հատող եւ Երանոս գիւղից մօտ 5.5 կմ հիւսիս ընկած տարածքում: Ներկայումս Քանագեղի դամբարանադաշտը զբաղեցնում է միքանի տասնեակ հա տարածք եւ բազմաշերտ բնակատեղիից զատ ներառում է կրոմլէխներով շրջափակուած շուրջ 50 դամբարանակառոյցներ, որոնցից առաւել խոշորները (թուով 9) առանձին խմբով տեղաբաշխուած են հարաւային հատուածում:

Քանագեղի ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրության Ինստիտուտի հնագիտական արշաւախումբը 1999ին վերսկսեց դամբարանադաշտի եւ մասնաւորապէս թիւ 3 դամբարանակառոյցի պեղումները: Այն ունէր բազալտէ 49 քարաբեկորներից կազմուած շրջանաձեւ կրոմլէխ, որի տրամագիծը 15.0 մ էր:

Վերջինիս հեռացումից յետոյ կրոմլէխի միջնամասում բացուեցին քարարկղային 3 դամբարաններ, որոնք կողմնորոշուած էին արեւելքից արեւմուտք եւ ծածկուած բազալտէ սալերով[3]:

Ներխմբային վերլուծութեան համար դիտարկում են Լալայեանի կողմից պեղուած եւ Վ. Բունակի հրատարակած[4], Մոթբի Ձորի NN3, 5, 10, 15[5],

ինչպէս նաեւ Քանագեղի NN3/1, 4 դամբարաններից յայտնաբերուած գանկաբանական նիւթերը, որոնք վերաբերում են Լճաշէն-Մեծամորեան մշակոյթի ուշ՝ երկաթէդարեան փուլին եւ թուագրւում Քա. ԺԲ./ԺԱ-Թ. դարերով[6]:

Ընդհանուր գանկերի թիւը երեսունինն է, որոնք ներկայացուած են ըստ առանձին դամբարանային համալիրների (Աղ. 1):

Աղիւսակ 1

Դամարան NN↓, Սեռ →	♂	♀
Մռթբի Ձոր N 3	2	2
Մռթբի Ձոր N 5	2	2
Մռթբի Ձոր N 10	4	7
Մռթբի Ձոր N 15	5	2
Լալայեան, Մռթբի Ձոր	4	2
Քանագեղ N 3/1	3	1
Քանագեղ N 4	2	1
Ընդհանուր (n)	22	17

Սոյն աշխատանքի նպատակն է Սեւանի աւազանի երկաթի դարի միաժամանակեայ ակտով իրագործած խմբային թաղումների գանկաբանական հաւաքածուների չափագրական յատկանիշների նմանութիւնը մեկնաբանել ժառանգաբանական ենթահողում: Քանզի բոլոր մարդաբանական յատկանիշները, լինեն դրանք ձեւաբանական, բջջային, թէ ախտաբանական մեկնաբանւում են ազգակցական սերտ կապի, իսկ տարբերակուածութիւնները՝ դրանց բացակայութեան միջոցով:

Մռթբի Ձորի 4 խմբային թաղումներում տեղադրուած ուղեկցող հնագիտական նիւթերը եւ կենսափաստերը ունեն կանոնիկ դասաւորուածութիւն եւ մէկ մակարդակի վրայ են: Դամբարանախցերը ծածկող սալերը անխախտ են, դամբարաններում տեղադրուած հնագիտական իրերը եւ հնամարդաբանական նիւթերը բացուել են in situ վիճակում[7]: Իւրաքանչիւր դամբարանում դիադրուածների մէջ առանձնանում են կենտրոնական դիրք զբաղեցնող տարեց տղամարդը՝ «դամբարանի տէրը» եւ ուղեկցող անձնակազմը:

Մռթբի Ձորի N5 դամբարանում թասի մէջ յայտնաբերուեց տղամարդու առանձին գանկ, իսկ N15 դամբարանի պեղման ժամանակ բացուեց գլխիվայր ցած նետուած տարեց տղամարդու կմախք[8]:

Բոլոր այս փաստերը վկայում են, որ միաժամանակեայ իրագործած, խմբային թաղում պարունակող Մռթբի Ձորի եւ Քանագեղի երկաթէդարեան դամբարանները կառուցուել են հասուն տարիքի տղամարդու՝ «նահապետի» համար, իսկ մնացած անձնակազմը բռնի, գուցէ եւ ինքնակամ, սպանուել եւ նրա հետ միասին տեղադրուել նոյն դամբարանախցում: Նշենք, որ բոլոր խմբային թաղումներում հիմնական յուղակաւորուողը՝ տա-

րեց տղամարդ է, իսկ մնացեալները՝ տարբեր սեռատարիքային պատկանելիութիւն ունեն[9]:

Վ. Պ. Ալեքսէեւի յիշատակին նուիրուած «Մարդաբանութեան Հորիզոններ» միջազգային գիտաժողովի յօդուածաշարում իր կողմից վերլուծուել են Մռթբի Ձորի գանկաբանական ներխմբային նիւթերը: Այս աշխատանքում Մռթբի Ձորի որոշակի դամբարանային համալիրներից յայտնաբերուած գանկերը խմբաւորուել են ըստ գանկի զոյգ չափագրական տուեալների եւ ցուցիչների: Գանկերի զգալի մասը ինքնավար առանձնացել են ըստ դէմքի վերին հատուածի բարձրութեան եւ լայնութեան, դէմքի եւ ակնակապիճների բարձրութեան, դիմային կմախքի եւ քթային հատուածի ցուցիչների, դիմագանկասկաւառային եւ դիմային ցուցիչների, դիմագանկասկաւառային եւ ճակատային ցուցիչների, դէմքի վերին հատուածի եւ գանկի հիմքի լայնութիւնների[10]:

Նշենք, որ խորհրդային մարդաբանական դպրոցում այս հնարքը բաւականին ընդունուած էր եւ ձեւաբանական նմանութիւնը մեկնաբանւում էր, որպէս ազգակցականութեան ապացոյց: Այսօր գոյութիւն ունի «նմանութիւնը ազգակցականութիւն չէ» մեթոդաբանական «տաբուն», եւ մարդաբանական ժառանգաբանական մերձութիւնը կամ տարբերակուածութիւնը ընդունուած է բացայայտել ժառանգաբանական որակիչների՝ ԴՆԹի, գանկասկոպիական յատկանիշների վերլուծականներով: Այդուհանդերձ մեր կողմից փորձ է արւում Մռթբի Ձորի եւ Քանագեղի առանձին դամբարանային համալիրներից յայտնաբերուած գանկերի նմանութեան եւ տարբերակուածութեան աստիճանը բացայայտելու համար կիրառել գլխաւոր բաղադրիչների (components) մեթոդը[11]: Այս մեթոդը հնարաւորութիւն է ընձեռում *կոորդինատ*ային[12] դաշտում փոխյարաբերակցել ոչ թէ գանկաբանական որոշակի զոյգ չափեր, այլ բաղադրիչների վիճակագրական մեթոդով վեր հանուած *ինտեգրալ*ային[13] նկարագրեր:

*Կոորդինատ*ային դաշտի կենտրոնում, զրոյական կէտին մօտ՝ +1, -1 արժէքների տիրոյթներում կենտրոնացուած են ամենամիջինացուած նկարագրերը: Որքան *կոորդինատ*ային առանցքի զրոյական կէտից հեռու՝ դէպի դրական եւ բացասական տիրոյթները, այնքան գանկերի արժէքները բեւեռանում են ըստ նրբակազմ ու զանգուածեղ, երկարակերպ ու լայնակերպ եւ այլ ձեւաբանութիւնների: Արական եւ իգական խմբերի համար հաշուարկած գանկասկաւառակի հիմնական չորս չափերի գլխաւոր առաջին բաղադրիչների (F1) դիտարկումը վեր է հանում՝ մեծ դրական արժէքներով օժտուած հետեւեալ յատկանիշները. գանկի երկայնական տրամագիծը (1), բարձրութիւնը (17) եւ հիմքի երկայնական տրամագիծը (5): Երկրորդ գլխաւոր բաղադրիչների (F2) շարքում մեծ դրական արժէքներ են դրսեւորւում գանկասկաւառակի լայնական չափերը (8): Այսպիսով, գոյութիւն ունի որոշակի դրական փոխյարաբերակցութիւն երկայնական եւ լայնական չափերի մեծութիւնների միջեւ՝ որքան մեծ է երկայնական չափը,

նոյնքան մեծ է նաեւ լայնականը: Ուստի առաջին գլխաւոր բաղադրիչը կարելի է համարել փոքր եւ մեծ չափեր ունեցող գանկերի տարբերակիչ, երկրորդ բաղադրիչը՝ գանկասկաւառակի լայնակերպութեան խմբաւորիչ (Աղ. 2):

Աղիւսակ 2.- Առաջին եւ երկրորդ գլխաւոր բաղադրիչների արժէքները ըստ գանկասկաւառակի չորս չափագրական տուեալների

Յատկանիշներ	Տղամարդիկ		Կանայք	
	F 1	F 2	F 1	F 2
1. Երկայնական տրամագիծ	**0,771**	0,042	**0,800**	0,314
8. Լայնական տրամագիծ	0,027	**0,998**	-0,047	**0,900**
17. Գանկասկաւառակի բարձրութիւն	**0,867**	0,075	0,384	0,578
5.Գանկասկաւառակի հիմքի երկայնական տրամագիծ	**0,879**	-0,051	**0,898**	-0,057
Տարբերակուածութեան ցուցիչ %	53	25	40	31

Գանկասկաւառակի չորս յատկանիշների համակարգում հաշուարկուած գլխաւոր առաջին գործօնի արժէքները գծապատկերի հորիզոնական հարթութիւնում, որը համապատասխանում է F1 *կոորդինատ*ային առանցքին, բացասական արժէքների տիրոյթում խմբաւորում են փոքր չափեր ունեցող, նրբակազմ, իսկ դրականները՝ մեծ, զանգուածեղ գանկեր դասաւորութեամբ: Ուղղահայեաց հարթութիւնում (F2 *կոորդինատ*ային առանցք) բացասական արժէքների դաշտը ներկայացնում է երկարակերպութիւն, իսկ դրականը՝ լայնակերպութիւն:

Մոթբի Ձորի եւ Քանագեղի միաժամանակեայ իրագործած երկաթէդարեան խմբային թաղումներից յայտնաբերուած գանկերը *կոորդինատ*ային դաշտում խմբաւորման միտում են դրսեւորում ըստ առանձին դամբարանային համալիրների: Գանկասկաւառակի չորս հիմնական չափերի (Աղ. 2) համակարգում հաշուարկուած եւ *կոորդինատ*ային դաշտում տեղադրուած Քանագեղի արական 3 գանկերը զբաղեցնում են զրոյական միջուկային հատուածի (F1, F2 + -1) ամենամիջինացուած *ինտեգրալ*ային նկարագրի տիրոյթը: Մոթբի Ձորի N15 դամբարանի արական խումբը բաժանուած է երկու մասի եւ զբաղեցնում է նրբակազմ եւ զանգուածեղ *ինտեգրալ*ային նկարագրերի տարածքները: Մոթբի Ձորի N10 դամբարանի բոլոր տղամարդիկ նոյնպէս, մեծ դրական արժէքների դաշտում, առանձնանում են գանկասկաւառակի երկարակերպ եւ մեծ չափերով: Մոթբի Ձորի N5 դամբարանի 2 արական ներկայացուցիչները գանկասկաւառակի համարեա նոյնական միջին չափերով ամենասերտ տեղադրուածներն են (Աղ. 3):

Դիտարկելով կանանց գանկաբանական խմբերի տեղաբաշխումը *կոորդինատ*ային դաշտի մեծ, դրական արժէքների տիրոյթում դարձեալ առանձնանում են Մոթբի Ձորի N3 դամբարանի խոշոր գանկասկաւառակ ունեցող 2 իգական նմուշները եւ մեծ, սփռուած, բայց ինքնուրոյն սահ-

մանով, խմբաւորւում են N10 դամբարանի բոլոր խոշորակազմ գանկ ունեցող կանայք: Քանագեղի N4 դամբարանի զոյգ գանկերը միմեանց մօտիկ միջին չափերի նկարագրերի դաշտում են (Աղ. 3):



Աղիւսակ 3.- *Մոթբի Ձորի եւ Քանագեղի արական եւ իգական գանկերի տեղադրութիւնը ըստ գանկասկաւառակի չորս չափերի նկարագրերի*

Դիմային կմախքի չափագրական տուեալների բաղադրիչային վերլուծութիւնը արական խմբի առաջին գլխաւոր բաղադրիչի (F1) ցուցիչների շարքում մեծ, դրական արժէքներ է ցուցադրում այտոսկրային տրամագծի (45), դէմքի վերին բարձրութեան (48), լայնութեան (43) եւ քթի բարձրութեան (55) դէպքում: Կանանց մօտ չափազանց մեծ արժէքների են հասնում դէմքի վերին բարձրութիւնը (45) եւ քթի բարձրութիւնը (55): Երկրորդ գլխաւոր բաղադրիչը (F2) երկու սեռերի դէպքում էլ մեծ դրական արժէքներ է ցուցաբերում դիմային կմախքի միջին լայնութեան (46) դէպքում: Քթի լայնական տրամագիծը (54) մեծ արժէքներ ունի կանանց խմբում (Աղ. 4): Դատելով այս ցուցանիշներից՝ առաջին բաղադրիչ մեծադիմութեան, յատկապէս, երկարադիմութեան խմբաւորիչ է, իսկ երկրորդ բաղադրիչը՝ դէմքի լայնակերպութեան ցուցիչ:

Աղիւսակ 4.- Առաջին եւ երկրորդ գլխաւոր բաղադրիչների արժէքները ըստ դիմային կմախքի վեց չափագրական տուեալների

Յատկանիշներ	**Տղամարդիկ**		**Կանայք**	
	F 1	F 2	F 1	F 2
45. Այտոսկրային տրամագիծ	**0,757**	-0,033	0,516	0,610
48. Դէմքի վերին բարձրութիւն	**0,726**	0,088	**0,919**	-0,048
43. Դէմքի վերին լայնութիւն	**0,768**	-0,301	0,596	0,152
46. Դէմքի միջին լայնութիւն	0,139	**0,823**	0,081	**0,859**
55. Քթի բարձրութիւն	**0,769**	0,335	**0,884**	0,183
54. Քթի լայնութիւն	-0,079	0,638	0,048	**0,859**
Տարբերակուածութեան ցուցիչ %	39	22	38	32

Դիմային կմախքի վեց հիմնական չափագրական յատկանիշների հիման վրայ իրագործած բաղադրիչների վերլուծութիւնը հորիզոնական *կոորդինատի* (F1) բացասական արժէքների տիրոյթում խմբաւորում է Լալայեանի կողմից պեղուած փոքրադէմ չորս գանկերը: Նրանց այտոսկրային տրամագիծը, դիմային կմախքի բարձրութիւնը եւ վերին լայնութիւնը փոքր չափերի են: *Կոորդինատային* դաշտի հակառակ՝ մեծ, դրական արժէքների տիրոյթում առանձին, ինքնուրոյն սահմանով առանձնանում են Մռթբի Ձորի N10 դամբարանի արական խմբի ներկայացուցիչներն իրենց ծայրայեղ երկարադիմութեամբ, համապատասխանաբար, քթի երկարութեան չափազանց մեծ չափերով, ընդհանուր լայնադիմութեամբ, յատկապէս դիմային կմախքի վերին հատուածի լայնակերպ կառուցուածքով: Քանագեղի N3 դամբարանի 3 արական գանկերը զբաղեցնում են ամենափոքր չափեր ունեցող *ինտեգրալային* նկարագրերի դաշտը՝ տեղադրուելով զոյգ *կոորդինատային* առանցքների բացասական արժէքների տիրոյթում: Նրանք բնութագրուում են նեղադիմութեամբ, դիմային կմախքի վերին եւ միջին լայնութեան փոքր ցուցանիշներով: Քանագեղի N4 դամբարանի 2 արական գանկերը իրենց նեղադէմ, երկարադէմ ձեւաբանութեամբ, քթի երկայնական մեծ չափերի շնորհիւ տեղադրուել են դրական արժէքների երկարակերպ նկարագրերի տարածքում: Զրոյական կէտին մօտ, բացասական արժէքների սահմանագծում կենտրոնացուած են Մռթբի Ձորի N3 դամբարանի 2 գանկերն իրենց միջին չափեր ունեցող, միջինացուած նկարագրերով (Աղ. 5):

Դիմային կմախքի վեց հիմնական չափագրական յատկանիշների հիման վրայ հաշուարկուած եւ կառուցուած գծապատկերը կանանց գանկերը չի խմբաւորում *կոորդինատային* դաշտում: Դիտարկումների զգալի մասը միջինացուած, չտարբերակուող *ինտեգրալային* նկարագրերի շնորհիւ կենտրոնացուած է +1/-1 *կոորդինատային* առնացքների դաշտում: Միջին տիրոյթների դաշտից առանձնացել եւ բեւեռացել են Մռթբի Ձորի N10 դամբարանի կանայք, որոնցից 3ը՝ լայնաքթութեան շնորհիւ զբաղեցնում են դրական արժէքների լայնակերպ նկարագրերի դաշտը, իսկ 1ը՝ ամենանրբակազմ, փոքրադէմ, բացասական տիրոյթների տարածքը: Կենտրոնական դաշտից դէպի դրական, մեծ արժէքների տարածք են դուրս թռել Մռթբի Ձորի N3 դամբարանի կանանցից 1ը՝ մեծադիմութեան շնորհիւ եւ Բունակի հրատարակած ընտրոյթից ամենափոքրադէմ կանացի գանկը (Աղ. 5):

Մռթբի Ձորի եւ Քանագեղի համահաւաք գանկաբանական հաւաքածուն, ըստ չափագրական տուեալների, միջինացուած տուեալների (X) բնութագրուում է գանկասկաւառակի չափազանց մեծ երկարութեամբ եւ միջին լայնութեամբ: Միջին չափերի է գանկասկաւառակի բարձրութիւնը: Դիմային կմախքը բարձր է եւ միջին լայնութեան: Քթի (տանձաձեւ բացուածքի) լայնական եւ երկայնական տրամագծերը նոյնպէս միջին չափերի են:

Միջին նկարագրեր ունեն նաեւ դիմային կմախքի երկու հորիզոնական (վերին եւ միջին) լայնութիւնները:



Աղիւսակ 5.- Մռթբի-Ձորի եւ Քանագեղի արական եւ իգական գանկերի տեղադրութիւնը ըստ դիմային կմախքի վեց չափերի նկարագրերի

Յատկանիշների ներխմբային տարբերակուածութիւնը գնահատող միջին քառակուսելի շեղման[14] ընդհանրական ցուցանիշներից (Si) արական խմբում գրեթէ բոլորը, բացի երկայնական տրամագծից, գերազանցում են սահմանուած (standart) ցուցանիշները (Sst), որոնցից միայն 2ը՝ դիմային կմախքի վերին եւ միջին լայնութիւնները, վիճակագրօրէն կարող են հաւաստի համարուել: Իգական խմբում եօթ յատկանիշ են գերազանցում սահմանուած քառակուսելի շեղման սահմանը, որոնցից վիճակագրօրէն հաւաստի կարելի է համարել միայն մէկը՝ գանկի հիմքի երկարութիւնը[15]:

Ըստ վերը ներկայացուած միջինացուած վիճակագրական յատկանիշների Մռթբի Ձորի եւ Քանագեղի համահաւաք գանկաբանական հաւաքածուն չի առանձնանում խիստ տարբերակուածութեամբ (Աղ. 6): Արական եւ իգական խմբերում նկարագրերը նոյնական են: Սակայն անգամ միատարր պատկեր ցուցադրող այս ժողովածուն *ինտեգրալ*ային նկարագրերի շնորհիւ բաղադրիչային վերլուծութեան ժամանակ տրոհուեց ըստ որոշակի առանձին դամբարանային համալիրների:

Մռթբի Ձորի եւ Քանագեղի գանկաբանական հաւաքածուները, որոնք առանձին դամբարանային համալիրից են, որոշակիօրէն, իրենց ինքնուրոյն, առանձին սահմաններով խմբաւորւում են *ինտեգրալ*ային բնութագրերի *կոորդինատ*ային դաշտում: Մռթբի Ձորի եւ Քանագեղի միաժամանակեայ գործողութեամբ իրագործած երկաթէդարեան խմբային թաղումները մեծ հաւանականութեամբ պատկանում են ազգակցական սերտ կապ ունեցող խմբի: Տղամարդկանց ընտրոյթում խմբաւորման «ակտիւութիւնը»

աւելի մեծ է, քան կանանց մօտ: Կարելի է ենթադրել, որ սերտ ազգակցականութիւնը ձեւաւորուած է արական գծով:

Այս ամէնը թոյլ է տալիս եզրակացնել, որ Մռթբի Ձորի եւ Քանագեղի դամբարաններում թաղուած իւրաքանչիւր անդամը, որպէս արարողակարգի ընտրուած մասնակից զոհաբերուել է ու դամբանախուց իջեցուել՝ ընկերային բարձր կարգավիճակ ունեցող տարեց տղամարդու՝ գերդաստանի մեծի, մահուան առթիւ: Վերջինիս դիրքի ու կարգավիճակի ամենահամապատասխան եզր-որակումը՝ «նահապետն» է: Այն կազմուած է «նահա» (հնդիրանական «nafā-», «nafō»՝ «պորտ, ցեղ») եւ «պետ» (հնդեւրոպական «photi», «pet», «pat»՝ «պետ, առաջնորդ, աւագ, մեծ, հայր, սկիզբ») արմատներից[16], հնում բառացիօրէն «ցեղի հայր, տոհմի տէր, գերդաստանի մեծ» իմաստային ծանրաբեռնուածութիւնն է կրել եւ, ըստ այդմ, առաւել ամբողջական է ներկայացնում խմբային թաղման տարեց տիրոջ բարձր դիրքն ու գերդաստանի աւագի կարգավիճակը[17]:

Աղիւսակ 6.- Մռթբի Ձորի եւ Քանագեղի իգական եւ արական գանկերի չափագրական տուեալների միջինացուած ցուցանիշներ

N ըստ Մարտինի/ Յատկանիշ	Արական				Իգական			
	X	n	Si	Sst	X	n	Si	Sst
1. Երկայնական տրամագիծ	191.1	22	5.5	6.1	184.8	17	6.8	5.8
8. Լայնական տրամագիծ	138.8	22	5.7	5.0	135.1	17	5.0	4.8
17. Գանկի բարձրութիւն	134.3	20	5.4	4.9	128.3	12	5.0	4.7
5. Գանկի հիմքի երկրթն.	104.9	16	4.6	4.1	101.8	10	6.4	3.9
45. Այտոսկրային տրամագիծ	131.7	19	5.8	5.1	126.1	15	4.7	4.8
48. Դէմքի միջին բրձրթն.	76.5	19	4.5	4.1	69.3	13	3.5	3.8
43. Դէմքի վերին լայնութիւն	103.5	22	7.1	3.9	102.5	15	5.6	3.7
46. Դէմքի միջին լայնութիւն	97.7	20	7.6	4.7	92.7	13	4.6	4.5
55. Քթի բարձրութիւն	54.9	20	3.3	2.9	50.4	14	2.3	2.7
54. Քթի լայնութիւն	24.8	20	2.0	1.8	25.2	14	2.5	1.7

ԽՄԲԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐՈՒՄ ՆԱՀԱՊԵՏԻ ՀԵՏ ՆՈՅՆ ԴԱՄԲԱՆԱԽՈՒՑՆ ԻՋԵՑՈՒԱԾՆԵՐԸ

Նպատակայարմար է հպանցիկ անդրադառնալ նաեւ Հայկական Լեռնաշխարհի վաղ երկաթի շրջափուլի միաժամանակեայ խմբային թաղումներում նահապետի հետ նոյն դամբանախուցն իջեցուած ուղեկից-զոհերի ազգակցական եւ ընկերային կարգավիճակին առնչուող որոշ խնդիրներին: Մասնագիտական գրականութեան մէջ վերջիններիս մի մասին տրուել է «նահատակ» անուանումը[18]: Այս եզրը եւս կազմուած է հնդիրանական «nafā-», «nafō-»՝ «պորտ, ցեղ» եւ «tak», «tag»՝ «ցածր, տակ, ստորին, վերջին» բառարմատներից[19] եւ, ըստ այդմ էլ, հնում նախապէս նշանակել է «ստորին կարգավիճակ ունեցող արիւնակից-ցեղակից, աղախնորդի, հարճորդի»: Սրանք, ըստ ամենայնի, նահապետի եւ նրան ստորադաս կանանց

ու հարճերի կապից ծնուած այն երեխաներն էին՝ նահատակները (ցածրածինները), ովքեր թէեւ արիւնակից էին նահապետին, այդուհանդերձ ի սկզբանէ զրկուած էին ընկերային բարձր դիրքից, աշխարհ գալու պահից արդէն ապագայ ծիսական զոհերի կարգավիճակ էին ձեռք բերում եւ տիրոջ մահուանից յետոյ, համապատասխան ծիսական արարողութեան արդիւնքում (բռնի կերպով կամ ինքնակամ) վերածւում անդրաշխարհի նրա յաւերժական ուղեկիցների:

Անհրաժեշտ է աւելացնել նաեւ, որ վաղմիջնադարեան եւ յետագայ շրջանի հայերէն սկզբնաղբիւրներում պահպանուած եւ ընկերային վիճակ մատնանշող որոշ արտայայտութիւններ թոյլ են տալիս եզրակացնել, թէ խմբային թաղման վերոյիշեալ արարողակարգի իրագործման ժամանակ նահապետին անդրաշխարհ ուղեկցող անձնակազմի մէջ, ըստ ամենայնի, ներգրաւուած են եղել ոչ միայն նրա արիւնակից-ցեղակիցները, այլեւ դրանց կարգավիճակին մօտ, սակայն տիրոջ հետ անմիջական ազգակցական կապ չունեցող անձինք եւս: Վերջիններիս առաւել համապատասխանում է «հպատակ» որակումը: Այն կազմուած է «հուպ» եւ «տակ» բաղադրիչներից, որոնցից առաջինը ծագում է հնդեւրոպական «sub»՝ «մօտ, մերձ, քով», իսկ երկրորդը՝ հնդիրանական «tak, tag»՝ «ցածր, ստորին, վերջին, տակ» արմատներից եւ բառացիօրէն նշանակել է «ցածրակարգ, ցածրամերձ, ստորակարգ»[20]: Սրանք, նահապետի այն ենթականերն էին, որ նահատակներին մօտ կարգավիճակ ունենալով հանդերձ, ըստ ամենայնի, արենակցական կապի մէջ չէին տիրոջ հետ եւ, թերեւս, իրենց ստորադաս կարգավիճակում յայտնուել էին գերեվարման, ստրկավաճառութեան արդիւնքում: Ե՛ւ նահատակը, ե՛ւ հպատակը կազմում էին Հայկական Լեռնաշխարհի հին հասարակութիւնների այն ստորին դասը, որը յետագայի հայ մատենագրութեան մէջ առաւել յայտնի է «ընդոծիններ» (ցածրածիններ) ընդհանուր անուամբ[21]:

Քրիստոնէութեանը նուիրուած վարքաբանական, վկայաբանական եւ կրօնադաւանաբանական, սկզբնաղբիւրներում ու աւանդազրոյցներում, նաեւ հայոց հոգեւոր ընկալումների համակարգում, առանձնակի վերաբերմունք, խորին ակնածանք ու անսահման յարգանք կայ սուրբ գործի համար կեանքը զոհաբերածների՝ մարտիրոսների, հանդէպ: «Մարտիւրոս, մարտիրոս» եզրը ծագում է հին յունարէն μάρτυς μάρτυρος (լատիներէն՝ mártys) բառարմատից[22] եւ նշանակում է «վկայ, ականատես»՝ այսինքն մարդ, ով վկան ու մասնակիցն է եղել քրիստոնէութեան տարածման ու պահպանման բուռն գործընթացներին եւ իր կեանքն անմնացորդ զոհաբերել է հաւատքի ու գաղափարի համար: Հայերէն ձեռագրերում, կրօնադաւանաբանական երկերի մէջ եւ առօրեայ խօսակցականում «մարտիրոսին» համարժէք է «նահատակը»[23]:

Հարիւրամեակներ շարունակ կիրառուած այս հնամենի սովորոյթը, ինչպէս նաեւ ժողովրդի յիշողութեան մէջ ու բանաւոր զրոյցներում պահպան-

ուած դրա արձագանգներն են թերեւս պատճառը, որ յետագայ շրջանի հայերէնում (անշուշտ նաեւ քրիստոնէական գաղափարախօսութեան ազդեցութեան շնորհիւ), որոշակի ընկերային կարգավիճակ ցուցանող «նահատակ» բառն աստիճանաբար վերաիմաստաւորուել է «սուրբ գործի համար զոհուած մարդ» հասկացութեան եւ հոմանիշ դարձել «մարտիրոս» եզրոյթին[24]:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Երուանդ Լալայեան, *Դամբանների Պեղումներ Խորհրդային Հայաստանում*, Երեւան, «Պետհրատ», 1931, 239 էջ:

[2] Ա. Փիլիպոսեան, «Հետախուզական Պեղումներ 'Մոթքի Ձոր' Դամբարանադաշտում», *ՀՀ-ում 1989-1990թթ. Դաշտային Հնագիտական Աշխատանքների Արդիւնքներին Նուիրուած Գիտական Նստաշրջան, Զեկ. Թեզեր*, Երեւան, 1991, էջ 31-3:

[3] Ա. Փիլիպոսեան, Ռ. Մկրտչեան, Լ. Կիրակոսեան, «Քանագեղի Դամբարանադաշտի 1999թ. Պեղումները», *Հայաստանի Հնագոյն Մշակոյթը, N2, Է. Խանզադեանի Յոբելեանին Նուիրուած Գիտաժողովի Նիւթեր*, Երեւան 2002, էջ 43-9:

[4] В.В. Бунак, "Черепа Железного Века из Севанского Района Армении," *Русский Антропологический журнал*, (Վ. Վ. Բունակ, Հայաստանի Սեւանի տարածաշրջանի երկաթեդարեան գանկերը, «Ռուսական մարդաբանական ամսագիր), Հտր. 17, թողարկում 3-4, Մոսկուա, 1929, էջ 64-87:

[5] А. Пилипосян, Р. Мкртчян, "Могильник Мртби-Дзор" *«Археологическая Конференция Кавказа», № 1, Краткие Содержания Докладов*, (Ա. Փիլիպոսեան, Ռ. Մկրտչեան, Մոթքի Ձորի դամբարանադաշտը, «Կովկասի հնագիտական գիտաժողով», N 1, զեկուցումների թեզիսներ), Թբիլիսի, 1998, էջ 101-3:

[6] Փիլիպոսեան, Մկրտչեան, Կիրակոսեան, 2002:

[7] Ա.Փիլիպոսեան, «Հետախուզական Պեղումներ», էջ 31-3:

[8] Р. Мкртчян, П. Аветисян, А. Пилипосян, "Внутригрупповой Анализ Краниологических Материалов из Могильника Мртби Дзор," *«Горизонты Антропологии» Труды Международной Конференции Памяти Ак. В.П. Алксеева* (Ռ. Մկրտչեան, Պ. Աւետիսեան, Ա. Աւետիսեան, Մոթքի Ձորի դամբարանադաշտի գանկաբանական նիւթերի ներխմբային վերլուծական, «Մարդաբանութեան հորիզոններ», Միջազգային Գիտաժողովի Նիւթեր Նուիրուած Ակադեմիկոս Վ. Պ. Ալեքսէեւի Յիշատակին), Մոսկուա, 2003, էջ 297:

[9] Ա. Փիլիպոսեան, Ռ. Մկրտչեան, «Նահապետի Ֆենոմէնն Ըստ Հնագիտական Եւ Մարդաբանական Տուեալների», *'Հին Հայաստանի Մշակոյթը' IX Հանրապետական Գիտական Նստաշրջան, Զեկ. Թեզեր*, Երեւան, 1998, էջ 66-7:

[10] Мкртчян, Аветисян, Пилипосян, 2003:

[11] В. Е. Дерябин, *Многомерные Биометрические Методы для Антропологов*, Рук. деп. в Всероссийском институте научной и технической информации (Վ. Ե. Դերիաբին, Բազմաչափ կենսաչափական մեթոդներ մարդաբանների համար), Մոսկուա, «ՎԻՆԻՏԻ», 37-B, 2001, 312 էջ:

[12] Կոորդինատ - Հարթութեան կամ տարածութեան մէջ կէտի դիրքը որոշող մեծութիւն:

[13] Ինտեգրալ – Ամբողջ մեծութիւն, որը դիտւում է որպէս իր անվերջօրէն փոքր մասերի գումարը:

[14] Միջին քառակուսեյի շեղում - Վիճակագրական հաշուարկներում պատահական մեծութեան ցրման ամենաընդունուած ցուցիչը կապուած նրա մաթեմատիկական արժէքի հետ:

[15] Բոլոր վիճակագրական միջինացուած ցուցանիշների գնահատականները տե՛ս՝ В.П. Алексеев, Г.Ф. Дебец, *Краниометрия. Методика Антропологических Исследований* (Վ.Պ. Ալեքսէեւ, Գ.Ֆ. Դեբէց, Գանկաչափութիւն. մարդաբանական ուսումնասիրութիւնների մեթոդներ), Մոսկուա, «Նաուկա», 1964, էջ 124-7:

[16] Հր. Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան, Հտր. 3*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1977, էջ, 420-1:

[17] Ռ. Ա. Մկրտչեան, Ա. Ս. Փիլիպոսեան, «Սոցիալ-Ժողովրդագրական Գործընթացները Հայկական Լեռնաշխարհում Մ.Թ.Ա. III-I Հազարամեակներում», *'Քաղաքագիտութեան Հարցեր-2011' (Պահպանողական Հոսանքը Եւ Հայաստանի Հանրապետութեան Քաղաքական Գործընթացները) Միջբուհական Գիտաժողովի Նիւթեր*, Երեւան, 2011, էջ 250-63:

[18] Ա. Փիլիպոսեան, Ռ. Մկրտչեան, «Մանկասպանութիւնը Գեղարքունիքի Մ.Թ.Ա. II-I Հազարամեակների Խմբային Թաղումներում», *'Ընտանիքի Հետազօտման Հիմնախնդիրները' Ժողովածու*, Երեւան, 2001, էջ 100-105:

[19] Աճառեան, էջ 360-1:

[20] Փիլիպոսեան, Մկրտչեան, 2001, էջ 102:

[21] Աճառեան, էջ 125. նաեւ՝ Գ. Ջահուկեան, *Հայոց Լեզուի Պատմութիւն. Նախագրային Ժամանակաշրջան*, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1987, էջ 221, 248, 272, 360:

[22] Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, *Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հտր. 2*, ցուցակ 1, Վենետիկ 1837, էջ 231. նաեւ՝ Հայր Մատաթեայ Վարդապետ Պետրոսեան, *Նոր Բառգիրք Հայ-Անգլիարէն*, Տպագիր ցուցակ 1, Վենետիկ-Ս. Ղազար, 1875, էջ 461:

[23] Աճառեան, 1977, էջ 290. նաեւ՝ Ջահուկեան, էջ 403:

[24] Մկրտչեան, Փիլիպոսեան, 2011, էջ 260:

THE PHENOMENON OF COLLECTIVE BURIALS IN THE VICINITY OF LAKE SEVAN DURING THE IRON AGE

(Summary)

HASMIK SIMONYAN, RUZAN MKRTCHYAN, ASHOD PILIBOSYAN
hassimonyan89@gmail.com; ruzantrop55@mail.ru; piliposyan@yahoo.com

The paper focuses on two burial sites in the vicinity of lake Sevan which date back to the iron age and specifically to the 12/11th- 9th centuries BC.

The first site was first excavated between 1906 and 1908 and again between 1987 and 1992, while the second was excavated between 1999 and 2002.

The aim of the authors is to examine the similarities and differences between the members of these group burials and interpret their kinship through measuring the details of each skeleton.

The authors describe the area, the numbers in the cemeteries and those buried. They also detail the size and facial specifics of each skeleton (more than 39) as well as the position and distance at which each was buried in relation to the main corpse.

After a detailed examination the authors conclude that in both these burial sites, due to the death of the chief of the group, a number of his kin (both male and female and of different ages) were killed and buried close to his corpse.

Basing their conclusions on the above-mentioned facts, the authors make certain deductions about the burial habits and rituals as well as the social hierarchy and relations that prevailed within the group.

ԱՐԱՔՍ ԳԻՒՂԻ ԷԹՆՕՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (Ազգագրական Ակնարկ)

ԳԱԼԻԱ ԴԱՒԻԴՈՎԱ
galya.davidova.60@gmail.com

ՄՈՒՏՔ

2013-14՝ դաշտային ազգագրական նիւթ ենք գրառել Արմաւիրի Մարզի Արաքս գիւղից: Արմաւիրի մարզի այս գիւղն ունի խառը բնակչութիւն՝ տարբեր տեղերից եկած, որոնք իրենց հետ բերել են սովորոյթներ եւ աւանդոյթներ՝բնորոշ այն տարածաշրջանին, որտեղից գաղթել են: Նոր բնակավայրում նրանք պահպանել են իրենց աւանդոյթները, բայց սերնդափոխութեան արդիւնքում սովորութային այս ծէսերը վտանգուած են, ուստի հրատապ է դրանց գրառումն ու ուսումնասիրութիւնը:

Գիւղը աչքի է ընկնում իր բնակչութեան բազմատարր կազմով: Այն հիմնադրուել է 1940ին[1]: Ըստ բանասացների՝ գիւղը կառուցուել է Շոլկ[2] գիւղի հիման վրայ: Դրա համար էլ հիմնական բնակչութեանը անուանում են «շոլկեցիներ»: Գիւղի հնաբնակների կողքին ապրում են նաեւ 1915ի Հայոց Ցեղասպանութիւնից մազապուրծների սերունդները: Բանասացների վկայութեամբ վերաբնակուածները եկել են տարբեր ժամանակներում, տարբեր վայրերից, տարբեր պատճառներով (արտագաղթ, բնական աղէտներ, նիւթական վատ կենսապայմաններ):

Գիւղում ապրում են 1945-46ին վերաբնակուածներ՝ Վայքի (Մարտիրոս, Սերս, Արմալու, Ախաջ, Խնձորուտ), Պարսկաստանի (Սպահանի՝ Քոնարք, Սուլթանաբադի նահանգի Զառնա, Չհարմհալ) գիւղերից եկածները: Սիրիայից եկածների առաջին կարաւանը վերաբնակուել է 1946ին, երկրորդը՝ 1965-68ին՝ Ղամշլիից: 1960ին գիւղը համալրուել է շիրակցիներով (Անիի շրջանի գիւղ Խարկով), ջաջուռցիներով, ղուկասեանցիներով (Բաւրա, Ղազանչի, Դարաքէօյ), սասունցիներով (Թալինի շրջանի Շղարշիկ գիւղից 5 ընտանիք, Բազմաբերդից՝ 4, Աշնակից՝ 5), մշեցիներով (Ախուրեանի շրջանի Հայկաւան գիւղից 5 ընտանիք, Ախուրիկից, Երազգաորսից), մարտունեցիներով, ախալքալաքցիներով: Գիւղում կողք-կողքի համերաշխ ապրում են նաեւ այլ էթնոսի ներկայացուցիչներ՝ եզդիներ, ասորիներ, ռուսներ, ուկրայնացիներ, օսէթներ, ղազախներ:

Ըստ բնակիչների՝ թաղամասերն անուանում են «քրտախօսների» (սիրիահայեր), «պարսիկների» (պարսկահայեր), «ժաժկեցիների» (ղուկասեանցիներ՝ 1960ի երկրաշարժից յետոյ վերաբնակիչներ), «եարտախների»՝ Վայքից, որոնք «արի այստեղի» փոխարէն ասում են եարտախ:

Մեր խնդիրն էր՝ գրառել վերը նշուած ներէթնիկ խմբերի հարսանեկան ծէսերը, հաւատալիքները, ժողովրդական գիտելիքները: Սերունդներին ճանաչելի դարձնելու իրենց աւանդոյթներին ու ծէսերին՝ բացայայտելով

նրանց առանձնայատկութիւնները: Պարզել, թէ այդ ծէսերը ինչքան երկար են կենցաղավարել, եւ արդեօ՞ք պահպանուել են մինչեւ մեր ժամանակները: Ազգային մշակոյթը հարուստ է իր աւանդական սովորութային կարգերով եւ արժէքներով: Եւ տուեալ ազգը, էթնիկ խումբը կարող է պահպանել ազգային ինքնութեան գիտակցութիւնը, սերնդէ սերունդ փոխանցելու մարդկային փոխյարաբերութիւններն ու կենցաղը:

Մեր դաշտային հաւաքած նիւթը խմբաւորել ենք ըստ թեմաների.- ա) հարսանեկան ծէսեր, բ) գիւղի «տան սրբեր», գ) ժողովրդական բժշկութիւն:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԷՍԵՐ

ՀՀ տարբեր պատմաազգագրական շրջաններում հարսանեկան ծիսակարգն աչքի է ընկնում մեծ բազմազանութեամբ: Սակայն, ըստ էութեան, բովանդակային առումով եւ հիմնական փուլերով այն ընդհանրական է ողջ ՀՀի համար: Հարսանեաց ծիսաշարը բաւականին երկար ժամանակահատուած է ընդգրկում: Եթէ հաշուի առնենք նախահարսանեկան՝ խնամախօսութիւն, խօսքկապ, հարսնտես, նշանդրէք, յետհարսանեկան՝ կարմիր խնձոր, գլուխ լուանալ, դարձ ծէսերը եւս, ապա այս ծիսաշարը կարող է ձգուել միքանի ամիսներից մինչեւ միքանի տարի:

Հայկական հարսանիքները Ի. դարի երկրորդ կէսին շատ տարբեր էին այս գիւղում, քանի որ ամէն մի ներէթնիկ խումբ պահպանել է իրենը: Ճիշտ է, ծէսերը տարբեր էին, բայց մարդկանց այն համախմբում էր՝ միմեանց աջակցելու, մէկը միւսին օգնելու միտումով:

Ազգականների, հարեւանների միջեւ փոխօգնութիւնն արտայայտւում էր ոչ միայն երկրագործական, անասնապահական, կենցաղային առօրեայ փոխյարաբերութիւնների ժամանակ, այլ նաեւ ծնունդի, կնունքի, հարսանիքի, թաղման, այլ տօնածիսական իրադարձութիւններին ցուցաբերած նիւթական, բարոյահոգեբանական աջակցութեան միջոցով: Նշանդրէքի (նշանտուք) ժամանակ պարսկահայերը գլուխ շաքարը զարդարում էին չոր կամ թարմ ծաղիկներով, գունաւոր ժապաւէններով: Գունաւոր թելերով անցկացուած նշանի մատանիները կախ էին տալիս «ղանդից»:

Շաքարը կարող էր լինել գործարանային կամ տնային պայմաններում պատրաստուած: ԺԹ. դարից սկսած պարսկահայերը զարդարուած շաքարի (Հայաստանում՝ գինի կամ կոնիակ) հետ բերում էին նաեւ կարմիր խնձորներ: Դրանցից մէկն ընտրւում էր հարսի համար, որպէսզի նա խընձորը ձեռքին մօտենայ հիւրերին, որոնք մանրադրամ կամ ոսկէդրամ էին խրում խնձորի վրայ՝ որպէս հարսին նուէր: Եթէ աղջկայ տէրը համաձայն էր աղջկան տալու, ապա նա եւս մէկ գլուխ շաքար էր դնում սեղանին:

Նշանդրէքի հիմնական ծէսը շաքարի կոտրումն էր: Հարսնացուն ու փեսացուն միասին կոտրում էին շաքարը (այժմ՝ կարկանդակը): Փոքր կտորները փաթեթաւորում էին փայլուն թղթերի մէջ, կապում գոյնզգոյն

ժապաւէններով եւ բաժանում երիտասարդներին՝ որպէս տարոսիկներ: Տարոսիկներ էին նուիրում եւ նշանուած աղջիկներին:

Գրառել ենք շատ հետաքրքիր իւրայատուկ ծէսեր. Անիի շրջանից (խարկովցիներ) եկածները հարսանիքին նախորդող Ուրբաթ օրը փեսացուի տանը ցուլ էին մորթում, որից բաժին էին ուղարկում հարսնացուի տուն[3]: Փեսացուի հարազատներից մի փոքր խումբ ջահել աղջիկներ այցելում էին հարսին: Ընտրւում էր նրանցից մէկը՝ «հօրով-մօրով, ազգով-տակով», որի գլուխը հարսի գլխի հետ պէտք է լուանային: Այս ծէսը կոչւում էր «Փնջատուն» կամ «Ծաղկատուն»[4]: Սա հմայութեան նմանող մի ծէս էր, երբ աղջիկը խաբում էր «չար ուժերին», շփոթեցնում նրանց՝ որպէսզի հարսնացուին չվնասէին: Հարսնառին անուանում էին «դաւաթուոր»: Հարսնացուն այդ ժամանակ լինում էր հօրեղբօր, երբեմն շատ մօտ հարազատի կամ ազգականի տանը: Երբ հարսնառը մտնում էր բակ, հարսնացուի կողմնակիցները գոռում էին «դաւաթուորն» եկաւ, պարելով ընդառաջ էին գալիս: Եկողները մտնում էին պարի մէջ՝ միանալով պարողներին ու երգում՝

Կլոր պար, մէջը ծառ
Փեսա արի, հարսին տար[5]:

Իւրաքանչիւր զգեստ հագցնելիս ծաղկեւորները (հարսնածի) երգեր էին երգում՝ յուզմունք պատճառելով աղջկան ու նրա հարազատներին: Հարսանեկան գնացքին պարտադիր ուղեկցում էին չամուսնացած երիտասարդների (ազապներ) ծիսական խմբերը, որոնք իրենց գործառոյթներով ողջ հարսանիքի ընթացքում ինքնուրոյն, անկախ դեր ունէին եւ, ըստ ազգագրագէտ Լ. Վարդանեանի, յիշեցնում էին տղաների վաղեմի տարիքային խմբերը[6]: Տանտէրը (հարսնացուի հայրը) պէտք է սեղան բացէր եկուորների համար, որի շուրջ երիտասարդները պարում էին, երգում, իսկ մեծահասակները՝ խմում հարսի, փեսի կենացը:

Այս ծէսը կենցաղավարել է մինչեւ 1970ականները: Մէկ ուրիշ ծէս պահպանուել է մինչեւ նշուած ժամանակաշրջանը. մակարի բոխչայի (տուտկապ) մէջ երիտասարդները լցնում էին մանր-մունր իրեր (մատանի, ականջօղ, վզնոց, խաչ): Երիտասարդը, ձեռքը մտցնելով տուտկապի մէջ, հանում էր որեւէ իր ու գոռում. «Սրա տէրը ի՞նչ անի», ներկաները պատասխանում էր՝ «երգի կամ պարի»: Երբ պարզւում էր տիրոջ ինքնութիւնը, նա պարտաւոր էր կատարել ներկաների պահանջը: Երբ իրը հանում էին, սկսում էին ծիծաղել, աղմկել՝ վիճակի տիրոջը ցանկանալով երջանիկ ամուսնութիւն:

Պարսկահայերը, հարսանիքն անուանում էին «հաշնիկ»[7]: Ուրբաթ օրը հարսի ձեռքերին հինա դնելու օրն էր: Յովհաննէս Թումանեանի «Մարօ» պոէմում հանդիպում ենք հետեւեալ տողերին. «*Հինա դրին ձեռքերը, եկաւ խաչով փէրփէրը*»: Շաբաթ օրը փեսացուի տանը սկսւում էր ուրախութիւնը, որն անուանում էին «զողվի իրիկուն»[8]: Պարսկահայերի սիրուած

զարդերից էին նորահարսին նուիրած ուլունքներով, դրամներով զարդարուն փունջը՝ ծայրերին արծաթէ դրամներ: Սեղանին դնում էին խաշլամա, «նազուկ» գաթա, հալվա, «ղանդ» շաքար թէյի համար: Գլուխ շաքարը իրանահայերի հարսանիքներում պարտադիր բաղադրիչներից է եւ պարսկերէն կոչւում է «ղանդ»: Այն ձեւով նման է ֆալոսի եւ կապւում է արական բեղմնաւորման գաղափարի հետ: Մարդկային հասարակութեան ամենակարեւոր նպատակներից մէկը սերնդաճի ապահովումն է: Ֆալոսատիպ շաքարը պատահական չէր ընտրուած, այն պտղաբերութեան խորհրդանիշ էր, որը զարդարում էր հարսնացուն իր չամուսնացած ընկերուհիների հետ (նրանք ապագայ հարսնացուներ են):

Սիրիահայերը հիմնականում պահպանել են ընտանիքի ներքին փոխյարաբերութիւնները պահպանող աւանդոյթները, ծէսերը, սովորութիւնները, հաւատալիքները: Այս ամէնը շատ ցայտուն երեւում է հարսանեկան արարողութիւնների ժամանակ:

Հարսանիքների ժամանակ սիրիահայերը նորահարսին նուիրում էին ոսկեայ զարդեր: Հարսնացուին նուիրաբերուող ընծաների մէջ շեշտուել է ոսկեայ մատանին՝ գիւղում, քաղաքում՝ հարսնացուին ընծայաբերել են նաեւ ոսկեայ[9] այլ զարդեր՝ ապարանջան, գօտի, ականջօղեր, ճակատնոց: Ըստ սիրիահայ բանասացների՝ մինչեւ 1950ականները Սիրիայում հարսնացուի հօրը տալիս էին «ղալան» (գլխագին, հարսնագին): Եթէ փեսացուն հարուստ էր՝ գլխագնի դիմաց տալիս էին շատ ոսկի, իսկ միջին խաւը՝ մինչեւ տաս անգլիական ոսկի: Քեռուն տալիս էին ոսկի կամ փող, հօրեղբօրը՝ զէնք էին նուիրում[10]: Հարսնագնից բացի տղայի հայրը հոգում էր նաեւ աղջկայ տան հարսանեկան սեղանի ծախսերը: Հարսանեկան սեղանին դնում էին մսով փլաւ, «տըրշըկ» ճաշատեսակ (մսով, սպիտակ լոբով ապուր): Տըրշըկը լցնում էին կաւէ խորունկ ամանի մէջ, մատուցում տաք: Սեղանին մատուցում էին ձկան սալաթ՝ սոխով, լոլիկով, վրան քամում նռան հիւթ եւ զարդարում նռան հատիկներով[11]: Փեսացուի տանը հինան շաղում էին, երգով ու պարով, դհոլ-զուռնայի եւ սիրիահայերի սիրած չմբուշի նուագակցութեամբ գնում հարսի տուն: Փեսացուի, հարսնացուի եւ նրա ընկերուհիների (ապագայ հարսնացուների) ճկոյթները հինա էին դնում եւ փոքր կտորով կապում, որպէսզի լաւ բռնէր, իսկ աւելացած հինան թաղում էին հողում[12]: Հողում թաղելը եւս ծէս էր, որը հողին «հաղորդում էր» արգասաբերութիւն, պտղաբերութիւն, առատութիւն ու լիութիւն: Ինչքան հինան լաւ բռնէր, այնքան այդ զոյգը բախտաւոր կը լինէր: Ցարդ այս ծէսը կենցաղավարում է սիրիահայերի մօտ:

Շաբաթ օրը հարսանեկան երթը ուղղւում է քաւորի տուն, ապա հարսի տուն: Ընդ որում, ետդարձը պէտք է լինէր այլ ճանապարհով եւ առանց անցանկալի հանդիպումների (նոր ամուսնացածներ, նորածինների ծնողներ, քառասունքից դուրս չեկած հանգուցեալի ընտանիքի անդամներ եւ «անցումային վիճակում» գտնուող այլ նուիրագործուողներ):

Քրտախօսները մինչեւ 1980ականները հարսանիքի օրը սեղանի վրայ նորապսակների առջեւ փռում էին մի գլխաշոր, իսկ ցանկացողները նուէրներ, զարդեր նոյնիսկ փող էին տալիս[13]: Երբ հարսնառը մտնում էր փողոց, փեսայի բոլոր հարազատները տուն առ տուն փողոցում սեղան էին բացում նորապսակների համար: Երբ հարսը մօտենում էր սեղաններին, նրա ձեռքն էին տալիս գեղեցիկ ձեւաւորուած, զարդարուած կճուճ: Նոյնպիսի մի կճուճ էր տալիս սկեսուրը հարսին[14], երբ հարսը մտնում էր ամուսնու շեմը: Կճուճի մէջ լցնում էին բոված, շաքարաջրով խառնած սիսեռ, բոված գետնանուշ, մանրադրամներ, ցորեն, շաքարեղէն: Հարսը կճուճը կոտրում էր շեմին[15] (չարը խափանելու միտումով), իսկ երեխաները հաւաքում էին կճուճի միջինը, որը լիութեան, առատութեան խորհրդանշան էր: Մեր հաւաքած նիւթը թոյլ է տալիս եզրակացնելու, որ այն մինչեւ 2008 կենցաղավարել է: Իսկ երիտասարդ սերունդը հաւաստում է, որ այն կենցաղավարելու է նոյնիսկ իրենց երեխաների հարսանիքի ժամանակ:

Հարսանեկան ծիսակատարութեան մէջ առանձնանում էր նաեւ շեմի հետ կապուած ծէսերի խումբը, որը բնորոշւում էր երկակիութեամբ՝ դէպի դուրս եւ դէպի ներս ուղղուածութեամբ: Հարսի տան շեմը փակում էին նրա հարազատ երիտասարդները՝ դէպի օտար, վտանգաւոր տարածութիւն հարսի ելքը խոչընդոտելու նպատակով: Մէկ այլ սովորոյթ եւս, որը նոյնպէս կիրառութեան մէջ է մինչեւ այսօր՝ սկեսուրն ու սկեսրայրը դանակները «խաչ»[16] էին անում դռան վրայ, հարսն ու փեսան անցնում էին դրա տակով, այսինքն՝ մտնում էին նրանց «իշխանութեան» տակ: Ըստ բանասացների՝ դա վաղ ժամանակներից եկած սովորութիւն է, որը չի կորցրել իր երբեմնի վարքագիծը: Նշանդրէքից մինչեւ հարսանիքը բաւական երկար ժամանակ (մէկ շաբաթից մինչեւ միքանի տարի) էր, որի ընթացքում հարսնացուի ընտանիքը պատրաստում էր հարսի օժիտը: Յատկապէս յարգի էր, որ հարսն ինքն իր ձեռքով մինչեւ հարսանիքը պատրաստէր օժիտի պարագաները: Հարսնացուն գործում էր գորգ (եթէ հարուստ էր), կարպետ, ձեռագործում, ասեղնագործում գուլպաներ, կարում գօտիներ, բարձի երեսներ, ձեռագործում պատի զարդ, լուսամփոփի, սեղանի ծածկոցներ, ժանեակազարդ տակդիրներ, նոյնիսկ կարում իր հարսանեկան հանդերձը: Փեսացուի համար կարում էր վերնաշապիկ (հարսանիքի օրը կրելու), գործում գուլպաներ:

Քրտախօսները ջհէզ (օժիտ) էին տանում եօթ հոգու համար (հօրը, մօրը, քոյրերին, եղբայրներին, քաւոր-քաւորակնոջը), նոյնիսկ տան աշխատողին (ռանչպարին)՝ մի ձեռագործ գուլպայ: Նրանց մօտ պահպանուել է եւս մի հետաքրքիր յետհարսանեկան ծէս. առագաստից յետոյ նորահարսի սաւանը վերցնում էր տան մեծ հարսը քաւորակնոջ հետ: Այս խմբի մօտ ոչ թէ «պարզերես» հարսին են նուէր տալիս, այլ՝ քաւորակնոջը:

Գիւղի մէկ այլ խմբի՝ եարտախների մօտ, հարսանիքը անուանում էին «խառնիս»: «Խառնիսի խաց» թխելիս տան տիկինը (փեսացուի մայրը)

մարզըխայի (հացառ) վրայ դնում էր որեւէ նուէր (խալաթ)։ Հարսը առաջին անգամ աւել անելիս սկեսրոջ կողմից ստանում էր նուէր[17]։ Եթէ հարսը աւլում էր դէպի ներս՝ տան անկիւն, ենթադրւում էր, որ նա լաւ հարս էր, իսկ եթէ դէպի դուրս՝ տան «գաղտնիքը դուրս տանող» էր։ Այս սովորութիւնով սկեսուրը փորձում էր հարսի խելացութիւնն ու գաղտնապահութիւնը. հարսն անցնում էր առաջին փորձաշրջանը։ Եարտախների մօտ տանդըռեջի (Տեառնընդառաջ) ժամանակ, երիտասարդ տղաները գուլպայ էին կախում նորահարս ունեցողի տան երդիկից, երգելով ասում՝

Ակըլը մարեմ մարեմ,
Ձեր հարսի սոլը կարեմ,
Ոսկի բերեմ, ափամները շարեմ։

Երիտասարդները այնքան էին սպասում, մինչեւ տանտիկինը գուլպայի մէջ լցնէր չիր, փշատ, կարկատ (եգիպտացորենի աղանձ)։

Այսօր հարսանիքները անում են շատ նեղ շրջանակներում (բարեկամներ, ազգակիցներ, երբեմն նոյնիսկ առանց հարեւանների)։ Հարսանիքը նշւում են բնակավայրին մօտ ճաշարանում կամ հարսանեաց սրահներում։ Նախկին շփումը հարեւանների հետ դարձել է խիստ սահմանափակ (հարեւաններին հրաւիրում են միայն աչքալուսանքի)։ Հարեւան կանայք «կարմիր խնձորի» առիթով հաւաքւում են, բոլորը այցելում են նուէրներով, քաղցր սեղանի շուրջ քննարկում հարսանիքը, բամբասում սրանից-նրանից, դիտում նորոյթ դարձած հարսանիքի դրուագները պատկերող տեսաֆիլմը։ Հոգեւոր մշակութային արժէքների փոխանցման դաշտը անչափ նեղացել է, գիւղում կեանքը ներփակ է դարձել, ամէն մէկն իր համար է ապրում։ Չափազանց խիստ զբաղուածութեան պատճառով երկրագործական, դաշտավարական աշխատանքը խլում է մարդկանց ազատ ժամանակը։ Ժողովրդական խօսքն ու զրոյցը իր կենցաղավարման, տարածման ու փոխանցման համն ու հոտը կորցրել է։ Արաքսեցու երբեմնի դրսեւորած հետաքրքրութիւնների դաշտը նեղացել է, աւանդական կենցաղով ապրողների թիւը՝ նուազել, քանի որ քաղաքից ներթափանցած կենսակերպը՝ շքեղ ձեւաւորուած բնակարաններ, թանկարժէք մեքենաներ, ազատ անկաշկանդ պահուածք, շերտաւորել է նոյնիսկ այսօրուայ գիւղը եւ խաթարել գիւղացու անդորրը։ Այսօրուայ ապահով ապրող գիւղացին այնուամենայնիւ «վազում» է հասնել գիւղական «մեծահարուստին», ապրել նրա նման բարեկեցիկ։

Մեր ուսումնասիրութիւնները ցոյց տուեցին, որ Արաքսում ներէթնիկ խմբերի հարսանեաց հանդէսները տեղական առանձնայատկութիւններով հանդերձ, ունեն որոշակի նմանութիւններ, տրամաբանական համակարգ, որոշակի նպատակ եւ վաղ անցեալ։ Այս ծէսերի առանձին մասեր կապուած էին հաւատալիքների՝ չարի ու բարու հակադրութեամբ եւ բարոյական նորմերով։

ՏԱՆ ՍՐԲԵՐ

Բնակավայրը շատ հետաքրքիր ծէսերի ու սովորոյթների մեծ ամբար ունի: Գիւղում լայն տարածում ունեն «տան սրբերը»: Ինչպէս ՀՀ շատ բնակավայրերում, այնպէս էլ այս գիւղում պահպանուել է Տան Սուրբը երկրպագելու երեւոյթը, որն իր զօրաւոր ուժով չարից ու փորձանքից պահպանել է տուեալ տարածքը, բարեխօս է եղել Տիրոջ առաջ, փրկել ու բժշկել է հիւանդներին, կեանքի է կոչել յուսալքուածներին: Տան անկիւնում կամ տանը կից մատուռում (առանձին կառուցուած շինութիւն) իւրայատուկ խնամքով պահպանում էին Սրբի անկիւնը: Սրբի անկիւնում դրւում էին շուշպաներ[18] (սրբերի մասունքներ կամ աւետարան փաթաթելու շոր), սրբապատկերներ, երկնքից ընկած քարեր, գրքեր՝ *Նարեկ*, *Աստուածաշունչ*, եկեղեցական այլ խաչակազմ գրքեր: Բժիշկ-հեքիմները, Աստծուց «շնորք ստացածները» բուժումը կատարում էին հենց սրբավայրում, որտեղ հիւանդը իր մեղքն էր խոստովանում, հաւատալով, որ Սուրբը կը բարեխօսի Տիրոջ մօտ, որպէսզի իր խնդրանքը շուտափոյթ լուծում գտնի կամ ձերբազատուի հիւանդութիւնից: Ժողովրդի պատկերացմամբ սուրբ գրքերը հրաշագործ եւ բուժիչ յատկութիւն ունեն: Ժողովուրդը հաւատում է, որ դրանք կենդանի էակներ են՝ օժտուած մարդուն բնորոշ յատկանիշերով: Պահանջում են հնազանդութիւն, նուիրուածութիւն, որոնց բացակայութեան դէպքում կարող են պատժել հաւատացեալներին՝ հաւատի մէջ թերանալու համար: Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ բոլոր սրբերն էլ հրաշագործ են՝ օգնող, բժշկող, սատարող, մխիթարող, մարդուն նախազգուշացնում են սպառնացող վտանգի, փորձանքի մասին, բայց, միեւնոյն ժամանակ, չեն ներում «չհնազանդուողներին»:

Գիւղն ունէր միքանի տներ, որոնք ունէին «հզօր սրբեր»: Այդպիսին էր «Սուրբ Ախպէր» Աւոյի ընտանեկան սուրբը: Մշեցի Աւօ Յակոբեանը Էրգրից փախել է 1915-16ին՝ իր հետ բերելով «սուրբը»: Տան տէրերը մինչեւ այժմ էլ չգիտեն, թէ միքանի գլխաշորով փաթաթած փաթթոցի մէջ ինչ կայ: Բանասացը պատմեց շատ հետաքրքիր պատմութիւն սրբի մասին: Մուշում ապրելիս տանը ոչ ոք չի լինում բացի փոքր հարսից: Հարսը վառած թոնրի (տան մէջ գտնուող փոքր թոնիր՝ ճաշ եփելու համար, նաեւ մեծ թոնիր՝ հաց թխելու համար) մօտից անցնելիս՝ գրկի փոքր երեխային անզգուշօրէն գցում է թոնիրը: Նա արագութեամբ հանում է երեխային, որն արդէն անշնչացած էր, փոխում է հագուստը, փաթաթում դնում օրօրոցի մէջ: Երբ երեկոյեան ընտանիքը հաւաքւում է, երեխային հանում է օրօրոցից, իբր չգիտի, որ երեխան մահացած է, բայց տեսնում է՝ երեխան ողջ է, ամբողջովին քրտնած: Ոգեւորուած տեսածից՝ եղելութիւնը պատմում է սկեսրոջը: Իսկ տանեցիներից մէկը պատմում է, որ ինքը երազ է տեսել, իբր մօրուքով տղամարդն իրեն ասել է միքանի անգամ. «իմ զօրութիւնն է, հաւատացէք ինձ»: Յաջորդ օրը բոլորը խօսել

են «Սուրբ Ախպօր» զօրութեան մասին: Բանասացը յաւելում էր նաեւ, որ իրենց ընտանիքին «փախէփախ»ի ժամանակ փրկել է սրբի զօրութիւնը՝

Պահապան խաչ հրեշտակ
Եօթը գլուխ Աւետարան
Սուրբ Կարապետ մեզ պահապան:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Տան սուրբ ունեցողներն էլ առ այսօր կատարում են որոշ «բուժումներ», «հմայական աղօթքներ»: Գինօ աբան (Գինօ Յակոբեան) բուժում էր մարդկանց չար աչքից, վախեցածի վախն էր բռնում: Այսօր այդ գործը նրա աղջիկ Ագնէսից յետոյ փոխանցուել է թոռնուհուն: «Դեղնախտ» հիւանդութիւն էր բուժում սիրիահայ քեռի Աբրահամը (Պճուկ): Նրա գործը շարունակում են զաւակները՝ Գէորգը, Ժենիան: Գորտնուկ է բուժում քրտախօս Անդօն, էրեթիկ (մաշկային հիւանդութիւն) էր բուժում սասունցի Սերոբը, որի գործը այժմ շարունակում է դուստրը՝ Աննան: Գերզգայնոտ ցանի դէպքում վայքեցի Ջիւանը բերանով «սառը ջուր» էր փչում հիւանդ հատուածի վրայ: Այդ կարողութիւնը փոխանցուել է իր ժառանգներին (Արթուր, Ջիւան, Ալվարդ): «Ծարաւ բռնողներ» էին գիւղում մարտունեցի Յակոբի ընտանիքը: Քրտախօսներ Մարինն ու Հայկուշը «պոչուկ վերցնողներ»[19] էին: «Պոչուկ վերցնող» էին կոչւում այն ժողովրդական բժիշկ-հեքիմները, որոնք բուժում էին պոչուկի խախտումները: Պարսկահայ «սնխչի» Բաղդասարի գործը այսօր ոչ ոք չի շարունակում: Մինչեւ 1978 գիւղի ժողովրդական «ատամնաբուժն» էր քրտախօս Յովսէփը, իսկ համերկրացի Խաչօն բուժում է «նորալուսնի խփածը»: Նորալուսնի հետ է կապւում «լուսնի նորելը»՝ «նորեց» կոչուող հիւանդութիւնը: Ըստ բանասացի լուսինը դիպչում է քառասունքը չլրացած երեխաներին, երբ նրանց գիշերը դուրս են տանում կամ լուացուած շորերը թողնում են դրսում: Երեխաներին «նորալուսնից» պաշտպանելու նպատակով Տեառնընդառաջի խարոյկից մնացած մոխիրը տրորում էին ջրի մեջ եւ քսում երեսին ու վզին: Մոխրաջուրը ժողովրդական բժշկության մեջ գործածւում է որպես հականեխիչ, հակաբորբոքիչ միջոց, այս պարագայում՝ որպէս պաշտպանական միջոց:

Վախը բուժելու տարածուած եղանակներից է «վախ բռնելն ու վախ չափելը»: Վախ բռնել են կարմիր թէլով, որը լինում էր արմուկի չափով: Վախը չափում են կարմիր թէլով: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ այդ գոյնն ունի չարխափան նշանակութիւն: Չափելու գործողութիւնը կատարւում է երեք անգամ, արմուկը ծալած վիճակում: Չափում են դաստակից արմուկ, եւ եթէ թէլը կարճանայ՝ ուրեմն վախը բռնուել է: Այս գործողութիւնը ուղեկցւում է աղօթքով: Սկզբում լռակեաց արտասանում են (մտքում) հայր-մերը յետոյ՝ բուժող աղօթքը.-

Տէր քեզ մեղայ, Տէր ողորմեայ

Տաս առաքել Հոռոմսիմայ
Էս աւուրով (ժամանակ) աշխհար եկաւ
Փուչ մարմինս կրակ լցուաւ,
Չեմ իմանում մազէ կամուրջ
Չեմ կոխում փշէ փատաշ
Օւան, Օւան ոսկէ բերան
Երեք գլուխ աւետարան
Հոգիս մի վախենա, կնքուա՞ծ ես, մեռոնուա՞ծ ես
Յիսուս Քրիստոսի գիրկ դրուա՞ծ ես
Սուլթան Սուլէյման քարտաշն ես:
Ագին, բագին ճրագները մարան
Չարեր խափանան,
Ծովեր, ժնջիլներ փոած են.
Եկան, եկան երեք, երեք
Մէկը Յիսուս, մէկ Քրիստոս[20]
Մէկ Մարիամ Աստուածածին,
Բալնիքն ընկաւ գլխաբացին,
Հասէք, հուսէք իմ ծիրաններ[21]
Ես գնում եմ մահուան գերեզման:
Աղօթողը Աստծուն խնդրում է՝ օգնել հիւանդին.
Աստուած դու ես օգնական,
Պահապան հրեշտակ,
Փրկես, ազատես էս մարդուն
Չարից, փորձանքից հեռու պահես:

Աղօթել են անխտիր շաբաթուայ բոլոր օրերին՝ օգնել մարդկանց բուժուելու: Վախեցած հիւանդին կանչում էին շաբաթը երեք անգամ:

Չարը խափանելու, չար աչքից պաշտպանուելու եւ բուժուելու համար կիրառելի հիմնական եղանակը աղօթքն է եղել: Աղօթողը դանակը, ասեղը, գնդասեղը շորի վրայ կամ հիւանդի ուսին շարժում է խաչի ձեւով եւ եօթ անգամ, հազիւ շրթունքները շարժելով, արտասանում «Հայր մեր»ը, որից յետոյ ասում աղօթքը՝ նազարի (չար աչքի) դէմ.

Չար աչքին չար փուշ
Չար նիյաթ, չար կրակ,
Կակարդուի, պատառոտուի
Խաւար դառնա…

Մէկ այլ աղօթք էլ արտասանւում է հիւանդի գլխին երեք անգամ (շաբաթուայ մէջ երեք օր)՝

Ագնի բոլոր պատարագին
Յիսուս ծնաւ, բերեց որդի
Բուրդ խանձելով փաթաթեցին
Տարան գետուր, մկրտեցին
Սուրբ Յովհաննէսը եղաւ քաւոր
Մէկ դէմ Յիսուս, մէկ դէմ Քրիստոս
Այրն թաթախ խաչելութիւն:

Աղօթքը, որպէս բուժական մոգութեան արտայայտութիւն եւ բուժման հմայական միջոց, իր մէջ ամփոփում է բանական հատիկ: Շշուկով արտասանուող եւ անընդհատ կրկնուող բառերն ու հնչիւնը, կշռութաւոր խօսքը ներշնչանքի շնորհիւ հանգստացնում են հիւանդին:

Ներշնչանքով եւ հաւատով բուժուող հիւանդութիւններից են նաեւ գորտնուկը, գարեհատիկը եւ մոլոքորը: Գորտնուկի վերացման նպատակով կրկին դիմում են աղօթքին, աղօթում են աղը պահած ձեռքին, շշնջում.-

Նորա նորա ինծի
Գորտնուկն էլաւ, կու գայ ինծի
Կտրայ, քցայ, չուտայ ինծի:

Գորտնուկի բուժման իւրատիպ ձեւ ունի քրտախօս Անդրանիկը (Անդրանիկ Պետրոսի Գրիգորեան, ծն. 1941, Ղամշլի, Սիրիա: Հայաստան է հաստատուել 1968ին): Բանասաց Անդրանիկը պատմում է, որ գորտնուկներ լինում են ոչ միայն ձեռքերին, այլ նաեւ՝ դէմքին, ծնօտին, շրթունքներին, վզին: Նա հիւանդին զննելուց յետոյ բուժման է կանչում Կիրակի, Երկուշաբթի, Երեքշաբթի օրերին: Հիւանդից պահանջում է մէկ թեյի բաժակ խաղողի քացախ, երեք գլուխ կարմիր սոխ, վիրակապ ու բամբակ: Ըստ նրա՝ այդ ամէնը պէտք է լինէր հիւանդի շեմից, որպէսզի հիւանդը շուտ լաւանար: Չորեքշաբթի օրը գլուխ սոխը քացախի հետ ճզմելով պատրաստում էր խիւս, պահում երեք օր: Հիւանդին կանչում էր Կիրակի առաւօտ շուտ՝ մինչեւ արեւածագ: Բուժողը վերցնում էր պատրաստած խիւսը քսում ամէն մի գորտնուկին առանձին-առանձին (կարող էր 10-30ը լինէր, նոյնիսկ աւելին): Շշնջում էր «Հայր մեր»ը, յետոյ, ամէն մի գորտնուկի վրայ քսելիս, ասում՝

Եա Տէր Աստուած, փրկի
Քո կամքով լինի
Քո օրհնութեամբ փրկուի….

Յետոյ փաթաթում էր բամպակով, կապում վիրակապով: Երեք օր հիւանդը չպիտի բացէր ձեռքերը եւ չօգտուէր ջրից: Երեք օր անց արեւմուտին (ժամը 5ից յետոյ) հիւանդը գաղտնի պիտի քանդէր վիրակապը, թաղէր հողի տակ, որ ոչ ոք չտեսնէր: Ըստ բանասացի՝ թաղելով վիրակապը՝ թաղում էր նաեւ գորտնուկը: Եթէ հիւանդը չունենար հաւատ, ճիշտ ցոյց չտար մայր գորտնուկի տեղը, ապա չէր բուժուի: Անդրանիկը մօտ հարիւրից աւելի հիւանդներ է բուժել, որոնք իր օճախ են մտել ներշնչանքով ու հաւատով: Սովորաբար գորտնուկի բուժման նպատակով ասուած աղօթքները կապում են լուսնի նորելու հետ, որի ժամանակ հիւանդն անուղղակիօրէն խոստանում է զոհաբերութիւն (հրաժարւում է որոշ ուտելիքներից՝ միս, կծու կերակուր): Նմանողական հմայութեան եղանակով գորտնուկները կը վերանան այնպէս, ինչպէս աղն[22] է հալւում (աղօթելուց յետոյ աղը թաղում են երկու ճանապարհների խաչմերուկում):

Ներշնչանքով ու հաւատով բուժուող հիւանդութիւններից է նաեւ մոլոքորը: Բուժողը (Ջիւանի ժառանգները) սոված ժամանակ ջուրը առնում է բերանը եւ փչում հիւանդի վրայ: Հիւանդը մի քանի «բուժումից» յետոյ լաւանում էր եւ իր օրինանքով, բարեմաղթութիւններով յայտնում իր շնորհակալութիւնը:

Սասունցի Սերոբը (ծնուած՝ Սասունիկ գաւառի Հռութ գիւղում) հօրից՝ Սարգսից, ժառանգել էր մարդկանց բուժելու հմտութիւնները: Սարգիս պապուն երազ էր եկել, որ ինքը թքի միջոցով կարող է բուժել «մրջնբոյն» (մաշկային հիւանդութիւն) հիւանդութիւնը: Վէրքը ձեւով նման է մրջնբոյնի: Եթէ հիւանդը շուտ է դիմում բուժողին, ապա այն միքանի յաճախումից յետոյ անցնում է, իսկ չանցնելու դէպքում շարունակում է այցելել «բժշկին»: Ըստ բանասացի՝ «բուժողը» պէտք է անօթի (սոված) ժամանակ թքէր վէրքի վրայ, որպէսզի թքի բաղադրութիւնը չփոխուէր եւ մտքի մէջ արտասանէր.

Էրեթիկը կըթիկ մըրթիկ,
Էրեթիկը ջուր կը կրայ,
Մրջոյնիկի բոյն կը շինայ[23]…

Բանասացը յիշում է, որ իր հայրը հիւանդից պահանջում էր թէկուզ մէկ արծաթէ դրամ, որպէսզի հիւանդութիւնը շուտ անցնէր: Դեղնախտ հիւանդութիւն էր բուժում գիւղում շատ յարգուած ու սիրուած քեռի Աբրահամը (Աբրահամ Արոյի Օհանեան, ծն.՝ 1915, Արեւմտեան Հայաստանի Սասունի Խանըք գիւղում): Մեծ Եղեռնից մազապուրծ նրանց ընտանիքը տեղափոխւում է Ղամշլի, Սիրիա: 1946ի հայրենադարձների առաջին կարաւանի հետ տեղափոխւում են Արաքս: Նա զննում էր հիւանդի վիճակը՝ ստուգում աչքերը, գոյնը, հարցնում ինքնազգացողութիւնից եւ հիւանդութեան ժամկէտից: Հիւանդի ականջը մաքրում սպիրտով, ածելիով կտրում ականջի վերեւի հատուածից այնպէս, որ չվնասէր երակը: Երբ արիւնը դուրս էր գալիս, դրանով որոշում էր հիւանդութեան զարգացումը: Եթէ արեան գոյնը փոխուած էր շիճուկի կամ նոյնիսկ արիւն դուրս չէր գալիս, ապա հիւանդը ուշացրել էր: Աբրահամ քեռին յոյս էր տալիս հիւանդին՝ ասելով, որ հիւանդը Աստծոյ օրհնանքով կը լաւանայ: Ոչ բարձրաձայն արտասանում էր «Հայր մեր»ը, ապա աղօթում.-

Սուրբ Աստուած, Սուրբ Երեզոր [եւ հզօրի աղաւաղուած տարբերա՞կ]
Սուրբ անմահ, վասնմե ողորմեա մեզ
Օրհնեալ տէր Աստուած
Տէր-տիր Աստուած, պահապան
Բերանոյ իմոյ, սլտան Սիմոն ձեզի
Սրտի պաշտպանութեան:

Բուժող աղօթքը աւարտում էր «Հայր մեր»ով:

Ժողովրդական «բժիշկ-հեքիմները» լինում էին ծեր, այրի կանայք, տղամարդիկ, որոնք իրենց աշխատանքի դիմաց վարձատրւում էին մթերքով, այլ ու այլ նուէրներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Աւանդական կենցաղին ներյատուկ սովորոյթների, ծէսերի, հաւատալիքների որոշ բաղադրիչներ դեռեւս պահպանուել են հետազօտուող ներէթնիկ խմբերում. հարսանիքների ժամանակ հարս ու փեսայի կողմից կարկանդակները միմեանց երեսին քսելու, հարսի ծաղկեփունջը դէպի չամուսնացած աղջիկների խումբը նետելու նորամուտ կենցաղավարմանը զուգընթաց պահպանուել են նաեւ հարսի տնից մակարապետին հաւ նուիրելու, հարսին զգեստաւորելու (հարսանեկան երգերի ուղեկցութեամբ), որոշ խմբերում հինա դնելու պարագան, օրինանքներով ու բարեմաղթութիւններով, լաւագոյն խորհուրդներով ու կենացներով ճանապարհելու սովորոյթները:

Բանասացները մինչեւ այժմ էլ յիշում են իրենց ծննդավայրի ամուսնա-հարսանեկան սովորութիւնները, իհարկէ, դրանք քիչ-քիչ մոռացւում են եւ իրենց տեղը զիջում եւրոպական նորամուտ սովորոյթներին՝ որոշ բաղադրիչներ պահպանելով հանդերձ: Նոր ժամանակներին համահունչ մտածելակերպն է, որ երիտասարդներին մոռացնել է տալիս ծնողների ապրած ու որպէս յուշ մնացած ամուսնական աւանդոյթները:

Անձնական ազգագրական դիտարկումներից ելնելով՝ կարող ենք ասել, որ այսօրուայ Արաքսը իր բնակչութեան բազմատարր կազմով, իր մշակութային հարուստ արժէքներով ազգագրագէտների համար ուսումնասիրութեան իւրօրինակ դաշտ է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Հայկական Սովետական Հանրագիտարան, Հտր. 1*, Երեւան 1974, էջ 704:

[2] Գ. Դաւիդովա (դաշտային ազգագրական նիւթ՝ այսու ԴԱՆ), տետր 1: Շոլկ են անուանել գիւղը (շոլկ բառը ռուսերէն նշանակում է մետաքս):

[3] Արեւելեան Հայաստանում հարսանիքին նախորդող Ուրբաթ օրը սովորոյթ կար ցուլ մորթել, նոյնը տե՛ս՝ Զ. Խառատեան, «Եզ Մորթելու Սովորոյթը Եւ Փեսան Հայոց Հարսանիքում», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, Երեւան 1991:

[4] Վերը նշուած ծէսերի մասին մեզ պատմեց Հերիքնազ Գրիգորեանը (90 տարեկան, պապերը՝ Բիթլիսի Նահանգի Մուշ գաւառի Առնիստ գիւղից):

[5] Բանասաց Հայկուշ Գէորգեան (պապերը՝ Կարս քաղաքից):

[6] Լ. Մ. Վարդանեան, «Տղամարդկանց Տարիքային Խմբերի Աւանդոյթները Հայերի Մէջ (19-րդ Դ. Վերջ-20-րդ Դարի Սկիզբ)», *Հայ Ազգագրութիւն Եւ Բանահիւսութիւն*), *Հտր. 12,* Երեւան 1981:

[7] *ԾԽ.*- Հաճընի բարբառում էլ հարսանիքը կոչւում է հաշնիք: Նիւթը պատմեց Այգիւլ Շահբազեանը՝ ծնուած Սպահանի Քոնարք գիւղում:

[8] *Հայոց Լեզուի Բարբառային Բառարան, Հտր. Ա,* Երեւան 2001, էջ 418:

[9] Բանասացները շեշտում էին, որ Հալէպի, Դամասկոսի լաւագոյն ոսկերիչները հայերն էին եւ նրանց պատրաստած պերճանքի առարկաները շատ յարգի էին եւ մեծ համբաւ ունէին Սիրիայում:

[10] Նիւթը պատմեց սիրիահայ Մարի Կարապետեանը (75 տարեկան, Դամասկոսից):

[11] Նիւթը գրի առանք Գիւլի Յովհաննիսեանից (ծնունդով՝ Սասունից):

[12] Հարցազրոյց Ռ. Ներգարարեանի հետ, ով պատմել է իր հարսանիքից (1986):

[13] Բանասաց Ն. Խուդոյեան (ծն. Բիթլիսի Նահանգի Հազգօ-Խաբլջոզ գաւառակի Շալմօ գիւղում):

[14] Նիւթը գրի առանք Խազալ, Խանում Կարապետեաններից (ծն.՝ Ղամշլիից):

[15] Հաւանաբար այս ծէսը նոյնացւում է աղբիւրի մօտ սիրահետող տղայի կողմից աղջկայ սափորը կոտրելու հետ, որը համարւում էր զոհաբերութիւն սիրոյ աստուածուհի Աստղիկին եւ նուիրաբերւում տնարարութեան աստուածուհի Նանէին:

[16] Ըստ ազգագրագէտ Գ. Շագոյեանի *(«7 Օր, 7 Գիշեր» Հայոց Հարսանիքի Համայնապատկեր*, Երեւան, 2011, էջ 195) խաչը եկեղեցական ծէսերի պաշտօնական վկան է, որը պսակադրութեան ողջ արարողութեան ժամանակ բռնած պահում են նորապսակների գլխին: Խաչն ու թուրը (դանակը - Գ.Դ.) այս ծէսում նոյնական են, երկուսն էլ՝ չարխափան:

[17] Նիւթը՝ ըստ բանասաց Գեղեցիկ Նազարեանի:

[18] Էդուարդ Աղայեան, *Արդի Հայերէնի Բացատրական Բառարան*, Երեւան 1976, էջ 1126:

[19] Աղայեան, էջ 1225:

[20] Նոյնը տե՛ս՝ Ե. Լալայեան, *Երկեր, Հտր. 1*, Երեւան 1983, էջ 344: ժողովրդական այս աղօթքներում Յիսուս Քրիստոսը ընկալւում է երկու անձ՝ Յիսուս եւ Քրիստոս:

[21] Այս աղօթքը գրառել ենք Սումբուլեան Ագնէսից, որը սովորել էր իր մօրից՝ Յակոբեան Գինոյից: Այստեղ «Հասէք հուսէք իմ ծիրաններ» տողը չկարողացանք լուսաբանել, այն մնաց անհասկանալի:

[22] Աղն ընդհանրապէս ունի ախտահանիչ, հակաբորբոքային, արիւնահոսութիւնը դադարեցնող յատկութիւններ, եւ այն օգտագործում էին որպէս պաշտպանողական միջոց: Աղն երկու ճանապարհների խաչմերուկում թաղելը կրկին պատահական չէ, քանի որ այս դէպքում հիւանդութիւն ուղարկող, բերող ոգու ետդարձի ճանապարհը խճճելու հետ էր կապւում:

[23] Նոյնը տե՛ս՝ Ս. Յարութիւնեանի *Հայ Հմայական Եւ Ժողովրդական Աղօթքներ*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2006, էջ 103:

ARAX VILLAGE: AN ETHNOCULTURAL DESCRIPTION
(Summary)

GALYA DAVIDOVA
galya.davidova.60@gmail.com

This article describes some of the wedding rituals of the interethnic groups (Syrian Armenians, Persian Armenians, Armenians from Vayk, Jajur, Mush, Sasoun...) living in the village of Arax in Armavir District. These rituals existed till the 1980sand were as follows - Syrian Armenians used henna, while Persian Armenians cut up a sugar loaf and gave it to people at the engagement. This review is also about those having "house saints" and "naturally gifted ones" (healers, those who cure one's fear by exorcism, etc.) and about popular knowledge and irrational treatment.

The ethnographic review shows we may say that Arax, with its multilayered population and rich cultural values, is a unique field of research for ethnographers.

ONCE UPON A TIME IN DERSIM: OUT OF ARMENIA, BACK TO KURDISTAN?

CARLOS ANTARAMIÁN
cantaramian@gmail.com

The city of Tunceli (25,041 inhabitants) is the capital of the province of the same name (82,100 inhabitants). Before 1936, this region was called Dersim, and the Kurds and Zazas living in this eastern area of modern-day Turkey still use this name. The area has been a bulwark of Kurdish-Alevi identity since the Turkish Republic's proclamation in 1923, and it still is. During the Ottoman period, Dersim was a district (*sanjak*) of the province of Mamuret-ul-Aziz, or Harput (1879-1923). Before the Armenian Genocide (1915-23), over half the population of the southern part of this district, which was then independent and called Charsanjak, was Armenian, while the number of Muslims and Christians fluctuated from town-to-town. Perri, for example, was 79 per cent Christian, while Pertek (Pertag) was 84 per cent Muslim.[1] This basically rural area was marked by a symbiosis that emerged among nomadic Kurds who pastured animals in the highlands, Dersim itself, and Armenian farmers settled in the lower reaches of Charsanjak, though antagonisms and disputes were surely far from absent.[2] Once most of the Christians had been deported or exterminated, the few survivors - mostly women and children - were diversely assimilated into a kind of battleground between Turkish and Armenian political elites who vied to "appropriate" or "recover", as the case may be, those small malleable minds.[3] Many orphans were taken in by Kurdish families, a fact attested to by many testimonies written or narrated by Armenians who managed to escape or chose to become refugees beyond the Ottoman Empire's borders. Others, too numerous to count, either had no chance to escape or opted not to. They stayed on, evidently converted to Islam and assimilated their new Turkish, Kurdish or Alevi identity. As Üngör wrote (2015), some women turned to prostitution, a few of them becoming quite wealthy and famous, like Madame Fexo in Diyarbakir. Others kept their identity secret, awaiting more propitious times when they could tell the story of their Armenian past to their children and grandchildren.[4] This secrecy spawned the existence of crypto-Armenians (hidden Armenians), some of whom later chose to salvage their ancient stigmatized identity.

Some children turned into orphans as a result of the Genocide managed to escape and reach the refugee camps set up for them in Syria or Lebanon or Iraq. Though they later dispersed far and wide, some wrote memoirs or presented other kinds of accounts, all of which emphasized the fury with which many Kurds had participated in the massacres. But other Armenians,

especially those from Dersim, affirmed that had it not been for the help of Kurdish families who took them in during the most savage moments of the Genocide and its aftermath, they simply would have perished.[5] Two sides of the same coin.

In 2015 a kind of pilgrimage mixed with academic curiosity led me to Dersim, in what is now Turkish Kurdistan, the town from which my grandfather had fled 100 years ago, never to return. In fact, no member of my family ever managed to return until my trip. This article presents reflections on my encounters with people living there today, the search for my "grandfather's house", and the transformations that my concept of "return" underwent. My grandfather never wrote and hardly ever spoke of his life before coming to Mexico in 1923; the definitive impediment caused by the experience of a trauma was so great that he had lain a heavy shroud over his life as a survivor of genocide. But he did recount small, unconnected vignettes, a fragmented version of his life before, during and after the massacre of his family in Hoshe, a hamlet across the river from Perri, a small town in the Charsanjak district in 1915, but now part of Dersim (Tunceli).

DERSIM

After a short period of fieldwork in Istanbul, where I arrived on April 24, 2015, to describe the centennial commemoration of the beginning of the Armenian genocide, I traveled with a Turkish friend who was also interested in the Dersim region. Lisa wanted to interview militants of the Peoples' Democratic Party (*Halklarin Demokratik Partisi*, or HDP) to complete her vision of the phenomenon the party was generating in the build-up to legislative elections scheduled in less than a month, on June 7, 2015.[6] The HDP was led by two Presidents: Selahattin Demirtaş, a Kurdish leader of Zaza origin who is currently in prison, accused of "terrorism",[7] and the socialist Figen Yüksekdağ. In addition to upholding the principle of women's equality, the HDP supports minority rights (one especially active member is Garo Paylan, of Armenian origin and a member of the Turkish parliament). In fact, 10 percent of the party's quotas for congressmen is destined for the LGBT community, a rather remarkable - even vanguard - fact in a conservative country like Turkey.

Though Lisa is from a conservative family that doubts the veracity of the Armenian genocide, she had a liberal education and is in contact with Turkish, Kurdish and Armenian human rights groups inside and outside Turkey. Thus, like 30 percent of all Turks (including the HDP), she recognizes that the process of exterminating the Christian population that began in 1915 was, beyond doubt, genocide. She had kindly set up our itinerary and contacted people in towns that we both were anxious to visit.

In Tunceli, she was in touch with Mihran, founder of The Union of Armenians of Dersim, but he was out of his office when we arrived. While waiting, we sat down for a cup of tea in one of the always-packed cafés. Lisa's conversation with other customers revolved around my obviously foreign appearance and the reasons for our journey to a place so far off the tourism trail. She explained that I was born in Mexico but that my grandfather was from Dersim, had survived the massacres and been exiled. She told them I wanted to visit my grandfather's hometown and try to locate the house where he had lived. Just then, a young man of perhaps 24 approached from a corner of the café, a mixed expression of sorrow combined with thanks to Allah on his face. He said, "I help you", in broken English, and then said that he bore a heavy burden... horrible, he went on... "bad karma". He explained that he knew that his forebears had killed Armenians and said it weighed heavily upon him and his family. He said he regretted it and wished to atone by helping me. Other customers also admitted that their parents or grandparents recalled the massacres of Armenians.[8]

Once informed as to the purpose of our trip, Ukber asked us to wait. He returned shortly with his car and for the next three days served as our guide and driver, as we talked incessantly. He never let us pay for meals or gas, but drove us to his hometown in the nearby mountains and explained his origins. My ancestors, he said, "... *left Babylon when Cyrus invaded, fled to the Caspian, then arrived here, a long, long time ago; we're Kurds, but speak another language, distinct, called Zazaki*". The mythical origin of the Zazas is actually the fall of Babylon (539 A.C.). According to linguists, groups like the Gorani still exist quite close to the Zazaki in Gilan province in northern Iran. But Zaza identity is complex and not well-defined. Some call themselves Kurds-Alevis, others Alevis, still others, Dimilis. Most live as shepherds or farmers in rural areas; it is a society strongly tribal in nature, with powerful clan leaders. One factor that unites Zazas and Kurds in this part of Turkey is that as members of the Alevi religion (considered by some a branch of Shi'ism), they have been persecuted throughout their history by the Sunnis, from the harsh repression that began in the 15th century to recent attacks, especially after the establishment of the military dictatorship in 1980.[9] For several years, the Zazas themselves, and scholars who study them, have been piecing together a clearer identity, a process of the never-ending imagined construction of a nation. Ukber, I must say, had this identity clearly delineated.

While we were on our third cup of tea, courtesy of some other customers - manifestation of the ritual of giving that is so widespread in the "East" - Mihran arrived and quickly organized a series of trips for the coming days to introduce us to other "hidden Armenians". He also contacted folks in Perri,

my main destination. Our dialogue with Mihran was somewhat stilted due to our modest knowledge of Armenian. Both of us were studying it at the time, never having had the opportunity to learn it under regular circumstances- me, because I grew up in a small Armenian community with no educational structure; he, because he lived in a State that had exterminated, assimilated and banned the language, while stigmatizing all things remotely Armenian. Kurdish by birth, Mihran knew from a young age that his grandparents were Armenians and, when older, decided to publicly manifest his hidden identity. Ever since, he has devoted his time and energies to identifying vestiges of Armenian architecture in the area and searching out hidden Armenians, whom he urges to learn Armenian using the glossaries he publishes. He and other ex-crypto-Armenians organized The Union, and he travels constantly to the Armenian Republic searching for clues to his origin. His activism is admirable, especially in a State that deems such 'deviations' affronts to "Turkish identity".[10] He could be arrested and tried under Article 301 of the Turkish criminal code, which penalizes: "attacks against 'Turkishness'". But in Dersim, the Alevi, Zaza, Kurd and crypto-Armenian populations have battled 'Turkishness' and all attempts to achieve a uniform, Turkish identity, at least since Turkey began its campaign of forced 'Turkification'.

THE CLIFFS OF HOZAT: "WE [THE ARMENIANS] WERE THE TURKS' LUNCH; YOU [THE KURDS] WILL BE THEIR SUPPER"

The repression that Kurds and Alevis in Dersim recall most clearly occurred in 1937-38. At one point Mihran's planned explorations took us to Hozat, an ancient, predominantly Armenian town today inhabited almost exclusively by Kurds-Alevis, like the rest of that province. On walls along the main street near the town hall we saw a photographic exposition on the Zaza revolt against the Turks. Angered by the proposal to change the town's name from Dersim to Tunceli in 1936, a group of notables wrote a letter to the local governor to manifest their opposition to the change; the emissaries who delivered that message were summarily executed. The leader of one local clan, Seyid Reza, united several other clans in a rebellion against the Turkish government. The response from Atatürk was swift: he deployed 25,000 soldiers supported by aerial bombardments to stamp out the uprising. Those troops included Turkey's first woman combat pilot, the adopted daughter of Atatürk and Armenian orphan, Sabiha Gökçen.[11] During peace negotiations, Seyid Reza was arrested and hanged in Elazig (the ancient capital of Harput). Repression continued, finally costing 40,000 lives.[12] "*It was genocide, just as [the killing] of the Armenians was genocide,*" Mihran told me. In one of my interviews in another town in Dersim, I heard an anecdote that an Armenian had narrated before leaving in 1919: *"We [the Armenians] were the Turks'*

lunch; now you [the Kurds] will be their supper". Guided by Mihran, Lisa, Ukber and I visited several other towns, saw their crumbling churches, and met other hidden Armenians. I was surprised to find that whenever we asked about a particular Armenian, everyone seemed to know which family she/he was from and which individuals were Armenians. It thus seemed that their concealment was hardly effective, perhaps not even necessary. Close to Hozat, Mihran showed us the Kayişoğlu cliffs, where many Armenians from the region were thrown to their death in 1915, as were numerous Zazas later during the 1938 rebellion. In recent years this is the place where Mihran and other Armenians of The Union commemorate the dates of April 24th and May 4th, the latter for the 1937-1938 uprising. It has, thus, been re-signified as a site to honor the memory of the martyrs of both massacres.

THE RETURN TO HOSHE

After visiting Perri (today, Akpazar) we came to Hoshe, the cradle of my family and the starting point of an odyssey charged with deep suffering. In his *History of Charsanjak*, Kevork Yerevanian describes this town in detail, its more than thirty springs, its fertile soils and beautiful willow trees, its church and, to one side, the school for 60 students built in 1909 with remittances from migrants in the US, and the *K'arin Vray*, an unfinished, 500-meter-long wall that surrounded part of the town. Inside that wall, I learned from this author - not from my family, for they did not know - was the orchard of one Antranig Antaramian, my great-grandfather. In 1915, the town had 219 inhabitants, all Armenians, including Antaramians (35 members), Hovsepians (30), and Zurnajians (25), plus 11 other families.

In 1915 Hoshe had 28 houses, but today there are only twenty modern homes. Still standing are a similar number of Armenian homes, but they are all abandoned and, truth be told, barely vestiges, for their roofs, windows and doors have disappeared, though their walls still watch over the evidence of a criminal episode. Today's Alevi residents decided to conserve those ruins as a sign of respect, though, as they said, "*Those houses are accursed, so we don't live in them*". Instead, they built new dwellings. One resident, Kaya, invited us to talk in his garden. While this sixtyish farmer set tea and fruit on the table, he began to tell me his story... his livelihood, the weather, and the bridge that once connected the town with Perri but vanished in 1926. We could not see its ruins because the government had later constructed a dam (the Keban Dam, 1975)[13] to control the river's course. Today, it looks more like a small lake.

I asked Kaya if he knew whether any of those houses, abandoned before 1915, belonged to Armenians. After listening closely to Lisa's Turkish translation, he answered in a melodic, almost poetic, voice: "*Not just the*

houses... but also the trees, rocks, the river, everything there was Armenian. We arrived long after, my father and family. We were Alevis. The town had been abandoned for a long time; we knew they had been killed, and that's why we don't live in their homes, [rather] we built new ones, but we did occupy and cultivate their fields". He explained that the Turkish government had moved his family to this town from the east, near Van,[14] to re-populate these devastated lands. In the 1920s and, especially the 1930s, which brought the resettlement law of 1934, the Kemalist regime effectuated large-scale movements of whole population groups - Turks, Kurds, Circassians - to occupy the homes left behind by massacred Armenians, Greeks and Assyrians. The goals were not only to wipe out all traces of their presence and reactivate local economies, but also to 'Turkify'[15] the recently-arrived immigrants. Relocation, it was hoped, would weaken their attachment to their places of origin, while intermixing with other Muslim ethnicities would force them to use the Turkish language to communicate, leading to the elimination of their "foreign tongues" which, by then, had been prohibited. In that year, a famous phrase was coined: "*Ne mutlu Türküm diyene*"[16], which meant that the Kurds ceased to be Kurds and became "mountain Turks". All references to Kurdistan were prohibited.

Kaya recounted how his father had succeeded in reactivating the fields, even reviving the old "Armenian" vineyards that he still cultivates. This comment by our host provided the opportunity to tell him that my grandfather had been born in that town. As if he had anticipated what was coming, he opened his eyes, nodded his head, and then spoke slowly. His sincere words came to me through our translator. At first, I felt consternation ... then felt petrified, for he said: "*I was expecting... well... maybe not you specifically, but I knew that someday a descendant of the Armenians who lived in those houses would return... Welcome!*" He arose from the small bench where he was sitting, shuffled forward and embraced me...

Everyone gasped, and exclamations charged with emotion and surprise rang out to accompany that incredible instant, a tiny universe with an Armenian-Mexican whose forefathers were from that very place, a Zaza, an Alevi, a Turk, and an elderly crypto-Armenian... together... sharing a spellbinding moment of trans-generational reconciliation.

But the chat/interview proceeded in ever more unexpected directions: "*Come back*" - Kaya said - "*We'll see the mayor and have the house put in your name. If your grandfather was from Dersim, then you, too, are from Dersim; come back to Kurdistan*". His words and the moment I was living left me in shock; had I in truth received a genuine invitation to return to my family's place of origin, the one I had for so long imagined through family

narrations, reinforced by a collective memory that idealized that place? This was the *yerkir*, the usurped Motherland whose recovery was, and still is, impossible, for it is occupied by an uncompromising government. Suddenly, unexpectedly, Kaya's voice had opened the window to a return long dreamt of by two generations of Armenians, a remote possibility to be sure, but one nevertheless real; at least, that was what went through my stunned mind at that moment. For this was no small thing; somehow, the possibility of an actual return had emerged in the form of an invitation from the man who held the land that my grandfather had called "home".

That instant changed many of my ideas and reflections on what "return" means deep down, for the idea of going back, standing again in one's place of origin, is one of the most important elements in the mindset of all human groups that have lived as diasporas.

Perhaps the most widely-studied of these phenomena, due to the enormous number of people and different historical periods involved, is the *Aliya*; that is, the return of the Jewish people form diaspora to the State of Israel. This term captures a voluntary migration motivated by emotional, practical or ideological factors. Without doubt, it is also closely intertwined with the concept of pilgrimage. For many religious Jews, the return to Zion is an obligation with which they must comply, and even when that obligation is not fulfilled completely, there exists a real commitment to supporting those Jews who need to return because of harsh economic conditions or imminent peril. In fact, almost all such waves of immigration responded to periods in which distinct diaspora communities faced serious hardships, for example, the Holocaust, anti-Semitism in many Arab countries and Iran or France, and the disintegration of the Soviet Union, which generated large flows of returnees. For certain Jewish thinkers, *Aliya* means the end of the diaspora, especially among some ultraorthodox Jews, who consider that the diaspora must continue until the reappearance of the Messiah.[17] Despite this, over three million diaspora Jews have returned since 1948 with the material aid of Jewish diaspora organizations and the State of Israel.

Other groups, including descendants of displaced Africans, have elaborated a similar political idea of return, or repatriation, to the African continent in distinct periods and with differing ideological constructions. This began with the forced returns organized by colonial powers - as in Sierra Leone in 1787 - whose underlying goal was to "get rid of" the "Negroes" that England no longer wanted on its island territory. Later, voluntary returns and other actions organized by pan-African movements took place: one to Liberia led by Marcus Garvey, and the messianic movement built around (and supported by) the figure of Haile Selassie, which aimed to bring the Rastafari home to Shashamane (Zion) in Ethiopia.[18]

But in contrast to those returns, the Armenians had been expelled from their ancestral home, some of the survivors carrying Ottoman passports bearing the legend: *"With no possible return"*. But we must also emphasize the fact that Turkey has never recognized any right for Armenians to return to their hometowns, though the ten percent of historical Armenians that escaped extermination and destruction to witness the birth of the Republic of Armenia - originally independent (1918-20) and autonomous, later part of the Soviet Union (1920-91) - did succeed in generating among the victims of diaspora the idea that a return was feasible, an idea nourished in certain moments by the Soviet State and some diaspora organizations. The *Nerkakht* movement, as this great repatriation is known, arose between 1946 and 1949 to promote the "return" of Armenians to Soviet Armenia from the diaspora. I use quotation marks because all those Armenians were born in the Armenian provinces of the Ottoman Empire, or in Cilicia on the Mediterranean coast, for as we saw in the cases of the Jews and descendants of dispersed Africans, constructing the idea of return may center on a mythical place, not necessarily the site where one's direct ancestors were born. Clearly, places like Jerusalem and Africa became vague, diffuse ideas 1500 or 300 years after being abandoned, but the concept of them is still a key element in the discourse among people who live such dispersions. The case of the Armenian return in the 1940s is distinct, for only 30 years had passed since their exile, so images of the *yerkir*, the homeland from which they had been forcibly expelled, were still very much alive. But at that time Eastern – Soviet - Armenia was the only place they could call Armenia, and it opened its doors wide.

Although *Nerkakht* was in many regards misleading and proved to be a great disappointment for the "westernized" returnees,[19] the dream of returning to Armenia lived on, though diluted, little by little, because Armenia was on the other side of the "Iron Curtain". But after 1991 and the re-emergence of an independent Armenia, the idea of returning was revived,[20] and the resulting waves of migrants increasingly came to resemble those of *Aliya*, as people reacted to crises in nations with Armenian communities, to the war with Azerbaijan and the flow of Armenians from Baku (1988) and other parts of Azerbaijan, and to the war in Syria and the influx of Armenians from Aleppo (2014). Unfortunately, the harsh economic and political conditions in Armenia have caused people to emigrate rather than immigrate, including newcomers.

But many Armenians, not only exiles and their children but also the third generation, especially in the 1960s and 70s, held that the "true return" would be to "Western Armenia", the territories from which their forebears had been expelled. To a degree, this return was a kind of myth that would

have to await some type of liberating event, perhaps the disintegration of the Turkish State and the recovery of the Armenian territories. Others believed in the emergence of some sort of federation that would succeed in transforming the Turkish government's policies towards its minorities, offer Armenians some type of compensation, and free them to pursue repatriation. Both scenarios were remote possibilities given the political posture of Turkish governments, both then and now, but the myth remains latent. Today, few believe it would be possible to abandon their lives in the West and go to live in a place in central Anatolia; thus, I understood that Kaya's offer was symbolic in nature, as if he were saying: 'I know it would be hard for you to return, but you can do it'. At that moment he reached for a bottle of wine, "*This comes from the vineyards here; perhaps they belonged to your family; take it to your father*". I drank of that wine to his health, our health, to this space we shared.

Our chat came to an end, and as darkness descended upon the landscape, I walked towards the river. My companions had left me alone, for it was clear that I wanted a moment of solitude in this place. The view of Perri and the slopes of Mount Arkaj were illuminated by the faint glow of electric lights, while the clouds, in contrast, reflected the last rays of sunlight.

Ստացայ Մարտ 26ի գիրդ, սակայն դեռ չհասաւ Le Bonի գործն: Յուսամ թէ "Արծրունի"ի ծրարներն ղրկուած են տրուած հասցէներուն, յաւելլով անոնց կողքին վրայ գրուելիքն: Ըսէք խնդրեմ Ձեր կարծիքն այս տետրակի նկատմամբ:

Տիար Յ. Իսկէնտէրէ նամակ առի, կը ցաւիմ որ Հ.Բ.Ը.Միութեան համար տեղւոյդ մէջ մասնաճիւղ մը կազմելու գործին գլուխ կենալ կը մերժէ: Այս առաջարկն ըրի՝ նախ իր այդ գործին համար աշխատակցելու Ձեզ ըրած

խոստումէն քաջալերեալ, եւ երկրորդ Պօղոս փաշային առաջարկութեամբ: Աւասիկ իրողութիւնն: Փաշային հետ մասնախումբերու կազմութեան համար գրուած միքանի նամակաց եւ մանաւանդ տիար Էգնայեանին ղրկուածին անպատասխանի մնալու մասին խօսելով՝ ըսի թէ՝ իցիւ թէ տիար Յ. Իսկէնտէրի ղրկէինք Փարիզի մասնաճիւղի համար գրուած նամակն. փաշան անմիջապէս խօսքս ընդհատելով ըսաւ, «այո՝ ես զայն կը ճանչնամ, շատ ազգասէր ու ազնիւ մարդ է, ստէպ հայրս տեսնալ կու գար, ան մեր գործն կը տեսնար»: Այս խօսքերէն քաջալերուած ըսի թէ «կը թոյլատրէ՞ք որ մասնաճիւղի կազմութեան համար տիար Իսկէնտէրի գրենք անցեալ տարուան ղրկածնուս նման», ըսաւ «այո, եւ անմիջապէս»: Ուստի եւ անցեալ տարուընէ ստորագրուելով մնացած միակ գիրն փաշային հաւանութեամբ իրեն ղրկեցի:

- Այս խօսակցութեան ատեն չյանդգնեցայ Ձեր անունն առաջ քշել, մանաւանդ որ գոնէ անգամ մը իսկ դիտած չէր զՁեզ:

- Այս իրողութիւնն բացատրէ տիար Իսկէնտէրի, արդէն ես ալ պիտի գրեմ, ու համոզէ զայն որ գլուխ կանգնի այս գործին, եւ Ձեր ու մեր խումբերու աջակցութեամբ կազմէ Փարիզի մասնաճիւղն:

- Մենք ամենքս լաւ ենք: Քեզ պէս մերիններն Պուլկարիա կը մեկնին գուցէ անկէ Օր. Հարենց[32] Փարիզ գայ:

Աիմէտ Րիզան ինձ նամակ մը գրած է, շատ փափուկ է դիրքս, պէտք է այնպիսի նրբութեամբ պատասխանել որ մեր վրայ որեւէ պատասխանատուութիւն չբերէ:

Յարգանօք ողջունելով զՁեզ եւ Ձերիններն մնամ Ձերդ

Տոք. Ն. Տաղաւարեան

Ը.

Ի Գահիրէ 24 Ապրիլ 1907
5 Rue Faggalah

Ազնիւ Բարեկամուհիս,

Ստացայ ներկայիս 16 թուակիր գիրդ: Ընդունած եմ եւ Le Bonի գործն: Փոյթ չէ թէ միւս ուզած գործերս չղրկէք կամ աւելի ուշ հասնին ինձ, խնդրեմ սակայն որ Bibilothèque de Phil. Scientifiqueի շարքին Lucien Poincaréի[33] "La Physique Moderne sur Evolution" գործն ինձ ղրկէք:

Շնորհակալութիւն Արծրունիի տետրերուն մասին ձեր ստանձնած ձանձրութեանց: Կը փափագիմ որ այդ հրատարակութիւնն ծաւալի որչափ հնար է. խոհեմութիւնն կը պահանջէ որ ես երբեք երեւան չ'ելնեմ, եւ բոլոր բեռն Դուք ստանձնէք, ուստի եւ Ձեզ կը մնայ թղթատարութեան հանդիպիլ մերթ տեղեկանալու համար թէ՝ խնդրանք կայ եւ կամ որեւէ պատասխան եկած է:

Թերթերուն մէջ բան մը չտեսնուեցաւ ցարդ, "Լուսաբեր" ծանոյց միայն այդ տետրակի հրատարակութիւնն եւ ոչ այլ ինչ: Չգիտեմ ինչ ընել որ թերթերն փոքր ինչ խօսին անոր մասին. արդեօք կարելի չէ՞ որ

"Անահիտ"ին[34] մէջ անոր մասին առողջապէս բան մը գրել տաս: Լաւ կ'ըլլայ եւ կարծեմ որ 10-20 օրինակ մը Մարսիլիոյ "Արմենիա"ին ղրկէք %25 զեղչ խոստանալով գուցէ դա խայծ մ'ըլլայ: Ես դրամական արդիւնք չեմ սպասեր՝ այլ ծաւալում:

- "Լուսաբեր"ի վարչութեան կը հաղորդեմ Ձեր իղձն եւ գոհացում կը տրուի Ձեզ. կը խորհիմ միայն որ դուք հաճիք մերթ բաներ մը գրել անդ՝ գոնէ կատղեցնելու համար Լ.Բ.ն եւ իրեններն[35]:

- Կը ցաւիմ որ Հ.Բ.Ը.Միութեան համար տեղւոյդ մէջ կազմուելիք մասնաճիւղի գործն այդչափ կը դժուարանայ: Կը յուսամ թէ տիար Յ. Իսկէնտէր իմ իրեն ուղղած վերջին նամակէս ազդուած է, եւ Ձեր կողմանէ փոքր ճիգ մը զայն ի գործունէութիւն պիտի մղէ: Առ այս Ձեր յուսատու լուրերուն կը սպասեմ:

- Վերջապէս Ահմէտ Րիզային նամակին պատասխանեցի, բառերով, ուռուցիկ խօսքերով լեցուն անիմաստ գիր մը ուղղեցի. ուրիշ կերպով չէի կրնար ընել, թէ մի գուցէ այդ թուղթս իրենց համակրական եւ կամ աւելի հետեւելու պաշտօնական խոստում համարին: Տեսնալուդ իրենց վրայ ըրած ազդեցութիւնն տեղեկացիր ու ինձ հաղորդէ:

- Ահմէտ Րիզան ընդունելու համար մեր տունն հաւաքատեղս էին Արփիար[36] (Հին Հնչակեան), Վ. Թէքէեան[37] (քաշուած Վերակազմեալ), Նաթանեան[38] (Արմենական), Տոք. Շամլեան[39] (Դրօշակեան), Ապահ[40], ատամ[նաբուժ] Քէչէճեան[41], Ճեպէճեան[42] (նոր գործիչ Հնչակեաններ), Վ. Քիւրքճեան[43] (պահպանողական): Բնականաբար կարծիքներն այլազան էին քաղաքավարութեան կեղեւով պատեալ... եւ կը զարմանամ որ Ահմէտ Րիզան շատ գոհ մնացեր է մեր անգոյն խօսքերէն եւ խուսափողական պատասխաններէն:

- Մերիններն մեկնեցան, ես առանձինն մնացի ու կը ճգնիմ եւ կ'աշխատիմ[:]

Ջերմ բարեւներ եւ յարգանքներ Ձեզ, Ձեր ազնիւ ամուսնոյն եւ քրոջ: Ձերդ

Տոք. Ն. Տաղաւարեան

Յ.Գ.- Խնդրեմ հաճեցէք Librairie Baillier et filsի հանդիպելով հարցնել թէ՝ իրենց հրատարակած Encyclopédie agricoleի շարքէն Agricultureի[44] հատորն ե՞րբ լոյս պիտի տեսնէ. անհամբեր կը սպասեմ:

Նոյն

Թ.

Ի Գահիրէ 31 Մայիս 1907
5 Rue Faggalah

Ազնուափայլ Տիկին Զ. Տ. Եսայեան

ի Փարիզ

Ազնիւ Բարեկամուհիս,

Ձեզ յղած վերջին նամակացս պատասխաններն շատ ուշացան: Այդ գրերով խնդրած էի ի մէջ այլոց ինձ յղել օրինակ մը Bibliothèque de Philiosophie Scientifiqueի հաւաքածոյէն Lucien Poincarèի “La Physique Moderne sur Evolution” անուն գործէն: Եւ հանդիպելով J.B. Bailliere et filsի գրավաճառանոցն, տեղեկանալ թէ իրենց հրատարակած Encyclopédie Agricoleի հաւաքածոյէն “Agriculture”ի վրայ խօսող հատորն հրատարակուած է թէ ո՛չ, եթէ այո՛, թող ընդփոյթ ինձ յղեն տրցակ մը որոյ արժէքն արդէն իրենց ղրկած եմ, եւ եթէ չէ հրատարակուած՝ ե՞րբ լոյս կը տեսնէ:

Ներկայիս կը կրկնեմ առ այս խնդիրքս, եւ անհամբեր այդ հատորներն եւ կամ անոնց մասին տեղեկութեանց կը սպասեմ:

- Ձեր գրութիւններն կը կարդամ [անընթ. մէկ բառ] հանդէսներու մէջ, ինչպէս ըսած եմ՝ փափագելի է որ անոնցմէ երբեմն եւ տեսնուին "Լուսաբեր"ի մէջ:

- Տեղւոյս "Լսարան Ընթերցատան" կողմանէ հրատարակելի գրական հատորի գործն մնացած է, զի բաւական թուոք գրութիւններ չհասան:

- Հ.Բ.Ը.Միութիւնն օր քան զօր կը բարգաւաճի ու կը ծաւալի. ունիմք առայժմ 7000 եգ. ոսկի պահեստի գումար եւ ամսական 142 ոսկիի եկամուտ: Միամեայ տեղեկագիրն մամլոյ տակ է, եւ քիչ ատենէն կ'ընդունիք:

- Ի՞նչ եղաւ այս խնդրոյն մասին Ձեր ջանից արդիւնքն: Գիտէք թէ տիար Յ. Իսկէնտէր իր յոգնած ըլլալը պատրուակելով կը մերժէ ստանձնել նախաձեռնութիւնն: Կը սիրէինք որ Դուք համակիրներու խումբ մը ստեղծած ըլլայիք եւ փաշային տեղդ գալուն գործին մղում մը տայիք: Փաշային զաւակն՝ Առաքել պէյ՝ խոստացած է Փարիզ հասնելուն առ այդ աշխատիլ, անշուշտ առանձինն կարող չէ բան մ'ընել. եթէ համակիրներու խումբ մը գոյութիւն ունենար՝ անոնք կը ներկայանային եւ խնդիրն տարբեր ձեւ մը կ'առնէր: Մեր ընկերներէն Աղաթոն[45] պէյ եւ Անդրանիկեան[46] եւս Փարիզ պիտի գան եւ կ'ուզեն բաներ մ'ընել՝ սակայն առանց առաջնորդի հաւատք չ'ունիմ որ որեւէ յաջողութիւն մ'ունենան:

- Գիտէք թէ մերիններն Փիլիպէ մեկնած են եւ Պալքաններու զովութիւններն կը վայելեն, իսկ ես աստ կը խորովիմ:

- Տեղւոյս ծանօթ խառնակիչներն ամենայնիւ ընկճուած են, եւ դեռ ունին կրելիքներ:

- Րիզայ պէյ նամակաւ մը խնդրած էր որ աստ իրեն հետ բանակցող հայ երիտասարդաց խումբն իր խորհրդակցութեանց արդիւնքն իրեն հաղորդէ, այսինքն պաշտօնապէս իրեն յարի քաղաքավար նամակաւ մը փոխանցուի այդ առաջարկի մասին: Կ'երեւայ թէ գոհ չէ մնացած, մանաւանդ թէ՝ իմացած է որ մտադիր եմ Սապահէտտինի կուսակցութեան յարիլ... այս վերջին գրոյն չպատասխանեցի, թող վստահ ըլլայ թէ՝ առայժմ որեւէ խումբի չեմ պատկանիր:

- Սպասելով Ձեր պատասխանագրոյն կամ եւ մնամ յարգանօք Ձերդ

Տոք. Ն. Տաղաւարեան

Յ.Գ. Ջերմագին բարեւ եւ յարգանք Ձեր ազնիւ ամուսնոյն:

Նոյն

Յ.Գ.- Գոհ պիտի թողուք զիս եթէ հաճիք գրել Ձեր գործոց եւ առողջական վիճակի մասին:

Նոյն

Ժ.

Ի Գահիրէ, 10 Յուլիս 1907
5 Rue Faggalah (Caire)

Ազնուափայլ Տիկին Տ. Զ. Եսայեան

Ի Փարիզ

Ազնիւ Տիկի՛ն,

Շուրջ երկուքուկէս ամիսէ իվեր Ձեզ ուղղած գիրերս անպատասխանի կը մնան: Չգիտեմ ինչի՞ վերագրել պատճառն:

Կը ցաւիմ որ Ձեզ ապսպրած 3 ֆրանկնոց գիրքն (Physique Modèrne) չղրկեցիք ցարդ, եւ Agricultureի հրատարակութեան մասին լուր մը չտուիք: Այդ երկու գործերու նկատմամբ այսօր իսկ ուղղակի հրատարակչաց կը գրեմ: Ուստի այլեւս այդ ձանձրոյթէն զերծ կը մնաք:

Այս օրերս դրամական անձկութիւն ունենալուս շատ գոհ պիտի մնամ եթէ հաճիք Ձեզ տուած հինգ Անգլ. ոսկւոյ գումարն ընդհուպ ինձ հասցնել, զեղչելով անշուշտ Ձեր l'Evolution de la Matièreի, եւ Արծրունիի տետրերու առաքման համար ըրած ծախսերն:

Բարեւներ Ձեզ եւ Ձեր ամուսնոյն

Տոք. Ն. Տաղաւարեան

Յ.Գ.- Մի քանի թերթեր միայն ծանուցած են Արծրունիի տետրերն ընդունելնին, արդեօ՞ք միւսներ դեռ առած չեն:

Նոյն

ԺԱ.

Ի Գահիրէ, 1 Օգոստոս 1907
5 Rue Faggalah 5

Գերազնիւ Տիկի՛ն,

Ստացայ Յուլիս 9 եւ 18 թուականակիր գրերդ որպէս եւ առաջնոյն հետ ապսպրած գիրքս եւ ընդ երկրորդին 93 Ֆր.ի գումարն: Շնորհակալութիւն:

Վերջին նամակս սրտմտալից կը գտնէք, անշուշտ դա եղած չէ նպատակն, միայն գուցէ փոքր ինչ չոր ոճով գրած ըլլամ իբր հետեւանք փոքրարժէք գրքի մը համար 2,5 ամսուան սպասման, եւ յուսամ թէ՝ Դուք զձեզ իմ տեղս ինքնադրելով կ'արդարացնէք զիս:

Mr. Cilliere[47] կարծեմ ցարդ բան մը գրած չէ տեղւոյս հիւպատոսին, զի այս խնդրոյ մասին Mr. De Reffyի գրած թուղթս անպատասխանի մնաց:

Նոր վէպիդ[48] մասին լսեցի, սակայն չտեսայ, կը շնորհաւորեմ եւ ֆրանսերէնի վաղընդփոյթ տպագրումն կը մաղթեմ:

- Ռազմիկէն[49] զատ այլու բան մը չտեսայ Արծրունիի տետրին մասին: Կովկասի եւ Ամերիկայի հայ թերթերն ու հանդէսներն պէտք էր որ հետաքրքրուէին: Տեսնանք Անահիտ ի՞նչ կը գրէ:

- Աղաթոն պէյ Զուիցերիա է եւ Անդրանիկեան աստ կը գտնուի: Պօղոս փաշան կարծեմ Փարիզ է դեռ:

Ընդգրոյս Ձեզ կը յղեմ Միութեան միամեայ տեղեկագրէն օրինակ մը: Ասկէ Անահիտին ալ ղրկուած է:

- Մերիններն գիւղէն Ֆիլիպէ իջած են: Կինս, որ ջերմէ կը տառապէր սկսած է բարելաւիլ, փոքրերս լաւ են, ես տկար եմ:

Ջերմիւ ողջունելով զՁեզ եւ Ձերիններն մնամ յարգանօք

Տոք. Ն. Տաղաւարեան

ԺԲ.

Ի Գահիրէ, 10 Դեկ. 1907
5 Rue Faggalah, Caire,

Ազնուափայլ Տիկին Տ. Զ. Եսայեան
'ի Փարիզ

Ազնիւ Բարեկամուհիս,

Ստացայ Դեկ. 2ի գիրդ: Տեղեկացած էի արդէն Պօլիս դարձիդ, նախ կը յուսայի թէ շուտով կը դառնաք, սակայն տեսնալով թէ կ'ուշանաք՝ վերջերս գրեցի Ձեր ազնիւ ամուսնոյն կարգ մը տեղեկութիւններ խնդրեցի եւ մի քանի ապսպրանքներ ըրի: Յուսամ ընդունած է գիրս:

Ես Ձեր դէմ չեմ վշտացած եւ արդէն պատճառ մ'ալ չկար, միայն նամակացս պատասխանելու եւ յանձնարարութիւններն կատարելու մասին նէկլիժանսնիդ[50] մեղադրած էի: Տեղի չկայ առ այդ անդրադառնալու:

- Առողջութիւնս բաւական լաւ է: Կինս շուրջ երկու ամիսներէ իվեր դարձած է զաւակներովս: Վերջերս փոքրներս անհանգստութիւններ ունեցան, այժմ լաւ են:

- Օր. Հարենց Փարիզ կը գտնուի, հասցէն է 3 Rue Chartilly: Պատկերնիդ իրեն կը ծանուցանեմ այս օրերս:

- Օր. Միւենտիզեան[51] կը փափագէր գալ ձմեռ մը աստ Եգիպտոս անց[ը]նել. մոռցա՞ծ է իր մտադրութիւնն: Եթէ կարելի է յիշեցէք իրեն իմ կողմանէ այս հարցումս: Թող գայ:

- Լ.Լ. ամառն Կովկաս գնաց ու ապա Փարիզ, եւ կը յուսայի թէ տեսած կ'ըլլաք զինքն: Իր թերթն փակուեցաւ. գործ չունի, անշուշտ նորանոր չարութիւններ կը նիւթէ:

- Գիտէք թէ ո՞վք են 'ի Փարիզ այդ խմբակի համակիրներն, Չոպանեանէն զատ:

- Արզուեանի[52] ու՞ր գտնուելուն մասին լուր ունի՞ք: Կ'ըսեն թէ Պոլիս է, թէպէտ ինձ անհաւատալի կը թուի: Վերջերս Պոլիսէն

դրամապահանջական գրեր հասան աստ, որք անշուշտ այդ խմբի ճիւղէն են, եւ կամ ներկայացուցիչէն: Ա[ստուա]ծ շնորհք տայ:

- Արծրունիի տետրակին սփռումն աւելի քան երբեք կարեւոր է, զի Օրմանեան Կաթողիկոսական քանտիտա[53] կը ներկայանայ, եւ իր յաջողութիւնն ապահովելու համար ամէն միջոցներ 'ի գործ կը դնէ:

- Կ'երեւի թէ այդ տետրերն Կովկաս հասած չեն: Վերջերս Կ. Բասմաջեան[54] այդ տետրերէն ինձմէ կը պահանջէր օրինակ մը ղրկեցի, այն ալ ընդունած ըլլալու չէ: Ինչ որ է, կրցածնուդ չափ աշխատեցէք որ այդ տետրակներն սփռուին ժողովրդեան մէջ:

- Եթէ տեսնալու առիթ ունենաք Ալի Րեզային, Չերազին[55] եւ Իսկէնտէրին յարգանքներս յիշեցէք:

- Ալի Րեզան իր թերթէն միշտ կը ղրկէ, շնորհակալ եմ. սակայն հայոց մասին շատ խայթող է:

- Յուսամ թէ Ձեր յառաջիկայ նամակաւ իսկ պիտի գրէք Կ. Պոլսոյ մէջ ըրածնիդ եւ անդ տեսածնիդ:

Ներողութիւն խնդրելով Ձեզ տուած [1 անընթ. բառ] համար, կը մատուցանեմ իմ եւ կնոջս ջերմագին յարգանքներն ու բարեւներն, եւ խնդրեմ որ զանոնք ներկայէք եւ Ձեր ազնիւ ամուսնոյն:

Ձերդ բարեացակամն Տոք. Ն. Տաղաւարեան

Յ.Գ.- Ընդ գրոյս թղթատարութեան կը յանձնեմ օրինակ մը այն բանախօսութենէն, զոր ըրի 'ի Լսարանս Ընթերցարանին Գահիրէի[56], Ձեր աստ գտնուած ատեն:

Նոյն

ԺԳ.

'Ի Գահիրէ, 27 Փետր., 1908
5 Rue Fagallah 5

Ազնուափայլ
Տիկին Զ. Տ. Եսայեան
'Ի Փարիզ

Ազնիւ Տիկի՛ն,

Ժամանակին ստացայ Ձեր Յունուար 8 թուականակիր նամակն եւ ղրկել տուած trousseն[57], սակայն յաջորդ օրն ճամբայ հանել խոստացած գիրքն դեռ ընդունած չեմ: Այդ առողջապահական գործն ընդունելէ ետք պատասխանելու մտադրութեամբ ուշացուցի ցարդ իմ գիրս: Մի քանի օրեր առաջ ենթադրելով թէ եկած ու թղթատարատունն մնացած է, դիմումներ ըրի, սակայն արդիւնք չունեցաւ: Ուստի եթէ ցարդ ղրկած չէք ճամբայ հանելնիդ կը խնդրեմ:

Օր. Միւհենտիզեան հոս է, երկու եօթնեակէն դէպ 'ի Կ. Պոլիս կը մեկնի, մտադիր չէ կողմդ գալու:

Պատիւ ունիմ ծանուցանել թէ՝ ամիսէ մ'իվեր աղջնակ մ'եւս ունեցած եմ ու մայրն ու նորածինն քաջառողջ են:

Լսեցիք հաւանականաբար Արփիարի սպանման մասին: Եգիպտահայն առ այս խորապէս յուզուած է: Յաւալի է որ յեղափոխական նուիրական անուան տակ ծածկուած խումբեր փոխան հայուն ազատագրութեան ջանադիր ըլլալու՝ ազգին օգտակար անդամներն ու բարերարներն մէկիկ մէկիկ կը սպանեն: Ա[ստուա]ծ շնորհ տայ:

Հաճեցէք խնդրեմ ընդունիլ իմ եւ կնոջս յարգանքներն ու բարեւներն եւ մատուցէք զայն Ձեր ազնիւ կողակցին:

Ձերդ

Տոք. Ն. Տաղաւարեան

Յ.Գ.- Անշուշտ ի Կ. Պոլիս մեր բարեկամ հիւպատոսն տեսաք. իմ մասին տեղեկութիւններ հարցու՞ց, եւ Դուք խնդիրքս պարզեցիք իրեն: Միշտ իր յանձնարարագրոյն կը սպասեմ:

Նոյն

ԺԴ.

'Ի Գահիրէ, 27 Մարտ, 1908

5 Rue Faggalah 5

Ազնուափայլ Տիկին Զ. Եսայեան

'Ի Փարիզ

Ազնիւ Բարեկամուհիս,

Ձեր Յունուարի սկիզբներն գրած նամակին անմիջապէս պատասխանեցի, ու որչափ կը յիշեմ ծանուցի Colinի աշխատանոցէն Ձեր ղրկել տուածի ստացումն, սակայն այդ նամակիդ յաջորդ օրն իսկ ճամբայ հանել խոստացած առողջապահութեան գործն չ'ընդունիլս ծանուցած էի, ու մինչեւ հիմա ալ առած չեմ: Ես միշտ յուսալով թէ ճամբան է ուղղապէս չեմ ապսպրեր: Անկէ վերջ քառթով մը խնդրած էի եւ յղեցինք la lutte contre les microbes, par le Dr. Etienne Burnet[58], Librairie Armand Colin Rue 5 Mézire 5[59] գիրքն որ կարծեմ 3 ֆր. է այդ գիրքն ալ ընդունած չեմ: Արդ՝ ենթադրելով թէ գուցէ տեղափոխութեան հետեւանօք նամակներս Ձեզ չեն հասնիր՝ որոշեցի ներկայ գիրս քենիիս միջոցաւ Ձեզ ղրկել ու խնդրեմ գրեցէք ինձ թէ՝ ընդունած է՞ք նամակներս, պատասխանած է՞ք անոնց, ղրկած է՞ք ուզած երկու գիրքերս: Եթէ այո՛ աստ խստիւ պահանջեմ, ու եթէ ո՛չ կամ հաճեցէք ընդհուպ ինձ հասցնել, եւ կամ եթէ ի վիճակի չէք՝ հոգ չէ՝ ըսէք քենիիս որ ինքն ղրկէ: Կարծեմ այս երկու գիրքերս առ առաւելն 8 ֆ. ըլլալու են:

- Մենք բաւական լաւ եմք, կինս շատ լաւ յիշատակ մը պահած է Ձեր մասին, ու ինք կը յանձնարարէ Ձեզ բարեւել: Երկու ամիս առաջ աղջիկ զաւակ մ'ալ ունեցայ, Աստղիկ-Աշխէն անուանեցինք. շատ քաջառողջ է:

- Մեր ամէնուն առողջութիւնն լաւ է, ես միշտ գիշերներն թուղթեր կը մրոտեմ, որք գուցէ օր մը իրենց ընկերներու հետ մուկերու կեր ըլլան...:

- Ա. Արփիարի սպանման հետեւանք յուզումներն դադարած չեն աստ ցարդ, եւ ընդհակառակն երթալով կը սաստկանայ, նոր բարդութիւններ երեւան կ'ելնեն, ուր պիտի տանի զմեզ այս տռամին.....

Վերջերս կարմիր տետրակ մը ձեռքս հասաւ, յորում ի մէջ այլոց Չօպանեանի՝ Վահէ Արզուեան խմբակի համակիր-աջակից, ու անդամակից ըլլալն կ'ապացուցուի. աչքերուս չհաւատացի, ու դեռ չեմ ուզեր հաւատալ, սակայն գոնէ առերեւոյթն ցաւալի իրողութիւն մը կը կարծուի... ի՞նչ է Ձեր կարծիքն առ այս: Այդ տետրակին մէջ եւ այլուր մի փարիզաբնակ Պարսամեան եւս կը յիշուի, ո՛վ է այդ անձն: Այս մասին կը փափագիմ Ձեր կարծիքն իմանալ: Գիտէք անշուշտ թէ՝ Լ.Լ. ասկէց հեռացած է ըստ ոմանց Ամերիկայ եւ ըստ այլոց Փարիզ կը գտնուի: Եթէ տեղդ ալ ըլլայ չեմ կարծեր որ քեզ այցելելու [1 անընթ. բառ] ունենայ:

- Կաթողիկոսական ընտրութեան հարցն ազգայինճիներն կը զբաղեցնէ: Օրմանեան իր հաւաքած գումարներն իր քանտիտայութիւնն յաջողցնելու կը գործածէ: "Մշակ[60]" եւ "Հովիւ[61]" հանդէսն Օրմանեանի[62] թմբուկն կը զարնեն, բոլոր երիտասարդ առաջնորդներուն խոստացած է զիրենք եպիսկոպոս ձեռնադրել, ուստի եւ անոնք Օրմանեանի քուէ պիտի տան, ի մի բառ ամէն միջոց կը գործադրուի ժողովրդեան ձայնն կապտելու համար, այսուամենայնիւ յուսահատած չեմ եւ կարծեմ թէ վերջիվերջոյ, Իզմիրլեան[63] պիտի ընտրուի՝ եւ գուցէ վաւերացուի ալ:

- Գալով մեր Միութեան՝ եթէ այս ամառ կողմդ գամ պիտի փորձեմ մասնաճիւղն կազմել, եւ անշուշտ Ձեր աջակցութիւնն ալ ինձ օգտակար պիտի ըլլայ:

Իսկ Դուք ի՞նչ կ'ընէք, ի՞նչ ջուրի վրայ է Փարիզի միւսներու "Մասիս" ակումբն: Կաթողիկոսական խնդրով կը պարապի՞ Փարիզու հայս:

Սպասելով Ձեր պատասխանագրոյն եմ եւ մնամ յարգանօք Ձերդ

Տոք. Ն. Տաղաւարեան

Յ.Գ.- Կ. Պոլիս գտնուած ատենդ առիթ ունեցա՞ր տեսակցելու մեր բարեկամ հիւպատոսին հետ: Խօսեցա՞ր իմ մասին: Իրեն յանձնարարագրոյն կը սպասեմ ցարդ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Գրող, ազգային-հասարակական գործիչ, բնագիտութիւն, ապա՝ բժշկութիւն ուսանած Ֆրանսա: Հիմնադիրն է հայերէն բնագիտական առաջին հանդէսին՝ *Գիտական Շարժումը* (1885-7): Ընտանիքը Սեբաստիայէն Պոլիս կը տեղափոխուի 1869ին, իսկ 1878ին իր Չատրճեան ազգանունը կը փոխէ Տաղաւարեանի: 1908ին սահմանադրութեան հռչակումէն ետք կը վերադառնայ Պոլիս, կ'ընտրուի Սեբաստիոյ *մեպուս*: Հիմնադիրներէն է Իթթիլաֆ Կուսակցութեան (աւելի մանրամասն տե՛ս՝ Յ.Յ. Տաղաւարեան, *Ազգաբանութիւն Սեբաստիոյ Չատրճեան Գերդաստանի/Genealogical Tree of the Chaderjian Clan of Sivas*, Նիւ Եորք, Տպ. Մշակ, Պէյրութ, 1957):

[2] Տաղաւարեան Այաշէն տարուած է Հալէպ, ուրկէ Յունիս 10ին, Զօհրապի եւ Վարդգէսի հետ, դէպի Տիարպեքիր ճամփուն ընթացքին նահատակուած է:

[3] Տաղաւարեանէն այլ փունջ մը նամակներ տե՛ս՝ Միհրան Մինասեան, «Եօթը Անտիպ Նամակներ՝ Բժ. Նազարէթ Տաղաւարեանէն Մկրտիչ Անդրանիկեանին (1908-1909)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԻԲ.*, Պէյրութ, 2002, էջ 307-21:

[4] Տաղաւարեան բանտարկուած էր 1896ին (չորս ամիս) եւ 1900ին (15 օր): Երկրորդ բանտարկութիւնը կարճատեւ կ'ըլլայ, որովհետեւ Պոլսոյ ֆրանսական դեսպանատունը կ'առարկէ թէ ան Պոլսոյ Ֆրանսական Հիւանդանոցին բժիշկն է: Յիրաւի, Տաղաւարեան իբրեւ օժանդակ բժիշկ այնտեղ պաշտօնակոչուած էր 1897ին:

[5] 12 Յունուար 1907ին, Տաղաւարեանի՝ Գահիրէի Լսարան-Ընթերցատան մէջ տուած բանախօսութիւնը՝ «Մանրէք Եւ Անոնց Շահատակութիւններն», նոյն տարին իսկ կը հրատարակուի 27 էջանի գրքոյկի ձեւով, իբրեւ «Գ. Հրատ. Լսարան Ընթերցատան Գահիրէի», Գահիրէի Արարատ տպարանէն: Այլ բանախօսութիւն մը՝ տրուած 18 Յուլիս 1908ին (դարձեալ Գահիրէի Լսարան-Ընթերցատան մէջ)՝ «Հայոց Կաթողիկոսութիւնն Եւ Այժմու Կաթողիկոսի Ընտրութիւնն» վերնագրով, կը հրատարակուի 45 էջանի գրքոյկի ձեւով, իբրեւ «Դ. Հրատ. Լսարան Ընթերցատան Գահիրէի», Գահիրէի Կամպեթթա տպարանէն: Այս գրքոյկը կ'ունենայ նաեւ 22 էջանի այլ հրատարակութիւն մը, դարձեալ Գահիրէի մէջ, 1908ին, սակայն ասոր տպարանը կը մնայ անծանօթ (*Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ 1888-2011. Մատենագիտական Ցանկ*, կազմ.՝ Տոքթ. Սուրէն Պայրամեան, Գահիրէի Ազգ. Առաջնորդարանի Բօլ Քիլիտճեան Հրատ. Ֆոնտ, Գահիրէ, Տպ. Նուպար, 2012, էջ 10-11):

[6] Տաղաւարեան ՀԲԸՄ հիմնադիր վարչութեան ատենադպիրն ու 1905-08 շրջանի ընդհանուր քարտուղարն էր:

[7] Շեշտակիօրէն ուշագրաւ ու դիպուկ է Տաղաւարեանի եզրայանգումը թուրք ազատականներուն՝ արեւմտահայութեան հանդէպ ունեցած ծրագրին: Ըստ իրեն «անոնք կ'ուզեն զմեզ քրիստոնեայ թուրքերու վերածել, մենք տարբեր կերպով կը խորհիմք: 40 դարու պատմութիւն ունեցող ազգ մը դիւրաւ չկրնար իր եսն, իր առանձին ազգութիւնն կորսնցնել...» (տե՛ս՝ նամակ Զ.):

[8] Ուր Նոր Թուրքիոյ մէջ հայոց, թէ այլ փոքրամասնութիւններու եւ թուրքերու միջեւ յարաբերութիւնները, անոնց քաղաքական տեղի ու դերի, արդարութեան վերահաստատման եւ այլ ազգային թէ ներօսմանական խնդիրներ մտորումի թէ քննարկումներու նիւթ կը դառնան:

[9] Ո՛չ Գոհար Ազնաւուրեանի կազմած ու ծանօթագրած *Արեւմտահայ Գրողների Նամականի* (Գրական Ժառանգութիւն [մատենաշար], գիրք IV, ԵՊՀ Հրատ., Երեւան 1972), ո՛չ ալ Արփիկ Աւետիսեանի կազմած եւ ծանօթագրած *Զապէլ Եսայեան, Նամակներ* (Գրական Ժառանգութիւն [մատենաշար], [գիրք] 12, ԵՊՀ Հրատ., Երեւան 1977) հատորներուն մէջ հանդիպեցանք Տաղաւարեանի ուղղուած որեւէ նամակի:

[10] Պայրամեան չի յիշատակեր Տաղաւարեանի այս գիրքը՝ իր *Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ 1888-2011. Մատենագիտական Ցանկ* հատորին մէջ: *Ով Ով Է. Հայերը* նոյնպէս չի յիշատակեր այս մասին (*Ով Ով Է. Հայեր, Կենսագրական Հանրագիտարան, Հտր. Երկրորդ*, գլխ. խմբ. Յ. Այվազեան, Հայկական

Հանրագիտարան Հրատ., Երեւան, 2007, էջ 562-63): Հայաստանի Ազգային Գրադարանի «Համահաւաք Գրացուցակ»ը ի յայտ բերաւ հատորին գոյութիւնը հինգ վայրերու մէջ՝ Մաշտոցի Մատենադարան (համար 3232, երկու օրինակ), Սարդարապատի Ազգագրութեան Թանգարան (թիւ 63.3(2Հ) / Ա-885, մէկ օրինակ), Հայաստանի Ազգային Գրադարան (թիւ 9(47.925) Ա-88, տաս օրինակ), Երեւանի Պետական Համալսարանի Գրադարան (թիւ 9(566) Ա-88, մէկ օրինակ (http://armunicat.nla.am/cgi-bin/koha/opac-search.pl?idx=&q=%D5%80%D5%A1%D5%B5%D6%84+%D4%BB+%D4%BF.+%D5%8A%D5%B8%D5%AC%D5%AB%D5%BD&branch_group_limit= նայուած՝ 21 Փետրուար 2019): Հայկազեան Համալսարանի Տէրեան Հայագիտական Գրադարանը ունի երկու օրինակ:

[11] Յօդուածաշարքը լոյս տեսած է 15 Յունիսէն 5 Սեպտեմբեր 1905ի թիւերուն մէջ (Արծրունի, «Զեկոյց», *Հայք ի Կ. Պոլիս Քսաներորդ Դարու Սկիզբը*, Փարիզ, Հայկական Տպարան, էջ 3):

[12] Դժուարընթեռնելի բառ, գուցէ՝ տարակայութեամբ:

[13] Բարապան:

[14] Տաղաւարեանի բնակարանը բազմիցս ենթարկուած էր խուզարկումներու: Անտեղեակ ենք այդ սնտուկներու ճակատագրէն: Ըստ կարգ մը տուեալներու, «Տոքթոր Տաղաւարեանի բոլոր ձեռագիրները...1936ին ՀՕԿի միջոցաւ ղրկուած են Հայաստանի Պետական Թանգարան»: Մեր հարցումներուն՝ Հայաստանի Ազգային Արխիւի եւ ԳԱԹի պաշտօնատարներ հաւաստեցին թէ այդ նիւթերը իրենց մօտ չեն գտնուիր: Այդուհանդերձ քաջատեղեակ աղբիւրներ կը պնդեն արխիւին Հայաստան ուղարկումը, ուստի եւ ակնկալելի է որ ան բացայայտուի, եթէ ոչնչացած չէ: Տաղաւարեան բեղուն գրիչ էր եւ հակառակ իր հրատարակած բազմաթիւ երկերուն, ունէր նաեւ հայերէն եւ ֆրանսերէն անտիպ նիւթեր՝ թէ՛ դասագրքային (կենդանաբանութիւն, 'մետէորաբանութիւն') եւ թէ՛՝ ազգային («Մարդահամար Հայոց», «Ատանայի Եղեռնը», «Ցանկ Զարգացեալ Անձնաւորութեանց Թրքահայոց ԺԹ. Դար», «Նախափորձ Պատմութեան Իմացական Զարգացման Հայոց – Հին Օրերէն Մինչեւ 1875 – ԺԸ Դար») բնոյթի: Իդէպ, ան իր քարերու հաւաքածոն նուիրած էր Պոլսոյ Ազգային Կեդրոնական Վարժարանին (*Տօքթ. Նազարէթ Տաղաւարեան Բնական Գիտութիւններու Ցուցահանդէս/Dr. Nazartet Dagavaryan Doga Bilimler Sergisi, Ազգ. Կեդրոնական Վարժարան 125*, Պոլիս, [ա.տ.], 2012): Իսկ իր այրին, 19 Ապրիլ 1920ին, Հայ Բժշկական Միութեան միջոցաւ Տաղաւարեանի բժշկական գիրքերը (թիւով 101 հատ) նուիրած է «Հայաստանի Բժշկական Մատենադարան»ին:

[15] Ռուբէն Զարդարեան (1874--1915), Եղեռնի նահատակ գրող, խմբագիր, հրապարակախօս, հիմնադիր *Ազատամարտ* թերթի:

[16] Արդեօ՞ք Սիպիլը նկատի ունի:

[17] Աթանիկ Էգնայեան (՞-Փարիզ, 1925), Ադամանդի առաջնակարգ վաճառական («Էգնաեանի Կտակը», *Հայաստանի Կոչնակ*, 23 Հոկտ. 1926, էջ 1479):

[18] Նկատի ունի ՀԲԸՄ հիմնադիրներու խումբը գլխաւորող Պօղոս Նուպարը (1851--1930):

[19] Ազգային, քաղաքական, տնտեսական եւ գրական երկօրեայ լրագիր. հրատարակուած է 1904-08 շրջանին, խմբագիրներ եղած են Վահան Քիւրքճեան,

Արփիար Արփիարեան, Վահան Թէքէեան, Երուանդ Սրմաքէշխանլեան: 1909ին միացած է *Արեւ*ին եւ դարձած *Լուսաբեր-Արեւ*:

[20] Գրական-քաղաքական շաբաթաթերթ (1903-07): Լոյս տեսած է Աղեքսանդրիա, ապա տեղափոխուած Գահիրէ: Խմբագիրներ եղած են Երուանդ Օտեան, Մ. Կիւրճեան, Թէքէեան, Լեւոն Լարենց եւն.:

[21] Կը թուի թէ Լ.Լ. (Լեւոն Լարենց [Քիրիշճեան], 1882--1915, բանաստեղծ, թարգմանիչ) առանձին չէր. անոր կը գործակցէր Լ.Բ. [Լեւոն Բաշալեան, (1868--1943)], գրող, հրապարակագիր, թարգմանիչ, հասարակական գործիչ, խմբագիր, Լոզանի Ազգային Պատուիրակութեան խորհրդական, որուն կ'ակնարկէ Տաղաւարեան՝ 24 Ապրիլ 1907ի իր նամակին մէջ:

[22] Բախտիար Յովակիմեանի *Հայոց Ծածկանունների Բառարան*ին (Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2005) մէջ չհանդիպեցանք այս տուեալին:

[23] Ահմէտ Րիզա (1859—1930), երիտթուրք քաղաքական գործիչ եւ գաղափարախօս, ապրած եւ գործած է Փարիզ, բացի 1908-18 շրջանին, երբ եղած է Օսմանեան Կայսրութեան մեճլիսի նախագահ, իսկ 1914-18ին՝ գլխաւորած է երկրին ներակուտական յանձնաժողովը:

[24] Ինքնութիւնը չկրցանք պարզել:

[25] Հայր Անճելօ Սեչի (1818--1878), իտալացի աստղագէտ:

[26] Հաւանաբար Շարլ-Մարի Կիւսթաւ ԼըՊոն (1841--1931), ֆրանսացի գիտնական:

[27] Ինքնութիւնը չկրցանք պարզել:

[28] Իշխան Սապահէտտին (1877—1948), թուրք քաղաքական գործիչ, երիտթուրք շարժումի հիմնադիրներէն, Օսմանեան Կայսրութեան ազատական վարչակառավարման գաղափարախօս:

[29] Տաղաւարեան առանձին թերթի վրայ գրած է «յաւելուած»ը, որուն ետեւի էջին, վերը ուրիշ ձեռագիր մը գրած է. «47 օտար 7 տեղական»:

[30] Արծրունի, *Հայք ի Կ. Պոլիս: Քսաներորդ Դարու Սկիզբը*, Փարիզ, Հայկական Տպարան, 1906, 67 էջ:

[31] Քաղաքական, գրական շաբաթաթերթ՝ (1885-1923), լոյս տեսած է Մարսէյի մէջ խմբագրութեամբ Մկրտիչ Փորթուգալեանի:

[32] Տաղաւարեան ամուսնացած էր Հարենց ընտանիքի դստեր հետ:

[33] Ֆրանսացի բնագէտ (1862--1920):

[34] *Անահիտ* (1898--1911, 1929--40, 1946--49), Արշակ Չօպանեանի հրատարակութեամբ եւ խմբագրութեամբ լոյս տեսած գրական-գեղարուեստական հանդէս: *Անահիտ* չի թուիր արձագանգած ըլլալ գիրքին(*«Անահիտ»ի Մատենագիտութիւն*, կազմ.՝ Անդրանիկ Զէյթունցեան, Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտութեան Մատենաշար, Ա., Անթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1998):

[35] Հաւանաբար կ'ակնարկէ Լեւոն Բաշալեանին եւ նախապէս յիշատակած 'բանաստեղծուհիին':

[36] Արփիար Արփիարեան (1851--1908), գրող, հրապարակախօս, գրական քննադատ, խմբագիր, հասարակական գործիչ, եղբայրասպան գնդակի զոհ: Աւելի մանրամասն տե՛ս՝ Տիգրան Գէորգեան, «Գաղափարի Զոհը՝ Արփիար Արփիարեան», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. Լ Գ.*, Պէյրութ, 2003, էջ 9-58. նաեւ՝ Ստեփան Շահպազ, *Արփիար Արփիարեան*, Պէյրութ, Տպ. Ալթափրէս, 1987:

[37] Բանաստեղծ, խմբագիր, հրապարակախօս, հասարակական գործիչ (1878--1945):

[38] Միքայէլ Նաթանեան (1868--1954), բանասէր, թարգմանիչ, հասարակական գործիչ, 1920-40ականներուն Մ. Արեւելքի ՀԲԸՄ կրթական գործիչ:

[39] Ինքնութիւնը չկրցանք պարզել:

[40] Ապահ Պետրոսեան (1872--1928), հնչակեան հայ յեղափոխական, ապա՝ անդամ Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան:

[41] Ինքնութիւնը չկրցանք պարզել:

[42] Արդեօ՞ք Սարգիս Ճեպէճեան (1864—1920), յեղափոխական գործիչ, Հաճընի 1920ի ինքնապաշտպանութեան ուժերու հրամանատար:

[43] Վահան Քիւրքճեան (1863—1961), կրթական մշակ, մամուլի եւ կուսակցական գործիչ, անդամ Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան:

[44] Տաղաւարեան 1881ին ընդունուած էր Փարիզի Երկրագործական Բարձրագոյն Վարժարանը, ուրկէ 1883ին վկայուած էր իբրեւ երկրագործական ճարտարապետ, խորանալով ծառաբուծութեան եւ այգեգործութեան մէջ:

[45] Երուանդ Աղաթոն (1860--1935), գիւղատնտես, մշակոյթի գործիչ, ՀԲԸՄ հիմնադիր-անդամ, առաջին վարչութեան փոխատենապետ:

[46] Մկրտիչ Անդրանիկեան (1851--1939), ՀԲԸՄ հիմնադիրներէն, առաջին վարչութեան գանձապահ:

[47] Նկատի ունի Պոլսոյ ֆրանսական դեսպանատան պաշտօնատարը:

[48] Նկատի ունի Եսայեանի *Շնորհքով Մարդիկը* որ լոյս տեսած է այդ տարի:

[49] Ազգային, գրական եւ քաղաքական կիսաշաբաթաթերթ (1905--9), լոյս տեսած է Ֆիլիփէ (Փլովտիւ), խմբագրութեամբ Ռուբէն Զարդարեանի, ապա՝ Տաճատ Կամսարականի:

[50] Անհոգութիւն, անտարբերութիւն:

[51] Տպարանատէր Յովհաննէս Միւհենտիզեանի դու՞ստրը արդեօք:

[52] Ալեքսան Արզուեան (1874--1933), յանդուգն յեղափոխական գործիչ, վերակազմեալ հնչակեան:

[53] Թեկնածու: Վերոյիշեալ գիրքին մէջ, Տաղաւարեան յստակ կը դարձնէ իր դժգոհութիւնը Պոլսոյ Մաղաքիա Օրմանեան պատրիարքին հանդէպ, թափանցիկ ակնարկութիւններ ալ ընելով Բ. Դռան հետ անոր յարաբերութիւններուն մասին:

[54] Կարապետ Բասմաջեան (1864--1942), բանասէր, պատմաբան:

[55] Մինաս Չերազ (1852--1929), գրող, հրապարակախօս, խմբագիր, իբրեւ քարտուղար ընկերակցած է 1878ի Պերլինի Վեհաժողովի հայկական պատուիրակութեան:

[56] Տե՛ս՝ ծանօթ թիւ 5:

[57] Գրչատուփ:

[58] Էթիէն Պիւրնէ (1873--1960), բնագէտ:

[59] 1870ին հիմնուած հրատարակչատուն:

[60] *Մշակ* (1872-1921), գրական, քաղաքական լրագիր, լոյս տեսած է Թիֆլիս, զանազան պարբերականութեամբ: Զայն խմբագրած են Գրիգոր Արծրունի, Ալեքսանդր Քալանթար, Համբարձում Առաքելեան, Լէօ, եւն.:

[61] Ազգային-հասարակական, քաղաքական, գրական, հոգեւոր շաբաթաթերթ, հրատարակուած Թիֆլիս՝ 1906-10, ապա անուանափոխուած (Հովիտ) շարունակած է հրատարակուիլ մինչեւ 1917, դարձեալ Թիֆլիս:

[62] Մաղաքիա Օրմանեան (1841--1918), աստուածաբան, հայագէտ, պատմաբան, բանասէր, հրապարակախօս, Պոլսոյ հայոց պատրիարք (1896-1908):

[63] Մատթէոս Իզմիրլեան (1845--1910), հոգեւորական գործիչ, բանասէր, Պոլսոյ հայոց պատրիարք (1894-6) եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս (1908-9):

A BIBLIOGRAPHIC CORRECTION AND FOURTEEN LETTERS FROM NAZARETH DAGHAVARIAN TO ZABEL YESSAYAN (MARCH 26, 1906--MARCH 27, 1908)

(Summary)

ANTRANIK DAKESSIAN
adakessian@haigazian.edu.lb

A set of 14 letters written by the Armenian Genocide victim, scholar, activist and Ottoman Parliament member Dr. Nazareth Daghavarian to the renowned Armenian writer Zabel Yessayan are published here.

These letters shed light on contacts established between Turkish liberals and Armenian scholars of the time and their discourse, intra-Armenian scholarly conflicts, efforts for the propagation of the Armenian General Benevolent Union in France, details of Dr. Daghavarian's escape from Constantinople after being persecuted by the Ottoman authorities, etc.

The letters disclose a secret about a book supposedly published in France under the pseudonym "Ardzruni." In one of his letters to Yessayan, Daghavarian states that he wrote and published a book in Cairo (yet printed in it Paris as its place of printing). However, to avoid any persecution, he asked whether he could ship the books to her in order for her to disseminate them.

ԹԼԿԱՏԻՆԻՑԻԻՆ ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴԸ
(Բենիամին Նուրիկեանի եւ Հայր Արսէն Ղազիկեանի Փոխանակած 23 Նամակները. 18 Նոյեմբեր 1925-31 Մարտ 1928)

ՌԻԹԱ ՄԱՐԻԱ ԳԱԶԱՆՃԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
RKAZANDJIAN@students.haigazian.edu.lb; adakessian@haigazian.edu.lb

Հայաստանի Հանրապետութեան Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի (ԳԱԹ)[1] Նուրիկեանի[2] արխիւին «Նուրիկեան 246» թղթապանակին մէջ պահուած են Ղազիկեանին[3] ուղղուած Նուրիկեանի 7 մեքենագիր նամակներ (8 թերթ), իսկ «Նուրիկեան 359» թղթապանակին մէջ՝ Ղազիկեանէն Նուրիկեանին ուղղուած 16 ձեռագիր նամակներ (46 թերթ), որոնց երեքը անթուակիր են: Նամակները կ'ընդգրկեն Նոյեմբեր 1925-Մարտ 1928 շրջանը[4]: Նամակագրութեան նախաձեռնած է Նուրիկեան, յայտնելով Ղազիկեանին թէ՝ «*Թլկատինցիի*[5] *ամերիկաբնակ սաներս կազմած ենք Միութիւն մը, որուն նպատակն է հաւաքել եւ գրքի ձեւով, մէկ կամ երկու հատորի մէջ, հրատարակել մեր ողբացեալ վարպետին ցիրուցան գրութիւնները*» եւ խնդրած անոր աջակցութիւնը՝ Թլկատինցիի հրատարակած գրութիւններուն յայտնաբերումին եւ ընդօրինակումին առնչութեամբ:

Այս գործակցութենէն[6] ծնած է - 1927ին Պոստոն - Սաներու հրատարակած *Թլկատինցին Եւ Իր Գործը* շուրջ 640-էջանի, Արշակ Չօպանեանի ներածութեամբ հատորը, որ կ'ընդգրկէ նահատակ գրագէտէն «Քրոնիկներ, Նորավէպեր, Գեղի Նամակներ», «Քերթուածներ», «Թատերգութիւններ», նաեւ Նուրիկեանի կողմէ կազմուած բառարան, ապա եւ յաւելուած: Հրատարակութեան համար սաները յաջողած են գոյացնել 1660 տոլար[7], որուն սահմանափակութիւնը կը սահմանափակէ սաներուն ծաւալուն ծրագիրը:

Մինչեւ այդ թուականը Թլկատինցին գրասէր հանրութեան ծանօթ էր 1912ին Պոստոն հրատարակուած միակ տպագիր թատերախաղով մը՝ *Ո՞ր Մէկուն Ետեւէն*, եւ մամուլին մէջ ցրուած իր գիւղական պատկերներով: Եթէ ոչ գիրքը, յամենայնդէպս մամուլին մէջ ցրուած նիւթերը կրնային մոռացութեան մատնուիլ[8] եւ շուքի տակ թողուլ Թլկատինցիին գրական վաստակին հիմնական գիծերը: Սաներուն հրատարակած հատորը չ'ընդգրկեր Թլկատինցիին բոլոր երկերը եւ չ'արտացոլեր անոր գրական ամբողջական դիմանկարը. Նուրիկեան՝ Ղազիկեանին կը գրէ արդէն՝ «*հաւաքուած կտորներուն մէկ հինգերորդը... դուրս ձգեցի հաւաքածոյէն*»[9]: Թկատինցիի յետագայ հրատարակութիւնները հիմնուած են մեծապէս Սաներու այս հատորին վրայ, 'անտիպներու' փոքր յաւելումներով, բայց երբեք ամբողջացնելով անոր գրական դիմանկարը: «Թլկատինցիի գրական ժառանգութեան լիակատար ամբողջութիւնը կը մնայ մամուլի էջերուն»[10]:

Յիրաւի, Թլկատինցիի ակադեմական հրատարակութիւնը դեռ կը սպասէ իր նուիրեալին:



Նիւ Եորք, 18 Նոյ 1925

Գեր. Հայր Արսէն Ղազիկեան,
Ս Ղազար, Վենետիկ
Գերաշնորհ Հայր,

Թլկատինցիի ամերիկաբնակ սաներս կազմած ենք Միութիւն մը, որուն նպատակն է հաւաքել եւ գրքի ձեւով, մէկ կամ երկու հատորի մէջ, հրատարակել մեր ողբացեալ վարպետին ցիրուցան գրութիւնները:



Վենետիկ 5 Դեկ. 1925
Venise

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆ
CONGRÉGATION
MÉKHITHARISTE

Այդուհանդերձ, սաներուն երախտաշատ նախաձեռնութիւնը եւ Ղազիկեանի գործակցութիւնը վճռորոշ հատորով մը կը վերածնին Թլկատինցին իբրեւ գաւառի գրականութեան կարեւորագոյն դէմքերէն մին:

Փոխանակուած նամակները կը ներկայացնեն Թլկատինցիի սաներուն յառաջադրանքին մանրամասնութիւնները, Չօպանեանի միջնորդութիւնը եւ թելադրանքը՝ դիմելու Ղազիկեանին, վերջինիս՝ գրութեանց ընդօրինակման գործընթացը, իր գրական եւ լեզուաբանական աշխատակցութիւնը *Կոչնակ*ին, *Հայրենիք*ին, իր յոբելեանին նշումը եւն.:

Նամակները զետեղած ենք թուականի յաջորդականութեամբ: Զատորոշելու նպատակով՝ Նուրիկեանի նամակներուն թուագրումը կատարած ենք շեղագիր:

Ա.

Նիւ Եորք, 18 Նոյ[եմբեր] 1925

Գեր. Հայր Արսէն Ղազիկեան,
Ս Ղազար, Վենետիկ
Գերաշնորհ Հայր,

Թլկատինցիի ամերիկաբնակ սաներս կազմած ենք Միութիւն մը, որուն նպատակն է հաւաքել եւ գրքի ձեւով, մէկ կամ երկու հատորի մէջ, հրատարակել մեր ողբացեալ վարպետին ցիրուցան գրութիւնները:

Այս նպատակաւ ցարդ հաւաքած ենք ներփակ ցանկին պարունակած կտորները, եւ ամէն ջանք կը թափենք ծրագրուած հաւաքածուն ամբողջական գործ ընելու մտքով:

Պրն. Արշակ Չօպանեան[11], ծանօթ հայ գրագէտն ու բանաստեղծը, սիրով յանձն առած է գրել սոյն հաւաքածուին յառաջաբանը: Պրն Չօպանեանի թելադրութեամբն է որ ներկայիս կը դիմենք Ձեզի, խնդրելով որ բարեհաճիք մեզի համար փնտռել եւ օրինակել տալ վերջին 40 տարիներու հայ մամուլին մէջ (մասնաւորապէս Պոլսոյ Հայրենիքին[12], Մասիսին[13], Իզմիրի Արեւելեան Մամուլին[14], եւ ուրիշ թերթերու) մէջ Թլկատինցիի ստորագրութեամբ երեւցած գրական (մէջն ըլլալով իր Գաւառի Նամակները), բանաստեղծական, եւ թատերգական գրուածքները: Ձեր պրպտումներուն առթիւ, բնականաբար, զանց կ'ընէք ներփակ ցանկին մէջ յիշուած գրութիւնները եւ զանոնք պարունակող թերթերուն հաւաքածուները, զորս հոս մեր տրամադրութեան տակ ունինք արդէն:

Զանց կ'ընէք նաեւ ամբողջ ամերիկահայ մամուլը, ինչպէս նաեւ Չօպանեանի Ծաղիկն[15] ու Անահիտը[16]:

Այս առիթով Ձեր նուիրած աշխատանքին ինչպէս նաեւ ընդօրինակութեան համար կը խոստանանք յարմար վճարում մը ընել:

Կը յուսանք թէ, ի սէր հայ գրականութեան, որուն ժրաջան մշակներէն էք դուք, եւ ի յարգանս գաւառահայ մեծ գրագէտին յիշատակին, բարի պիտի ըլլաք մեր այս խնդրանքին գոհացուցիչ պատասխան մը տալ, որուն համար հաճեցէք հիմակուց ընդունիլ մեր անկեղծ շնորհակալութիւնները:

Խորին յարգանօք,
Բ. Նուրիկեան
Քարտուղար
Թլկատինցիի Սաներու Միութեան

Բ.

Վենետիկ 5 Դեկտ[եմբեր] 1925

Ազնիւ Պ. Նուրիկեան

Ձեր 18 Նոյ[եմբեր]ի պատուական նամակն ստացայ. զմայլելի գործի մըն էք ձեռնարկեր, շատ ուրախ եմ. ուրախ եմ նաեւ որ Չօպանեանի պէս մեծ դէմք մը պիտի գրէ յառաջաբանը:

Ձեռքս գործ մ'ունիմ որ կը յուսամ լմնցած կ'ըլլայ երբ այս տողերը կարդաք, եւ ես անկէ յետոյ կը սկսիմ Ձեր խնդրանքին գոհացում տալ՝ թէեւ ինծի համար պիտի ըլլայ շատ մեծ զոհողութիւն...

Ձեր նամակին մէջ կէտ մը կայ սակայն որ շատ որոշ չէ. «Ձեր պրպտումներուն մէջ... զանց կ'ընէք ներփակ ցանկին մէջ յիշուած գրութիւնները եւ զանոնք պարունակող թերթերուն հաւաքածուները, զորս հոս մեր տրամադրութեան տակ ունինք արդէն»:

Արդ այդ ցանկին մէջ կան «Մասիս»էն, եւ «Արեւ[ելեան] մամուլ»էն կտորներ. ուրեմն ունի՞ք այս թերթերուն հաւաքածուն. եթէ այո՛, ինչու՞ ուրիշ տեղ

մը կ'ըսէք. «(մասնաւորապէս Պոլսոյ Հայրենիքին, **Մասիս**ին, Իզմիրի **Արե-ւ[եւելեան] մամուլ**ին... մէջ) երեւցած յօդուածները, եւն. օրինակել»:

Այս կէտը կրնայի՞ք ճշդել, աւելորդ աշխատութիւն չթափեմ:

«Ամէն»ի մասին յօդուած[17] մը ղրկած էի «Կոչնակ»ի[18], հասա՞ւ արդեօք. ծառան սխալմամբ յանձնարարե[ա]լ չէր ըրած:

Խորին յարգանքներով
Ձերդ
Հ. Ա. Ղազիկեան

Գ.

Նիւ Եորք, Դեկտ[եմբեր] 17, 1925,

Գեր. Հ[այր] Արսէն Ղազիկեան,
Վենետիկ
Գերաշնորհ Հայր,

Ուրախութեամբ ստացայ Ձեր Դեկտ[եմբեր] 5 թուակիր նամակը: Կը փութամ թէ իմ եւ թէ ամերիկաբնակ դպրոցական ընկերներուս սրտագին շնորհակալութիւնը յայտնել Ձեզի Թլկատինցիի տարտղնուած գրութիւնները հաւաքելու Ձեր ազնիւ յանձնառութեանը համար:

Մեր տրամադրութեան տակ ունինք հետեւեալ թերթերու հաւաքածուները, զոր երկու խումբի կրնանք բաժնել: Խումբ Ա.ին տակ նշանակուածները, բոլորն ալ, լման հաւաքածուներ են, իսկ խումբ Բ.ին տակ զետեղուածները կիսատ կիսկատար հաւաքածուներ են, որոնցմէ մասամբ միայն կրցած ենք օգտուիլ:

ԽՈՒՄԲ Ա. ՄԱՍԻՍ 1900, 1901, 1902, 1903, 1904, 1905, 1907
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ, 1901
ԼՈՅՍ[19] (Արամ Անտոնեանի[20]) 1908
ԽՈՒՄԲ Բ. ՄԱՍԻՍ 1906, 1908
ՄՈՒՐՃ[21] (Թիֆլիս) 1904 (Ապրիլ եւ Մայիս)

Արդ, սիրելի Հայր Ղազիկեան, Ձեր աշխատանքին մէջ բոլորովին զանց կ'ընէք խումբ Ա.ը, բայց աչքէ կ'անցընէք խումբ Բ.ի լման հաւաքածուները, եթէ ունիք, եւ անոնցմէ օրինակել կու տաք Թլկատինցիի այն գրութիւնները միայն որոնք անցեալ անգամ Ձեզի ղրկուած ցանկէն դուրս կը մնան: Կը յուսամ թէ այս բացատրութիւններէն գոհ պիտի մնաք եւ պիտի ջանաք մեր խնդիրքին գոհացում տալ:

ԱՄԷՆի մասին Ձեր գրած յօդուածը հոս հասած է ատենին եւ պիտի երեւի ԿՈՉՆԱԿի Դեկտ[եմբեր] 26ի թիւին մէջ: Հիմա ամէնքս ալ լծուած ենք ԿՈՉՆԱԿի Քսանեւհինգամեակի մեծ թիւին[22] պատրաստութեանը գործին: Կը յուսանք թէ ներկայանալի թիւ մը պիտի ըլլայ:

Հաճեցէք ընդունիլ սրտագին մաղթանքներս նոր տարիին առթիւ:

Խորին յարգանօք,
Բ. Նուրիկեան

Դ.

Վենետիկ 31-12-1925

Սիրելի Նուրիկեան

Ձեր Դեկտ[եմբեր] 17 թուակիրն ստացայ, եւ վեր ի վայր եղայ. ասի փոխանակ զիս լուսաւորելու՝ աւելի անդունդը գլորեց:

Աստուծոյ սիրուն, ես 13րդ տետրակն էի սկսեր ընդօրինակութեան, որուն 7-ը տետրակը Արեւ[ելեան] Մամուլէն էր. եւ հիմա կ'ըսէք որ խումբ Ա.ը՝ որուն տակ կ'իյնայ **Արեւ[ելեան] Մամուլը**՝ «բոլորովին զանց կ'ընէք». եթէ **Արեւ[ելեան] Մամուլի** բոլոր տարիները ունէիք ինչու՞ միայն 1901 դրած էք դիմացը. եւ Ձեր նախապէս ինձ ղրկած ցուցակին մէջ

«Տուն դարձը[»], Արեվ[ելեան] Մամուլ 1901.

«Մութ անկիւններէ» Արեւ[ելեան] Մամուլ 1901.

արդ Արեվ[ելեան] Մամուլէն ասո՞նք միայն ունիք, որ ասոնք միայն դրեր էք, մինչ անդին ահագին յօդուածներ կան, որոնց մեծ մասը արդէն օրինակեր եմ. եթէ միւսներն ալ ունէիք՝ ինչու՞ այդ ցուցակին մէջ չէք դրած. 15 օր է սկսած եմ օրը 8-10 ժամ աշխատելով պրպտել եւ օրինակել. «Հայրենիք»ը ամբողջ մաղեցի, եւ օրինակեցի, **Բիւրակն**ը[23]՝ նոյնպէս. սկսայ **Արեւ[ելեան] Մամուլի**ն՝ հետեւցնելով ձեր ղրկած ցուցակէն որ դուք միայն 1901 տարին ունենալու էք, քանի որ անոր մէջ եղածները նշանակած էիք: Եւ դարձեալ Ձեր նախկին նամակին մէջ որոշակի կը գրէիք, «կը դիմենք ձեզի, խնդրելով որ բարեհաճիք ... փնտռել եւ տալ օրինակել ... (մասնաւորապէս «Պոլսոյ **Հայրենիք**ին, **Մասիս**ին, Իզմիրի **Արեւ[ելեան] Մամուլ**ին, եւն)...[»:]

Տարւոյն վերջին օրով վրաս կայծակ իջեցուցիք. եթէ **Արեւ[ելեան] Մամուլի** ամբողջ հաւաքածուն ունէիք ինչպէս կ'ըսէք Ձեր նոր նամակին մէջ, ի՞նչ կը նշանակեն վերի այդ տողերը...

Հոս կը դնեմ ցանկը **Արեւ[ելեան] Մամուլ**էն ընդօրնակածներուս.

1902. Էնդի դէմէն.

1905 Պատկերին տղան

1905 Պատկերին տղուն Վայանքը

1905 Ճանբորդն ու Ճանբեցնողները

1905 Գիւղին կեանքը. «Մեռաւ խալսաւ». Թլկատինցիին Սաթենիկ աղջկան գրածը.

1906 Գեղի նամակներ

1906 Գեղի նամակներ

1906 Խաղաղութիւնն ուսկէ՛ եւ ի՛նչպէս

1906 Ամառին Արմաղանը

1907. Ձեր խելքին չի պառկիր

ու դեռ կան ուրիշներ. ասոնք բոլոր օրինակած եմ. աղջկան գրութիւնը օրինակեցի, շատ սիրուն է, կ'արժէ դնել տեղ մը[24]:

Ինծի խնդրեմ Աստուծոյ սիրուն շէնք շնորհք բան մը գրեցէք որ հասկնամ. պարապ տեղ նստիլ 7 տետրակ բան փնտռել՝ օրինակել ... ի՞նչպէս մարգարէանայի, ի՞նչ կրնայի հետեւցնել այդ գրութենէն: Եթէ **Արեւ[ելեան]**

Մամուլի ամբողջական հաւաքածուն ունէիք՝ ինչու՞՝ ինչպէս **Մասիս**ին տարիները դրեր էիք՝ չէք նոյնպէս նշանակած, այլ միայն 1901 դրեր անցեր էք:

Մասիսի 1907 տարին ալ Ա.ին տակ դրեր էք, եւ սակայն երկու գրութիւն կայ անոր մէջ որ կը պակսի ձեր ցուցակին մէջ:- Գալով Մուրճին, «Զալըմ տղան» **Դ** եւ **Ե** արարները գրեր էք թէ ունիք. ուրեմն Ա,Բ,Գ. արարները չունիք. քանի որ խումբ Բ.ին տակն ալ էք դրեր... ճի՞շդ է հասկցածս: Ինծի բարի եղէք ղրկելու ձեր կողմէն հաւաքուած գրուվ[թիւ]ններուն ամբողջական ցուցակը, ամբո՛ղջ, որպէսզի գիտնամ ընելիքս: Չօպանեան գրեր էր երէկ թէ «գլխուդ փորձանք հանեցի», փորձանքը կատարեալ **փիւսկիւլլիւ** եղաւ, ... մեղք, հազար մեղք թանկագին ժամերուս...

Փոխադարձ մաղթանքներով նոր տարւոյ
Խորին յարգանօք
Հ.Ա. Ղազիկեան

Ե.

Նիւ Եորք 21 Յունվար, 1926

Գեր. Հ[այր] Արսէն Ղազիկեան,
Վենետիկ

Սիրելի Հայր Ղազիկեան,

Այս առտու ստացայ Դեկտ[եմբեր] 31, 1925 թուակիր Ձեր նամակը: Շատ կը ցաւիմ որ նախորդ նամակս փոխանակ լուսաբանելու մութի, մշուշի մէջ ձգած է Ձեզ: Ասոր համար Ձեր ներողամտութիւնը կը խնդրեմ:

Մենք հոս մեր տրամադրութեան տակ ունինք Արեւելեան Մամուլի 1901ի հաւաքածոն: Այդ թերթին մէկալ հաւաքածոները չունինք: Հետեւաբար այդ հանդէսէն ցարդ Ձեր ըրած հաւաքումները պարապ տեղը կատարուած չեն, ընդհակառակը մեր նպատակին պիտի ծառայեն:

Ներփակ կը գտնաք մեր ունեցած ամբողջ գրութիւններուն ցուցակը, զոր աչքի առջեւ ունենալով կրնաք հետեւցնել Ձեր ընելիքը, որուն համար միշտ երախտապարտ պիտի մնանք: Եթէ կրկնութիւններ պատահած են Ձեր եւ մեր կողմէն հաւաքուած գրութիւններուն մէջ, մեղքը մեր վիզը:

Երբ Ձեր աշխատանքը վերջանայ Ձեր հաւաքած գրուածքները կը ղրկէք մեզի յանձնարարեալ ծրարով: Կը ղրկէք նաեւ Ձեր հաշուեցոյցը, մէջն ըլլալով փօսդի եւ այլ յարակից ծախքեր: Եթէ կը փափաքիք, սիրով յանձն կ'առնենք կանուխէն վճարում մը ընել Ձեզի:

Սիրալիր յարգանքներով
Բ. Նուրիկեան

Զ.

21-1-26

Monsieur
P. Noorigian
331 Fourth ave.
New York, N. Y.

(U.S.A.)

Սիրելիդ իմ Նուրիկեան

Ձեր քարտն ստացայ. անշուշտ որ պիտի նշանակէի Թլկատինցիի գրութիւններուն հրատարակութեան թուականն ու աղբիւրը. մօտ ատենէն կը ճամբեմ 15 տետրակ գրութիւն[25]. առաջին հատորի մը նիւթը ունիք արդէն լի ու լի. յաջորդն ալ Ա[ստուա]ծ ողորմած է. կը գրեմ երբ ղրկեմ:

«Կոչնակ»ի բացառիկ թիւը հասաւ խմբագրութեան. ձեռքերնիդ դալար. շատ շքեղ եղած է: Իմ ղրկած ոտանաւորիս մէջ անհեթեթ սխալ մը փախեր է, խնդրեմ ուղղել տայիք անպատճառ. 8րդ տողին

Այսքան փափագ **անձրեւի**

պիտի ըլլայ [փափագ] **արցունքի:**

Անձրեւը ի՞նչ գործ ունի հոտ: Դարձեալ Բ. սեան առաջին տողին մէջ վանկ մը պակաս է. թէ 'լլար, կ'երեւի **եթէ** պիտի ըլլայ, նայէիք՝ եթէ ձեռագիրը ողջ է: Եթէ չէ, նոյնպէս սրբագրէիք:

Անշուշտ պիտի փափագէի ունենալ այդ թիւէն, բայց քանի որ «Կոչնակ»ի **Ամէն**ին մասին գրած յօդուածս պարունակող թիւն ալ՝ զոր խնդրած էի եւ չղրկուեցաւ անհարկի կ'ըլլայ նորէն խնդրել:

Այն յօդուածին հետ նամակ ալ գրած էի՝ այն ալ անպատասխանի մնաց. մէջը սխալներ ալ սպրդեր էին: Պ. Յովի[աննէս] Աւագեանին մասնաւոր ողջոյններս հաղորդէիք, պիտի գրեմ իր գրքին հ[ամա]ր նամակ[26]. ալ Թլկատինցիի ձեռագիրներուն հետ կը ղրկեմ. 35 օր է գիշեր ցորեկ վրան եմ. շատ թերթ խառնեցի բայց քիչ բան գտայ:

Սիրալիր ողջոյններով

Ձերդ Հ.Ա. Ղազիկեան

Է.[27]

[Յունուարի վերջ-Փետրուարի սկիզբ, 1926]

Ազնիւ եւ սիրելի Պ. Նուրիկեան

Ահաւասիկ կը ղրկեմ Ձեզի մինչեւ հիմա հաւաքած կտորներս Թլկատինցիի յօդուածներուն. ասոնք Ձեր քով եղածներով կրնան գեղեցիկ հատոր մը կազմել արդէն, մնացեալները երկրորդ հատորի նիւթ կ'ընէք. դուք մինչեւ հրատարակէք այդ հատորը՝ ես բոլոր մնացեալները կը գտնեմ ու կը ղրկեմ Ձեզի:

Մասիսի մէջ կան «Աւելի բաղձալին» 1898-99, էջ 239.- «Ո՞վ աղօթէր» 1906-7, էջ 191.- «Փոքրիկ երազատեսը» էջ 438: Ասոնք չօրինակեցի, խրատուած Ձեր երկրորդ նամակէն: - Նոյնպէս «Արեւ[ելեան] Մամուլ»ի 1907 եւ 1908 տարիներու մէջ եղածները 5-6 կտոր բան կայ: Ձեր երկրորդ նամակն առնելուս՝ դադրեցուցի «Արեւ[ելեան] Մամուլ»ի ընդօրինակութիւնը, տես ԺԲ տետրակի վերջը «Ձեր խելքին չի պառկիր». շարունակեցէք օրինակութիւնը ձգուած տեղէն, նոյնպէս 1907 եւ 1908-ի կտորները:

40 օր է ետեւէն եմ, շատ թերթ խառնեցի, բայց ամէնէն դժնդակը «Հայրենիք»ի յօդուածները փնտռելն ու օրինակելն էր. ահագին հատոր, չես գիտեր ու՛ր դնես, ինչպէս նստիս եւ ի՛նչպէս օրինակես:

Ընդօրինակութիւնը ամէնէն չսիրած բանս եղած է միշտ. ես բոլոր թարգմանութ[իւն]ներս մէկ ձեռքով կ'ընեմ. միայն Բարինին[28] էր որ ստիպուեցայ օրինակել, շատ շուտ թարգմանած էի (45 օր) եւ գէշ գրած, բայց մինչեւ որ օրինակնեցի 20 հեղ փոսը մտայ ելայ: Չօպանեանը գիտակ այս բաներուն, իր վերջին նամակին մէջ կը գրէ. «Աստուած ուժ տայ ձեր դաստակին, օրինակութեան ինչ ահռելի բան ըլլալը ես ալ գիտեմ. ըրածնիդ պարզապէս դիւցազնութիւն է. կը յուսամ որ Թլկատինցիի աշակերտները պիտի գիտնան գնահատել անփոխարինելի ծառայութիւնը զոր կը մատուցանէք այդ գործին, որ առանց ձեզի չէր կրնար իրականանալ»:

«Նիբելունգներուն երգը»[29] զոր կը ղրկեմ Ձեզի, ճիշդ 40 օրուան աշխատութ[իւն] է, այնչափ որչափ աշխատեցայ Թլկատինցիին համար... հայ գրականու[թեն]էն կը գողնաք հատոր մը՝ տալով ուրիշ մը...

Օրինակութիւնը շիտակ ընել՝ աս ալ մեծ գործ է. դուք կրնաք ապահով ըլլալ որ գործէն հասկցող մարդու ձեռքով եղաւ, եւ աչքերնիդ գոց՝ վստահ ձեռնարկել տպագրութեան: Տեղ տեղ ծանօթութիւններ դրած եմ դիմացը, անոնք նկատի կ'առնէք. յայտնի սխալներ կան՝ զորս պէտք է ուղղէք, ես ձեզի թողուցի:

«Ռազմիկ»ի[30] հատորները պրպտելուս Ռ. Զարդարեանի[31] մէկ գեղեցիկ յօդուածը գտայ՝ Թլկատինցիի սուտ մահուան լուրին առթիւ գրուած[32], նոյնպէս Թլկատինցիի Սաթենիկ աղջկան գեղեցիկ մէկ յօդուածը ուրիշ տեղ. գրեցի Չօպանեանին թէ պիտի օրինակեմ երկուքն ալ. գրեց ինծի. «Թլկատինցիին աղջկան գրութիւնը եւ Ռ. Զարդարեանի յօդուածը կ'արժէ որ օրինակէք, գաղափարնիդ լաւ է»: Երկուքն ալ օրինակած եմ՝ կը տեսնէք: Զայդ ԺԷ տետր, միւսը տետր Ժ.: Կը սպասեմ անձկանօք Ձեր պատասխանին:

Շատ սիրով Ձերդ
Հ.Ա. Ղազիկեան

Ը.

Վենետիկ [1926]
Ութ փետր[ուար]ի ՌՋԻԶ

Սիրելի Նուրիճան

Քանի մ'օր առաջ արդէն ճամբած էի Թլկատինցին, երբ հասաւ այս երրորդ նամակնիդ որ եթէ առաջինն եղած ըլլար, շատ լաւ պիտի ըլլար. օրինած ճան, երկրորդ նամակը ինչ վայրկեանի գրեցիք... այս վերջինները՝ որ կը ղրկեմ՝ շատ ճնշեցին եւ նեղեցին զիս. թուղթը որուն վրայ նշանակած էի՝ կորեր էր սենեակիս թոխբոխին մէջ, հարկ եղաւ որ նորէն այդ թերթերը նայիմ. չեմ գիտեր թէ բան պակաս մնա՞ց: **Արեւ[ելեան] Մամուլի** եռամսեայի մը մէջ ալ յօդուած մը ունի. «Գաւաթ մը միայն», բայց չկրցայ առ այժմ

գտնել. յաջորդաբար ինչպէս ատ՝ ուրիշ կտորներ ալ երբ գտնեմ կ'օրինակեմ եւ կը ղրկեմ:

Կը յուսամ թէ գոհ կը մնաք այսքան ղրկած ձեռագիրներովս, զոր՝ ոչ ոք կարծեմ պիտի կրնար ընել. հոս մէկը չկար, ուրիշ տեղ ալ ո՞վ պիտի ընէր. մարդ թոքախտ կ'ըլլայ ուրիշի փէշերը իյնալէն. օրինակող ալ գտնուէր՝ ինչպէս պիտի ընէին. շատ դժուար է, մանաւանդ **Արեւ[ելեան] Մամուլի** եւ **Հայրենիքի** մէջինները, տպագրութիւնը սոսկալի գէշ. պէտք է հասկնաս, գիտնաս, վերջապէս բախտաւոր էք՝ որ ձեռքս ինկաք, կամ ես ձեր ձեռքն ինկայ:

Ինէ «հաշուեցոյց» կ'ուզէք, սիրելի՛ս, ես ի՛նչ հաշուեցոյց կրնամ տալ ձեզի, 40 օր աշխատած էի, հինգ օր ալ հիմա, 45 օր գիշեր ցորեկ ետեւէն էի, 40 տեսակ թերթ խառնեցի. դուք հոտ Ամերիկա գործաւորներ ունիք, օրական ինչ՞ կը վճարէք, օրական մը որոշեցէք, թողունք ամենամեծ զոհողու-[թիւն]ը որ ըրի[.] ես այդքան ժամանակի մէջ ահագին գործ մը կ'արտադրէի, թողունք ընդօրինակու[թե]ան ինծի ազդած սոսկալի տաղտուկը, նստիլ գամուիլ գրել ու գրել, (գրողն ալ վերջապէս խամ մէկը չէ որ անվստահ ըլլաք ելած արդիւնքին) բան մը զոր երբեք պիտի չընէի. եթէ՝ ըսի՞ անգամ մը եթէ երկու սէրեր չգային չմիանային կէսի մը վրայ. որոնցմէ անշուշտ զօրաւորը ընտանեկանն էր (թէեւ միւսն ալ նոյնքան հզօր) ... այդ տաղտապանքը յանձն առնել տուաւ ինծի այս դժնդակ աշխատութիւնը... եւ աս ալ գիտնալու էք որ՝ նոյն իսկ եթէ տարան հանուի ըլլայ Խաշմանեանի ըսածին թէ՝ «օրերը ամիսներու բեղմնաւորութիւնն ունին», եւ Իսահակեանի[33] որ ամէն օր գրեթէ կը տեսնէ աշխատանքս, ուրիշ մը այդ ըրածս կրկին ժամանակի մէջ ալ պիտի չկրնար ի գլուխ հանել...

«փոստի եւ այլ յարակից ծախքեր»ու վրայ ալ խօսքեր մը կ'ընէք. ասոնք քանի մը տոլարի խնդիր են:

Ձեռագիրներուն մէջ ուղղելու կէտեր կան, Թլկ[ատինցի] ընդհանրապէս առանց ապաթարցի կը գրէ. կուզեմ, կընէի, եւ[այլ]ն երբեմն ալ կը դնէ. չեմ գիտեր, լաւագոյն չէ՞ արդեօք որ միշտ դրուէր, դարձեալ վա**յր**կեանը շատ ու շատ անգամներ վա**ր**կեան կը գրէ, ասոնք ալ ուղղուին եթէ՝ լաւ կ'ըլլայ, շատ յայտնի սխալներ ուղղած եմ, երբեմն դիմացը նշանակած, որոնց անշուշտ ուշ կը դնէք: Ճոխ հատորի մը նիւթ կայ առջինիդ, միւս հատորին հ[ամա]ր խօսք կու տամ նոյն նման օգնել Ձեզի, փնտռել եւ ղրկել հետզհետէ...

Մեղք վիզ մնալու բան չմնաց, այս վերջին նամակնիդ քաւեց բոլոր մեղքերնիս, բայց զիս շատ յոգնեցուց. կատարուած ճամբայ մը կրկին ընել դժնդակ է: Յամ[ենայն] դէպս, ես ուրախ եմ որ ձեր փափագը կատարեցի: Հրաշալի գործ մը պիտի ընէք հրատարակելով այդ գիրքը:

Շատ սիրով ձերդ Հ. Ա. Ղազիկեան

Գրիս անկարգու[թեա]ն ներեցէք,

Գլուխս դդում դարձաւ օրինակելէն, ձեռքս ալ յոգնեցաւ:

Թ.

Նիւ Եորք, Ապրիլ 16, 1926

Սիրելիդ իմ Հայր Ղազիկեան,

Ձեր նամակներն ու Թլկատինցիի գրութիւններուն ծրարները ատենին ստացեր եմ խորին շնորհակալութեամբ: Փետր[ուար] 23ի նամակիս պատասխանը ուշացած ըլլալով կը փութամ գրել Ձեզի:

Պրն. Յովհաննէս Աւագեանէն իմացայ որ ստացած էք Թլկատինցիի Սաներու Միութեանս կողմէն Ձեզի ղրկուած 50 տոլարի գումարը, եւ գոհ չէք մնացած: Գոհ չի մնալու իրաւունք ունիք: Բայց ներեցէք որ ըսենք թէ տրուած պարագաներուն տակ ատկէ աւելին ղրկել անկարելի էր: Գիտնալու էք որ մեր գործը սոսկ անհատական շատ համեստ ուժերով սկսուած ձեռնարկ մըն է, որ ցարդ ծանրացած է միայն երեք սաներու վրայ, թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս:

Հաւաքումի գործը հազիւ գլուխ հանած, հիմա մեր առջեւ կը ցցուի հրատարակութեան փշոտ խնդիրը: Ասկէ առաջ յոյս ունէինք թէ այս կամ այն ընկերութիւնը հաւանաբար պիտի ստանձնէ գործին հրատարակութիւնը. հիմա սակայն, այդ յոյսն ալ ձէթը հատած ճրագի մը պէս կը մարի: Ու մենք միս մինակ ստանձնած ենք Նիւ եորք եւ Պոստոն անձնական դիմումներ կատարել քիչ թէ շատ ունեւոր համակիրներու եւ բազմաթիւ անտարբեր, կամ գործէն դեռ լուր չունեցող սաներու, ապահովելու մտքով հրատարակութեան համար հարկ եղած գումարը: Կը յուսանք թէ այս գոնէ կիսով չափ պիտի յաջողի, եւ ծախքերուն մնացեալ մասն ալ բաժանորդագրութեամբ պիտի կրնանք հանել, ու գործին հրատարակութիւնը ապահով գետնի վրայ դնել:

Հրատարակութենէն ետքն է որ պիտի կրնանք նիւթական վարձատրութիւն մը եւս ընել Ձեզի: Այս մասին անձնապէս կ'ապահովցնեմ Ձեզ, սիրելի Հ[այր] Ղազիկեան:

Դեռ վերջերս լրացուցի հոս ընելիք ընդօրինակութիւններս ու սկսայ բոլոր գրութիւններն ալ կրկին կարդալ, սրբագրել տեղ տեղ, կշռել եւ դասաւորել զանոնք. սրբագրութեան ատեն մեծապէս կ'օգտուիմ Ձեր նօթերէն եւ մանր մունր բայց իսկապէս արժէքաւոր դիտողութիւններէն: Ձեր եւ մեր կողմէն հաւաքուած կտորներուն մէկ հինգերորդը, իբրեւ գրական մնայուն արժէք չի ներկայացնող բաներ, դուրս ձգեցի հաւաքածոյէն: Մնացեալները արդէն պատուական հատոր մը կրնան կազմել:

Կը խնդրենք որ մօտաւոր առիթով մը բարի ըլլաք մեզի հասցնելու նաեւ Թլկատինցիի «Ես իմ Պարտքս Կատարեցի»ին (1906 կամ 07, տեղը չեմ գիտեր) եւ «Այգիիս Փշենին» (հին կտոր մը որուն ալ տեղը չեմ գիտեր) ինչպէս նաեւ, եթէ կարելի ըլլայ գտնել, միայն ու միայն այն կտորները որոնք, Ձեր կարծիքով, գրական տոկուն արժէք կը ներկայացնեն, եւ որոնք ցարդ մեր եւ Ձեր հաւաքածներուն միացեալ ցանկէն դուրս կը մնան: Գիտենք թէ Ձեր բազմազբաղ գլուխը շատ ցաւցուցինք, բայց կը խնդրենք որ քիչ մը եւս օգնէք մեզի որպէսզի կարող ըլլանք գլուխ հանել արդէն

սկսուած գործ մը, որմէ մենք ոչ շահ ոչ ալ փառք կ'ակնկալենք: Մեր նպատակն է մեծ գրագէտի մը յիշատակը ապրեցնել եւ միանգամայն ընտիր հատոր մը նուիրել հայ գրականութեան:

Խորին յարգանօք եւ սիրով

Ձերդ

Բ. Նուրիկեան

ժ.

Վենետիկ 11-5-1926

Սիրելի Պ. Նուրիկեան

Ձեր Ապրիլ 16-ի նամակն ստացայ. նախապէս ստացած էի Ձեր քարտն ալ, եւ որովհետեւ կ'ըսէիք թէ մօտաւոր առիթով պիտի գրեմ, սպասեցի Ձեր գրելիքին, այդ է պատճառը չգրելուս:

Իրաւ է թէ Պ. Աւագեանին գրած էի հատուցման անբաւականութեան մասին. դժնդակը ատ չէ միայն, այլ այն՝ որ յետ այնքան աշխատութեան, աշխատու[թեան] եղանակին ամենապատուական օրերը անոր յատկացնելէ վերջ՝ խեր մ'իսկ չտայ. ուրկէ՛ ալ մտածեցիք ֆր[անք]ի վերածել տոլարը. եկած հասած ատենը արդէն իջեր էր վար, երթալով իջաւ իջաւ, մինչեւ 74-ի, այսինքն 74 լիրով կարելի է գնել 100 ֆր[անք] որ է ըսել 4-500 ֆր[անք]ը ծով նետել. որով ղրկածնիդ կը մնայ տետրիս մէկ անկիւնը... գրքի վր[ա]յ աշխատողը ե՞րբ խեր է տեսեր. բացի միայն գուցէ «Կոչնակ»ի խմբագրէն, որ կ'երեւի լաւ աստղի տակ ծնած է...

Ես հիմա «Մատենագիտու[թեա]ն»ս[34] ձեռնարկած եմ. բայց ամբողջացնելու հ[ամա]ր «Թլկատինցի»ին գործը, թէեւ ինծի շատ աշխատու[թիւն] պիտի պատճառէ, բայց Ձեզ եւ այդ գործը գոհացնելու հ[ամա]ր պիտի սկսիմ շատ վերջ ընելիք գործս հիմա իսկ ընել, այսինքն թերթերու պրպտումը. միայն պիտի խնդրէի՝ եթէ հնար է՝ ինծի իմ ղրկած նիւթերուս ցանկը ղրկէիք. ատի ես պէտք էի ըրած ըլլալ, բայց մոռցայ ընելու. թէեւ կարծեմ թէ հարկ իսկ չկայ. մի՛ ղրկէք: Սակայն չեմ կարծեր որ շատ շուտ կարենամ լմնցնել. բախտիս եթէ շուտ գտնեմ. ամառն ալ սկսաւ, օտարականներ կը լեցուին վանք, երեք փարայի անգլիերէն գիտեմ, իրենց պիտի առաջնորդ ըլլամ, յետոյ ուրիշ գործեր ալ ոտիս, վերջապէս կրնայ քիչ մը ուշանալ. դուք հիմա եղածը դասաւորեցէք, պատրաստութիւնները տեսէք, ես գտածս Ձեզի կը հասցնեմ: Գրագէտներու գործոց ապագայ հրատարակիչները այս մեր քաշած նեղու[թիւն]ները պիտի չքաշեն. բոլոր[ը] պիտի նշանակեմ «Մատենագիտու[թեան]» մէջ ...

Պիտի խնդրէի որ իմ սրտագին շնորհակալու[թիւն]ներս յայտնէիք Պ. Յ. Աւագեանին իր սիրուն գրախօսականին[35] հ[ամա]ր. թող ներողամիտ ըլլայ իրեն անձամբ չգրելուս. սաստիկ զբաղած եմ:

«Հայրենիք» օրաթերթի մէջ հայրենակից մ'ունիմ, որ ինծի անցեալները առաջարկեր էր լեզուական յօդուածներ գրել եւ ղրկել՝ խոստումով հատուցման, արդէն ծանօթ ինքը իմ վիճակիս, գրեցի 5-6 յօդուած եւ ղրկեցի, ո-

րոնցմէ առաջինը երեւցաւ. շատոնց ղրկած էի «Ամէն»ի մասին, ուշ դրին. չեմ կարծեր «Կոչնակ»ի ձեռքը կայ, քանի որ ինքը արդէն չուզեց լեզուական յօդուած: Չայ գրին հ[ամա]ր գրած յօդուածիս մէջ «Կոչնակ»ով ալ զբաղեր եմ, ուշ դրէք գրածիս, եւ հետեւեցէք ուղղու[թեան] եւ միակերպու[թեան]. ատանկ լաւ աշխատած պատուական թերթ մը՝ որ ամէն գոհացում տայ ընթերցողին՝ պէտք չէ երեւայ ատանկ բիծերով: Մեր սիրելի Աւագեանն ալ անփոյթ է իր աղուոր գրքին մէջ այդ գրին հանդէպ. իսկ մեր համշիրակ պատուական Պետիկեանը՝ ան ալ բոլորովին սանձաթող է:

Սիրալիր ողջոյններով ձերդ
Հ.Ա.Ղազիկեան

ԺԱ.

Վենետիկ 19 Մայիս 1926

Սիրելի Պ. Նուրիկեան

Յուսամ ղրկած նամակս ստացած էք: Ես սկսած եմ պրպտել թերթերը. գրութիւն մը գտայ, բայց վերնագիր չունենալուն՝ չօրինակեցի առ այժմ:

Այսօր քաղաք էի գացեր, ուզեցի չէքը փոխել, բայց գինը ա՛յնքան սատկած էր, որ մտածում մ'ունեցայ. այսինքն է զայն Զեզի ղրկել. հարկաւ պիտի բարձրանայ օր մը: Եթէ դուք կրնաք պահել զայն ու բարձրացած օրը փոխել. ինծի հաճէիք 50 տոլարի չէք մը ղրկել, իսկ եթէ չէք կրնար, ատ ալ մնայ ձեր քով. չ'արժեր իմ այնքան աշխատութիւնս քանի մը զեղչուած ֆրանքի հետ փոխանակել:

Այդ չէքը բերող նամակը բոլորովին բացուած էր, եթէ դրամ ըլլար մէջինը՝ արդէն անհետացած կ'ըլլար: Ամերիկայի սոսինձը կ'երեւայ շատ թոյլ է...

«Կոչնակ»ն երթալով ինքզինքը կը գերազանցէ. ի՞նչ հիանալի էր Մայիս 1-ի թիւը, նոյնպէս յաջորդը: «Անդորրութիւն» քերթուածին մէջ երկու սխալ սպրդեր են.

Օ՛հ, գոյութիւն չունի իմ բառգրքիս մէջ, պիտի ըլլայ **Օ՛ն**. առաջին եւ վերջին տան մէջ: Երկրորդ տան մէջ ալ 7րդ տող, պիտի ըլլայ **ջարդած** եւ ոչ **շարդած**, ասանկ բառ գոյութիւն չունի:

«Խոտի ծղիկ»ին մէջ սխալ չկայ:

Յարգանքներով ձերդ
Հ. Ա. Ղազիկեան

ԺԲ.

Յունիս 9, 1926, Նիւ Եորք

Սիրելի Հայր Ղազիկեան,

Ստացայ Ձեր երկու նամակները եւ վերջնոյն ծոցովը վերադարձուած չէքը, զոր պզտիկ վնասով մը կրցայ տոլարի վերածել: Հաճեցէք ներփակ գտնել 50 տոլարնոց վկայուած չէք մը:

Մեծապէս շնորհակալ ենք եւ ուրախ որ մեր փափաքին համաձայն յանձն առած էք շարունակել եւ լրացնել Թլկատինցիի գրութիւններուն հաւաքման դժուարին գործը: Կը յուսանք թէ մօտ ատենէն մեզի կը ղրկէք ինչ

որ կրնաք գտնել եւ օրինակել նոր աղբիւրներէ: Մենք հիմա տպագրական գործին ետեւէն ենք. քանի մը շաբաթէն, երբ անձնական դիմումներով եւ պարտքով կը յուսանք ապահոված ըլլալ տպագրական ծախքին մէկ կարեւոր մասը, գործը մամուլին կը յանձնենք: Հետեւաբար կը փափաքինք որ Ձեր ղրկելիք գրութիւնները կարելի եղածին չափ շուտ հասնին մեր ձեռքը:

Այս գործին համար Ձեր ըրած զոհողութիւնը բնաւ պիտի չմոռնանք: Եթէ հնարաւոր ըլլար լուսահոգի Թլկատինցին ինքը Էնդի Դէմէն շնորհակալութեան գիր մը պիտի ուզէր ղրկել Ձեզի իր Շարուր Աւագին միջոցով:

Կարդացի Ձեր Հայ Լեզուի Ուղղագրութեան Դասերը[36]: Հոն այնքան սիրուն ու համեղ ոճով մը Ձեր տուած դասերը ընտիր են եւ կրնան օգտակար ըլլալ բոլոր անոնց համար որ մեր գրական աղքատ հրապարակին վրայ գրիչ կը խաղցնեն այս կամ այն ուղղութեամբ: Կ'արժէ որ մեծ ու պզտիկ հայ գրողներ, ամէնքն ալ, ատեն[ը] անգամ մը հեղինակաւոր ձայնի մը սաստիչ ազդարարութիւնը լսեն մաքուր, իստակ գրականութեան մը սիրոյն: **Չի** ի եւ **չ** ի մասին Ձեր տուած դասը խելքիս այնքան չի պառկեցաւ շիտակը: Մտադիր եմ նորէն կարդալ ու սերտել զայն: Պիտի կարդամ նաեւ **Հայրենիք**ի մէջ վերջերս երեւցած Ձեր յօդուածաշարքը, զոր հաւաքած եմ ու խնամքով կը պահեմ:

Սիրով եւ յարգանօք
Ձերդ
Բ. Նուրիկեան

Յ. Գ. Թլկատինցիի հաւաքածոյին յարմար անուն մը կրնա՞ք թելադրել մեզի:

Նոյն

ԺԳ.

Վենետիկ 23-6-1926

Սիրելի Նուրիճան[37]

Յունիս 8 թուակիրդ ստացայ, ներփակ չէքով. շնորհակալ եմ. ուրախ եմ որ վնասը պզտիկ է եղեր հոտ, հոս 300 լիրի կորուստ կար …առ նուազն…

Գալով Թլկատինցիին գրու[թիւն]ներուն, մէ[՞]կ հատոր պիտի ընէք թէ[՞] երկու. եթէ երկու՝ շատ լաւ է. ինչ որ պիտի գտնեմ՝ կրնայ երկրորդ հատորին մէջ մտնել: Նայեցայ բաւական թերթ՝ բայց բան դուրս չելաւ. ամառն ալ եկաւ իր տաքերով. չ'աշխատուիր. օտարականներ կու գան վանք անգլ[իացի] կամ ամերիկացի, կէս փարայի անգլ[երէն] գիտեմ իբր թէ, պիտի առաջնորդես, չառաջնորդես ալ՝ աշխատիլը դժուար է. ես իմ աշխատութեանս ամէնէն գեղեցիկ եղանակը տրամադրեցի Ձեզի. գիւղագնացութ[եա]ն ալ երթալ կայ, եւն., եւն., մինչեւ Հոկտ[եմբեր] գրեթէ մեռած պիտի համարէք զիս, 50 օր է գիւղագնացու[թիւն]նիս. գիւղը ոչինչ չէ կարելի. եթէ հոս կրցայ գտնել՝ իսկոյն կը ղրկեմ: Սիրելի պ[արոն,] դժուար է, ամբողջ հատորներ կը դարձնես, մատներուդ ծայրերը կը չորնան, եւ յուսախաբ կը մնաս … յամ[ենայն] դէպս, դուք տեսէք պատրաստութիւնները. Թլկատինցին փոխ[ա-

նա]կ շնորհակալութ[եան] գիր ղրկելու էնտի դէմէն, [անընթ. բառ] թող իմացնէր թէ դեռ ո՞ր թերթերը մրոտած է…

1. «Հայրենի Բուրաստան» կամ 2. «Խարբերդունի»,

կամ 3. Ձայն Հայրենի երկրէն կամ 4. Արձագանգ հայրենի աշխարհէն

Չեմ գիտեր ի՛նչ անուն տալ[38].

«**Չի**ի եւ **չ'**ի մասին Ձեր տուած դասը խելքիս այնքան **չի պառկեցաւ** շիտակը» … կը գրէք.

Կը եւ **կ'** մասնիկներուն [մասին գրածներս] խելքերնիդ կը պառկի՞. անշուշտ պիտի ըսէք: **Կը** գրեմ, **կ'ու**տեմ: Նոյնքան դիւրին է **չի** եւ **չ'**:

Չեմ բերեր Չեմ ուտեր

Չես բերեր Չես ուտեր

Չի բերեր **Չի** ուտեր (=չ'ուտեր)

Չի բերեր ըսինք, որովհետեւ բաղաձայնով սկսաւ.

Չ'ուտեր ըսինք, որովհետեւ ձայնաւորով սկսաւ. չի ուտեր (= չ'ուտեր)

Այս **չի**ն ուրկէ՞ բուսաւ պիտի ըսէք.

Գրած եմ եւ անշուշտ տեսաք որ հին ատեն

չեմ ի բերել

չես ի բերել

չէ ի բերել կ'ըսէին, **ի**-երը վերցան, բայց երրորդ դէմքին **չէ**ին միացաւ, եւ եղաւ **չի՛**, այնպէս որ այդ **չի**-ին մէջ էական **է** բայը կայ, (չեմ, չես, չի, չ'), որ **ի**-ին միացած՝ եղած է **չի**. եւ մահասարսուռ ոճիր է գրել

չբերեր փոխանակ **չի բերեր**-ի եւ դարձեալ երբ չե՞մ բերեր

չե՞ս բերեր կ'ըսեմ, կը շեշտեմ էականները. արդ եթէ **չբերեր** գրեմ՝ ու՞ր պիտի շեշտեմ. **չբերե՞ր** պիտի ընեմ, ինչպէս կ'ընեն հայու անուան տակ քիւրտ օղլու քիւրտերը.

չե՞մ, չե՞ս, չի՞ բերեր

չե՞մ, չե՞ս, չ'ու՞տեր երբ գրելու ատեն քիչ տարակուսիք թէ արդեօք **չի՞** պէտք է թէ **չ'** արտասանեցէք բայը, եթէ շեշտը սկիզբը զարկիք՝ ըսել է որ **չի** պիտի ըլլայ. չե՛մ բերեր, չե՛ս բերեր, **չի՛ բերեր**.

Եթէ շեշտը վերջն է՝ այն ատեն պարզ **չ** պէտք է եւ ոչ **չի** կամ **չ'**[.] պիտի չըգրէր. շեշտը վերջն է եթէ չըն**էր**, պիտի չուտ**էր**, թող չգր**էր**, կը տեսնէք որ ասոնց շեշտը վերջն է:

ըրէ՛, չըներ, շեշտը առջեւն է, պիտի ըլլայ **չ'ըներ**

Գրէ՛ կ'ըսեմ **չի՛ գրեր**, **he does** not write այդ **հի տըզը** հետը միշտ **չի** կամ **չ'** կ'ուզէ. մինչ երբ «թող **չգրէր**, ո՞վ ըսաւ որ գրէ», ըսեմ, կը տեսնէք որ այս **չգրէր**ը տարբեր է վերինէն…

Ընտո՞ր կը դժուարին հասկնալ շատեր այս պարզ բանը, չեմ հասկնար, ես գրելէն յոգնեցայ, անոնք չհասկնալէն չյոգնեցան, եւ ոչ **չի յոգնեցան**, ինչպէս եւ ոչ **չի պառկեցան**, ինչպէս գրեր էիք. այդ **ի**-ն ի՞նչ գործ ունի հոտ. **չպառկեցաւ**. ի-ն պէտք պիտի ըլլայ երբ ներկայի Գ. դէմքն ըլլայ. **չի՛ պառկիր**: Քանի մը անգամ կարդացէք գրածներս՝ կը հասկնաք…

Ըսէիք շատ սիրելի Պ. Պէննէեանի[39] որ զմայլելի «Կոչնակ»ին էջերը մաքուր պահէ սոսկալի սարսափներէ. Ա[ստուա]ծ իմ, ինչ ոտանաւորներ կ'երեւան հոն. բացէք էջ մէկը «Ազգ[ային] քնարերգ[ութիւն] գիւղին մէջ»ը.

Խրճիթին մէջ կ'արթննայ **շառաչն բացուող հացերուն**
առջեւն վառուած

շահրակն միալար
կը բռնուին (երեք վանկ)

այս այլանդակութիւններով ինչու՞ պղծել այդ այդքան գեղեցիկ հանդէսի մը էջերը. ո՞ր բերանը կրնայ հնչել այդ տողերը.

փողոցները ամայի եւ արահետներն աննշան

4-3-4-3 է չափը. այդ երջանիկը **արահետներն** բառը ճեղքեր է, **ներ**ն յաջորդին տուեր է. **աննշան**ն ալ երկու վանկ հաշուելով. պատիւ չէ «Կոչնակ»ին. լաւ էր ճերմակ թողուիք այդ էջը ... ես բեռ մը ոտանաւոր ղրկած եմ, ինչու՞ չեն դներ, բեռներով ալ մասնաւոր «Կոչնակ»ի հ[ամա]ր պատրաստած եմ եւ կը պատրաստեմ...

Սիրալիր բարեւներով ձերդ
Հ. Ա. Ղազիկեան

ԺԴ.

Նիւ Եորք, Յուլիս 17, 1926

Սիրելի Հայր Ղազիկեան

Յունիս 23 թուակիր Ձեր նամակը ստացայ: Որոշած ենք Թլկատինցիի գրութիւնները մէկ հատորով լոյս ընծայել: Այս հատորը պիտի բաղկանայ երեք մասերէ. Արձակ, Ոտանաւոր եւ Թատերգութիւն:

Կը խնդրենք որ Թլկատինցիի հատորին նուիրուած Ձեր թանկագին աշխատանքը, որուն մեծ մասը կատարած էք արդէն, գլուխ հանէք Ձեր խոստման համաձայն: Ձեր գործը դիւրացնելու համար կը ներփակեմ ցարդ մեր եւ Ձեր կողմէն հաւաքուած գրութիւններուն լիկատար ցանկը: Չեմ կարծեր թէ այս ցանկէն դուրս շատ բան կը մնայ մութի մէջ:

Երկու երեք շաբաթ առաջ փնտռուելիք գրութիւններու կարճ ցանկ մը ղրկեցի Ձեզի: Ուրախ եմ ըսելու թէ այդ ցանկին մէջ նշանակուած գրուածքներուն կարեւոր մասը կրցայ ձեռք ձգել հոս, երկու օր առաջ, եւ այդպէսով Ձեր ընելիքը մասամբ թեթեւցնել. (տես ներփակ ցանկին վերջամասը - թիւ 64, 65 եւ 66):

Մտադիր ենք հատորը տպագրութեան յանձնել մօտ ատենէն: Հետեւաբար զայն կարելի եղածին չափ ամբողջական ընելու համար դարձեալ կը խնդրենք որ ներփակ ցանկէն դուրս մնացած արժէքաւոր գրութիւններ, եթէ կան ու եթէ կարելի ըլլայ գտնել տալ, հաճիք մեզի հասցնել առաջին պատեհութեամբ:

Ձեր տուած լեզուական դասը կարդացի, սերտեցի, այս անգամ խելքիս պառկեցաւ: Հազար շնորհակալութիւն:

Սիրալիր յարգանօք

ԺԵ.[40]

Սիրելի Նուրիկեան, Յուլիս 17 թուակիր նամակնիդ ներփակ ցուցակով ստացայ:

«Երկու, երեք շաբաթ առաջ՝ փնտռուելիք գրու[թիւն]ներու կարճ ցանկ մը ղրկեցի Ձեզի:

Ուրախ եմ ըսելու թէ այդ ցանկին մէջ նշանակուած գրուածքներուն կարեւոր մասը կրցայ ձեռք ձգել հոս, երկու օր առաջ, եւ այդպէսով Ձեր ընելիքը մասամբ թեթեւցնել …

Եթէ ես ժամ[անա]կ ունեցած ըլլայի եւ օրինակա՛ծ՝ ինչպէս պարապ տեղ օրինակեցի «ես իմ պարտքս կատարեցի»ին մեծագոյն մասը… միշտ միեւնոյն մարտիրոսու[թիւն]ը, կ[ա]մ շփոթութիւնը: Ժամանակին ասոնք բոլոր օրինակած եւ ղրկած կ'ըլլայի ես՝ եթէ ինծի բնաւ ցանկ ղրկած չըլլայիք:

Ի՛նչ որ է. օրինակածներս կը ղրկեմ, օրինա՛ծ Նուրիկեան…

Թերթ խառնել պրպտել կարելի բան չէ, ալ ոգեսպառ եղայ. գրեցէք ատեն ատեն ծանօթներու, կարելի է գիտնան թէ ո՞ր թերթերու մէջ նիւթ կայ, եւ ինծի անմիջապէս իմացուցէք. բայց այն անգամուն պէս չընէք, աւելորդ տեղը մի՛ յոգնեցնէք զիս. երբ անկարելի կ'ըլլայ գտնել ձեր մօտ՝ այն ատեն գրեցէք որ օրինակեմ:

«Ի՞նչպէս կը նպաստեն»ը հիանալի բան է, չըլլայ թէ դուրս ձգէք[41]:

Կէս ձգեցի «Ես կատարեցի իմ պարտքս» գրու[թիւն]ը:

Ուրախ եմ որ Չայի խնդիրը ըմբռներ էք. «Կոչնակ»ի մէջ Պ. Մահտեսեան[42] գրեր էր յօդուածիկ մը. պատասխանեցի, բայց այդ երջանիկը ո՞ր աստղերուն մէջ կ'ապրի, կարելի՞ է ասանկ բան գրել. ըսածէս աւելի տրամաբանական՝ բանաւոր՝ ուղիղ՝ ճշմարիտ բան կարելի՞ է ըլլայ. գրչի մէկ հարուածով կ'ուզէ տապալել իմ ա՛յնքան տարիներու աշխատութեանցս պտուղը… Ո՛չ եւ ո՛չ, թող աղօթք ընէ որ «Կոչնակ»ին մէջ երեւցաւ թէ ոչ՝ այդ ոճով չէի գրեր: Բայց կարդացէք այդ յօդուածները աւելի պիտի ըմբռնէք խնդիրը:

Ուրեմն, ինծի ղրկեցէք թէ ո՞ր թերթին մէջ յօդուածներ ունի, եւ ես անմիջապէս կը ղրկեմ Ձեզի:

Շատ սիրով
Ձերդ՝ Հ. Ա. Ղազիկեան

ԺԶ.

19 Օգոստ[ոս] 1926, Նիւ Եորք

Սիրելի Հայր Ղազիկեան,

Շնորհակալութեամբ ստացայ Թլկատինցիի գրութիւններուն վերջին ծրարը եւ Ձեր նամակը: Ասկէ ետք, Ձեր թանկագին ժամանակը չգողնալու համար, նոր գրութիւններու տեղն ու թուականը կ'իմացնենք Ձեզի, եթէ հնարաւոր ըլլայ: Այս անգամ գրասէրին մէկը սա կտորը մատնանշեց.

«Հեռուի Սուրբը Զօրաւոր Կ'ըլլայ», ԾԱՂԻԿ, Շամտանճեանի[43] (այս «Ծաղիկը» երկու տարի միայն բացուած է եւ հաւանօրէն ուրիշ բան ալ կը պարունակէ մեր ողորմած հոգի վարպետէն):

Երկու օրէ ի վեր ՀԱՅՐԵՆԻՔԻ մէջ կը կարդամ Պրն. Մահտեսեանին ուղղուած Ձեր պատասխանը: Խեղճը բզիկ բզիկ կ'ընէք ու կը զարմանաք իր անգիտութեանը մասին: Ձինքը ճանչցողները սակայն բնաւ չեն զարմանար: Այս մարդը, որ իր հայերէնը Եփրատ Գոլէճի չոր ու ցամաք մթնոլորտին տակ սորվեր է ժամանակաւ, ինքնատպութիւն ըսուած բանին ստուերն անգամ չունի: Ինչ որ գրէ - թէ՛ հայերէն եւ թէ՛ անգլիերէն - մէջբերումներով կը շէնցնէ եւ ուրիշներու կարծիքին կը կռթնի: Իր նեցուկները փառաւոր կերպով կը ջախջախէք Ձեր յօդուածներուն մէջ ու մարդը գետին կը ձգէք անօգնական: Խեղճը, լսածիս համեմատ, անճրկեր մնացեր է: Իր պարագան, սիրելիդ իմ Հայր Ղազիկեան, միտքս կը բերէ առածին հանրածանօթ, ողորմելի քոթոթը («Տեսէք քոթոթն ինչպէս քաջ է, որ փիղին դէմ իսկ կը հաջէ»): Իմ կարծիքովս չարժէր իրմով զբաղիլ: Ձեր յօդուածները միշտ հաճոյքով կը կարդամ, ոճերնիդ համեղ, հիւթեղ է: Ձեռքերնիդ դալար:

Սիրով եւ յարգանօք
Ձերդ
Բ. Նուրիկեան

ԺԷ.

1-9-26
Վենետիկ[44]

Սիրելի Նուրիկեան

Առի ձեր երկտողը. Շամտանեանի **Ծաղիկ**ին մէկ տարին միայն ունինք՝ 1903. եւ ամբողջ հատորը երկու անգամ խառնեցի. Ձեր նշանակած յօդուածը չկայ մէջը. կ'երեւի ուրիշ տարւոյ մէջ է. երկու տարի հրատարակուած է՝ գրած էիք. կը ցաւիմ որ այս անգամ չկրցայ օգտակար ըլլալ...

Գալով ատ Մահտեսին պատասխանիս, գիտցէք թէ ո՛րքան ինքզինքս բռնած եմ որ չելլեմ գծէ դուրս. ըրածը սոսկալի բան է. մէկ գրչի հարուածով կ'ուզէ տապալել 20 տարիէ ի վեր թափած քրտինքներս. այդ **չ**այի խնդիրը մղձաւանջ դարձած է ինծի. երջանիկ պիտի ըլլամ մեռած օրս՝ եթէ ամէն հայ հասկցած ըլլայ այդ այնքան դիւրին կնճիռը եւ ուղիղ գրէ. եւ ասի ելեր՝ առանց բան մը գիտնալու՝ ինծի դէմ կը գրէ. եթէ «Կոչնակ»ի մէջ գրած չըլլար՝ ուրիշ ոճով պիտի գրէի, ալա [1 անընթ. բառ]. երրորդ յօդուածը դեռ չտեսայ, դուք ալ տեսած չէիք՝ գրած ատեննիդ... Մալայեցին հասկցաւ, բայց այդ Հայ-Մալայեցին հասկցա՞ւ, խնդրական է...

Ես պատրաստ եմ սիրով օգնելու Ձեզի, միայն թէ ըլլան հոս Ձեր ուզածները. առանց քաշուելու նշանակեցէք.

Սիրով Ձերդ
Հ. Ա. Ղազիկեան

ԺԸ.

Վենետիկ 12/10/1926

Սիրելիդ իմ Նուրիկեան

27 Սեպտ[եմբեր]ի Ձեր պատուական նամակն ստացայ. ուրախ եմ որ արդէն տպագրութեան յանձներ էք Թլկատինցիին գործերը. ա՜խ ո՛րքան կը ցաւիմ որ չեմ կրնար կոր ուզածիս պէս օգտակար ըլլալ Ձեզի. շատ թերթ խառնեցի, նորէն կը մտածեմ. բոլոր **Ծաղիկ**ներն ու **Արեւ[ելեան] Մամուլ**-ները աչքէ անցընել, թէեւ սոսկալի զբաղած եմ. ինծի կրնայի՞ք իմացնել մօտաւորապէս գիրքը ե՞րբ կ'աւարտի. վերջին էջերն ալ կրնանք դնել նոր գտածներս:

Գալով Մահտեսիին, այդ մարդուն ինծի հասցուցած չարիքը անչափելի է. կարդացի այն անզգամ յօդուածը, պատասխանը տուած եմ չորս յօդուածով, վերջինը երէկ ղրկեցի. մե՜ղք որ խնդրին մէջ Թիրեաքեանը կար. բայց հայերէն լեզուն՝ ինչպէս ըսած եմ՝ ամէն բանէ վեր է. չեմ թողուր որ աղճատեն. թէեւ ա՛լ վերջինն է. ի՛նչ կ'ուզեն՝ ան ընեն. պիտի սկսիմ «Մատենագիտութեանս», ու ալ ինծի հ[ամա]ր գոյութիւն չունին ատոնք: Ժամանակը գէշ էր՝ ցաւալին այս է՝ որովհետեւ մեր ժողովուրդին մեծ մասը դեռ չի գիտեր զանազանել չարն ու բարին. չի գիտեր ճանչնալ իրական արժանիքը. ես իրեն ցուցուցած եմ գերանը, ճիշդ դուք ալ իմ զգացումս ունեցեր էք. վերջընթեր յօդուածս՝ «Զի՞ [2 անընթ. բառ]...»ով կը սկսի վերջինը «կեղծաւոր ե՛ւն. նախ [անընթ. բառ]...»:

Եթէ նորէն բերանը բանայ, այս անգամ Թիրեաքեանն[45] ալ վերէն վար կը ցօղուեմ, կը կարդամ՝ կը վերլուծեմ գրքերը եւ տուժողը ես չեմ ըլլար՝ գոնէ բարոյապէս. ինծի հետ խաղալ չ'ըլլարը՝ չեն գիտեր. 25 տարի առաջ դիմացս բանակ մը մարդ կար՝ ամէնուն ալ հախէն եկայ. Իւթիւճեան[46] ըսեր է որ ես չեմ տեսներ, դուք կը տեսնէք զինքը, պագէք իմ կողմէ իր ձեռքը, ան մեծ մարդ պիտի ըլլայ... Պէրպէրեան[47] եւս զմայլելի տողեր մըն էր գրեր: Հրանտ Ասատուր[48] նոյնպէս. այն ատեն, երբ դեռ անփորձ էի ... անկէ յետոյ ի՜նչ գրավէճեր ... ես օրէնքով՝ կանոնով կը խօսիմ, կարծիք չեն իմ ըսածներս. այդ նենգամիտ՝ չար մարդը առանց ոեւէ բանէ տեղեկ[ութիւ]ն ունենալու մէջտեղ ինկեր՝ աւելորդ աղմուկ՝ ժխոր կը յարուցանէ: Ուղիղ դատողութիւն՝ միտք ունեցող մարդը երբ կարդայ յօդուածներս՝ իրաւունքը ինծի կու տայ. չտա՛յ ալ՝ լեզուն կու տայ...

Իրաւունք ունիք, մեր մէջ, եւ ոչ ուրիշներու, վերջ՝ վախճան չունին լեզուական խնդիրները. աւելորդ է սիրտ հատցնել. եւ այդ շնական յօդուածէն վերջ զգացածներս պատմել իսկ կարելի չէ:

Թէ՛ **մինչեւ ցայսօր, մինչեւ ցարդ** եւ **թէ՛ ցայսօր՝ ցարդ** կրնան գրուիլ. ուղիղ են երկու ձեւերն ալ.

Բագրատունին՝ Կիկերոնի կատելինայի դէմ գրած գրին մէջ՝ որուն սկիզբը թարգմանած է ինքը՝ կը սկսի. «Գիտե՞ն իցէ քեզ»... ուրիշ մը մենէ իրմէ առաջ թարգմանած է նոյնը՝ «մինչեւ գիտե՞ն իցէ» ... խնդիրը ճաշակի է, գրութեան տեղւոյն, պարագային, եւն. ես մինչեւ օրս՝ կ'ըսեմ, «մինչեւ հի-

մա», «մինչեւ ցարդ» ալ կ'ըլլայ. **ցա՛րդ** երբ ուզես ոյժ տալ, մանաւանդ ոտանաւորներու մէջ:

Արդեօքին վ[րա]յ հարցական դնել՝ անհեթեթ է. ռուսահայոց գործն է. **միթէ**ի վրայ ալ կը դնեն. երկուքն ալ սխալ. դու՞ իցես արդեօք. կա՛մ արդեօք դու՞ էիր, կերա՞ր արդեօք ի նմանէ. այսպէս կ'ըսեն նախնիք, եւ ուղիղն ալ այս **է**.

Սիրալիր ողջունիւ Զերդ

Հ. Ա. Ղազիկեան

Յ.Գ. Զեզի, սիրելի Նուրիկ, բան մ'ըսեմ եւ ըրէք: «Կոչնակ»ի կողքին վրայ քանի մը տողով խնդրեցէք որ՝ ով որ գիտէ թէ Թլկատինցիի այս ինչ կամ այն ինչ գրութեան ուր տպուիլը՝ թող շնորհ ընէ իմացնելու. լաւագոյն եւ դիւրագոյն միջոցը այս է. հարկաւ գիտցողներ կան. այն ատեն կ'իմացնէք ինծի եւ ես անմիջապէս կ'օրինակեմ եւ կը ղրկեմ՝ եթէ ունինք թերթը:

Նոյն

ԺԹ.

Վենետիկ 6 Դեկտ[եմբեր] 1926

Սիրելի Պ. Նուրիկեան

Հիմա առի Ձեր նամակը. ուրախ եմ որ Թլկատինցիի վերջին գր[ութիւն]ը ստացեր էք:

Ես ենթադրեցի որ Թլկատինցին Վարուժանի[49] «Նաւասարդ»ին մէջ եւս գրով[թիւն] ունենայ. վանքը չկայ այդ հատորը, իմինս ալ՝ բուն Վարուժանէն տրուած՝ կորաւ աքսորի մէջ: Գրեցի իր աշխատակցին, Սիրունիին[50], որ գոնէ հատ մը իս ղրկէ, եւ եթէ չի կրնար՝ գոնէ բովանդակու[թիւնը] ղրկէ: Ղրկեց, եւ ահա իրաւցնէ կայ մէջը. եւ խորագիր ունի՝ «Ամառին նոր Արմաղանը»[51]. ես հատ մը ղրկեցի ձեզի Արեւ[ելեան] Մամուլէն՝ «Ամառին Արմաղանը». 1906-ին, այս **նոր** յաւելուածն ունի, ուրեմն նոյնը չէ, եւ տպուած է 1914-ին, ըսել է Թլկատինցիին վերջին գրու[թիւն] է: Հիմա պիտի գրեմ եւ խնդրեմ որ կա՛մ օրինակէ եւ ինծի ղրկէ, կ[ա՛]մ գիրքը ղրկէ եւ ես օրինակեմ. (վերջը գիրքը իրեն դարձնելու պայմանաւ, ինծի «Մատենագիտութեան» հ[ամա]ր ալ պէտք է արդէն): Այսպէս կ[ա]մ այնպէս ես ձեռք կը ձգեմ այդ գր[ութիւն]ը, եւ անմիջապէս կը ղրկեմ Զեզի: **Մասիս**ներուն մէջ բաւական բաներ գտայ իրմէն՝ Աշուղներու երգերու հրատարակութիւններ, եւն, որոնք անշուշտ իր գործին մէջ չեն մտներ՝ բայց Մատենագիտութեան մէջ այո:

Անհուն շնորհակալութիւններ ձեզի որ կը խոստանաք «ոյժ եւ ժամանակ» տրամադրել «թափուելիք ջանքերուն» յոբելեանիս տօնմանը առթիւ, կարգ մը ամերիկաբնակ ազնիւ հայերու նախաձեռնութեամբ: Եւ կը մաղթէք որ այդ մտադրութիւնը ժիր գետնի վրայ դրուի, իրականանայ, շնորհակալ եմ: Ինչ որ պիտի ըլլայ՝ հո՛տ պիտի ըլլայ. եւ եթէ հիմա պիտի չըլլայ՝ այսինքն այսօր չէ, Մահտեսին **օրթալըխը** մնտռեց, ժաժն ալ վրայ եկաւ[52], որով այս տարին կ'անցնի, եթէ Ա[ստուա]ծ ուզեր է դէպի Զատկի կողմերը եթէ կրնայ ըլլուիլ, անշուշտ կը ձեռնարկեն վրայ կեցողները. իրենք արդէն

իրենցմէ վառուած են, եթէ պիտի չըլլայ, թող չըլլայ, եւ բնաւ չըլլայ. 20 տարի վերջ 50-ամեակս պիտի տօնեն եղեր. խերն եմ անիծեր ատոր, ո՞վ ըսաւ որ պիտի ապրիմ. եթէ ապրիմ ալ՝ արդէն խռֆած՝ ինչ բանի բաւարար պիտի ըլլամ: Ատի հի՛մա պէտք է, որ ոյժ գայ վրաս, ազատիմ հոգերէ, եւ «Մատենագիտութիւնը» որուն ահա ձեռնարկեր եմ, գլուխ հանեմ: Սոսկալի բան է, աշխարհիս բոլոր խենթերը իրար գային՝ ասանկ բան չէին կրնար մտածել: Պիտի կենդանացնեմ, պիտի անմահացնեմ հայ գրագէտներն ու հայ գրականութիւնը. եղածը եթէ տեսած էք՝ ատկէ 20 անգամ աւելի դժնդակ ու դժուար, բայց աննման բան պիտի ըլլայ. գործ մը՝ որուն նմանը ոչ մէկ ազգ ունի եւ ունեցած պիտի ըլլայ... մեր գրականութիւնը բոլոր լրագրաց եւ հանդէսներու մէջ է. ինչու՞ այսքան տառապինք Թլկատինցիին յօդուածները փնտռելու. դուք եթէ քիչ մ'համբերութիւն ունեցած ըլլայիք, արդէն ատոնք բոլոր պիտի գտնէիք Թլկատինցիին անուան տակ, ինչպէս բոլոր գրագէտներուն, եւ[ն.], եւ[ն.] ...

«Մատենագիտութիւն»ը «իմ գործերուս գլուխը» պիտի չըլլայ, այլ Հայ գրականութեան գլուխ գործոցը. սերունդները դարէ դար պիտի օրհնեն զիս, բայց պէտք է ծայրն հասնիլ, երբեմն վրաս վիատութ[իւն] կու գայ, պիտի կրնա՞մ ծայրն հասնիլ. վ[ա]ս[ն] զի ուզածիս պէս չեմ կրնար աշխատիլ, նիւթական հոգերը մարդը կը խեղդեն, պատճառ կ'ըլլան ահագին ժամերու կորուստին ... տեսնենք, Ա[ստուա]ծ ողորմի ինծի...

«Հայրենիք»ի մէջ տեսայ, կ'ըսէք, ձեր նոր յօդուածաշարքը. կանուխէն եղած բաներ են. ալ «Մատենագիտու[թենէն]» զատ ուրիշ բանի չեմ նայիր, բայց ըլլայ «Հայրենիք», մանաւանդ «Կոչնակ» այնչափ կ'ուշացնեն ղրկուածները, որ համ հոտ կը փախչի. «Հայրենիք» դեռ չհրատարակեց Մահտեսիին դէմ ղրկած չորս յօդուածներս. կ'երեւի միտք չունի. Չագմաքեան մը ելեր էր մէջտեղ, ատոր մասին գրածս դրաւ. «Կոչնակ»ն ալ ուրիշ **անթիքա** մարդ մը կայ՝ «առանց ընդ բանս ինչ ածելոյ» կ'առնէ կը դնէ յօդուածը. ինչպէս ըրաւ նաեւ Մահտեսիինը, որ այնքան բաներու պատճառ եղաւ: - Այսօր Լ. Բաշալեանէ[53] նամակ մ'առի, որուն մէջ կ'ըսէ. «Ձեր այս թանկագին գործին քով (հին հրաշակերտները հայերէնի վերածելու), ես նո՛յն չափով կը գնահատեմ Ձեր կատարած **վարժապետի** դերը՝ քիչ մը կարգ կանոն մտցնելու համար այն լեզուին մէջ որ այսօր կը գրուի:... Եւ ի՜նչքան գոհ եմ երբոր ձեր անաչառ ու անողոք հարուածներուն տակ կը շշմեցնէք մեր ամբարտաւան տգէտները - երկու բառ որ համանիշ են ընդհանրապէս:

Մեր սիրելի Պ. Աւագեանն ալ այս կէտին մեծ կարեւորութիւն կու տայ. թէեւ ցաւ է ըսել՝ որ մտիկ ընող չկայ, «Կոչնակ»էն սկսեալ. մե՜ղք... ի՜նչ հիանալի պիտի ըլլար եթէ տարիներով այդ բաները պրպտող, քննող-պարզող մարդոց խօսքին հաւաստի ընծայուէր՝ ոչ կուրօրէն: Իրենք ալ կրնան քննել եւ տեսնել...

Ներողամիտ եղէք եթէ չկրցայ ձեզի ղրկել օրինակ մը Պապինիի «Պ[ա]տմ[ութիւն] Ք[րիստո]սի»[54] գրքէն. չունիմ, սիրելիս, քանի մը օրինակ

կու տան, անոնք ալ քանի մը հատը հոս ձեռքէս խլեցին, քանի մը հատը դուրսէն, ես իսկ մնացի տկլոր. կարդացէք խմբագրու[թեան] ղրկել տուի, կ'արժէ կարդալ. ներփակ կը դնեմ մեր վարդապետներէն մէկուն նամակը, **շիրին** բան է. ուրիշներէ ալ ստացայ, Դուրեան[55] Սրբազանն ալ գրեր էր, բայց ասի բնագիրը կարդացող հասկցող ալ է. արուեստէ ալ կը հասկնայ: Ատի շնորհ ընէիք՝ իմ սիրալիր ողջոյններովս յանձնելու Պ. Աւագեանին. իր-մէ ալ կը սպասեմ կարդալ աղուոր բան մը նոյն գրքին առթիւ... եթէ կ'արժէ, թէ ոչ՝ ... խիստ:

Սիրալիր ողջոյններով,
Ձերդ
Հ.Ա. Ղազիկեան

Ի.

8 Փետրուար 1927[56]

Սիրելիդ իմ Նուրիկ - ինչպէս գրած էի արդէն, Պուքրեշէն բերել տուի «Նաւասարդ»ի[57] հատորը, եւ հիմա նորէն պիտի դարձնեմ: Օրինակեցի, շատ գեղեցիկ կտոր մըն է. մեծ պակաս մը պիտի ըլլար եթէ չունենայիք ասի: Ատեն ատեն դեռ պիտի գտնուին ուրիշներ ալ, բայց երկրորդ տպագ-րութեան կ'ամբողջացնէք: Երբ ամբողջացնեմ «մատենագիտութիւն»ը ա-տոնք ալ երեւան պիտի ելլեն անշուշտ ո՛ր ծակն ալ ըլլան:

ութ փետր.
Սիրալիր ողջոյններով Հ. Արսէն

ԻԱ.

Վենետիկ 17-3-1927

Սիրելիդ իմ Նուրիկեան

Ձեր Մարտ 2 թուակիրն ստացայ: Ուրախ եմ որ ղրկածս հաճոյ է անցեր Ձեզի եւ Ձերիններուն: Այս օրերս **Լոյս**ի 1897-98 տարիները կը քրքրէի խմբ. Սուլթանեան: Մեր Թլկատինցին «Պահ մը գիւղի մարդերուն հետ» խո-րագրով յօդուած մ'ունի, որ դժբախտաբար կէս մնացած է. կը սկսի թ[իւ] 16էն եւ 17, 19, 21 (շարունակելի) թիւերուն մէջ ալ կայ, սակայն թերթը թ[իւ] 22-էն կը դադրի, որուն մէջ չկայ շարունակով[թիւ]նը, եւ այնպէս կիսատ կը մնայ:

Չօրինակեցի՝ կիսատ ըլլալուն. դուք ի՞նչ կ'ըսէք:

Մատենագիտու[թիւ]նը առաջ կ'երթայ, բայց շատ դանդաղ. կը վախեմ որ չկարենամ ծայրն հասնիլ-. շատ դժնդակ եւ երկայն գործ է, վրաս ալ սկզբնական եռանդը չմնաց, եւ պարագաները եռանդ տալէ աւելի՝ զայն մարող են ... տեսնենք. ըրած գործս խելքի, մտքի մէջ սղմուելիք գործ չէ, սոսկալի՝ հրէշային բան է, բայց տակէն ելլելու հ[ամա]ր **տապան** պէտք է. եւ այդ տապանը կը կարծէի թէ պիտի չպակսէր իմ քովս. բայց իրականու-թիւնը տարբեր եղաւ. հոգ չունեցող սիրտ, հանդարտ գլուխ պէտք է՝ ատանկ չոր՝ ապառաժ գործերու լծուելու հ[ամա]ր...

Յամ[ենայն] դէպս, շնորհակալ եմ ձեր ազնիւ զգացումներուն, ո՛վ գիտէ, կարելի է թէ ազնիւ սրտերու մաղթանքները ունենան իրենց արդիւնքը՝ ո-վասիս ըլլան այդ անծայր անապատին մէջ, եւ կարենանք ծայրն հասնիլ... եթէ ճամբան չընկճուինք...

Սիրալիր ողջոյններով Ձերդ
Հ. Ա. Ղազիկեան

Յ. Գ. «Բնաշխարհիկ»ի մնացեալ մասը լոյս տեսնելու յոյս չ'երեւար հորի-զոնին վ[րա]յ մնացեալ մաս չկայ, պէտք է պատրաստել ... բայց ո՞վ...

Նոյն

ԻԲ.

Վենետիկ 25-2-1928

Սիրելիդ իմ Նուրիկեան

Յունվար 24ի Ձեր պատուականն ստացած եմ, սպասեցի որ հասնէր Ձեր աւերած չէքը, եւ ըստ այնմ երկուքը մէկ ընէի, որովհետեւ գլխիվայր խրած եմ «Մատենագիտութեան» մէջ, ամէն բան թողած. կենդանացնելու, անմա-հացնելու հ[ամա]ր հայ հանճարը, հայ միտքը: Չէքը ուշանալուն՝ ուզեցի գրել:

Ա՛խ, աճելէ՞ ըրինք ըսեմ, թէ ես պէտք էի երկու տարի առաջ սկսած ըլլալ գործս. գտայ Թլկատինցիին «Այգիիս փշենին»[58] Մասիս 1895 թ[իւ] 69. բայց հրաշալի բան է, աննման բան է. գրքին կէսը կ'արժէ ըսեմ՝ չեմ սխալիր. Չօպանեանին ալ գրեցի. գտայ ուրիշ բաներ ալ. «Խուլավանք. հինն ու նորը»: «Արհեստք ի գաւառս»: «Գլխուդ ջուր դիր», ուրիշներ ալ. ու դեռ ո՛ր-չափ պիտի գտնեմ... օր մը ուրիշ հատորիկ մըն ալ պիտի հրատարակէք անպատճառ...

Իսկ Ձեր գործի սկսելուն հ[ամա]ր շատ ուրախ եմ. մեր ազգին մէջ գրելով ապրող չէ եղած. Մայքըլ Արլէնը[59] եթէ հայերէն գրէր՝ սանդիմ չէր վաստկեր. կը մաղթեմ լիուլի յաջողու[թիւ]ն Ձեր գործոց. գրականութ[իւն] ալ ըրէք՝ իբր amateur: Ձեր գրական ծածկանուն եթէ ունիք՝ հաճեցէք իմացնել ինծի. «Կոչ-նակ» ալ պիտի պրպտեմ. օրաթերթերուն հետ եմ հիմա. «Ազատամարտ»ը[60] կ'ընեմ «Մասիս»ները ամբողջ նայեցայ՝ ունեցածնիս: Սոսկալի, ահաւոր տաժանք է, բայց պէտք է ընեմ, ազգային գրականու[թեա]ն բանալին պիտի ըլլայ:

Մաղթելով Ձեզի յաջողութիւն եւ խրախոյս ձեր նոր ասպարէզին մէջ

Սիրալիր ողջոյններով
Ձերդ
Հ. Ա. Ղազիկեան

ԻԳ.

31-3-28
Վենետիկ

Սիրելիդ իմ Նուրիկեան

Ձեզի արդէն գրած էի, նորէն կը գրեմ. դեռ չստացայ Պ. Մալեէմէզեանէն[61] ոեւէ նամակ...

Այս օրերս «Ազգ»ի[62] թիւերը կը խառնեմ. ո՛րքան յօդուածներ ունիք եղեր հոն, ոտանաւորներ եւս. Ձեր անունը բաւական պաշար պիտի ունենայ հետը: Ընտո՞ր մտքերնէդ չանցաւ ըսելու ինծի որ աչք մը տայի «Ազգ»ի, գիտէք թէ ո՛րքան բան ունի հոն Թլկատինցին, մե՛ղք, հազար մեղք. 10 կտոր բան գտայ, եւ ի՛նչ բաներ. «Խարբերդ. ի՞նչ անցաւ դարձաւ հերուէն ի վեր» 1909, թ. 122, 3, 4, 5, 132. Հուրրիյէթի մասին բնաւ բան մը չտեսնելով՝ կը զարմանայի թէ ի՛նչպէս բան մը չէ գրեր. այդ յօդուածներուն մէջ կը խօսի եղեր մարդը: Խարբերդէն կաղանդչէքներ.- Ճնճղուկներուն դատաստանը, Առակաւոր բանք Թլկատինցիի Խարբերդի մէկ ձախողուածին վրայ (Զարդարեանի մասին է). հիանալի գրած է: Հատ մըն ալ իր Սաթենիկին գրածը (առաջին գրութ[իւն]ը) «Ամէն ինչ նիւթ քեզի». պապայէն նիւթ կ'ուզէ եղեր ... վերջը Թլկատինցիի խօսքերը կան, գեղեցիկ բան, եւն, եւն. ու դեռ ինչե՛ր պիտի գրէր:

Դուք պատրաստուեցէք որ ուրիշ հատոր մըն ալ հրատարակէք, բայց այս անգամ զիս օգնական չէք ունենար. կու տամ ձեզի ցանկը:

Ձեզի Ս. Զատիկ մաղթելով

Մնամ ձերդ
Հ.Ա. Ղազիկեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Շնորհակալութիւն կը յայտնենք ԳԱՌի տնօրէն Դաւիթ Վարդանեանին, որ ընդառաջեց մեր դիմումին:

[2] Բենիամին Նուրիկեան (Խարբերդ Հիւսենիկ գիւղը 1894--1988) գրող:

[3] Հայր Արսէն Ղազիկեան՝ (Թուրքիա Պարտիզակ 1870--1932), Մխիթարեան Միաբանութեան անդամ, բանասէր, թարգմանիչ:

[4] Նամակներէն պարզ կը դառնայ որ կարգ մը այլ նամակներ կը բացակային զոյգ թղթապանակներէն: Չկան նաեւ նամակներուն մէջ յիշուած ցանկերը:

[5] Թլկատինցի (Խարբերդ 1860--սպաննուած է Խարբերդի մէկ ձորին մէջ 1915) հրատարակած է *Մասիս*ի, *Հայրենիք*ի, *Արեւելեան Մամուլ*ի, *Բիւրակն*ի մէջ:

[6] Հրատարակիչները Ղազիկեանի գործակցութիւնը կը համարեն «հիանալի անձնուիրութիւն»:

[7] Հրատարակութեան ծախքերուն մասնակիցներու անուանացանկը զետեղուած է հատորին վերջաւորութեան:

[8] Յակոբ Օշական, որ «*Գաւառի գրականութեան անառարկելի վարպետ*» կ'որակէ Թլկատինցին, շուրջ 100 էջ կը նուիրէ անոր («Յովհաննէս Յարութիւնեան», *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան, Եօթներորդ Հատոր, Արուեստագէտ Սերունդ*, Անթիլիաս, Տպ. ԿՀՄՏԿ, 1979, էջ 79-185): Դժուար թէ ան կարենար այդքան անդրադառնալ առանց Սաներու վերոյիշեալ հատորին:

[9] Թերեւս, սակայն, Նուրիկեան չբաւարարուելով արդիւնքէն, շուրջ քառորդ դար ետք, իր խմբագրած *Նոր Գիր*ի միացեալ թիւ մը ամբողջութեամբ կը նուիրէ Թլկատինցիին, ուր կը ներգրաւէ անկէ անտիպ նիւթեր՝ նաեւ Արամ Անտոնեանի

կողմէ տրամադրուած (*Նոր Գիր*, 1950ի Աշուն - Ձմեռ, թիւ 3-4): 250-էջանի այս համարին կողքին մէջի երեսին Նուրիկեան պիտի դնէր իր ձօնը՝ «*մեր հին գաւառի գրականութեան մեծ վարպետին... խորունկ յուզումով ու սիրով*»:

[10] Պէպօ Սիմոնեան, «Գաւառի Արուեստագէտը՝ Թլկատինցի Յովհաննէս Յարութիւնեան»՝ Թլկատինցի, *Երկեր*, Հրատ. Դանիէլ Վարուժան Գրական Հիմնադրամի, թիւ 12, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 1992, էջ 8:

[11] Արշակ Չօպանեան՝ (Կ.Պոլիս 1872--1954), գրող, բանաստեղծ, գրաքննադատ, հրապարակախօս, *Անահիտի*ի խմբագիր, թարգմանիչ:

[12] *Հայրենիք* (Նիւ Եորք 1899--1986 Պոստոն) ազգային, հասարակական-քաղաքական, գրական շաբթաթերթ, երկօրեայ թերթ, ապա՝ օրաթերթ:

[13] *Մասիս* (1852--1908 Կ. Պոլիս) քաղաքատնտեսական, գրական եւ բանասիրական. օրաթերթ, ապա՝ շաբաթաթերթ, կիսամեայ, ամսաթերթ:

[14] *Արեւելեան Մամուլ* (Զմիւռնիա, 1871--1922), ազգային-գրական-քաղաքական պարբերաթերթ:

[15] *Ծաղիկ* (1886--1911 Կ. Պոլիս) Գրական, բանասիրական, մանկավարժական, տնտեսական, գիտական եւ քաղաքական պարբերաթերթ: Խմբագիրներ՝ Չօպանեան, Ղազար Բոլատ, Արամ Անտոնեան, Երուանդ Օտեան եւ ուրիշներ:

[16] *Անահիտ* (1898--1911, 1929--40, 1946--49), գրական-գեղարուեստական հանդէս՝ Արշակ Չօպանեանի հրատարակութեամբ եւ խմբագրութեամբ:

[17] Հ. Արսէն Ղազիկեան, «Ամէնը Նոր Աշխարհի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 26 Դեկտեմբեր 1925, էջ 1536-8:

[18] *Կոչնակ/Հայաստանի Կոչնակ* (Պոստոն 1900--68) քաղաքական, տնտեսական, գրական-գեղարուեստական եւ կրօնաբարոյական շաբաթաթերթ/ամսաթերթ:

[19] *Լոյս* (Կ. Պոլիս 1895--1908), գրական, գիտական եւ քաղաքական կիսամսեայ հանդէս: Զայն խմբագրած են Մ. Սուլթանեան, Յարութ Հազարապետեան, Վահան Փափազեան, Բաբկէն Ծ. Վրդ. Կիւլէսէրեան, Արամ Անտոնեան:

[20] Արամ Անտոնեան (Պոլիս 1875--1952, Փարիզ), գրող, խմբագիր, 1928-51՝ Փարիզի ՀԲԸՄ Նուպարեան Մատենադարանի տնօրէն, հայոց Ցեղասպանութեան նիւթերու երախտաշատ հաւաքորդ, վաւերագրող եւ պատմագրող:

[21] *Մուրճ*՝ (1889--1907 Թիֆլիս) հասարակական-քաղաքական-գրական ամսագիր:

[22] *Հայաստանի Կոչնակ. Քսանեւհինգամեայ Յոբելենական Յիշատակարան*, 2 Յունուար 1926, ԻԶ. Տարի, թիւ 1, 160 էջ:

[23] *Բիւրակն* (Պոլիս, 1882--1908), գիտական, քաղաքական, բանասիրական պարբերաթերթ: Խմբագիրներ՝ Ստեփան Իւթիւճեան, Գալուստ Անդրէասեան եւ այլք:

[24] Զետեղուած է սաներու հրատարակած հատորին մէջ, իբրեւ յաւելուած:

[25] Յակոբ Գրիգորին ուղղած 24 Յունուար 1926 թուակիրով, Ղազիկեան կ'արձանագրէ. «*15 փեփրակ ալ Թլկատինցի օրինակեր եմ*» (*Հայր Արսէն Ղազիկեանի Նամակները Առ Յակոբ-Գրիգոր*, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1980, էջ 106):

[26] Յովհաննէս Աւագեան (Բինկեան, 1882--Նիւ Եորք, 1959), գրող, խմբագիր, գրականագէտ, 1911-12՝ խմբագիր՝ *Վան-Տոսպ*), 1917-19՝ *Ազգ*, եւ 1919-59՝ *Հայաստանի Կոչնակ* թերթերուն: Ղազիկեան կ'ակնարկէ Աւագեանի *Գրական Դէմքեր. Տպագրութիւններ եւ Նշմարներ* գիրքին, որ լոյս տեսած էր Նիւ Եորք, 1925ին:

[27] Անթուակիր նամակ: Թղթապանակին մէջ ան դրուած է 12 Հոկտեմբեր 1926 թուակիր նամակէն ետք:

[28] Ճիուզեփփէ Փարինի (1729–1799), իտալացի նորդասական բանաստեղծ:

[29] Գերմանական դիւցազնավէպ, գրուած շուրջ 1200ին:

[30] *Ռազմիկ* (Փլովտիւ, 1905--1909), ազգային, գրական, քաղաքական կիսաշաբաթաթերթ, խմբ.՝ Ռուբէն Զարդարեան, ապա՝ Տաճատ Կամսարական:

[31] Ռուբէն Զարդարեան (Սեւերէկ, 1874--1915) հրապարակախօս, խմբագիր, Մեծ Եղեռնի նահատակ:

[32] Նիւթը տպուած է սաներուն պատրաստած հատորին մէջ, իբրեւ յաւելուած:

[33] Աւետիք Իսահակեան (Ալեքսանդրապոլ, 1875--Երեւան, 1957), բանաստեղծ:

[34] Ղազիկեանի *Հայկական Նոր Մատենագիտութիւն եւ Հանրագիտարան Հայ Կեանքի, Ա. Հտր. Ա.-Մ.*, Վենետիկ, 1909-1912: Թլկատինցիի նուիրուած հատուածին մէջ Ղազիկեան յղում կը կատարէ՝ «Յարութիւնեան Յովհաննէս»ի, միաժամանակ արձանագրելով անոր *Զալըմ Տղան* թատերախաղը եւն.: Դժբախտաբար, Ղազիկեան չկրցաւ ամբողջացնել եւ հրատարակել մնացեալը:

[35] Տե՛ս՝ Յովհ. Աւագեան, «Գրադատական, Դ. Նիբելունգներուն Երգը», *Հայաստանի Կոչնակ*, ԻԶ. տարի, Ապրիլ 24, 1926, թիւ 17, էջ 654-55:

[36] Ղազիկեանի լեզուական այս դասերը աւելի ետք գիրքի ձեւով հրատարակուեցան աւելի քան անգամ մը (Հ. Արսէն Ղազիկեան, *Մի՛ Գրէք...Այլ Գրեցէք... (Հայ Լեզուի Ուղղագրական Դասեր)*, Գ. տիպ., Վենետիկ Մխիթարեան տպագրութիւն, 1932):

[37] Հեղինակային վրիպակ:

[38] Նկատի ունի Նուրիկեանի հարցադրումը՝ գիրքին վերնագրին առնչութեամբ:

[39] Խաչատուր Պէննէէան (Խարբերդ 1864--1944), խմբագիր, կրթական գործիչ:

[40] Անթուակիր նամակ: Թղթապանակին մէջ ան դրուած է 31-3-28 թուակիրէն ետք:

[41] Նիւթը ընդգրկուած է հատորին մէջ:

[42] Արշակ Մահտեսեան (Բալու, 1873--1950), խմբագիր, մամուլի հրատարակիչ:

[43] Միքայէլ Շամտանճեան (Կ. Պոլիս 1874--Պէյրութ, 1926) հրապարակախօս, խմբագիր, թարգմանիչ: 1925-26՝ Պէյրութի մէջ լոյս ընծայած է *Հայ Կեաք* եռօրեան (Արշակ Ալպոյաճեան, «Անհետացող Դէմքեր. Միքայէլ Շամտանճեան», *Հայաստանի Կոչնակ*, 30 Հոկտեմբեր 1926, էջ 1524-6):

[44] Ղազիկեան նամակին թուականն ու վայրը ձեռագրած է նամակին վերջաւորութեան:

[45] Յարութիւն Թիրիաքեան (Թալաս, 1845--Նիւ Եորք, 1919), բանասէր, արեւելագէտ, թարգմանիչ, բժիշկ:

[46] Կարապետ Իւթիւճեան (Պոլիս, 1832—Պոլիս, 1904), *Մասիս*ի խմբագիր:

[47] Ռեթէոս Պէրպերեան (Պոլիս, 1848--Պոլիս 1907), բանաստեղծ, մանկավարժ, տնտեսագէտ,1876ին հիմնած է Պոլսոյ Պէրպէրեան Վարժարանը:

[48] Հրանտ Ասատուր (Պոլիս, 1862—Պոլիս, 1928), գրող, խմբագիր: Սիպիլի հետ կազմած է հայոց լեզուի եւ գրականութեան *Թանգարան* դասագիրքերը:

[49] Դանիէլ Վարուժան (Բրգնիկ, 1884--1915 մեծ եղեռնի զոհ), բանաստեղծ, գրական-հասարակական, գործիչ, խմբագիր:

[50] Յակոբ Սիրունի (Ատափազար, 1890--Պուքարեստ, 1973), հայագէտ, բանասէր:

[51] Ընդգրկուած է հատորին մէջ:

[52] Նկատի ունի Խ. Հայաստանի մէջ 23 Հոկտեմբեր 1926ին տեղի ունեցած երկրաշարժը:

[53] Լեւոն Բաշալեան (Պոլիս, 1868--Ֆրանսա, 1943), գրող, հրապարակագիր, թարգմանիչ, խմբագիր: Լոզանի Վեհաժողովի Ազգային Պատուիրակութեան խորհրդական:

[54] Ճիովաննի Փափինի (Ֆլորանս, 1881--Ֆլորանս, 1956), գրող, գրաքննադատ, բանաստեղծ, փիլիսոփայ: 1921ին գրած է *Քրիստոսի Պատմութիւնը* երկը:

[55] Եղիշէ Դուրեան (Պոլիս, 1860--Երուսաղէմ, 1930), բանասէր, բանաստեղծ, պատրաիարք հայոց Պոլսոյ (1909-10) եւ Երուսաղէմի (1921-30):

[56] Այս թուականը – առանց տարեթիւի - դրուած է նամակին վարը, աջին, որմէ աւելի վար, մատիտով ու այլ ձեռագրով գրուած է «8 փետր. 1927»:

[57] *Նաւասարդ* (Պուքարեստ, 1923-26), գրականութեան եւ արուեստի պարբերական, Յակոբ Սիրունիի խմբագրութեամբ:

[58] Չէ ընդգրկուած հատորին մէջ:

[59] Մայքըլ Արլէն (Տիգրան Գույումճեան, Պուլկարիա, 1895--Նիւ Եորք, 1956), հեղինակ *The Green Hat* (1924), *The Flying Dutchman* (1939) եւն. երկերու:

[60] *Ազատամարտ* (1909-14, 1918-21), ազգային քաղաքական օրաթերթ, ՀՅԴ արեւմտեան բիւրոյի պաշտօնաթերթ: Խմբագիրներ՝ Սիրունի, Ռուբէն Զարդարեան, Գեղամ Բարսեղեան:

[61] Սարգիս Մալեէմէզեան՝ Միութեան ատենապետն էր:

[62] *Ազգ* (1907--21), ազգային, գրական, քաղաքական օրաթերթ: Լոյս տեսած է Պոստոն, սկիզբը իբրեւ վերակազմեալք հնչակեան, այնուհետեւ ռամկավար պաշտօնաթերթ: 1921 Հոկտեմբերին միացած է *Պահակ*ին:

THE REBIRTH OF TELGADINTSI: 23 LETTERS EXCHANGED BETWEEN PENIAMIN NOURIGIAN AND FATHER ARSEN GHAZIGIAN (18 November 1925-31 March 1928)

(Summary)

RITA MARIA KAZANDJIAN, ANTRANIK DAKESSIAN
RKAZANDJIAN@students.haigazian.edu.lb; adakessian@haigazian.edu.lb

Telgadintsi (Hovhannes Haroutiunian), a victim of the Armenian Genocide, was a renowned author and educator who dedicated his life to the upbringing of the younger generation in the province of Kharpert. Telgadintsi was instrumental in campaigning for and drawing attention to the provinces (i.e. Western Armenia, the *Armenian Vilayet*s in Ottoman Turkey) and advocating allocation of resources to the Armenian hinterland. His essays, letters and short stories published in the Armenian newspapers of the time had the above-mentioned objective.

However, his life was cut short by the Genocide before he could publish anything but a play in a separate book.

The paper narrates how a number of his students took the initiative to collect and publish his dispersed literary works in a single volume. Fr. Arsen Ghazigian of the Mekhitarist congregation in Venice became their best collaborator as they asked him to go through a number of Armenian newspapers that had published Telgadintsi's works, find these articles, copy and send them for publication.

The 23 letters published in this paper outline the processes of communication between the students and Fr. Ghazigian, the gathering of the dispersed material and the eventual publication.

The paper argues though the volume published does not include all Telgadintsi's literary works, nevertheless, their initiative brought about the revival of Telgadintsi as a literary figure and one of the founders of Armenian rural literature.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԶՕՐԱՑ ՔԱՐԵՐ ՀՆԱՎԱՅՐՈՒՄ

ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ
piliposyan@yahoo.com

Պատմական Սիւնիքի հնագիտական յուշարձանների մէջ յատուկ տեղ ունի Զօրաց Քարեր հնավայրը: Գրականութեան մէջ այն յայտնի է *Դիք-Դիք* կամ *Ցից-Ցից Քարեր*, *Զօրաց Քարեր, Քարեզօրք, Ղոշուն Դաշ*, վերջերս նաեւ *Քարահունջ* անուանական տարբերակներով[1]: Յուշարձանը գտնւում է Սիսիան քաղաքից 3 կմ հիւսիս, Որոտան Գետի Դար վտակի ձախ ափին, ծովի մակարդակից 1770 մ բարձրութիւն ունեցող հարթեցուած հրուանդանի վրայ: Յուշարձանի աշխարհագրական տուեալներն են՝ հս. լ. 39°33′02.52″ը եւ արւ. երկ. 46°01′42.96″ը:

Ժողովրդական զրոյցների համաձայն հնում յուշարձանի տարածքում գոյութիւն ունեցող մեծ քարակոյտերի մէջ զօրավարներ, իսկ ուղղահայեաց կանգնեցուած հսկայ քարաբեկորների տակ զինուորներ են թաղել[2]: Հենց այդ պատճառով էլ հնավայրը «Զօրաց Քարեր» անուանումն է ստացել:

ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին տարածքը հետազօտել են Ե. Մելիք-Շահնազարովն ու Երուանդ Լալայեանը, 1920-30ականներին՝ Ստեփան Լիսիցեանը, 50-60ականներին՝ Մօրուս Հասրաթեանը եւ Ս. Եսայեանը, 70-80ականներին՝ Օ. Խնկիկեանը, Է. Պարսամեանը, Գ. Արեշեանը, Բ. Սադոյեանը, Ի. դարավերջին եւ ԻԱ. դարասկզբին՝ Պարիս Հերունին, ապա Հ. Մարտիրոսեանը, Վ. եւ Մ. Վահրադեանները, իսկ 2010-15՝ հնագէտներ Ա. Փիլիպոսեանը, Ա. Բոբոխեանը, Հ. Աւետիսեանը, Ա. Գնունին, Գ. Սարգսեանը եւ այլք[3]: Այդուհանդերձ, առ այսօր, հնավայրը մասնագիտական առումով պատշաճ եւ համակողմանի ուսումնասիրուած չէ, ինչն էլ հակասական, անհաւանական, երբեմն նաեւ ոչ-գիտական բազմաթիւ մեկնաբանութիւնների տեղիք է տալիս:

Սիսիանի եւ դրա մերձակայքի մասին տեղեկութիւններ պարունակող առայժմ ամենավաղ գրաւոր սկզբնաղբիւրները՝ Վանի Թագաւորութեան (Ուրարտու) երեք սեպագիր արձանագրութիւններն են: Վերջիններս թէեւ ուղղակի փաստեր չեն տալիս Զօրաց Քարեր հնավայրի մասին, սակայն կարեւոր նիւթեր են պարունակում այս տարածքի Ք.ա. Ը.-Է. դդ. ընկերա-քաղաքական գործընթացների վերաբերեալ: Դրանք, պահպանուել են Սարդուրի Բ.ի (Ք.ա. 764–35) տարեգրութեան մի հատուածում[4],

Թանահատ Վանքի մօտ գտնուած Արգիշթի Բ.ի (Ք.ա. 714–685) քարակոթողի սեպագիր արձանագրութեան մէջ[5] եւ Ռուսա Բ.ի (Ք.ա. 685–45)՝ Այանիսում բացուած susi տաճարի մուտքի արձանագրութիւնում[6]:

Սարդուրի Բ.ի տարեգրութեան խնդրոյ առարկայ հատուածը[7] հաղորդում է.-

[13] ... Նոյն տարում երկրորդ անգամ (ես) շարժուեցի Էթիունի (երկրի), Լիքի (երկրի) [14] կողմը: Էդիանի (քաղաքը[8]), արքայական քաղաքն Աբիանի (առաջնորդի), (որ) ամրացուել էր, մարտում (ես) գրաւեցի: [15] Իրուիա(նի) (քաղաքը), արքայական քաղաքն Իրկուա(ինի) (առաջնորդի), (որ) ամրացուել էր, [16] մարտում (ես) գրաւեցի: Իրդուա(նի) (քաղաքը), արքայական քաղաքն Ուերդա(ինի) (առաջնորդի), (որ) ամրացուել [17] էր, մարտում (ես) գրաւեցի: Բուինի(ալխի) (քաղաքի) արքային (ես) ծառայ դարձրի (եւ) վրան հարկ [18] կարգեցի, (որպէսզի նա) հարկատու լինի Սարդուրի (արքային): Այս չորս ամրոցները [19] երկրներում ես նուաճեցի: Տղամարդկանց, կանանց այստեղից (ես) գաղթեցրի: [20] 3500 պատանի, 15000 կին, 4000 զինուորներ [21] (ես) տարայ: 8525 (գլուխ) խոշոր եղջերաւոր անասուն (այստեղից ես) քշեցի: 18000 (գլուխ) մանր եղջերաւոր անասուն (այստեղից ես) քշեցի...

Ուրարտագէտ Գ. Մելիքիշվիլու կարծիքով, Սարդուրի Բ.ի տարեգրութեան վերը ներկայացուած հատուածում հաղորդւում է Ք.ա. 751-50՝ Անդրկովկասի հարաւում[9] տեղի ունեցած իրադարձութիւնների մասին, որոնցում, ընդհանուր առմամբ, յատկապէս ընդգծւում է Էթիունի (վկայուած է նաեւ Էթիուխի ձեւով) համադաշնութեան դերը: Վերջինս զբաղեցնում էր Սարիղամիշից մինչեւ Սեւանայ Լիճը եւ Գուգարքից մինչեւ Արաքս Գետի աւազանը[10]: Խնդիրն աւելի որոշակիացաւ 1975ին, երբ Սիսիանից ոչ-հեռու՝ Թանահատ Վանքի մերձակայքում յայտնաբերուեց Ք.ա. Ը.-Է. դդ. սամանագծին Արգիշթի Բ.ի կանգնեցրած քարակոթողը՝ դիմային եւ հակադարձ նիստերին մասնակի պահպանուած սեպագիր արձանագրութիւններով[11]: Դրանք յայտնում են.-

Դիմային նիստ

1. Խալդի (աստծուն), տիրոջը,
2. այս կոթողը Արգիշթին՝
3. Ռուսայի որդին կանգնեցրեց,
4. (իր) կեանքի համար:
5. Թող լինի Խալդի (աստծոյ) կողմից
6. Արգիշթի (արքային)
7. Ռուսայի որդուն
8. բարերարութիւն, ekuše (?),

9. երջանկութիւն, կեանք,
10. ուրախութիւն, վեհութիւն,
11. ինչպէս նաեւ իշխանութիւն,
12. ուժ (եւ) հզօրութիւն:
13. Խալդեան զօրութեամբ…
……
……
?? …մէկ օրում (ես) նուաճեցի…
……

Հակադարձ նիստ

1. Ինձ ներկայացաւ … արքան
2. Էթիուխի երկրի, փուեց հարկը
3. (իր) երկրի: Որոշ քաղաքներ
4. լսեցին …… փեղում:
5. Որոշ զօրաջոկատներ
6. ari biri (?)[12]: Այսփեղ ջարդ
7. (ես) արեցի, փղամարդկանց, կանանց փարայ,
8. քաղաքներն այրեցի, ամրոցներն աւերեցի:
9. Išiaṣie (?) բոլորը միասին:
10. Ճակատամարտ եղաւ: Մեծաւորները
11. Ծուլուքու (երկրի) այնփեղից
12. (եկան եւ) Իրդուա քաղաքի դիմաց կանգնեցին
13. իմ առջեւ: Զազինու արքային ես սպրկացրի,
14. հարկ սահմանեցի: Խալդեան
15. զօրութեամբ արշաւող (?)
16. Արգիշթին՝ Ռուսայի որդին,
17. արքայ է հզօր, արքան Բիայնա (երկրի),
18. Տէրը Տուշպա քաղաքի:
19. Խալդեան հրամանով
20. Արգիշթին ասում է. Ամէնքը (?)
*21.Շիւինի աստծոյ **[**փաճարի**]** քրմապետի (?) դիակիզմանը (?) **[**եկան ?**]:***
22. Գնացի (ես) այդ ճանապարհով (դէպի)
23. Ամուշա (քաղաքը), փղամարդկանց,
24. կանանց քշեցի Բիայնա (երկիրը):
25. Արգիշթին ասում է.
26. ով (իմ) անունը ոչնչացնի
27. (եւ) իր անունը փեղադրի, լինի (նա)
28. բիայնացի, (թէ) լինի
29. թշնամի, թող Խալդի (աստուածը)
30. Թէյշեբա (աստուածը), Շիւինի (աստուածը), բոլոր (միւս) աստուածները
31. ոչ (նրա) անունը, ոչ
32. սերմը, ոչ
33. սերունդը երկրի վրայ

34. չթողնեն:

Արձանագրութեան մէջ, փաստօրէն, տրւում են, դէպի Էթիուխի (Էթիունի) համադաշնութեան արեւելեան շրջաններն Արգիշթի Բ.ի կատարած արշաւանքի մանրամասները: Համաձայն արձանագրութեան՝ թէեւ Էթիուխիի առաջնորդը ներկայացել է Արգիշթի Բ.ին, տուել համադաշնութեան հարկը ու յայտնել իր հնազանդութիւնը, այդուհանդերձ, նրա իշխանութեան տակ գտնուող հարաւային որոշ քաղաքների կառավարիչներ - Ծուլուքու Երկրի առաջնորդ Զազինուի թելադրանքով - չեն ենթարկուել ուրարտացի արքային եւ պատրաստուել դիմադրութեան: Մարտում ընդդիմադիրներն անյաջողութիւն են կրել եւ, արդէն ստիպուած, Ծուլուքուի ծերակոյտն Իրդուա քաղաքի առջեւ ներկայացել է Արգիշթի Բ.ին, ընդունել նրա բոլոր պայմանները եւ ողորմածութիւն հայցել: Զազինու առաջնորդը ստրկացուել է եւ պարտաւորուել հարկ վճարել: Արձանագրութիւնից երեւում է, որ անգամ այս ամենից յետոյ, Ծուլուքու Երկրի մէկ այլ քաղաքի՝ Ամուշայի բնակիչները շարունակել են դիմադրութիւնը եւ միայն զգալի կորուստների գնով Արգիշթի Բ.ին յաջողուել է վերջնականապէս հնազանդեցնել նրանց, ապա ներկայիս Թանահատ Վանքի մօտ կանգնեցնել է իր յաղթական կոթողը:

Թանահատի արձանագրութիւնը ոչ միայն կարեւոր տեղեկութիւններ է տալիս պատմական Սիւնիքում եւ մասնաւորապէս ժամանակակից Սիսիան քաղաքին յարակից տարածքներում Ք.ա. Ը. դարավերջին եւ Է. դարի առաջին քառորդին տեղի ունեցած դէպքերի մասին, այլեւ հնարաւորութիւն է ընձեռում տեղանուանական վերակազմութիւններ կատարել: Ըստ այդմ, բացառիկ նշանակութիւն ունի Էթիունի (Էթիուխի) համադաշնութեան Ծուլուքու երկրանուան յիշատակումը, որը մասնագէտների կարծիքով տեղորոշւում է Սիսիանի շրջանում եւ ուղղակիօրէն կապուած է միջնադարեան Սիւնիքի Ծղուկ Գաւառի անուան հետ[13]: Արձանագրութեան մէջ յիշատակուող Ծուլուքու Երկրի Իրդուա եւ Ամուշա քաղաքների անուանումների արձագանգները եւս, ըստ Ն. Յարութիւնեանի, հնարաւոր է նկատել պատմական Սիւնիքի Ծղուկ գաւառում յիշատակուող Մուցք, Արիտ եւ Արթէք բնակավայրերի անուններում[14]: Այս ենթահողում աշխատում է նաեւ Սարդուրի Բ.ի տարեգրութեան համապատասխան հատուածում պահպանուած տեղեկատուութիւնը Էթիունի երկրի 4 քաղաքների նուաճման մասին[15]: Դրանց թւում (Թանահատի արձանագրութիւնում նկարագրուող դէպքերից շուրջ կէս դար առաջ) յիշատակւում է նաեւ Ուերդա առաջնորդի Իրդուա արքայական քաղաքը: Այսինքն, Սարդուրի Բ.ի տարեգրութեան այդ հատուածում եւս խօսւում է դէպի Ծուլուքու Երկիր

կատարուած արշաւանքի մասին, առանց յիշատակելու վերջինիս անունը: Դրա փոխարէն բերւում են նոյն տարածքում գտնուող եւս 3 քաղաքների (Էրիդա, Իրուիա, Բուինիալխի) եւ դրանցից 2ի առաջնորդների (Աբիանի, Իրկուա) անունները: Այս տարածքից Ք.ա. Ը. դարակէսին Սարդուրի Բ.ի տարուած 8525 գլուխ խոշոր եւ 18,000 գլուխ մանր եղջերաւոր անասունների, գերեվարուած 3500 պատանիների, 15,000 կանանց եւ 4000 զինուորների ընդհանուր քանակը (դրան աւելացրած Արգիշթի Բ.ի Ք.ա. Ը. դարավերջի կամ Է. դարասկզբի աւարը) վկայում է տեղում Ք.ա. Ը.-Է. դարերում ձեւաւորուած, տնտեսական զգալի հնարաւորութիւնների, ինչպէս նաեւ մարդկային ու ռազմական լուրջ ներուժ ունեցող ցեղային կազմաւորման մասին: Ներկայացուածն ինքնին հաստատում է նաեւ Այանիսի ուրարտական ամրոցի, Խալդի աստծոյ **susi** տաճարի մուտքի աջ հատուածում Ռուսա Բ.ի թողած սեպագիր արձանագրութիւնը, որի 10-11րդ տողերում[16] արձանագրուած է.-

[10] Ռուսա Արգիշթորդին ասում է. փարայ փղամարդկանց, կանանց [ու անասունը] թշնամի երկրների՝ Աշշուրի, [11] Թարգունիի, Էթիունիի, Թաբլանիի, Քայնարուի, Խաթէի, Մուշքինիի, Ծիլուքուի…

Ուրեմն Ծուլուքու Երկիրը (արձանագրութիւնում տրուած է «Ծիլուքու» ձեւով) Ք.ա. Է. դարի առաջին կէսին, հզօր Աշշուրի, Խաթէի, Մուշկերի երկրի եւ Էթիունիի հետ միասին հակառակորդ կողմ էր Վանի Թագաւորութեանը (Ուրարտու):

Բանն այն է, որ Զօրաց Քարերի մասին կարեւոր տեղեկութիւններ են տալիս ինչպես յուշարձանից, այնպէս էլ նրա շրջակայքից հաւաքուած նիւթական մշակոյթի մնացորդները: Դեռեւս 1930ականներին այս տարածքից հնագիտական նիւթեր է հաւաքել ազգագրագէտ Լիսիցեանը[17], իսկ 1980ականներին Զօրաց Քարերում երկաթէդարեան դամբարաններ է պեղել Խնկիկեանը[18]:

Զօրաց Քարերում հնագիտական աշխատանքները վերսկսուեցին 2013ին ՀՀ մշակոյթի նախարարութեան «Պատմամշակութային Արգելոց-Թանգարանների Եւ Պատմական Միջավայրի Պահպանութեան Ծառայութիւն» ՊՈԱԿի հնագիտական արշաւախմբի կողմից (ղեկավար՝ պրոֆեսոր Ա. Փիլիպոսեան): Դրանք մէկ անգամ եւս հաստատեցին հնավայրի տարածքում բնակավայրի եւ նրան կից դամբարանադաշտի առկայութիւնը: Բնակավայրը զբաղեցնում է յուշարձանի հիւսիսային հատուածը, շրջափակուած է տեղ-տեղ մինչեւ 2 մ բարձրութեան հասնող կոպտաշար պարսպով եւ ունի մուտք, որը հարաւային կողմից է: Բնակավայրում նկատելի են ուղղանկիւնաձեւ կառոյցների, բոլորաձեւ շինութեան, թաքստոցների եւ տնտեսական հորերի մնացորդներ, որոնք,

ժամանակի ընթացքում (Ք.ա. ԺԹ. դարից մինչեւ Ք.ե. ԺԴ. դար) բազմիցս վերակառուցումների են ենթարկուել:

Դամբարանադաշտը կից է բնակավայրին հարաւից: Երեք տասնեակից աւելի մեծ դամբարաններ քանդուած են եւ թալանուած: Դամբարանների կառուցման համար անհրաժեշտ շինանիւթը հիմնականում բերուել է մօտ 1 կմ արեւելք գտնուող բլրակից, որը ժամանակին քարհանք է ծառայել[19]: Մեծ դամբանախցերի վերին մակերեսները կրճատելու եւ դրանք փոքր ծածկասալերով փակելու համար անհրաժեշտ է եղել իւրայատուկ ծածկի՝ «կեղծ թաղի» կառուցում[20]: Դրա համար առանձնացուել են զանգուածեղ, ծանր հիմք եւ համեմատաբար բարակ վերնամաս ունեցող քարաբեկորները, որոնց առաւել դիւրին ու անվնաս տեղափոխման համար՝ իւրաքանչիւրի նեղ ու բարակ վերնամասում 5-10 սմ. անցք է բացուել: Այնուհետեւ երկարաւուն (մինչեւ 3,5-4 մ երկարութեամբ), զանգուածեղ (3-4 տոննայից ոչ-պակաս քաշով) այդ քարաբեկորները մեծ դամբանախցերի երկայնական երկու կողմերից տեղադրուել են այնպէս, որ համեմատաբար բարակ ու նեղ հատուածները լինեն կառոյցի վերնամասում, իսկ ծաւալուն ու ծանր մասերը՝ յենուեն դամբանապատերի վրայ: Նման կառուցուածքի շնորհիւ «կեղծ թաղի» բրգաձեւ քարաբեկորները մի կողմից կրճատել են դամբանախցի վերնամասի թռիչքը, իսկ միւս կողմից՝ իրենց վրայ տեղադրուած ծածկասալերի ծանրութեան տակ չեն շրջուել դամբանախցի մէջ:

Հենց այդպիսին է դամբարանադաշտի կենտրոնական հատուածում գտնուող եւ 2014-17ի ընթացքում հետազօտուած դամբարանը[21]: Կառոյցն օղակուած է շուրջ 18 մ տրամագիծ ունեցող քարաշար *կրոմլէխ*ով[22], որի կենտրոնում մօտ 7 մ երկարութեամբ եւ 3 մ լայնքով դամբանախուցն է, կողմնորոշուած՝ արեւմուտքից արեւելք: *Կրոմլէխ*ի ներքին տարածքը՝ մինչեւ դամբանախցի պատերը, ամբողջութեամբ պատուած է մանր քարալիցքով: *Կրոմլէխ*ի շրջանաձեւ շարի արեւմտեան եզրից սկսւում է մօտ 1 մ լայնք, 1 մ խորութիւն եւ շուրջ 7 մ երկարութիւն ունեցող, քարաշար, ստորգետնեայ մուտք, որը ձգուելով դէպի արեւելք միանում է դամբանախցին: Վերջինիս 2013-16ի պեղման աշխատանքների ընթացքում հանուեցին ներս թափուած 3 ծածկասալերը, ինչպէս նաեւ բացուեցին տարբեր ժամանակաշրջանների վերաբերող նիւթեր՝ միջինբրոնզէդարեան գունազարդ անօթների բեկորներ, ուշբրոնզէդարեան խեցեղէնի մասեր, երկաթէդարեան սեւ, գորշ եւ բաց դարչնաւուն կաւանօթների մնացորդներ, Ք.ա. Ժ.-Ը./Է. դարերին վերաբերող երկաթէ նիզակներ, կեռ դաշոյն, բրոնզէ մազխիլ, շաղախից ուլունքահատիկներ եւն.: 2017ին խցի վերջնական պեղումների արդիւնքում, 3,15 մ խորութեան վրայ ի յայտ եկան Ք.ա. Բ.

հազարամեակի վերջ-Ա. հազարամեակի առաջին կէսով թուագրուող խեցեղէնի, բրոնզէ ապարանջանների, սորդիոնէ ուլունքերի եւ հնամարդաբանական նիւթերի (ըստ նախնական տուեալների՝ 4 մարդու) բազմաթիւ մնացորդներ: Պեղուած նիւթը հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում նաեւ մշակութային փոխառնչութիւնների վերաբերեալ: Մասնաւորապէս յայտնաբերուած որոշ խեցանօթների բեկորներ ուղղակի կապեր են մատնանշում իրանական սարահարթի երկաթէդարեան հնավայրերի հետ: Դատելով հելլէնիստական շրջանի երկու գունազարդ կաւաբեկորների եւ ներկուած իրանով, օձագլուխ բրոնզէ ապարանջանների առկայութիւնից՝ դամբանախցի յատակին Ք.ա. Զ.-Դ. դարերում կատարուել է նաեւ մանկան թաղում:

Արշաւախումբը 2017 Հոկտեմբերին պեղման աշխատանքներ իրականացրեց նաեւ յուշարձանն արեւելեան կողմից եզերող եւ ուղղաձիգ դիրքով կանգնեցուած զանգուածեղ քարաբեկորների հատուածում: Աշխատանքների արդիւնքում բացուեց այդ քարերի տակ շարուած եւ յուշարձանի արեւելեան եզրով հարաւից հիւսիս ձգուող պարսպի շուրջ 1,50 մ բարձրութեամբ եւ 10 մ երկարութեամբ լաւ պահպանուած շարուածքը: Դրա մօտից եւ միջից յայտնաբերուած խեցու բեկորները հիմնականում վերաբերում են Ք.ա. Զ.-Ե. դարերին. սա թոյլ է տալիս նախնական կարծիք յայտնել վերջինիս կառուցման ժամանակաշրջանի մասին: Ըստ որում հիւսիսից հարաւ ձգուող պատը, դատելով պեղուած հատուածում բացուած կից կառոյցից, տեղ-տեղ համալրուել է կցակառոյցներով, որոնք, հաւանաբար, աւելի ամուր ու կայուն են դարձրել շարը:

Հաշուի առնելով ե՛ւ գրաւոր, ե՛ւ հնագիտական նիւթերի ընձեռած այսօրուայ տուեալները, հրապուրիչ է Ծուլուքու Երկրի կողմից վերահսկուող տարածքի մէջ ժամանակին մտնող Զօրաց Քարերի երկաթէդարեան հզօր բնակատեղին համադրելու Սարդուրի Բ.ի եւ Արգիշթի Բ.ի մօտ յիշատակուող տեղի բնակավայրերից որեւէ մէկի (թերեւս Իրդուա կամ Ամուշա «քաղաքների») հետ: Սակայն դա հապճեպ եւ առայժմ շատ առումներով չհիմնաւորուած մօտեցում կարող է լինել: Կարծում ենք, որ յետագայ պեղումները դեռ հնարաւորութիւն կը տան յուշարձանի տարածքում աւելի հիմնաւոր նիւթեր եւ - չի բացառւում - գրաւոր սկզբնաղբիւրներ գտնել ու դրանց հիման վրայ պարզել ինչպէս ընդհանուր տարածքի, այնպէս եւ բուն յուշարձանի հին անուանումները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Е. Меликъ-Шахназаровъ, “Гошунъ-Дашъ,” *Сборникъ Матеріалов для Описанія Местностей И Племенъ Кавказа* (Ե. Մելիք-Շահնազարով, «Ղոշուն-Դաշ»,

Կովկասի տեղանքի եւ ցեղերի նկարագրական նիւթերի ժողովածու), Կովկասի Կրթական Վարչաշրջանի Հրատ., թողարկում XIII, Թիֆլիս, 1892, էջ 124-7. նաեւ՝ Ե. Լալայեան, *Դամբանների Պեղումներ Խորհրդային Հայաստանում*, Երեւան, Մելքոնեան Ֆոնդի Հրատ., 1931, էջ 63, 66, նկ. 14. նաեւ՝ Ն. Ադոնց, *Հայաստանի Պատմութիւն*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1972, էջ 11. նաեւ՝ Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 3*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1991, էջ 575, *Հտր. 5,* Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2001, էջ 323, 669:

[2] Արամ Ղանալանեան, *Աւանդապատում*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1969, էջ 263, 270:

[3] Ե. Լալայեան, «Սիսիան, Նիւթեր Ապագայ Ուսումնասիրութեան Համար», *Ազգագրական Հանդէս #* Գ., Թիֆլիս, 1898, էջ 162-82. Նաեւ նոյն՝ «Շարուր Դարալագեազի Գաւառ», *Ազգագրական Հանդէս, Գիրք XII*, Թիֆլիս, 1904, էջ 264. նաեւ՝ Ս. Բարխուդարեան, «Գորիսի, Սիսիանի Եւ Ղափանի Շրջաններ», *Դիւան Հայ Վիմագրութեան Մատենաշար, # Ա*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1960, էջ 122. նաեւ՝ Ստեփան Լիսիցեան, *Զանգեզուրի Հայերը,* Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1969, տախտակ CXIV. նաեւ՝ Ս. Եսայեան, «Զանգեզուրի Վաղ Հնագիտական Յուշարձանները», *Լրաբեր*, 1972:4, էջ 65. նաեւ՝ Օ. Խնկիկեան, «Սիսիանի Զօրաքարերը», *Հայաստանի Բնութիւնը*, Երեւան, 1984:4. նաեւ՝ Մ. Հասրաթեան, *Պատմա-Հնագիտական Ուսումնասիրութիւններ*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 175. նաեւ՝ Վ. Յարութիւնեան, *Հայկական Ճարտարապետութեան Պատմութիւն,* Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1992, էջ 13. նաեւ՝ Պարիս Հերունի, «Քարահունջ – Հնագոյն Աստղադիտարան Սիսիանում», *Գարուն,* Երեւան, 1998:5, էջ 87-93. նաեւ՝ П. Геруни, “Доисторическая Каменная Обсерватория Карахундж-Карениш” (Պ. Հերունի, «Մինչպատմական Քարէ Աստղադիտարան Քարահունջ - Քարենիշ»), *Հայաստանի Ազգային Ակադեմիայի Զեկոյցներ*, # 4, Երեւան, 1998, էջ 307-28. նաեւ՝ O. S. Xnkikyan, *Syunik' During the Bronze and Iron Ages*, Barrington, 2002, էջ 9, 25-9, 60-1, 65-7, 148, 167, pl. VI-VII, XL, pl. LIII, fig. 1-32, pl. LIV, fig. 5-9. նաեւ՝ Հ. Աւետիսեան, Ա. Գնունի, Ա. Բոբոխեան, Գ. Սարգսեան, *Բրոնզ-Երկաթէդարեան Սիւնիքի Սրբազան Լանդշաֆտը*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2015:

[4] Г. Мелликишвили, *Урартские Клинообразные Надписи* (Գ. Մելիքիշվիլի, Ուրարտական Սեպագիր Արձանագրութիւններ), Մոսկուա, 1960, էջ 273-5. նաեւ՝ Н. Арутюнян, *Корпус Урартских Клинообразных Надписей* (Ն. Յարութիւնեան, Ուրարտական Սեպագիր Արձանագրութիւնների Համահաւաք), Երեւան, 2001, էջ 227-9:

[5] Ն. Յարութիւնեան, «Արգիշտի II-ի Նորայայտ Սեպագիրը», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1979:3, էջ 93-104. նաեւ՝ Н. Арутюнян, “Новая Урартская Надпись из Сисиана”, *Древний Восток*, (Ն. Յարութիւնեան, «Ուրարտական Նոր Արձանագրութիւն Սիսիանից»,) *Հին Արեւելք,* 1983:4,

Երեւան, էջ 195-229. նաեւ՝ Վ. Գայսէրեան, «Արգիշթէ II-ի Սիսիանի Արձանագրութիւնը», *Լրաբեր*, 1986:6, էջ 67-79:

[6] M. Salvini, "The Inscriptions Ayanis (Rusa<u>h</u>inili Eiduru-Kai): Cunieform and Hieroglyphic" in *Ayanis I (Ten Years Excavations at Rusa<u>h</u>inili Eiduru-kai, 1989-1998), Documenta Asiana VI*, edited by Altan Çilingiroğlu and Mirjo Salvini], Հռոմ, 2001, էջ 258, նկ. 10-12:

[7] Меликишвили, 155, A 13-21. նաեւ՝ Արտեւնեան, 241, A 13-21:

[8] Արձանագրութիւնում URU «քաղաք» բացայայտչի փոխարէն ուրարտացի գրչի կողմից սխալմամբ փորագրուել է KUR «երկիր» բացայայտիչը: Արձանագրութեան շարունակութիւնը հաստատում է, որ խօսքը ոչ թէ երկրի, այլ ամրացուած «քաղաքի»՝ բնակավայրի մասին է: Վերծանման մէջ այն ներկայացւում է «քաղաք» ձեւով:

[9] Меликишвили, էջ 300-1, 430-1:

[10] Հ. Արտեւնեան, *Топонимика Урарту* (Ն. Յարութիւնեան, Ուրարտուի Տեղանուանաբանութիւնը), Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 262-3:

[11] Արտեւնեան, "Новая", էջ 212-5:

[12] Թերեւս նշանակում է «ընդդիմացան, ըմբոստացան, ապստամբեցին»:

[13] Հ. Արտեւնեան, «Заметки по Урартской Эпиграфике», *Древний Восток и Мировая Культура*, (Ն. Յարութիւնեան, Դիտողութիւններ Ուրարտական Վիմագրութեան շուրջ, *Հին Արեւելքն Ու Համաշխարհային Մշակոյթը* ժողովածու) Մոսկուա, 1981, էջ 78-9. նաեւ՝ Արտեւնեան, "Новая", էջ 217-8. նաեւ՝ Արտեւնեան, *Топонимика,* էջ 236-7. նաեւ՝ Ստեփաննոս Օրբէլեան, *Պատմութիւն Նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910, էջ 325, 509. նաեւ՝ Աշոտ Աբրահամեան, *Անանիա Շիրակացու Մատենագիտութիւնը,* Երեւան, Հայպետհրատ, 1944, էջ 350. նաեւ՝ Ս. Երեմեան, *Հայաստանը Ըստ «Աշխահացոյց»-ի,* Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1963, էջ 109-10. նաեւ՝ Ստեփանոս Օրբէլեան, *Սիւնիքի Պատմութիւն,* Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1986, էջ 394-5:

[14] Արտեւնեան, "Новая", էջ 218:

[15] Меликишвили, 155, A, 18-19. նաեւ՝ Արտեւնեան, 241, A, 18-19.

[16] Salvini, էջ 258, նկ. 10-12:

[17] Ներկայումս դրանք Հայաստանի Պատմութեան Թանգարանի թիւ 962 հնագիտական հաւաքածուն են կազմում:

[18] Xnkikyan, էջ 65-7, նկ. 4, pl. VI-VII, XL, pl. LIII, fig. 1-32, pl. LIV, fig. 5-9.

[19] Ա. Փիլիպոսեան, Ա. Աւագեան, *Ջօրաց Քարեր*, Երեւան, 2016, էջ 12:

[20] Ժ. Խաչատրեան, «Հայաստանում «Կեղծ Թաղի» Առաջացման Հարցի Շուրջ», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1982:3, էջ 227-32:

[21] Այն որոշ ոչ-մասնագէտ հետաքրքրուողներ «աստղադիտարան» են յորջորջում:

[22] «Կրոմլէխ»ն ընդունուած եզր է հնագիտութեան մէջ եւ կիրառւում է բոլոր լեզուներում: Այն կազմուած է բրետոներէն "crom" - «շրջան, սեղան» եւ "lech" - «քար» բառարմատներից եւ նշանակում է «քարերից շարուած շրջան, քարէ բոլորաշրջան»: Նման շրջանները բրոնզի եւ երկաթի պարբերաշրջաններում կառուցւում էին դամբանախցերի շուրջբոլորը եւ սահմանազատում այն սրբազան տարածքը, որում իրականացուել էր թաղման արարողութիւնը:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Կարէն Մաթեւոսեան, Աւետ Աւետիսեան, Արա Զարեան, Քրիստին Լամուրէ, *Դադիվանք. Վերածնուած Հրաշք*, Երեւան, «Վիկտորիա» միջազգային բարեգործական հիմնադրամ, Տպարան «ՄՈԱ» ՍՊԸ, 2018, 224 էջ:

Միջնադարեան Հայաստանի մշակութային ժառանգութեան ամենամշուշոտ կողմը կոթողային գեղանկարչութիւնն է: Լաւ ծանօթ լինելով ճարտարապետութեանը, ձեռագիր նկարազարդ մատեաններին՝ մենք թերեւս միանգամից չենք կարողանում մտաբերել որմնանկարչութեան օրինակներ, է՛լ աւելի դժուարութեամբ ենք պատկերացրել դրանց առկայութիւնը հայկական շատ եկեղեցիներում: Պատճառները յայտնի են. որմնանկարները կա՛մ չեն պահպանուել, կամ էլ հասել են խիստ խաթարուած վիճակում:

Վերջին տարիներին շատ կարեւոր գործնական քայլեր են ձեռնարկւում միջնադարեան որմնանկարների (թէեւ շատ սահմանափակ ծաւալով եւ քանակով մեզ հասած) մաքրման եւ ամրակայման ուղղութեամբ: Այս վերականգնողական աշխատանքը իրականացւում է Իտալիայից ժամանած վերականգնողների կողմից՝ Արա Զարեանի գլխաւորութեամբ: 2015 բախտաւոր յուշարձանների շարքում ընդգրկուեց նաեւ Արցախի գոհարներից մէկը՝ Դադիվանքը, չնայած որ վերջինիս մրով պատուած որմնանկարների հետ առաջին ծանօթութիւնը 2014ին՝ մասնագէտներին մեծ յոյսեր չէր ներշնչել: Եւ ահա 2018ի գարնանը «Վիկտորիա» միջազգային բարեգործական հիմնադրամի ջանքերով լոյս տեսաւ *Դադիվանք. Վերածնուած Հրաշալիք* եռալեզու (հայերէն, ռուսերէն, անգլերէն) գիրքը՝ նուիրուած վանքի որմնանկարներին:

Չափազանցրած չենք լինի, եթէ ասենք, որ գրքի հրատարակումը իրադարձութիւն է ազգային մշակութային ժառանգութեան վերագնահատման եւ վերաճանաչման իմաստով: Չէ՞ որ Արցախ աշխարհի կոթողային գեղանկարչութեան միակ օրինակը մինչ այժմ մնում էր կա՛մ անտեսանելի (ծածկուած էր մրի շերտով), կա՛մ անհասկանալի, (պահպանուած դրուագները ստանում էին թերի մեկնաբանութիւն): Վերականգնողական աշխատանքները ոչ միայն նոր կեանք հաղորդեցին որմնանկարներին, այլեւ հնարաւորութիւն տուեցին գնահատելու դրանց գեղարուեստական առանձնայատկութիւններն ու յստակեցնելու պատկերագրական մանրամասները: Այսպէս օրինակ՝ հերքուեց պատուիրատու իշխանուհի Արզու Խաթունի պատկերման ենթադրութիւնը, բայց ի յայտ եկաւ Քրիստոսի ձեռքի մէջ պահուող սրուակի առկայութիւնը: Դադիվանքի Կաթողիկէի որմնանկարները

եզակի են իրենց պատկերագրութեամբ, քանի որ ներկայացնում են Ս. Ստեփանոս Նախավկայի նահատակութիւնը (հիւսիսային պատ) եւ Ս. Նիկողայոս Սքանչելագործի հայրապետական իշխանութիւն ստանալու դրուագը (հարաւային պատ): Միեւնոյն ժամանակ նրանց գեղարուեստական ոճի եւ կերպարների տիպաբանական առանձնայատկութիւնները կասկած չեն առաջացնում հայ վարպետ(ներ)ի աշխատանքի մասին: Կարեւոր բացայայտում էր որմնանկարների ստեղծման տարեթիւը՝ 1297:

Դադիվանքին նուիրուած սոյն գրքի ստեղծման շարժառիթն անշուշտ վերածնուած որմնանկարներն են, որոնց նուիրուած է լուսանկարների հարուստ շարքը՝ զետեղուած ինչպէս գրութեան ներսում, այնպէս էլ տրուած առանձին պրակով: Որմնանկարների մաքրման եւ ամրակայման աշխատանքների ընթացքի մասին պատմում են վերականգնող ճարտարապետ, դոկտ. Արա Զարեանն ու որմնանկարների վերականգնող մասնագէտ դոկտ. Քրիստին Լամուրէն:

Գրքի երկու միւս բաժինները նուիրուած են վանքի պատմութեանը՝ շինութիւններին, յարդարանքին եւ արձանագրութիւններին, որոնց հեղինակն է պրոֆեսոր Կարէն Մաթեւոսեանը, իսկ որմնանկարների նկարագրութիւնն ու թեմաների պատկերագրական որոշ մանրամասների անդրադարձը կատարել է արուեստաբան Աւետ Աւետիսեանը: Այստեղ ի մի են բերուած Դադիվանքի եւ նրա որմնանկարների մասին աղբիւրներում եւ մասնագիտական գրականութեան մէջ առկայ տեղեկութիւններն ու անդրադարձները, այդ թւում Դադի կամ Դադէի մասին աւանդոյթը՝ վանքի հիմնադրման կապակցութեամբ: Քննուող խնդիրների շարքում հեղինակները յատկապէս առանձնացրել են Ս. Նիկողայոսի եզակի նիւթը եւ նրա ի յայտ գալու հնարաւոր դրդապատճառները, անդրադարձել են հայկական մանրանկարչութեան եւ սրբանկարչութեան մէջ Սքանչելագործի պատկերման օրինակներին, որոնք հիմնականում ուշ միջնադարեան են:

Խօսելով գրքի բնոյթի մասին՝ կարծում ենք, որ այն պէտք է անուանել նկարա-գիրք, քանի որ վերջինս մենագրական բնոյթի աշխատութիւն չէ, եւ ըստ էութեան նման խնդիր չէր էլ դրուած հեղինակների առջեւ: Հիմնական նպատակն է եղել տալ յուշարձանի պատմամշակութային բնութագիրը, որի ենթախորքով էլ կը ներկայացուէին նոր կեանք ստացած որմնանկարների դրուագները: Միեւնոյն ժամանակ գրքի այսպիսի բնոյթ շատ նպաստաւոր է վեր հանելու գիտական այն խնդիրները, որոնք կը դրուեն Դադիվանքի որմնանկարներին նուիրուած ապագայ քննավերլուծական ուսումնասիրութեան հիմքում, որը, յուսով ենք, շատ չի ուշանայ: Այս հետաքրքիր յուշարձանը գիտական շրջանառութեան մէջ դնելու կարեւոր նախապայմաններից է որմնանկարների բազմակողմանի գեղարուեստական ու ոճական

քննութիւնը արեւելաքրիստոնէական, ինչպէս նաեւ հայկական ԺԳ. դարի որմնանկարների համնապատկերում, քանզի գոնէ նշուած դարաշրջանից - անկախ նրանց դաւանաբանական պատկանելութիւնից - մեզ են հասել ազգային կոթողային գեղանկարչութեան մի խումբ յուշարձաններ, որոնք հնարաւոր չէ առանձնացնել հայկական ազգային մշակութային միջավայրից:

Յուսանք, որ հայկական կոթողային գեղանկարչութեան այն պատառիկները, որոնք - ինչպէս եւ Դադիվանքի որմնանկարները - վերաբացուել են վերականգնման արդիւնքում, մշակութասէր հանրութեանը կը ներկայացուեն նմանատիպ հրատարակութեամբ եւ լաւ սկիզբ կը հանդիսանան արուեստի այս ճիւղի յետագայ՝ աւելի բազմակողմանի ուսումնասիրութիւնների համար:

ՀԱՐՈՒՀԻ ՅԱԿՈԲԵԱՆ
zaruhy@yandex.ru

Gerard Dedeyan, *Les Armeniens en Chypre (577-1211) de Justin II À Hugues 1er de Lusignan,* Centre de Recherche Scientifique, Sources et Études de l'Histoire de Chypre, Nicosia, 2018, 302 pages.

The book that I am about to present constitutes one of the most ambitious pieces of historical research ever undertaken into the history of Cyprus. While there are a number of articles and books in print about the Armenian community of Cyprus, nearly all of them focus on its presence on the island during the Late Ottoman and British Colonial period. By contrast, this monograph examines the presence of Armenians in Cyprus from the late sixth century until the early Lusignan period. Extending all the way from the period of Late Antiquity to the beginning of the High Middle Ages, this book can be considered without the slightest hint of exaggeration as a first of its kind. Before describing the book and its purpose, however, a few words about the author himself are in order.

Gerard Dedeyan, a French national who is also ethnically Armenian, was a Professor of Medieval History at the University of Montpellier in southern France and is currently Professor Emeritus as well as a member of the Centre of Medieval Studies at the same institution. He is a specialist in the relations that the Armenians in the Middle Ages developed with the Byzantines, the Franks, as West Europeans were called in the Middle Ages, the Georgians and the Syrian Christians. His two-volume monograph on the Armenians among Greeks, Muslims and Crusaders, titled *Les Armeniens entre Grecs, Musulmans et Croises* and published in 2003, was awarded the Gustav Schlumberger Prize by the French Academie des Belles Lettres. He is also the editor of a comprehensive history of the Armenian people from Antiquity to the present day, the *Histoire du people armenien*, published in 2007 to celebrate the year of Franco-Armenian friendship, and is currently a member of three learned societies: the Academy of Sciences and Letters of Montpellier, the Academy of Sciences and Letters of Outre Mer, that is of the Latin East, and an overseas member of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

His present volume, the fruit of years of painstaking research into the history of the Armenian presence on Cyprus, traces the Armenians' history on Cyprus itself while never losing sight of the wider historical context. It covers the period from the earliest Armenian presence to the first decades of the Lusignan dynasty resulting from the conquest of Cyprus by King Richard I of England in 1191 and its sale in 1192 to Guy de Lusignan, the dynasty's founder. Sixth century Cyprus was a province of the Byzantine Empire, as the Roman Empire in the east is now called. During the sixth, seventh and eighth centuries the empire experienced territorial losses that reduced it to a quarter of its former size. The Muslim Arabs overran Syria, Egypt and North Africa while the

Avars and Slavs overran the Balkans. The empire, reduced to little more than Asia Minor, had lost considerable revenues and population along with territory, and so emigration was welcome, providing peasants to till the soil and soldiers to man the armies. Armenians peopled the remaining territories of the empire from eastern Asia Minor to the shores of the Adriatic Sea, and began to arrive in Cyprus in the second half of the sixth century. Dedeyan discusses the settlement of Armenians on Cyprus from Asia Minor and beyond over a period of more than six centuries, and one of the great merits of his book is that he places the various instances of settlement within the broader train of events of Byzantine, Muslim and crusader history. In this way he shows vividly and convincingly that the history of Armenian settlement on Cyprus is interrelated with historical developments taking place throughout the eastern Mediterranean and even beyond.

Dedeyan first mentions the transfer to Cyprus of Armenian populations under Emperor Maurice from the Aghdzenik area of south-eastern Asia Minor in the late sixth century, underlining the importance of the Armenian heavy cavalry in combatting the Avar invaders of the Balkans at this time. He outlines the strategic importance Cyprus had for Maurice's successor, the Emperor Heraclius, who was himself possibly a descendant of the Armenian Arsacids. Heraclius used Cyprus as a staging post for seizing Constantinople, the Byzantine capital, from the Emperor Phocas, who had usurped the throne. He also used it as a base for marshalling forces against the Persians who had overrun Asia Minor. He does not lose sight of the fact that most Armenians as Miaphysites, although Christians, were heterodox in Byzantine eyes. Following the Council of Chalcedon held in 451 both Roman Catholics and Greeks accepted the doctrine of Christ as having one person but two natures. Among the Armenian dissenters was one Paul the 'Headless', an Armenian of Cyprus leading those on Cyprus opposed to Chalcedonian doctrines. He was described as headless in common with other unyielding Monophysites who refused to accept Chalcedonian Christianity. Although Patriarch Sergios, the Greek patriarch of Constantinople, attempted to bring him round to the Chalchedonian viewpoint in letters sent to him in 622-623, he was unsuccessful. Dedeyan makes it clear that, although serving the Byzantine Empire, the Armenians guarded their ecclesiastical and doctrinal independence jealously.

In his study Dedeyan makes use of Latin, Greek and Arabic historical sources besides Armenian ones. He stresses that during the period of neutrality lasting from ca. 680 to 976, when Cyprus was in effect a militarily neutral territory paying taxes to both Byzantines and Arabs, the Cypriots were regarded in Muslim Arab eyes as having signed a *pactum*, that is an agreement, outlining their rights and obligations in relation to the Muslim Arabs. Dedeyan observes how various Arab writers saw parallels between the obligations Muslims had

towards the Cypriots and similar obligations they had towards the Armenians of Arabissos, located in the area of Asia Minor with an Armenian population. The Byzantine presence in Cyprus was strengthened in this period of military neutrality, which did not preclude the arrival on Cyprus of administrators from Constantinople, by the appointment of the ethnic Armenian Alexis as governor of the island for a period of seven years during the 870s. The governor in question, mentioned as being of Armenian origin by the Byzantine emperor Constantine Porphyrogenitus in his work titled *de thematibus*, a description of the military districts of the Byzantine Empire, has been identified by the Armenian historian Hratch Bartikian as Alexios Mousele, a member of a prominent Armenian family serving the Byzantine state. It is possible that this governor installed Armenian settlers in the Paphos district, where to this day there exists the village of Mousere 5 km. to the northeast of the locality of Archimandrita.

Despite the official neutrality of Cyprus, Armenians from adjacent Byzantine Asia Minor continued to be settled there. Some of the Armenian troops participating in a failed Byzantine expedition against Crete in 911 originated from the locality of Platanion in central Asia Minor. They were apparently settled in Cyprus, bringing with them the name of their place of origin, now the Cypriot village of Platani in the eastern part of the Pentadaktylos mountain range. It is possible that Armenians originating from the locality of Priene in western Asia Minor were also settled on Cyprus in a locality called Prine, now disappeared but referred to as Briem in a letter of Pope Celestine III to Alan, the first Latin archbishop of Nicosia at the beginning of the Lusignan period. The settlement of Armenians in Cyprus continued after the island was reincorporated into the Byzantine empire in 976, following the successful conquest of Crete and of eastern Asia Minor by the emperors Nicephorus Phokas and John I Tsimiskes, the latter himself of Armenian origin. Under the Emperor John II Comnenus, who reconquered parts of the southern Anatolian coastline from the Armenians of the area and the Franks, the Armenian population of Tel-Hamdun in Northern Syria was transplanted to Cyprus in the years 1136-1137, as reported by the Arab historian of Damascus Ibn al Kalanisi.

Yet Armenians settling in Cyprus could originate from much further away than neighbouring Asia Minor. Dedeyan draws our attention to the village of Orounda in the Nicosia district. This name derives from the Arabic al-Rawandan, a locality on the river Euphrates in Mesopotamia colonised by Armenians during the Byzantine reconquest of the tenth century. During the period of the crusades this locality formed part of the county of Edessa, established by the Franks after the success of the First Crusade in 1099, and the Armenian family of Arouandanos, or Ravendel in its Frankish form passed into the service of the Frankish counts. Members of this family appear to have

settled in Cyprus and more specifically at Orounda. An icon of St. Nicholas in the church of the monastery St. Nicholas of the Roof, located about 20km. southwest of Orounda, is dateable to the end of the thirteenth century and depicts a donor whose shield bears the coat of arms of the Ravendel family. Not all the Armenian place names on Cyprus can be traced historically, but among them should be mentioned Arminou in the district of Paphos, Armenochori in the district of Limassol, Spatharikon and Kornokipos in the district of Famagusta and the locality of Armeni in the district of Larnaca. The Cypriot place names associated with the settlement of Armenians on Cyprus are given in an excellent and clearly outlined map of Cyprus in colour found on page 237 of the book.

Besides describing and analysing the settlement of Armenians in Byzantine and early Lusignan Cyprus, Dedeyan also discusses their activities on the island and their integration into the society of Cyprus. He cautions the reader against accepting the presence of Armenian merchants in Byzantine Cyprus as adopted in some recent Cypriot publications since there is no firm evidence to support such an idea, although published Genoese notarial deeds originating from Cyprus in the Lusignan period do attest conclusively to the presence and activities of Armenian merchants in fourteenth century Famagusta. The presence of Armenian mercenaries on Cyprus from the time of Isaac Comnenus, who arrived there from Cilicia in 1184 and seized power, is beyond doubt. The Old French chronicles of Ernoul and of Bernard the Treasurer written in the early thirteenth century attest that he brought Armenians from Cilicia to Cyprus with him. These Armenian soldiers probably originated from the western part of Cilicia, whose local Armenian Hethumid rulers were in alliance with Isaac against another aristocratic Armenian dynasty, the Rupenids.

The Armenians already established on Cyprus may also have supported Isaac, for by the time of his arrival they were sufficiently numerous and organised to have their own bishop. This bishop, named Tadeos, was one of the 33 Armenian prelates attending the Armenian church council at Hromgla, the seat of the Armenian catholicos, on the River Euphrates. The presence of Armenian monks on Cyprus is suggested by the condemnation of their fasting practices by the Greek Orthodox monk Neilos, the founder of the monastery of Makhairas, at the end of the twelfth century. Neilos specifically condemned the fasting practices during Lent of the followers of Artzibourios, who were apparently Armenians who kept a fast of bread and water every Monday and Wednesday during the three weeks preceding the main Lenten fast. Such a practice may have been brought over to Cyprus by Armenian monks based in the area of the Black Mountain near Antioch in northern Syria, an area not far from Cyprus by sea.

The Western chroniclers recounting the conquest of Cyprus by King Richard I of England in the course of the Third Crusade, which set out to regain Jerusalem following its conquest in 1187 by the Muslim ruler Saladin, specifically state that Isaac Comnenus opposed the king's landing at Limassol with Greek and Armenian forces in the summer of 1191. This is a clear indication that the Armenians remained loyal to Isaac throughout the seven years during which he ruled Cyprus. Dedeyan makes explicit the fact that these Armenians forces probably consisted of units known as *azat*, minor Armenian nobles and their retainers fighting on horseback and received villages and the revenues therefrom by way of reward. He suggests, moreover, that the villages Isaac Comnenus may have granted to the Armenians in his service possibly derived from the confiscations he carried out after arriving in Cyprus of lands belonging to the local Byzantine aristocrats opposed to him. This was done, along with taxing the clergy and the rest of the population, to raise money for his own mercenaries, who included Armenians, Normans from southern Italy, and mainland Greeks.

Despite participating in the resistance against King Richard, by the early thirteenth century the Armenians had become pro-Latin, largely because, as Dedeyan makes clear, of the rise of the Rupenid faction among the Armenian nobility of Cilicia. The Rupenid noble Leo was formally crowned King of Cilician Armenia in 1198 by the Roman Catholic bishop Conrad of Hildesheim, the representative of Pope Celestine III and the emperor Henry VI of Germany. Leo had sent Armenian forces to the Holy Land during the Third Crusade to assist the kings Richard I of England and Philip Augustus of France during the siege of Acre. This pro-western orientation of the Armenians of Cilicia directly impacted the Armenians in Cyprus. When encouraging settlers to come to Cyprus to reinforce his rule over the island, Guy de Lusignan, the first French ruler of Cyprus, sent emissaries to Cilician Armenia as well as to Syria and the Holy Land. The Armenian ruler Rupen III suggested the dispatch of 30,000 Armenian settlers to Cyprus when he met Aimery de Lusignan, Guy's brother and the first crowned king of Cyprus, during a pilgrimage to Jerusalem. This figure of 30,000, however, is a standard number appearing in other contexts of Armenian history in space and time, as Dedeyan shrewdly points out.

In terms of source material Dedeyan's book is enriched by recourse to sigillography as well as to written and iconographic sources such as the image of St. Nicholas discussed above. Making use of the two-volume corpus of Byzantine lead seals from Cyprus of the late Professor Michael Metcalf, in a separate chapter Dedeyan discusses the presence and activities of Armenian functionaries of the Byzantine Empire on Cyprus from the early eighth to the early ninth century. This is a period for which written and inscriptional evidence is sparse, making the testimony provided by the seals all the more useful,

although there are also seals from Cyprus recording Armenian officials during the later tenth and eleventh centuries. A useful set of photographs of the seals in question, both obverse and reverse, is given on pages 253-58 of the book. Ever aware of the role of the Armenians in Cyprus within a broader historical, geographical and cultural context, Dedeyan dedicates two chapters towards the end of his monograph to other national and religious groups that settled on Byzantine Cyprus, namely the Maronites and the Georgians. In the case of the former he emphasises how they had been marginalised by the other confessions of Eastern Christians and were ultimately incorporated by the incoming Franks, becoming members of the Roman Catholic Church, as they are to this day, although retaining a distinctive Arabic rite. In the case of the Georgians he stresses the predominantly monastic character of the community and how their monastic foundations enjoyed the patronage of the Bagratid kings of Georgia, although they continued well into the Lusignan period.

Not least among the engaging features of this book are the Armenian maps given in colour or in black and white at the end, maps printed in Armenian from the seventeenth to the mid-nineteenth centuries and forming part of the Rouben Galician collection. The modern map of Cyprus in colour already mentioned, giving the locations of Armenian settlements on the island, also gives the location of the Maronite settlements, mainly in the northwest of Cyprus, with a chronology of these settlements given on the page immediately following. Genealogical tables together with maps of the Byzantine Empire and of the east Mediterranean basin during the crusades, taken from the works of Georg Ostrogorsky, Elisabeth Malamut, Claude Mutafian and the author himself, assist greatly in clarifying visually the numerous names of people and places given in the book. Readers examining the 20-page bibliography of this work will note that the source materials and secondary works include Armenian and the major languages of Europe, including Latin and Classical Greek. Last but not least, I should point out that the ANIV foundation in Russia is keen to obtain translation rights in order to publish this work in Armenian and Russian translation. If this eventually comes to pass, it will assist greatly in the book's overall dissemination throughout Eastern Europe, the Caucasus and the international Armenian diaspora.

NICHOLAS COUREAS
ncoureas@hotmail.com

Համօ Սուքիասեան, Նարինէ Երանոսեան, *Խորհրդային Հայաստանի Երգիծական Մամուլը 1920ական Թուականներին*, Երեւան, Էդիթ պրինտ, 2018, 136 էջ + 8 էջ ներդիր:

ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողներ Համօ Սուքիասեանը եւ Նարինէ Երանոսեանը ընթերցողի դատին են յանձնել կարեւոր մի մենագրութիւն՝ վերհանելով հայ մամուլի պատմութեան մէջ գրեթէ բաց մնացած մի թեմա: Նրանց *Խորհրդային Հայաստանի Երգիծական Մամուլը 1920ական Թուականներին* աշխատութիւնը նուիրուած է 1920ականներին Խորհրդային Հայաստանում լոյս տեսած երեք երգիծաթերթերին՝ *Շեշտ* (1923), *Ջուռնա* (1924) եւ *Կարմիր Մոծակ* (1926-27): Հեղինակների գիտական հետաքրքրութիւնների ծիրում միշտ էլ եղել են սոյն եւ առնչակից թեմաները[1]: Եւ չնայած ուսումնասիրուող նիւթի եւ աշխատութեան ոչ-մեծ ծաւալին՝ արդիւնքում ունենք պատմաբանասիրական բնոյթի մի բովանդակալից հետազօտութիւն, որը հանգամանօրէն ներկայացնում է վերոնշեալ երգիծաթերթերի հիմնադրումն ու հիմնադիրներին, կայացումը եւ հրատարակութեան դադարեցումը գրաքննութեան պատճառով:

Հանրութեան մէջ առկայ թերութիւնների մատնանշումը երգիծանքի միջոցով՝ ցանկացած հասարակութիւն առողջ պահելու գրաւական է, ինչը, սակայն, ասես հակացուցուած է ամբողջատիրական կարգերին: Այդուամենայնիւ, խորհրդային իրականութեան մէջ անգամ Ստալինի ժամանակ եղել են երգիծանքի դրսեւորումներ, թէկուզեւ՝ կարճատեւ: Գրախօսուող աշխատութեան հեղինակներն իրաւամբ նկատել են, որ «*Երգիծական մամուլի համար առաւել բարենպաստ պայմաններ ստեղծուեցին, երբ խորհրդային հանրապետութիւնները ռազմական կոմունիզմից անցում կատարեցին դէպի նոր տնտեսական քաղաքականութիւն (ՆԷՊ): Վերջինին յատուկ հասարակական-քաղաքական բնոյթի մի շարք գործօններ, ինչպիսիք էին՝ մասնաւոր ձեռներէցութեան, կոոպերացիայի, հասարակական ակտիւ խմբերի ու գործունեայ անհատների աշխուժացումը, որոշիչ դեր ունեցան նաեւ մասնաւոր պարբերականների (այդ թւում՝ երգիծական ուղղուածութեան) ստեղծման հարցում*» (էջ 16-17):

Առհասարակ, սոյն հատորի հեղինակները իրենց հետազօտած նիւթը շահեկանօրէն ներկայացնում են քննուող ժամանակաշրջանի եւ նիւթի լայն ենթախորքում՝ աշխատութեան առաջաբանում եւ առաջին գլխում ներկայացնելով մի կողմից հայ երգիծական մամուլի՝ մինչ 1920ականներն առկայ պատկերը, միւս կողմից՝ խորհրդային իրականութեան պայմաններում երգիծական մամուլի սկզբնաւորման նախադրեալները: Նրանք ըստ արժանւոյն են գնահատել այդ մամուլի սակաւաթիւ նուիրեալ հրատարակիչների յիրաւի գերմարդկային ջանքերը, որոնք, պետական

աջակցութեան բացակայութեան պայմաններում, իշխանութիւնների քաղաքական եւ գաղափարախօսական վերահսկողութեան ներքոյ կարողացել են կեանքի կոչել երգիծաթերթեր, թէկուզեւ՝ սակաւաթիւ համարներով: Բ. գլխում ներկայացուած են այդ երեք երգիծաթերթերի հիմնադիրները՝ Վահան Թոթովենցը եւ Էդուարդ Խոճիկը (որոնց համատեղ լուսանկարով էլ, ի դէպ, բացւում է գիրքը): Անդրադառնալով խորհրդահայ երգիծական մամուլի ռահվիրային՝ աշխատութեան հեղինակները կարեւոր ծառայութիւն են մատուցել թոթովենցագիտութեանը: Որպէս գրքի յաւելուած՝ նրանք հրատարակել են Հայաստանի Ազգային Արխիւում յայտնաբերած Թոթովենցի ինքնագիր երկու ինքնակենսագրականները, որոնցից առաջինի եւ այլ արխիւային փաստաթղթերի համադրմամբ վերջնականապէս ճշտել են գրողի ծննդեան թուականը՝ 1893 (էջ 29): Պատմաբան հեղինակները, ժամանակի վկայութիւնների հիման վրայ տալով գրողի կենսագրութիւնը, կատարել են նրա ստեղծագործութեան ուշագրաւ բնորոշում. «*Վահան Թոթովենցը կեանքի ու պատմական ժամանակաշրջանի «համագործակցութեան» դիրքերից էր հաղորդակցւում: Դա է պատճառը, որ նրա գրեթէ բոլոր գործերում ակնառու է արդիականութեան յստակ հնչողութիւնը: Սա, թերեւս, նրա ամենաբնորոշ յատկութիւնն էր*» (էջ 36): Այնուհետեւ Սուքիասեանն ու Երանոսեանը, առաջին անգամ հայ գրականութեան մէջ, ընդարձակօրէն անդրադարձել են հայ մշակոյթի գրեթէ մոռացուած, սակայն որոշակի ներդրում կատարած չարքաշ մշակներից մէկին՝ երգիծաբան Էդուարդ Խոճիկին (1900–61): Յաւելուածում տեղ է գտել նաեւ Խոճիկի՝ ցարդ անտիպ ինքնակենսագրութիւնը, որից պարզւում է, որ սոյն համեստ գործիչն իր նպաստն է բերել ոչ միայն հայ երգիծական մամուլին: Բաւական է յիշել, որ նա մասնակցել է Կոմիտասի անուան լարային քառեակի կազմաւորմանը. «*1932 թուին կուարտէտը պիտի քայքայուէր, սակայն ես կարողացայ այն պահպանել եւ կոչել տալ մեր Կոմիտասի անունով*», վկայել է նա (էջ 123): Բացի այդ, Խոճիկը կարեւոր դեր է խաղացել Հայաստանի թանգարաններն ու արխիւները հասրտացնելու գործում՝ հայթայթելով հազարաւոր փաստաթղթեր, նամակներ, լուսանկարներ, վաւերագրեր, կերպարուեստի հայ, ռուս եւ եւրոպացի վարպետների գործեր՝ արժանանալով Յովսէփ Օրբելիի եւ Դերենիկ Դեմիրճեանի բարձր գնահատականին (էջ 123-4): Իդէպ, մեր կողմից աւելացնենք, որ բեմարուեստի հանդէպ հակում ունեցած Խոճիկը 1928ին առաջին եւ վերջին անգամ նկարահանուել է հայ շարժանկարի առաջին լիամետրաժ գործերից մէկում՝ Պատուական Բարխուդարեանի *Տասնվեցերորդը* ֆիլմում, երկրորդ սպայի դերում[2]:

Արխիւային նիւթերի, ժամանակի մամուլի եւ թեմային առնչուող պատմագիտական ու բանասիրական նոր եւ նորագոյն գրականութեան

հիման վրայ յաջորդ երեք գլուխներում ներկայացուած է երեք երգիծաթերթերի ստեղծման, ընթացքի ու դադարեցման պատմութիւնը: Հեղինակներն իրաւամբ նշում են, որ երգիծաթերթերը հարուստ նիւթ կարող են մատակարարել Խորհրդային Հայաստանի առօրէական պատմութիւնն ուսումնասիրողներին: Չբաւարարուելով թերթերում ընդգրկուած նիւթերի սոսկ վերաշարադրմամբ եւ վերլուծութեամբ (ինչը երբեմն նկատելի է մամուլին վերաբերող աշխատութիւններում)՝ հեղինակներն անդրադարձել են նաեւ դրանց ստեղծման «խոհանոցին», կատարել զուգահեռներ ժամանակի եւ յետագայի համանման նիւթերի, երեւոյթները քննել ժամանակի պատմական ենթախորքի լոյսի ներքոյ: Երեք թերթերում էլ որպէս երգիծանքի թիրախներ նշուած են եղել նախ՝ խորհրդային պետութեան արտաքին թշնամիները (որ հայութեան համար առաջին հերթին մարմնաւորւում էր իշխանութիւնից վտարուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեամբ), այնուհետեւ՝ հին կացութածեւի մնացորդները, առաջին հերթին՝ եկեղեցին: Երգիծանքը չէր կարող շրջանցել, սակայն, նորաստեղծ հանրութեանը յուզող ընկերային խնդիրները, ինչպէս, օրինակ, 1920–30ականներին պետական-կուսակցական կառավարման համակարգում առկայ թղթաբանութիւնը եւ պաշտօնական դիրքի չարաշահումը, ինչպէս նաեւ կենցաղային այլեւայլ հարցերը (դիցուք, 1924ին Էջմիածին քաղաքում ատամնաբուժի չգոյութիւնը): Նման խնդիրների՝ այս կամ այն սրութեամբ արծարծումն էլ, ցաւօք, նպաստել է երգիծաթերթերի փակմանը, չնայած հեղինակները չեն բացառել, որ դրան կարող էին նպաստած լինել նաեւ նիւթական անբաւարար միջոցները, ինչպէս ժամանակի խորհրդային շատ պարբերականների դէպքում (էջ 68-69):

Տպաւորիչ է խորհրդահայ սոյն երգիծաթերթերին աշխատակցած մտաւորականների անունները՝ Արամայիս Երզնկեան, Դերենիկ Դեմիրճեան, Գուրգէն Մահարի, Լեռ Կամսար, անգամ՝ Հրաչեայ Աճառեան, որը երգիծանքի է ենթարկել… ի՛ր իսկ հեղինակած կոթողային *Հայերէնի Արմատական Բառարանը* (էջ 78):

Հեղինակները նշում են, որ *Կարմիր Մոծակ* թերթի հրատարակիչները նրա նպատակը համարել են «*Խորհրդային Հայաստանի իրականութեան բացասական կողմերի խարազանելը.… ամրապէս կանգնած լինելով խորհրդային դիրքորոշման վրայ*» (էջ 72): Ասուածը ճշմարիտ է քննուած բոլոր թերթերի համար: Սակայն սոյն աշխատութիւնը ցոյց է տալիս, որ այդ դիրքորոշումն էլ չի երկարացրել քննուող պարբերականների կեանքը, քանի որ ՆԷՊի համեմատաբար ազատ ժամանակահատուածն աստիճանաբար տեղի էր տուել խորհրդային գրաքննութեան հետզհետէ ուժգնացող մամլիչի առջեւ, որի համար անթոյլատրելի էր անգամ սեփական թերութիւնների երգիծումը, անգամ խորհրդային գաղափարախօսութեան համար ընդունելի երգիծանքի՝ «կարմիր»

երգիծանքի միջոցով[3]: Ըստ հեղինակների՝ «*թերթի փաստացի խմբագիր ու հրատարակիչ Է. Խոճիկի ըմբոստ կեցուածքը, նաեւ երգիծաթերթի էջերում տեղ գտնող սուր քննադատական նիւթերն ու երգիծապատկերները չէին կարող անհետեւանք մնալ. Խորհրդային Հայաստանում հետզհետէ թափ հաւաքող մամուլի պետական-կուսակցական վերահսկողութիւնն ու գրաքննութիւնը չէր պատրաստւում երկար հանդուրժել «Կարմիր մոծակ»ի խայթոցները*» (էջ 89): Պատահական չէ, որ նման պայմաններում խորհրդահայ մամուլի յաջորդ երգիծական օրգանը՝ *Ոզնին*, լոյս տեսաւ միայն տասնամեակներ անց, Ստալինի մահից յետոյ:

Սուքիասեանի եւ Երանոսեանի *Խորհրդային Հայաստանի Երգիծական Մամուլը 1920ական Թուականներին* աշխատութիւնը արժէքաւոր ներդրում է հայոց պատմութեան 1920ականների, հայ գրականութեան եւ մամուլի պատմութեան ուսումնասիրութեան մէջ: Գիրքն աւելի շահեկան են դարձնում երգիծաթերթերի որոշ էջերի գունաւոր վերատպութիւնները եւ հրատարակիչների լուսանկարները: Հեղինակներն այս աշխատութեամբ կանգ չեն առնում, այլ վերջին պարբերութեամբ խոստանում են շարունակել՝ թեմայի ուսումնասիրութեան առարկայ դարձնելով հայերէն ամենաերկարակեաց երգիծաթերթը՝ 1954ից մինչ օրս հրատարակուող *Ոզնին*...

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Տե՛ս՝ Համօ Սուքիասեանի՝ սոյն թեմային առնչուող յօդուածներն ու հրապարակումները՝ «Լեռ Կամսարի Նորայայտ Ֆելիետոնները ՀԿ(բ)Կ Կենտկոմին Ողղուած 1928 թ. Սեպտեմբերի 7-ի Նամակում», *Վէմ Համահայկական Հանդէս*, 2014, N 3, էջ 211-218. նաեւ՝ «ՀՍԽՀ Արտաքին Գործերի Ժողկոմատի Հրատարակչական Գործունէութիւնը 1921-1922 Թուականներին», *Հայոց Պատմութեան Հարցեր (Գիտական Յօդուածների Ժողովածու)*, N 15, 2014, էջ 172-183. նաեւ՝ «Փաստաթղթեր Հայաստանի Կենտրոնական Պետական Արխիւի Հրատարակչական Գործունէութեան Պատմութեան Մասին», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 2014, N 122, էջ 265-277. նաեւ՝ «Մամուլի Պետական Վերահսկողութիւնը Եւ Գրաքննութիւնը Հայաստանի Հանրապետութիւնում 1918-1920 թթ.», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 2015, N 3, էջ 63-77 եւն.: Նարինէ Երանոսեանի՝ սոյն թեմային առնչուող աշխատութիւններից տե՛ս՝ «Հայկական Հարցը Եգիպտոսի *Ալ-Մուշիր* Պարբերականի Երգիծանկարներում ԺԹ. Դարի Վերջին Քառորդին», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հատոր ԼԵ*, 2015, էջ 623-637:

[2] Տե՛ս՝ *Հայկական Կինօ. 1924–2008: Կատալոգ*, Երեւան, Կինոյի զարգացման «Ոսկէ ծիրան» հ/կ, 2009, էջ 11:

[3] Այստեղ տեղին է յիշել, թէ ինչպէս պոլսահայ եւ ֆրանսահայ երգիծաբան, *Կավռօշ* երգիծաթերթի հիմնադիր հրատարակիչ Երուանդ Թոլայեանը, 1935ին հայրենադարձուելով Խորհրդային Հայաստան, «*դիմում է Հայաստանի*

կառավարութեանը, որպէսզի թոյլ տան վերադառնալ Փարիզ, այնտեղ շարունակի հրատարակել իր թերթը նոր անունով՝ «Կարմիր Գաւրօշ», եւ սովետամէտ կողմնորոշումով պրոպագանդի մեր Խորհրդային Հայաստանի նուաճումները: Վատ առաջարկ չէր, կային այդպիսիք ռուսերէն, ֆրանսերէն: Նորմալ երկրում կա՛մ կ՛ընդունուէր, կա՛մ կը մերժուէր: Պատասխանը չուշացաւ: Բանտարկեցին, աքսորեցին Թոլոյեանին. այլեւս չտեսանք մեր դժբախտ Գավրօշին, որի անունը սակայն իր ուրոյն տեղն ունի հայ մամուլի պատմութեան մէջ» (Վիգէն Իսահակեան, *Փարիզ. Քոչար. Անցած Օրեր*, Երեւան, «Տիգրան Մեծ», 2006, էջ 251-252):

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ
artsvi@yahoo.com

Յասմիկ Ստեփանեան, *Գէորգ Բամպուքճեան. Կեանքը, Գործը եւ Ժամանակը (1923-1996)*, «Մեսրոպ Արք. Աշճեան Մատենաշար 178», Երեւան, 2018, 168 էջ:

ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի վաստակաշատ աշխատակցուհի Յասմիկ Ստեփանեանի ոչ-այնքան ծաւալուն բայց բաւական բովանդակալից այս նոր աշխատանքը լաւագոյնս ներկայացնում է պոլսահայ բազմերախտ բանասէր, մատենագէտ եւ թարգմանիչ Գէորգ Բամպուքճեանի (1923–1996) կեանքը եւ գործը: Հատորեակը, որ մեծ գիտնականի վաստակի արժանի գնահատանք է եւ նրա յիշատակի խնկարկում, կարեւոր է յատկապէս հայաստանեան գիտական եւ ընթերցող լայն հանրութեան համար, քանի որ հայրենի գիտութեանը ծանրակշիռ նպաստ բերած բազմարդիւն այս ուսումնասիրողի անունը գրեթէ յայտնի չէ մայր Հայրենիքում:

Իսկապէս, ինչպէս ցոյց է տալիս գրախօսուող աշխատանքը, վիթխարի է Բամպուքճեանի գիտական վաստակը: Նա հեղինակ է հազարի չափ հայերէն եւ թուրքերէն յօդուածների, հետազօտութիւնների եւ հրապարակումների, որոնք վերաբերում են հայագիտական ու թուրքագիտական տարբեր խնդիրների՝ բանասիրութեան, պատմագիտութեան, մատենագիտութեան, աղբիւրագիտութեան եւ այլ ոլորտների:

Ստեփանեանը չի յաւակնել կատարել Բամպուքճեանի ժառանգութեան գիտական ուսումնասիրութիւնը, այլ ստեղծել «*հանրամատչելի ուղեցոյց... թուրքագէտների եւ հայագէտների, մասնաւորապէս Օսմանեան Կայսրութեան, Արեւմտեան Հայաստանի պատմութեամբ զբաղուողների համար*» (էջ 6): Դա նրան լիովին յաջողուել է:

Բամպուքճեանի համառօտ կենսագրականը ներկայացնելուց յետոյ, Ստեփանեանն առանձին գլուխներով անդրադարձել է գիտնականի թուրքերէն եւ հայերէն ուսումնասիրութիւններին: Բամպուքճեանը հարիւրաւոր թուրքերէն յօդուածներ է տպագրել մէկ տասնեակից աւելի թուրքական հանրագիտարաններում եւ մի շարք մասնագիտական պարբերականներում: Այդ յօդուածներից շատերը հաւաքուել են եւ գիտնականի անձնական հարուստ դիւանից քաղուած բազում վաւերական նիւթերի հետ միասին, նրա մահից յետոյ, Ստամբուլի «Արաս» երկլեզուեայ (հայերէն եւ թուրքերէն) հրատարակութեամբ լոյս են տեսել չորս ստուար հատորներով (2002--2003): Այստեղ ընդգրկուած յօդուածներում Բամպուքճեանը հիմնականում հայկական եւ թուրքական աղբիւրների հիման վրայ հմտօրէն քննել է Կոստանդնուպոլսի պատմութիւնը, ներկայացրել հայատառ թուրքերէն գրականութիւնը, որոշ կարեւոր աղբիւրների իր կատարած թուրքերէն թարգմանութիւնները, վեր

հանել Թուրքիայի պատմութեան եւ մշակոյթի տարբեր բնագաւառներում հայութեան կատարած ծանրակշիռ ներդրումները, այդ ասպարէզում հանդէս եկած հազարաւոր հայազգի գործիչների կենսագրականները:

Գրախօսուող ուսումնասիրութեան մօտ եօթ տասնեակ էջերում հայատառ թուրքերէն գրականութեանը եւ Օսմանեան Կայսրութեան պատմութեանը լաւատեղեակ հեղինակը քննել է Բամպուքճեանի թուրքերէն աշխատանքների քառահատորը եւ ընթերցողին ներկայացրել դրանց պարունակութիւնը, գիտնականի շրջանառած հարուստ տեղեկատուութիւնն ու սթափ քննութիւնները, եզրայանգելով, որ «*յօդուածներից իւրաքանչիւրն իր նիւթով ու բացայայտումներով ներդրում է թուրքագիտութեան մէջ*» (էջ 20):

Առանձնակի յիշատակելի են Բամպուքճեանի այն թուրքերէն ուսումնասիրութիւնները, որոնց մէջ նա բացայայտել է շուրջ 500 թուրքագիր աշուղների հայկական ինքնութիւնը, «*նրանց ժառանգութեան հայկական մշակոյթի մաս կազմելու փաստը եւ դրանց թուրքացման ծգտումներին խոչընդոտելու մասնագէտի ազնիւ մղումը*» (էջ 37):

Բամպուքճեանը, որ քաջատեղեակ է եղել պատմական իրողութիւններին եւ միաժամանակ եղել է անաչառ գիտնական, դժուարին հոգեկացութեան մէջ է գտնուել՝ գործելով թուրքական միջավայրում, որտեղ միտումնաւոր կեղծուել եւ կեղծւում են պատմական փաստերն՝ իվնաս հայերի: Այդ խեղաթիւրումներն անպատասխան չի թողել նա, եւ Ստեփանեանը զարմանքով ու հիացմունքով է գրել. «*Ինչպէ՞ս է կարողացել այդ առաջին հայեացքից համեստագոյն գիտնականն այդքան համարձակ հակահարուած տալ հակահայ յօդուածներին եւ հրապարակումներին*» (էջ 8): Ապա աւելացրել է, որ Բամպուքճեանի «*սեղմ, զուսպ գրչով, գիտական ու պատմական անհերքելի փաստարկներով ի չիք են դարձուել կանխամտածուած յարձակումները, յերիւրանքներն ու հակահայկական մթնոլորտը շիկացնելու ծգտումները*» (էջ 45): Յիրաւի, մեծ գիտնականը «*կանխել է մեր մշակոյթի, պատմութեան շուրջ մտացածին գործերի, խեղաթիւրումների թուի աճը*» եւ «*տարիներ շարունակ զսպաշապիկի դեր է կատարել թուրքամոլ օտար եւ թուրք գիտնականների համար*»: Աւելին, նա իր աշխատանքներով, թէ՛ նշանակալից ներդրում է կատարել թուրքագիտութեան մէջ եւ թէ՛ նպաստել «*հայ եւ թուրք մշակոյթների կամրջմանը*», որի շնորհիւ նա, իսկապէս եւ արժանիօրէն, «*ծայրաստիճան յարգուած է եղել ոչ միայն հայ, այլեւ թուրքական գիտական շրջանակներում, ունեցել թուրք աշակերտներ, որոնք տիրապետելով հայերէնին, այսօր յայտնի անուններ են թուրք գիտական շրջանակներում եւ մասամբ զբաղւում են հայագիտութեամբ, հպարտութեամբ յիշելով իրենց ուսուցչին*» (նշուած էջերը):

Յասմիկ Ստեփանեանն, առաւել սեղմ, անդրադարձել է Բամպուքճեանի հայերէն գիտական ժառանգութեանը եւ ըստ արժանւոյն գնահատել այն: Այդ հարուստ ժառագութեան մէջ առկայ են մենագրութիւններ, ուսումնասիրութիւններ, յօդուածներ, որոնք «*նաեւ բամպուքճեանական երախտագիտութեան զգացումների արտայայտութիւններ են՝ ուղղուած առանձին մտաւորականների, հասարատութիւնների, ինչպէս Մխիթարեան վանքերի վարդապետներին, երեւանեան Մատենադարանին եւ այլոց*» (էջ 95): Յիրաւի, Հայ Եկեղեցու եւ մշակոյթի ուսումնասիրման առումով կարեւոր ներդրումներ են յատկապէս *Յակոբ Նալեան Պատրիարք 1706–1764. Կեանքը, Գործերը Եւ Աշակերտները* (Իսթանպուլ, 1981) եւ *Յովհաննէս Պատրիարք Կոլոտ (1678-1741) Եւ Իր Աշակերտները* (Իսթանպուլ, 1984) մեծարժէք մենագրութիւնները: Ինչպէս նշել է Ստեփանեանը, «*ահռելի փաստական նիւթ է ամբարուած այս մենագրութիւններում, որը մեր ժողովրդի պատմութեան շատ ու շատ անյայտ էջերի վրայ լոյս է սփռում, բազմաթիւ նոր մանրամասներ ի յայտ բերում: Փաստական հարստագոյն նիւթ, որը կարող է աղբիւր ծառայել միքանի լուրջ ուսումնասիրութիւնների համար*» (էջ 86):

Հատորեակում յիշատակուած են նաեւ Բամպուքճեանի հմտալից աղբիւրագիտական, բնագրագիտական աշխատանքները, որոնց մէջ առանձնանում է յատկապէս Երեմիա Չելեպի Քէօմիւրճեանի *Պատմութիւն Հրակիզման Կոստնդնուպօլսոյ* երկի նրա աշխատասիրած քննական բնագիրը (Իսթանպուլ, 1991): Առհասարակ Քէօմիւրճեանը, որ թողել է հայերէն ու թուրքերէն չափազանց հարուստ ժառանգութիւն, եղել է Բամպուքճեանի նախասիրած հեղինակը: Վերջինիս ամենանշանաւոր երկերից մէկը՝ *Պատմութիւն Սրամպօլայ* չափածոյ պատմութիւնը նա թուրքերէնով խմբագրել եւ հրատարակութեան է պատրաստել (Իսթանպուլ, 1988), թուրքերէն յօդուածով ներկայացրել է նաեւ Քէօմիւրճեանի միւս նշանաւոր երկը՝ *Պատմութիւն Համառօտ ԴՃ (400) Տարւոյ Օսմանցոց Թագաւորացն* նոյնպէս չափածոյ մեծարժէք երկը, «*որն Օսմանեան կայսրութեան պատմութեան մասին առաջին հայերէն գործն է*» (էջ 26):

Յակոբ Նալեանից եւ Յովհաննէս Կոլոտից բացի, Բամպուքճեանը նպատակ է ունեցել գրել նաեւ երկու այլ նշանաւոր պատրիարքների՝ Պօղոս Կաղզուանցու եւ Գրիգոր Շղթայակրի մասին մենագրութիւններ: Այդ աշխատանքները, սակայն, նա չի հասցրել իրագործել: Գիտնականի անձնական դիւանում առկայ են բազմաթիւ անաւարտ եւ անտիպ գործեր: Գրախօսուող հատորեակում Ստեփանեանը նշել է Բամպուքճեանի այդ գործերից 27ը, որոնց մէջ կան տապանագրերի, ձեռագրերի, հնատիպ գրքերի, մամուլի եւ բազմապիսի վաւերագրերի ընդարձակ ցուցակներ,

նշանաւոր անձանց կենսագրականներ եւ գերդաստանների պատմութիւններ, զանազան հետազօտութիւններ եւ թարգմանութիւններ:

Ստեփանեանը տեղեկացրել է նաեւ, որ Բամպուքճեանի հայալեզու տպագիր եւ անտիպ գործերի մեծ մասի ցուցակը խնամքով կազմել է Կարօ Աբրահամեանը: «*Հայերէն աշխատասիրութիւնների ցանկը*,- գրում է նա,- *«Մարմարա»ի կարծիքով, կարող է լրացուել յետագայ ուսումնասիրողների կողմից*» (էջ 99): Նշենք, որ մեր բանասիրութեան համար չափազանց շահեկան է կազմել եւ հրատարակել Բամպուքճեանի հայերէն թէ թուրքերէն աշխատութիւնների լիակատար մատենագիտութիւնը, ինչը, ըստ իս, կարող են լաւագոյնս համատեղ կատարել Աբրահամեանը եւ Ստեփանեանը:

Հատորեակի վերջում հեղինակը զետեղել է որոշ ուշագրաւ նիւթեր, ինչպէս՝ իր եւ Արմէն Տէր Ստեփանեանի նամակագրութիւնը Բամպուքճեանի հետ, վերջինիս մասին պատմաբան Սիրվարդ Մալխասեանի խօսքը, տեղեկութիւններ արդի պոլսահայ պատմագրութեան, այլեւ արտասահմանում գործող պոլսահայ մի շարք դէմքերի վերաբերեալ: Կարեւոր է նաեւ գիրքը եզրափակող ցանկը, որտեղ նշուած են Բամպուքճեանին վերաբերող հայերէն եւ թուրքերէն յօդուածներն ու գրախօսականները:

Իսկապէս, Բամպուքճեանը կատարել է գործեր, որոնք, Ստեփանեանի գնահատմամբ, «*մի ողջ ինստիտուտի աշխատանք էին ենթադրում*», եւ, այդուհանդերձ, «*նա նոյնիսկ չարժանացաւ ՀՀ ԳԱԱ արտասահմանցի անդամի կամ պատուաւոր դոկտորի կոչման*» (էջ 5-6): Բամպուքճեանն ինքը գիտութեան ասպարէզում օժանդակել ու սատարել է շատերին, եւ, ինչպէս արձանագրուած է նրա շիրմաքարին, նա «***իր անձէն աւելի ուրիշներուն ծառայեց***» (էջ 113):

Ստեփանեանը մաղթում է, որ «*ի վերջոյ իմի հաւաքուի ու մշակուի յայտնի բանասէր, մատենագէտ պատմագրի արխիւը: Հրատարակուեն նրա անտիպ ուսումնասիրութիւնները, իսկ թուրքերէնները՝ թարգմանուեն ու տպագրուեն Գէորգ Բամպուքճեանին նուիրուած հատորներում*» (էջ 112): Միանում ենք այդ մաղթանքին՝ լիայոյս, որ հայ գիտնականների ջանքերով պոլսահայ վաստակաշատ բանասէրի ժառանգութիւնն ի վերջոյ կ'ամբողջանայ եւ մատչելի կը դառնայ սերունդներին:

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ
helinemuradyan@rambler.ru

Արծուի Բախչինեան, *Հայերը Չինաստանում: Հայ-Չինական Պատմամշակութային Առնչութիւնները*: Ամփոփումը՝ չինարէն: Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, 2017, 356 էջ:

Հայ համայնքների պատմութեան ուսումնասիրութիւնը պատմագիտութեան առանցքային ու կարեւոր ուղղութիւններից է, որը հայագիտութեան մէջ լուրջ հիմքերի վրայ դրուեց դեռեւս նախորդ դարում, իսկ ՀՀ անկախութեան վերականգնումից յետոյ լայն ուշադրութեան է արժանացել, տարբեր գիտահետազօտական հաստատութիւնների մասնագէտների կողմից հրապարակուել են Սփիւռքի աւանդական ու նոր համայնքների պատմութեանը վերաբերեալ տասնեակ աշխատութիւններ: Այս ենթահողում զգալի աշխատանքներ են տարուում ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Հայ Գաղթօճախների եւ Սփիւռքի Պատմութեան բաժնում, որի աշխատակից, բանասիրական գիտութիւնների թեկնածու Արծուի Բախչինեանի կողմից գիտական ու լայն հասարակայնութեանը ներկայացուեց երկարամեայ պրպտումների արդիւնք հանդիսացող *Հայերը Չինաստանում. Հայ-Չինական Պատմամշակութային Առնչութիւնները* աշխատութիւնը: Աշխատանքը շարադրուել է մեծաքանակ, զգալի չափով դեռեւս սակաւ ուսումնասիրուած, գիտական հանրութեանը քիչ ծանօթ արխիւային, մամուլի, մասնագիտական ու հրապարակախօսական գրականութեան, ինչպէս նաեւ համացանցի նիւթերի վերլուծութեան հիման վրայ:

Բախչինեանի կատարած պատմաբանասիրական բնոյթ կրող այս աշխատանքը գալիս է լրացնելու մեր իմացութիւնը ոչ միայն Չինաստանի, այլ նաեւ Հարաւ-Արեւելեան Ասիայի ոչ-այնքան բազմամարդ, սակայն նախորդ դարերում նշանակալի դեր ունեցած հայ գաղութների պատմութեան բազում կողմերի վերաբերեալ: Հեղինակն, առկայ տուեալների զուգորդման ու մշակման շնորհիւ, կարողացել է բացայայտել յիշեալ հայ համայնքների պատմական ու մշակութային հարուստ շերտերը, ստանալ Չինաստանում հայ ժողովրդի ներկայութեան համեմատաբար ամբողջական պատկերը: Այդպիսի աշխատանքներ ժամանակին ձեռնարկել են հայ գաղթօճախների պատմութեան որոշ հետազօտողներ (Աշոտ Աբրահամեան, Հրաչեայ Աճառեան, Ռաֆիկ Աբրահամեան, Ռուբէն Գինին եւ այլք), սակայն ներկայ անդրադարձը համընդգրկուն եւ առաւել ամբողջական է:

Աշխատութիւնն աչքի է ընկնում մատուցուող նիւթի յագեցուածութեամբ, առատ յղումներով, օգտագործուած են բազմաթիւ եւ բազմալեզու աղբիւրներ: Այն ընդգրկում է ոչ միայն Չինաստանի հայութեան պատմութիւնը, այլեւ հայ-չինական առնչութիւնները՝ դրանց սկզբնաւորումից մինչեւ մեր օրերը: Աշխատութիւնը բաղկացած

է նախաբանից, 10 գլուխներից, յաւելուածից, վերջաբանից, օգտագործուած սկզբնաղբիւրների եւ գրականութեան ցանկից:

Նախաբանում ներկայացուած են աշխատութեան սկզնաղբիւրներն ու գրականութիւնը, վերլուծուել են մինչ հեղինակի ներկայ աշխատանքը թեմայի առնչութեամբ ՀՀում, Սփիւռքում ու արտերկրում հայ եւ օտար հեղինակների հետազօտութիւններ, գիտական յօդուածներ ու հրապարակումներ, դրանցում կատարուած հիմնական շեշտադրումներ:

Առաջին գլխում ներկայացուել է «Հայ-Չինական Կապերը Մետաքսի Ճանապարհին», որտեղ հեղինակը բացայայտել է շուրջ երկու հազար տարի առաջ միջազգային առեւտրում Հայաստանի եւ հայ վաճառականութեան ունեցած դերը: Վաղ շրջանի հայ-չինական տնտեսական կապերի վկայութիւն են Գառնիից, Արտաշատից, Դուինից եւ այլ վայրերից պեղումների արդիւնքում գտնուած չինական ծագման ապրանքները (յախճապակի, տարատեսակ սպասքի առարկաներ՝ թաս, գաւաթ, անօթ եւն.), ինչպէս նաեւ Չինաստանում յայտնաբերուած յախճապակէ արձանիկների եւ այլ իրերի վրայ հայկական, քրիստոնէական հնարաւոր մոտիւները:

Աշխատանքի երկրորդ եւ երրորդ գլուխները նուիրուած են միջնադարում ձեւաւորուած գրական եւ մշակութային կապերին, հայերին Չինաստանում, հայ եւ օտար հեղինակներից միջնորդաւորուած յիշատակութիւններին: Հեղինակը ներկայացրել է չինական արուեստի ազդեցութիւնը, յաճախ նմանակումը կամ մոտիւները, որոնք առկայ են Հայաստանում եւ տարածաշրջանում մանրանկարչութեան, գորգագործութեան եւ այլ ասպարէզներում: Առանձին անդրադարձ է կատարուած Չինաստանում, Մոնղոլիայում, Միջին Ասիայի եւ հարեւան տարածաշրջաններում հայերի յայտնուելու, նրանց կրօնական ու առեւտրատնտեսական գործունէութեան վերաբերեալ: Հայ պատմիչների ու ժամանակագիրների, օտար հեղինակների, ճանապարհորդների յիշատակութիւնների արդիւնքում հնարաւոր է դարձել պատկերել հայերի՝ դէպի Չինաստան ու Արեւելքի երկրներ (Ինդոնեզիա, Ֆիլիպիններ, Սինգապուր, Հնդկաստան, Թայուան եւն.) յայտնուելու, բնակուելու ու գործունէութիւն ծաւալելու գործընթացը, միջազգային եւ միջնորդ առեւտրում ունեցած վստահութիւնն ու յարգանքը:

Աշխատութեան հինգերորդ գլուխը վերնագրուած է «Հայ Եկեղեցին Չինաստանում», որտեղ հեղինակն ամենայն մանրամասնութեամբ ներկայացնում է ոչ միայն Չինաստանում (Հարբին), այլ նաեւ ռուսական Սիբիրում եւ Հեռաւոր Արեւելքում Ի. դարասկզբին ցաքուցրիւ ապրող հայութեան հոգեւոր պահանջմունքների հարցը, առաջին աղօթատների բացումը եւ պատարագների մատուցումը: Յատկանշական է, որ Աստրախանի թեմական առաջնորդարանի ջանքերով Սիբիրում եւ

Ծայրագոյն Արեւելքում նշանակուել է հոգեւոր հովիւ, որը յետագայում իր նստավայրը Վլադիվոստոկից տեղափոխել է Հարբին՝ դառնալով չինահայութեան հոգեւոր առաջնորդը: Հարբինի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին բացուել է 1923 Նոյեմբերին՝ դառնալով տարածաշրջանի հայութեան հոգեւոր-մշակութային կենտրոնը: Չինաստանի տարբեր քաղաքներ (Տէանծին, Շանհայ, Հայլար եւն.) հայ հոգեւորականութեան այցերի շնորհիւ տեղի հայութիւնը նոյնպէս մասնակից է դարձել հոգեւոր կեանքին, կատարուել են մկրտութեան եւ պսակադրութեան կարգեր: Այդուհանդերձ, տեղի հոգեւոր կեանքը մերթընդմերթ ընդհատուել է կամ տուժել հոգեւորական չունենալու, ներքին հակասութիւնների, քաղաքական անկայունութեան եւ այլ պատճառներով:

Աշխատութեան վեցերորդ գլուխը վերնագրուած է «Չինահայութիւնը 1920-1950 թթ.», որտեղ հեղինակն անդրադարձ է կատարում համայնքի պատմութեան առանցքային փուլերից մէկին: Համադրելով ժամանակակից հայ հեղինակների բազմաթիւ յուշագրութիւնները, հայ եւ ռուսալեզու մամուլում տպագրուած հարուստ ու հետաքրքրաշարժ նիւթերն ու թղթակցութիւնները, տարաբնոյթ ուսումնասիրութիւնները՝ Բախչինեանը ներկայացրել է դէպի Չինաստան հայութեան նոր խմբերի արտագաղթը (մասնաւորապէս՝ Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատման տարիներին), չինահայերի ընկերահասարակական իրականութիւնը, կազմը, վիճակագրական տուեալներ թուաքանակի ու տեղաբաշխման վերաբերեալ: Այս շրջանում հայերը հասել են զգալի յաջողութիւնների տնտեսական եւ հասարակական ասպարէզներում, հիմնել են տարատեսակ միութիւններ, 1926ին համայնքային վարչութեան հովանու ներքոյ բացել են առաջին հայկական դպրոցը, հրատարակել *Երկիր, Վեստնիկ Արմենիի* պարբերականները եւն.: ՀՅԴ անդամները Հարբինում ունեցել են մասնաճիւղ, հասարակական, գրական, թատերական ու մարզական հաստատութիւններ, սակայն խորհրդա-չինական յարաբերութիւնների ամրապնդումը յանգեցրել է այստեղ ապաստանած ՀՅԴ անդամների հետապնդումների եւ ձերբակալութիւնների: Չինահայերը պարբերաբար անցկացրել են ընդհանուր ժողովներ, նշել ազգային եւ պետական տօները, նշանաւոր գործիչների նուիրուած միջոցառումներ, կազմակերպել են թատերական ներկայացումներ:

1930ականների վերջին, Երկրորդ Աշխարհամարտի տարիներին ինչպէս Չինաստանի, այնպէս էլ ամբողջ Հարաւարեւելեան Ասիայի (Ինդոնեզիա, Սինգապուր եւն.) հայութիւնը զգալիօրէն տուժել է ճապոնական ռազմաքաղաքական յարձակման հետեւանքով, սպանուել եւ արգելափակուել են համակենտրոնացման ճամբարներում: Յատկանշական է, որ ճապոնական ռազմական ճամբարներից ազատուելուց յետոյ, մեծ զրկանքների հանդիպած հայութիւնն այժմ էլ սկսել է հե-

տապնդուել չինացի համայնավարների կողմից: Այսպէս սկիզբ է առել հայութեան զանգուածային հեռացումը Չինաստանից: Եղել են նաեւ Հայաստան հայրենադարձուած ընտանիքներ, իսկ մնացեալները յայտնուել են տնտեսական անբարենպաստ իրականութեան մէջ:

Եօթերորդ գլխում հեղինակն ամենայն մանրամասնութեամբ ներկայացրել է չինահայ գործիչներին, ովքեր տարատեսակ գործունէութիւն են ծաւալել ազգային, տնտեսական, մշակութային, հասարակական, դիւանագիտական կամ մասնագիտական ասպարէզներում: Հեղինակը տքնաջան պրպտել ու վեր է հանել իւրաքանչիւր գործչի կենսագրութեան տարբեր կողմերը, ինչը կարեւոր նշանակութիւն ունի նիւթի ամբողջականութեան համար:

Առանձին գլուխներով (Ը.-Թ.) հեղինակն անդրադարձել է հայ-չինական մշակութային, միջպետական ու գիտակրթական կապերին, որոնք տեղ են գտել ԺԹ.-ԻԱ. դարերում: Աշխատութեան այս բաժիններում հեղինակը ներկայացրել է հայ-չինական մշակութային առնչութիւնները, դրանց տարբեր բաղադրիչներով: Հայ-չինական մշակութային կապերը դրսեւորուել են երկու ժողովուրդների մշակոյթի վերաբերեալ տարբեր յօդուածներով, բանաստեղծութիւններով, թարգմանութիւններով, թատերական, երաժշտութեան եւ պարի, գեղարուեստի ու այլ ոլորտներում բեմադրութիւններով, ցուցահանդէսներով: Հեղինակն իրաւացիօրէն նշում է, որ չինարէնից թարգմանութիւնների հիմնական մասը կատարուել է միջնորդ լեզուների միջոցով, իսկ արդի կապերը կարող են շտկել այդ իրավիճակը: Այս ուղղութեամբ մեծ ձեռքբերում է հայ-չինական մշակութային համագործակցութեան պայմանագիրն ու ծրագրերը, որոնք կեանքի են կոչուել վերջին տարիներին:

Հայ-չինական միջպետական ու գիտակրթական կապերը աւելի սերտացան յետխորհրդային վերջին քառորդ դարում. պետական պատուիրակութիւնների յաճախակի փոխայցերը նպաստել են երկկողմ կապերի հաստատմանը՝ սկսած գիտակրթականից եւ աւարտած տնտեսական ու ռազմաքաղաքական առնչութիւններով: Միջպետական պայմանագրերը ընդգրկում են ամենատարբեր ոլորտներ, երկու երկրների բուհերում սովորում են հայ եւ չինացի ուսանողներ, ուսումնական հաստատութիւններին կից ստեղծուել են գիտական կենտրոններ (ինչպէս, Երեւանի Բրիւսովի անուան Լեզուաբանական Համալսարանում եւ Դալիանի Օտար Լեզուների Համալսարանում), հրատարակւում են տեղեկատուական ու վերլուծական ժողովածուներ:

Աշխատութեան վերջին՝ տասներորդ գլխում, որը վերնագրուած է «Հայերն Արդի Չինաստանում», հեղինակը անդրադարձ է կատարել չինահայութեանը վերաբերող հարցերին ժամանակակից փուլում՝

իրաւամբ ընդգծելով, որ հայերի թիւն սկսել է աճել 2000ականներին իհաշիւ ոչ միայն ՀՀից, այլ նաեւ աշխարհասփիւռ կենտրոններից տեղի ունեցող ներգաղթի, որոնք ընդգրկուած են հանրային կեանքի տարբեր ոլորտներում: Չինահայերը հիմնականում կենտրոնացած են Պեկին, Հոնկոնգ, Շանհայ, Գուանժոու քաղաքներում: Չինաբնակ հայերից ոմանք ներգրաւուել են չինական կեանքում (օրինակ, չինական մի շարք հեռուստատեսային շարժանկարների մասնակցած դերասանուհի Լիանա Եդիգարեանը, պարուսոյց եւ պարադիր Վանուշ Բաբայեանը եւ այլք):

Վերջին տարիներին չինահայերի կեանքում նկատելի դեր են ստանձնել Շանհայի Հայկական Ակումբը, Հոնկոնգի Հայկական Կենտրոնը, Հայկական Ուսանողական Միութիւնը, Չինահայ կայքէջը, հրատարակուող երկլեզու տեղեկագիրը եւ այլ կառոյցներ:

«Յաւելուած» եւ «Պատկերազարդումներ» բաժիններում հեղինակը զետեղել է հետաքրքիր նիւթեր, փաստաթղթեր ու նկարներ, որոնք անհարժեշտաբար հարստացրել են ներկայացուող ուսումնասիրութիւնը: Յաւելուածի տուեալները ներկայացնում են նաեւ Չինաստանի հարեւան երկրների՝ Մոնղոլիայի, Վիետնամի եւ Կորէայի հետ հայերի ունեցած պատմամշակութային առնչութիւնները: Հեղինակն աշխատութեան վերջում զետեղել է ամփոփում չինարէնով, որը կարող է շատ օգտակար լինել չինացի ընթերցողի համար:

Աշխատանքը շարադրելիս հեղինակն օգտուել է թեմային վերաբերող հարուստ աղբիւրագիտական ֆոնդից, գրականութիւնից, գիտական հանդէսներից, մամուլից եւ համացանցային նիւթերից, երբեմն մինչեւ անգամ յղել նաեւ գեղարուեստական գործեր (հայ եւ օտար հեղինակների): Մասնաւորապէս գրականութիւնն աչքի է ընկնում իր բազմազանութեամբ, ցանկում ներառուած են բազմաթիւ օտարալեզու ուսումնասիրութիւններ, ինչն իր հերթին անվիճելիօրէն բարձրացնում է ներկայացուող աշխատութեան գիտական արժէքը:

Աշխատութիւնն արդիական է ու հետաքրքիր ոչ միայն հայերիս համար, այլեւ չինացիների համար, քանի որ ընդհանրապէս ներկայացնում է հայ-չինական յարաբերութիւնների ամբողջական պատկերը: Ուստիեւ գտնում ենք, որ այն զգալի ներդրում է հայ-չինական յարաբերութիւնների պատմութեան ներկայացման, հայ համայնքի պատմութեան վերհանման, ինչպէս նաեւ յետագայ ուսումնասիրութիւնների համար, եւ խիստ անհրաժեշտ է նրա թարգմանութիւնը չինարէն եւ անգլերէն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
alhovhannes@gmail.com

Human Mobility and Multiethnic Coexistence in Middle Eastern Urban Societies 1 [and 2]: Tehran, Aleppo, Istanbul, and Beirut, edited by Hidemitsu Kuroki, Studia Coluturae Islamicae # 102 & 107, MEIS Series # 19 & 23, Tokyo University of Foreign Studies, Tokyo, Tenri Jihosha Co., 2015 & 2018, 192 & 272 pages.

Չին եւ ճափոնական հետաքրքրութիւնը՝ Միջին Արեւելքի նկատմամբ սկսաւ ուշագրաւ զարգացումներ ապրիլ մանաւանդ անցնող երկու տասնամեակներուն: Այս հետաքրքրութիւնը թերեւս ունի տնտեսաքաղաքական ենթահող: Այդուհանդերձ ան չի դրսեւորուիր միայն այդ բնագաւառով: Արդարեւ, այս զոյգ պետութիւնները յատկանշական 'թափանցումներ' կը կատարեն նաեւ շրջանի ժողովուրդներու անցեալի եւ ներկայի ընկերամշակութային, կրթահոգեբանական եւ մարդաբանական գիտութիւններու ուսումնասիրութեան այլեւայլ բնագաւառներ:

Այս ենթահողին վրայ պէտք է դիտարկել *Human Mobility and Multiethnic Coexistence in Middle Eastern Urban Societies* երկհատորեակը, որ լուսարձակի տակ կ'առնէ Թեհրանը, Հալէպը, Իսթանպուլը եւ Պէյրութը:

Առաջին հատորը բերքն է 2010-13 եռամեայ ուսումնասիրական ծրագրին, զոր կը հովանաւորէր Արտասահմանեան Ուսումնասիրութիւններու Թոքիոյի Համալսարանը: Երկրորդ հատորը արդիւնքն է նոյն ծրագրի երկրորդ՝ 2013-16 հանգրուանին, որ կայացած է Ճափոնի Միջին Արեւելեան Ուսումնասիրութիւններու Կեդրոնին մէջ, Պէյրութ:

Միջին Արեւելքը ԺԹ. դարավերջէն իվեր, աւելի քան հարիւրամեակ մը ահա, կը զատորոշուի (եւ կ'ենթարկուի) – ի թիւս այլեւայլ երեւոյթներու – նաեւ ժողովրդագրական շեշտակի մակընթացութիւններով: Այլ խօսքով, 1880ականներէն սկսեալ, շրջանի մեծ քաղաքներուն բնակչութեան բոլոր էթնիք, կրօնական, համայնքային, մշակութային թէ այլապէս առանձնացող հաւաքականութիւնները (որոնք կ'ապրէին եւ գոյացուցած էին դարերու ընթացքին ձեւաւորուած կենցաղա-մշակութա-կրօնա-քաղաքական փոխյարաբերութեան կայուն իրավիճակ մը) արձանագրեցին թուային ոչ-նոյնօրինակ աճեր, ենթարկուեցան զանազան տեսակի գործօններու, որոնց բերմամբ անոնց ներկայութիւնն ու դերը իրենց բնակած տարածութիւններուն մէջ կրեցին վճռական փոփոխութիւններ: Միւս կողմէն, նոյն այս հաւաքականութիւնները կը յատկանշուին շեշտակի աւանդապահութեամբ: Այս երկու գործօններուն խաչաձեւումներէն յառաջացող գիտական հարցադրումն է որ այս երկհատորեակը կը ջանայ բարձրացնել:

Յիրաւի, երկհատորեակը գիտական հարցադրումի, սերտողութեան եւ ուսումնասիրութեան նիւթ դարձուցած է թէ ի՛նչպէս աւանդապահ այս տարբեր հաւաքականութիւնները, որոնք թուային - հետեւաբար նաեւ աշխարհագրական, մշակութային եւ քաղաքատնտեսական - տարածքներ

տարածուելով կամ ամփոփուելով ուժական շփումի մէջ մտան այլ հաւաքականութիւններու հետ, ի՛նչպէս շարունակեցին իրենց գոյակեցութիւնը (դրացի) 'այլոց' հետ, եւ թէ ի՛նչպէս շարունակեցին կիրառել իրենց աւանդապահութիւնը, իրենց սովորոյթներն ու աւանդութիւնները, իրենց իւրօրինակ կենցաղը, մշակութային դրսեւորումները: Ասոնց 'կեանքը' ի՛նչ ընթացք, փոփոխութիւններ ստացաւ, ի՛նչպէս, ի՛նչու...: Այս փոփոխութիւնները ի՛նչպէս արտացոլացին քաղաքային կեանքի զանազան երեւոյթներու (ճարտարապետութիւն, արհեստներ, մշակոյթ, քաղաքային դիմագիծ եւն.) վրայ, ո՛ր նոր գործօնները ընկերամշակութային ու կենցաղաքաղաքական մտադրոյթի ինչ նոր հոսանքներու յառաջացման մղում տուին...: Նախկին 'հաւասարակշռութիւնը' որ տասնամեակներէ իվեր կը կազմաքանդուի ու կը վերածեւուի ի՛նչ նոր իրականութիւններ կը բացայայտէ: Դրացի այս հաւաքականութիւններու արդի գոյակեցութիւնը ի՛նչ կը պարզէ: Իւրաքանչիւր հաւաքականութիւն ի՛նչպէս կը դիմագրաւէ այս նոր երեւոյթները, ի՛նչպէս եւ ի՛նչ ուղղութեամբ կը հակադրուի-կը պատշաճի այս նոր զարգացումներուն...: Նոյնինքն՝ քաղաքը որ բնակչութեան մեծաթիւ, աննախընթաց յաւելումներ ունեցաւ եւ 'գրաւեց' նոր տարածքներ, ի՛նչպէս արձագանգեց այս փոփոխութիւններուն, ի՛նչ դրսեւորումներ արձանագրեցին քաղաքային մատակարարման համակարգերը՝ ջուր-ելեկտրականութիւն-ճամփաներ-կոյուղի, շինարարութիւն, հանրային զբօսավայրեր, կրթա-դաստիարակչական-ընկերային-պետական հիմնարկներ...:

Երկհատորեակին մէջ տեղ գտած ուսումնասիրութիւնները նոյն ելակէտային հարցադրումներուն կը մօտենան տարբեր գիտաուսումնական եւ ժամանակագրական առումներով, հետաքրքրութիւններու նախասիրութիւններով:

Յօդուած-ուսումնասիրութիւնները լուսարձակի տակ կ'առնեն.-

- Քաճարական շրջանի Թեհրանի գաղթն ու գոյակեցութիւնը, նոյն շրջանի ոչ-իսլամներու շարիաթական դատավարութիւնները, ինչպէս նաեւ գաղթի ու հասարակութեան տնտեսական դիրքի շարժունակութիւնն ու քաղաքական բաժանումները:
- Գահիրէի արուարձաններուն ընկերամշակութային դերը, ինչպէս նաեւ արդի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ընկերային ձեւափոխումները՝ արտագաղթի գործօնի բերմամբ:
- Օսմանեան Հալէպի բազմակրօն գոյակեցութիւնը ըստ ԺՋ. դարու դատաիրաւական չորս տոմարներու, նաեւ՝ քրիստոնեայ հաւաքականութիւններուն եւ կրօնական կալուածներու անդրսահմանային դերն ու 1840ականներու դրսեցիներու դերն ու տեղը, ԺԹ. դարակէսի Հալէպի բնակչութեան մարդահամարն ու հետեւութիւնները, ԺԹ. դարավերջի Հալէպի քաղաքաշինութիւնն ու ատոր հետեւանքային զարգացումները, ինչպէս նաեւ գաղութատիրական մտադրոյթի հաստատումը Հալէպի մէջ՝ քաղաքաշինութեան գործօնի բերմամբ:

- Իսթանպուլի 1730-54 շրջանի խառնաշփոթին յաջորդող խաղաղութեան շրջանը եւ հանրային ու համայնքային աշխարհագրական տարածքներու վերաձեւումը. քաղաքին ԺԸ.-ԺԹ. դարերու յոյն-օրթոտոքսներու ժողովրդագրական արձանագրութիւնները, ԺԹ. դարու Պէյօղլուի հայութիւնը. իսթանպուլահայութեան 1860-70ականներու քաղաքական մասնակցութեան փորձը, ինչպէս նաեւ գաղութահայ կազմաւորումներուն յառաջացման եւ խորհրդային Հայաստանի հանդէպ կեցուածքները:
- Միջինարեւելեան քաղաքականութիւնն ու Պէյրութի միջհամայնքային յարաբերութիւնները, նաեւ՝ քաղաքացիական պատերազմը եւ Պէյրութի մասին յիշողութիւնը եւ յուշագրութիւնը, նաեւ՝ քաղաքացիական պատերազմի պատմագրութիւնն ու գոյակեցութեան հեռանկարները, նաեւ՝ ո՞վ է պէյրութցին. ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբի Պէյրութի մարոնիթները, նաեւ՝ Պէյրութի քրիստոնեաներու '1903ի ջարդի' վերատեսութիւնը, նաեւ՝ խոհանոցին աւանդներուն անցումը գիւղէն քաղաք:

Հատորներուն շեշտակիօրէն ճափոնական միակ ուսումնսիրութիւնը նուիրուած է քաղաքաշինութեան ճափոնցի մասնագէտ Կիոճի Պանշոյայի (1930-1998) Միջին Արեւելքի քաղաքաշինութեան աւանդին:

24 աշխատութիւններու այս համադրումը խճանկարային արտացոլումն է միջինարեւելեան ժողովուրդներու եւ հաւաքականութիւններու գոյակեցութեան: Որոշ է որ ո՛չ նիւթերը եւ ո՛չ ալ անոնց բովանդակութիւնը կը յաւակնին միջինարեւելեան համապարփակութեան: Այդուհանդերձ, հատորները յաջող իրագործումներ են հասարակագիտական քարտիզագրումը կատարելու միջինարեւելեան ժողովուրդներու համակեցութեան, ընկալումին եւ մտադրոյթին:

Մեծապէս գնահատելի եւ ողջունելի այլ երեւոյթ մըն է հայ տարրին ուսումնասիրական ներգրաւումը այս համապատկերին մէջ: Արդարեւ, փոքրամասնութիւն կը կազմեն միջինարեւելեան համապարփակութիւն ունեցող այն ուսումնասիրական ձեռնարկները, ուր տեղ գտած են նաեւ Միջին Արեւելքի հազարամեակներու պատմութեան բաղադրիչ, 'միջինարեւելքցի' հայութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ:

Այս առումով, հայագիտութիւնը պարտի երկու ուղղութեամբ աւելի արդիւնաւէտ գործել:

Ա) Նեղ-հայագիտական ուսումնասիրութիւններու պարագային ընդգրկել շրջանային ենթահող:

Բ) Միջին Արեւելքի այլեւայլ երեւոյթներու վերաբերող ուսումնասիրութիւններու գիտական խճանկար ընդգրկել հայկական 'խիճ'ը եւս:

Անդրանիկ Տագէսեան
adakessian@haigazian.edu.lb

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քնարիկ Աբրահամեան **spyurkka@gmail.com**
Ծնած է 1984ին, Գիւմրի: 2006ին աւարտած է Երեւանի Խ. Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի Բանասիրական Բաժանմունքը: 2013ին թեկնածուական պաշտպանած է «Զարեհ Խրախունին եւ Արեւելահայ Բանաստեղծութիւնը» նիւթով:
2008էն Մանկավարժական Համալսարանի «Սփիւռք» Գիտաուսումնական Կեդրոնի մեթոդիստ է, 2014էն՝ Մանկավարժական Համալսարանի Հայ Նոր եւ Նորագոյն Գրականութեան եւ Դասաւանդման Մեթոդիկայի Ամբիոնի օգնական, 2018էն՝ դոցենտ (համատեղութեամբ): 2019էն անդամ է «Հայկ Նագգաշեան Գրական Գնահատանք» Հիմնադրամի Յանձնախմբին: Հեղինակ է *Զարեհ Խրախունին եւ Արեւելահայ Բանաստեղծութիւնը* հատորին (2013), նաեւ՝ շուրջ երեք տասնեակ յօդուած-ուսումնասիրութիւններու, կազմած եւ խմբագրած է Սփիւռքի գրականութեան վերաբերող տասնեակ գրքեր:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն արեւմտահայ դասական եւ սփիւռքահայ գրականութեան պատմութիւնը, տեսաբանական հարցադրումներ: 2012էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Կարինէ Ալեքսանեան **karine.aleksanyan@yahoo.com**
Ծնած է 1963ին, Գիւմրի: 1989ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան Բաժինը: 2005ին պաշտպանած է թեկնածուական՝ «Ալեքսանդրապոլի Գաւառը 1918 Դեկտեմբերից 1921թ. Ապրիլը» նիւթով, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկին մէջ:
Ներկայիս կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ Շիրակի Հայագիտական Հետազօտութիւնների Կենտրոնէն ներս եւ պատմութիւն ու հասարակագիտութիւն կը դասաւանդէ Գիւմրիի Ակադեմիական Վարժարանին մէջ: 2012ին հրատարակուած է իր *Արեմտահայ Գաղթականութիւնը Ալեքսանդրապոլի Գաւառում 1914-1922թթ. Փաստաթղթերի Ժողովածուն* ուսումնասիրութիւնը:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Ալեքսանդրապոլի գաւառը ԺԹ. դարավերջ – Ի. դարասկիզբ շրջանը: 2012էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Քարլոս Անթառամեան **cantaramian@gmail.com**
Ծնած է 1972ին, Մեքսիքօ: 2006ին պաշտպանած է դոկտորական՝ ընկերային մարդաբանութեան մէջ:

2014էն դասախօս է Մեքսիքոյի Centro de Investigaciones y Estudios Superiores en Antropología Social (CIESAS) մէջ: 2016էն մշակութային կցորդն է Մեքսիքոյի մէջ ՀՀ դեսպանութեան: Մամուլի տակ է իր *The Spirit of Martyrdom in April 24th Commemorations* հատորը:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Մեքսիքոյի հայութիւնը, Հայոց Ցեղասպանութիւնը եւ անոր հետքերը յետնորդ սերունդներուն վրայ, գաղթը եւ անդրսահմանային հաւաքականութիւնները, հայկական սփիւռքը: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Մելինէ Անումեան **melanumyan@gmail.com**
Ծնած է 1977ին, Երեւան: 1994–1999 ուսանած է ԵՊՀ Արեւելագիտութեան Հիմնարկի Թուրքագիտութեան Բաժինը: 2012ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայոց Ցեղասպանութեան Խնդիրը Երիտթուրքերի Դատավարութիւններում (1919-1921 թթ.)» նիւթով:
2009էն աւագ գիտաշխատող է եւ ղեկավար՝ Արեւմտահայոց Հարցերի Ուսումնասիրութեան Կենտրոն գիտահետազօտական հիմնադրամի թրքերէն բաժնին: Անդամ է *Ցեղասպանագիտական Հանդէս*ի խմբագրակազմին: Ունի թրքերէնէ եւ թրքերէնի թարգմանութիւններ, 2013ին լոյս տեսած է իր *Ճանաչում Եւ Դատապարտում. Երիտթուրքերի Դատավարութիւնները 1919-1921թթ. եւ 1926 թ.* (անգլ.՝ Անթիլիաս, 2017, թրք.՝ Իսթանպուլ, 2018) երկը:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայոց Ցեղասպանութիւնը, երիտթուրքերու դատավարութիւնները, Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կուսակցութեան պատմութիւնը, Թուրքիոյ հայ բոշաները, իսլամացուած հայերը:

Արտակ Ասատրեան **sardarapatasatryan@gmail.com**
Ծնած է 1978ին, Արմաւիրի մարզի Արաքս գիւղը: 2006ին աւարտած է Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀը:
Հրատարակած իր վերջին յօդուածն է՝ «Սինիները Հայոց Աւանդական Կենցաղում (Գործառոյթը, Գեղազարդումը, Խորհրդիմաստը)»:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ԺԹ. դարավերջ–Ի. դարասկիզբի պղնձագործութիւնը (պղնձագործական արհեստ եւ արտադրանք) եւ արծաթագործութիւնը (արծաթագործական արհեստ եւ արտադրանք): 2016էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Տ. Ներսէս Քհնյ. Ասրեան **monk-deacon@mail.ru**
Ծնած է 1980ին, Շուշի: 2006ին աւարտած է Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանը:
2009-2016 եղած է Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան Բանակի N զօրամասի գնդերէց: 2009էն տնօրէնն է Հայ Առաքելական

Եկեղեցիի Արցախի Թեմի տեղեկատուական համակարգին: 2016էն հոգեւոր հովիւն է Ստեփանակերտի Աստուածամօր Ս. Յովհան մայր եկեղեցիին եւ ծիսակատար քահանան՝ Ասկերանի Ս. Աստուածածին եկեղեցիին: Ունի բազմաթիւ ուսումնասիրական յօդուածներ եւ հրապարակումներ:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Ի.–ԻԱ. դարերու Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը, արցախեան հիմնախնդիրը, աստուածաբանութիւն, Հայ Եկեղեցւոյ տօներ եւ ծէսեր, աղանդներ: 2016էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Եուրի Աւետիսեան **yuriavetisyan@ysu.am**
Ծնած է 1961ին, Արտաշատ: 1983ին աւարտած է ԵՊՀ Բանասիրական Բաժանմունքի Հայոց Լեզուի եւ Գրականութեան Բաժինը, 1987ին պաշտպանած է թեկնածուականը «*Անահիտ* Հանդէսը» նիւթով, 2002ին դոկտորականը՝ «Արեւմտահայ Բանաստեղծութեան Լեզուն» նիւթով:
1988–2002՝ եղած է ԵՊՀ Հայոց Լեզուի Ամբիոնի դասախօս, 2008էն՝ նոյն ամբիոնի փրոֆեսոր, 2009–13՝ ԵՊՀ Սփիւռքագիտութեան Ամբիոնի վարիչ, 2013էն՝ ԵՊՀ Հայոց Լեզուի Ամբիոնի վարիչ: 2011էն անդամ է *Բանբեր Երեւանի Համալսարանի*, իսկ 2013էն՝ *Հայագիտութեան Հարցեր* պարբերականներու խմբագրական խորհուրդներուն: 2009–14 եղած է ՀՀ Սփիւռքի Նախարարութեան ատեանի անդամ: Պարգեւատրուած է ԹՄՄ «Հայկաշէն Ուզունեան» ամէնամեայ մրցանակ-պատուոգիրով (2003), ԵՊՀ ոսկեայ մետալով (2014): Հեղինակ է շարք մը մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Արդի Հայերէնի Կէտադրութեան Հիմնախնդիրները* (2019):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն լեզուի կանոնակարգման հարցերը, հայոց լեզուն եւ խօսքի մշակոյթը, արեւմտահայերէնը, ձեւաբանութիւնը, արեւմտահայ բանաստեղծութեան լեզուն, արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի զուգադրական քերականութիւնը, լեզուի զարգացումը, պաշտօնական լեզուն եւն.: 2011էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Արծուի Բախչինեան **artsvi@yahoo.com**
Ծնած է 1971ին, Երեւան: Աւարտած է ԵՊՀ Բանասիրական Բաժանմունքը: 1996ին թեկնածուական պաշտպանած է ՀՀ ԳԱԱ Գրականութեան Հիմնարկին մէջ:
Որպէս գիտաշխատող կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի Հայ Գաղթավայրերի եւ Սփիւռքի Բաժնին մէջ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրական հատորներու, յօդուածներու, թարգմանութիւններու, որոնց վերջինը՝ *Հայ Կինօ – 100* հատորն է (2018):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն սփիւռքահայ համայնքներու պատմութիւնն ու պատմամշակութային առնչութիւնները, հայ

շարժանկարի, պարարուեստի պատմութիւնը, նոր շրջանի պատմաբանասիրական նիւթերը, երեւելի հայազգիներ, հայ լուսանկարչական արուեստը...: 1998էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին: 2001էն *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի ներկայացուցիչն է Երեւանի մէջ:

Հենրիկ Բախչինեան **helinemuradyan@rambler.ru**
Ծնած է 1948ին, Թիֆլիս: 1970ին աւարտած է ԵՊՀ Բանասիրական Բաժանմունքի Հայոց Լեզուի եւ Գրականութեան Բաժինը: 1989ին պաշտպանած է դոկտորականը:
1992–2006 գիտաշխատած է Մ. Աբեղեանի Անուան Գրականութեան Հիմնարկի Հայոց Հին եւ Միջնադարեան Գրականութեան Բաժինին մէջ: 1992–2011 եղած է Չարենցի Անուան Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանի տնօրէնը:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայ հին եւ միջնադարեան գրականութիւնը, աշուղական արուեստը: Հեղինակ է տասնեակ աշխատութիւններու, վերջինը՝ *Սայեաթ-Նովայի Բանաստեղծական Ժառանգութիւնը*» (2016): 1992էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Ռիթա-Մարիա Գազանճեան **RKAZANDJIAN@students.haigazian.edu.lb**
Ծնած է 1999ին, Պէյրութ: 2017ին աւարտած է Պէյրութի ՀԲԸՄ Դարուհի Յովակիմեան Երկրորդական Վարժարանը: Նոյն թուականին ընդունուած է Հայկազեան Համալսարան, ուր կը հետեւի մանկավարժութեան:
Գիտաուսումնական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայոց պատմութիւնը:

Խորէն Գրիգորեան **khorenbask86@gmail.com**
Ծնած է 1986ին, Սիսիան: 2012ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան ու Ազգագրութեան Բաժնի մագիստրականը: 2013էն թեկնածուականի հայցորդ է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկին մէջ:
Կրտսեր գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Հայ Ազգագրութեան Հիմնարկին մէջ, նաեւ՝ ՀՀ Մշակոյթի Նախարարութեան Պատմամշակութային Արգելոց-Թանգարաններու եւ Պատմական Միջավայրի Պահպանութեան Ծառայութիւն Հիմնարկին մէջ:
Հեղինակ է շարք մը ուսումնասիրական յօդուածներու: Ուսումնագիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սփիւռքի տարբեր համայնքներու ինքնութեան, յիշողութեան, ազգային կեանքի կազմակերպման խնդիրները: 2013էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Մարիամ Գրիգորեան **manangrigoryan86@mail.ru**
Ծնած է 1986ին, Երեւան: Աւարտած է Երեւանի Խ. Աբովեանի Անուան Պետական Մանկավարժական Համալսարանի Պատմութեան եւ Իրաւագիտութեան Բաժանմունքը: 2013ին պաշտպանած է թեկնածուական՝ «Բագրատունիները Եւ Հայոց Թագաւորութեան Վերականգնումը» նիւթով: Հիմնական գիտական հետազօտութիւնները նուիրուած են Բագրատունեաց Հայաստանի քաղաքական, տնտեսական, հոգեւոր-մշակութային հիմնահարցերու ուսումնասիրութեան, Բագրատունեաց Հայաստանի թագուհիներու եւ իշխանուհիներու նուիրատուական գործունէութեան: Ուսումնասիրութիւններ հրատարակած է գիտական ժողովածուներու մէջ:

Սուրէն Դանիէլեան **spyurksd1948@gmail.com**
Ծնած է 1948ին, Երեւան: 1970ին աւարտած է Խ. Աբովեանի անուան ՀՊՄ Համալսարանի Բանասիրականը: 1982ին պաշտպանած է թեկնածուականը, 1993ին՝ դոկտորականը՝ «Սփիւռքահայ Վէպը» նիւթով:
1974էն ՀՊՄՀի դասախօս է: 1993–2001 դասախօսած է Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանէն ներս: 1995էն ՀՊՄՀի «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի տնօրէնն է. 2000–8 եւ 2017–9 ղեկավարած է ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան պատուէրով կազմակերպուած սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստման դասընթացքները: 2013էն վարիչն է ՀՊՄՀ Վաչէ Պարտիզունիի Անուան Հայ Նոր եւ Նորագոյն Գրականութեան եւ Անոր Դասաւանդման Մեթոտիկայի Ամբիոնին: Հայաստանի Գրողներու Միութեան անդամ է 1993էն, խմբագրակազմերու անդամ՝ *Վէմ Համահայկական Հանդէս*ի, *Հայագիտական Հանդէս*ի, *Գարուն*ի: Պարգեւատրուած է ՀՀ ԱԺ նախագահի պատուոգիրով (2015): Հեղինակ է բազմաթիւ մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Սփիւռքահայ Գրականութեան Նուաճումները եւ Զարգացման Միտումները (1920-1960ական թթ.)* (2015): Գիտահետազօտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն արեւմտահայ դասական եւ սփիւռքահայ գրականութեան պատմութիւնը, տեսաբանական հարցադրումները, արեւմտահայ գրամշակութային խնդիրները, արեւմտահայ կրթական ոլորտը: 2012էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Գալիա Դաւիդովա **galya.davidova.60@gmail.com**
Ծնած է 1960ին, Արմաւիր: 1986ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան Բաժանմունքը:
1986էն կը պաշտօնավարէ Հայոց Ազգագրութեան Թանգարանի «Ազգագրութեան» բաժինէն ներս (ներկայիս աւագ գիտաշխատողի հանգամանքով):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ասորիներու ԺԹ. դարավերջ–Ի. դարասկիզբ պատմութիւնը եւ ընկերատնտեսական պայմանները, հայոց եւ ասորական հարսանեկան ծիսակարգերն ու տօները, Հայաստանի ասորիներու տօները: 2016ին հրատարակած է «Ասորական եւ Հայկական Հարսանեկան Ծիսակարգերի Համեմատական Բնութագիրը (ԺԹ. դարավերջ – Ի. դարասկիզբ)» յօդուածը:

Արմենակ Եղիայեան **armenag@gmail.com**
Ծնած է 1939ին, Պուրճ Համուտ, Լիբանան: 1964ին աւարտած է Սէն Ժոզէֆ Համալսարանի Ֆրանսական Գրականութեան եւ Լեզուի (Ecole des Lettres), իսկ 1970ին՝ Ատամնաբուժութեան Բաժանմունքները:
Խմբագրած եւ թարգմանած է բազմաթիւ հատորներ, կատարած է արեւելահայերէնէ արեւմտահայերէնի փոխադրումներ: Հեղինակ է *Մեսրոպեան Տառերու Ակունքները* (2005) մենագրութեան եւ նախակրթարանի *Ծիածան* դասագիրքերու (5 հատոր ընթերցարան, 5 հատոր քերականութիւն, 10 հատոր ուղեցոյց) (1991-95): Անտիպ է իր «Արեւմտահայերէնի Ուղղագրական, Ուղղախօսական, Ոճաբանական Ուղեցոյց» աշխատութիւնը:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայոց լեզուի կառոյցն ու շարահիւսութիւնը: 2014էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Յասմիկ Եսայեան **hasmiktk@yahoo.com**
Ծնած է 1988ին, Երեւան: 2009ին աւարտած է ԵՊՀ Հայ Բանասիրութեան Բաժանմունքը: 2011ին պաշտպանած է մագիստրոսականը՝ «Քալիֆորնիայի Հայ Համայնքների Պատմութիւնը (Սկզբնաւորումից Մինչեւ 1920ական թթ.)» նիւթով:
2014էն կ'աշխատի *Երեւանի Համալսարանի Բանբեր* հանդէսի խմբագրութեան մէջ, 2011–14՝ պաշտօնավարած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան մէջ: Վերջին ուսումնասիրութիւնը՝ «Հայերի Իրաւական Կարգավիճակը Ֆրեզնոյի Շրջանում (1880 – 1920ական թթ.)» լոյս տեսած է 2016ին: Ներկայիս կ'աշխատի իր թեկնածուականին վրայ: 2014էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Եղիա Թաշճեան **yeghia.tash@gmail.com**
Ծնած է 1990ին, Պէյրութ: Պսակաւոր քաղաքագիտութեան տիտղոսով վկայուած է Հայկազեան Համալսարանէն, 2013ին: Ներկայիս կ'ամբողջացնէ մագիստրականը՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Հանրային Քաղաքականութիւն եւ Միջազգային Յարաբերութիւններ բաժանմունքին մէջ:

Աշխուժ գործունէութիւն կը ծաւալէ *պլոկ*ներու եւ ընկերային համացանցերու մէջ: Քաղաքական շրջանային հարցերու մասին յօդուածներ ունի տեղական եւ շրջանային մամուլին մէջ: 2010ին հիմնած է the New Eastern Politics առցանց կայքը: Մասնակցած է Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի կազմակերպած «Լիբանանի Հայերը Բ.» (2014) եւ «Յորդանանի Հայերը» (2016) գիտաժողովներուն: Եղած է օգնական հետազօտող Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին մէջ եւ շրջանային համադրողը Փարիզի Women in War Միտքի Կեդրոնին: 2015էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Հերվէ Ժորժըլէն **hgeorgelin@gmail.com**
Դոկտորականը պաշտպանած է Փարիզ, 2002ին, «Զմիւռնիոյ Ոսկեշրջանին Աւարտը. 1870–Սեպտեմբեր 1922» նիւթով: Մասնագէտ է Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանի պատմութեան եւ յատկապէս՝ այդ շրջանի հայոց եւ յոյներու պատմութեան:
Դասաւանդած է Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանի Յունաստանի, Պալքաններու եւ Հայաստանի պատմութեան, լեզուին, մշակոյթին եւ ընկերութեան մասին: 2004-05 եւ 2006-07 դասաւանդած է Մոնփելիէի, իսկ 2005-06՝ Պեռնի համալսարաններուն մէջ: 2016էն իվեր դասախօս է Աթէնքի Համալսարանի Ժամանակակից Թուրքիոյ եւ Ասիոյ Ուսմանց Ամբիոնին մէջ: Հեղինակն է *La Fin de Smyrne: Du Cosmopolitisme aux Nationalismes* (Փարիզ, 2005) գիրքին: Պեռնար Լեւիի հետ համահեղինակն է *Les Temps Entrelacés de Deux Villes Pluricommunautaires: Smyrne et Monastir* ուսումնասիրութեան: Զաւէն Պիպեռեանէն եւ Արամ Անտոնեանէն ֆրանսերէն թարգմանած է երկուքական հատորներ, որոնք հրատարակուած են 2007–15 շրջանին:

Զաւէն Կնեազեան **zavenkniasian@yahoo.com.ar**
Ծնած է 1959ին, Պուենոս Այրէս: Խրիմեան Կրթական Հիմնարկութեան շրջանաւարտ է: Հետեւած է Պուենոս Այրէսի Պետական Համալսարանի ճարտարագիտութեան դասընթացքներուն:
1992էն հայ մշակոյթ կը դասաւանդէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութեան մէջ: Անդամ է Արժանթինի Երաժշտագիտութեան Ընկերակցութեան: Հրատարակած է բազմաթիւ գիտական ու հանրամատչելի յօդուածներ հայերէն ու սպաներէն: Վերջին հրատարակութիւնն է *La Historia Armenia a Través de un Traje* (Հայոց պատմութիւնը տարազի մը ընդմէջէն, 2018):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայկական նուագարանները, դրօշակներն ու զինանշանները, պարագիտութիւնն ու

ազգագրութիւնը, պատմաբանասիրական խնդիրները: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Արմէն Հայրապետեան **armenani@mail.ru**

Ծնած է 1978ին, Լենինական (այժմ՝ Գիւմրի): 2003ին պաշտպանած է թեկնածուական «Արեւելեան Շիրակը ԺԹ. Դարի Առաջին Կէսին (Պատմաժողովրդագրական Ուսումնասիրութիւն)» նիւթով:

ՀՀ ԳԱԱ Շիրակի Հայագիտական Հետազօտութիւններու Կեդրոնի, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի «Նոր Պատմութեան» Բաժինի աւագ գիտաշխատող է, կը դասաւանդէ Գիւմրիի Մանկավարժական Հիմնարկէն ներս:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Արեւելեան Շիրակի ԺԹ. դարու պատմաժողովրդագրութիւնը, հայոց պատմութեան համալսարանական դասաւանդութիւնը, Ալեքսանդրապոլի գաւառը ԺԹ.–Ի. դարերուն, պարսկահայերու վերաբնակեցումը Արեւելեան Հայաստան: Հրատարակած վերջին հատորն է՝ *Ալեքսանդրապոլի Գաւառը Վիճակագրական Նիւթերում /XIXդ.-XXդ. սկիզբ/, Փաստաթղթերի եւ Նիւթերի Ժողովածու* (2011): 2015էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Գաղթուհի Հանանեան **gpanajya@yahoo.com**

Ծնած է 1939ին, Լաթաքիա: 1961ին աւարտած է ԵՊՀ Բանասիրական Բաժանմունքը: 1991ին պաշտպանած է թեկնածուական, նիւթ ունենալով «Սուեդիայի Բարբառը (Խտրպէկի խօսուածք)»:

1963էն կ'աշխատի ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտէտի մէջ, նախ՝ Ընդհանուր եւ Համեմատական Լեզուաբանութեան, ապա՝ Հայոց Լեզուի Պատմութեան ամբիոնը: 1974–2017՝ ժամանակակից հայոց լեզու դասաւանդած է ԵՊՀ տարբեր բաժիններու մէջ: Հեղինակ է հայերէնագիտութեան տարբեր հիմնախնդիրներուն նուիրուած ուսումնասիրութիւններու: 1995ին հրատարակած է *Սուեդիայի Բարբառը (Խտրպէկի Խօսուածք)* հատորը: Կազմած է «Բարբառագիտութեան հիմունքներ», «Հայ բարբառների համեմատական քերականութիւն», «Կիլիկեան բարբառներ» ուսումնական դասընթացներու ծրագրերը:

1993էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Սվանթէ Լիւնտկրէն **svante.lundgren@ctr.lu.se**

Ծնած է 1960ին, Ֆինլանտա: Աստուածաբանութեան դոկտոր վկայուած է Ֆինլանտայի Åbo Akademi համալսարանէն:

Ներկայիս հետազօտող է Շուէտի Լունտի Համալսարանի Աստուածաբանութեան եւ Կրօնագիտութեան Կեդրոնին մէջ: Հետազօտութիւններ կատարած է հրեայ մտածողութեան, հրէութիւն-քրիստոնէութիւն փոխյարաբերութեանց, Հայոց Ցեղասպանութեան եւ

Միջին Արեւելքի քրիստոնեայ համայնքներուն մասին: Իր վերջին հրատարակութիւնը՝ *The Assyrians - Fifty Years in Sweden*, լոյս տեսած է 2019ին: Լիւնտկրէն ասացողն էր *Map of Salvation* (2015)՝ հայկական վաւերագրական ֆիլմին:

Գէորգ Ղազարեան **dngevorg@gmail.com**

Ծնած է 1981ին, Երեւան: 2001-7 ուսանած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանին, իսկ 2011-8՝ Աթէնքի Ազգային Համալսարանի Աստուածաբանութեան Բաժանմունքին մէջ, ուրկէ ստացած է մագիստրականը՝ «Փոտ Պատրիարքը եւ Հայոց Եկեղեցին. Մեծ Հայքի Կաթողիկոս Զաքարիային Ուղղուած Թղթի Նշանակութիւնը» նիւթով: Ներկայիս կը պատրաստէ իր դոկտորականը՝ նոյն համալսարանի Աստուածաբանութեան Բաժանմունքին մէջ:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն աստուածաբանութիւն, եկեղեցւոյ պատմութիւն, հայ-բիւզանդական յարաբերութիւններ, ուղղափառ հայոց պատմութիւն: 2019ին յունարէն լոյս տեսած է իր մագիստրոսական թեզը:

Եղիկ Ճէրէճեան **jerejianyeghia@hotmail.com**

Ծնած է 1957ին, Պէյրութ: 1984ին աւարտած է Մխիթար Հերացիի անուան Երեւանի Բժշկական Հիմնարկի Ատամնաբուժական բաժինը:

Աշխուժ մասնակցութիւն ունեցած է Լիբանանի ազգային-հասարակական կեանքին, մաս կազմելով համագաղութային բնոյթի շարք մը մարմիններու: Մաս կազմած է *Արարատ* օրաթերթի խմբագրութեան եւ խմբագրած *Արարատ Երիտասարդական* պարբերաթերթը: 1992–2009 Պէյրութէն ընտրուած է Լիբանանի խորհրդարանի անդամ: 1995–2017 մաս կազմած ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն օսմանեան բռնատիրութեան դէմ հայ ազգային-ազատագրական պայքարը, Հայկական Ցեղասպանութիւնը, Հայ Դատն ու հայ ժողովուրդի դիմագրաւած ժամանակակից հարցերը: Հեղինակ է շարք մը հատորներու, որոնց վերջինը՝ *Պանդուխտ* (2018): «Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմութեան ուսումնասիրութեան բնագաւառում ձեռք բերած ակնառու յաջողութիւնների համար», 2019ին, ՀՀ ԳԱ Ակադեմիային կողմէ ստացած է պատմական գիտութիւններու պատուաւոր դոկտորի կոչում: 2007էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Արման Մալոյեան **armanmaloyan@mail.ru**

Ծնած է 1976ին, Երեւան: 1996ին աւարտած է Երեւանի Խ. Աբովեանի Անուան ՀՊՄ Համալսարանի Պատմութեան եւ Աշխարհագրութեան Բաժանմունքի Պատմութիւն եւ Մանկավարժութիւն բաժինը: 2011ին

պաշտպանած է թեկնածուական՝ «Արեւմտեան Հայաստանի Սոցիալ-Տնտեսական Դրութիւնը XVIII դարի Երկրորդ Կէսին» նիւթով:
2007էն կը պաշտօնավարէ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան Կրթութեան Ազգային Հիմնարկին մէջ, իբրեւ հայագիտական եւ ընկերամշակութային դասանիւթերու բաժնի գլխաւոր մասնագէտ. պատասխանատու քարտուղարն է *Հայագիտութիւնը Դպրոցում* ամսագրին (2014):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայաստանի ԺԸ.–ԺԹ. դարերու պատմութեան աղբիւրագիտութիւնը, պատմագրութիւնը, պատմութեան դասաւանդման խնդիրները, հայ մշակոյթի եւ դպրոցի պատմութիւն, հայ գաղթավայրերու պատմութիւն, Հայաստանի պատմական աշխարհագրութիւն եւ տեղագրութիւն: 2011ին հեղինակած է *Բագրատունեաց Հայաստանի Պետական Կարգը* հատորը: Հեղինակ է շարք մը գիտական յօդուածներու, նուիրուած՝ ԺԸ.–ԺԹ. դարերու Արեւմտեան Հայաստանի վարչատարածքային բաժանումին, առեւտուրին, քաղաքական իրավիճակին, ԺԸ. դարու Ուրֆային, Տրապիզոնին: 2016էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Վարդան Մատթէոսեան **varny1@yahoo.com**
Ծնած է 1964ին, Մոնթէվիտէօ: Ներկայիս կը բնակի Նիւ Ճըրզի: 2005ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկին մէջ: 2010էն կը վարէ Նիւ Եորքի Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդի տնօրէնութիւնը: Հրատարակած է հինգ հայերէն հատորներ, բազմաթիւ գիտական յօդուածներ, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն: Վերջին տպուած հատորն է *Pasado sin Retorno, Futuro que Espera: Los Armenios en la Argentina, Ayer y Hoy* (Անվերադարձ անցեալ, սպասող ապագայ. հայերը Արժանթինի մէջ՝ երէկ եւ այսօր), 2011ին:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սփիւռքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, պատմա-բանասիրական խնդիրներ: 1996էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Թաթուլ Մանասէրեան **tatoulm@gmail.com**
Ծնած է 1960ին, Երեւան: Ուսանած է Քիեւի Պետական եւ Քանատայի Եորք համալսարաններուն մէջ: 1987ին ԵՊՀի մէջ պաշտպանած է թեկնածուական՝ «Միջազգային Արժութային Յարաբերութիւնների Ճգնաժամի Պատճառները» նիւթով, իսկ 2001ին՝ դոկտորական՝ Երեւանի Պետական Տնտեսագիտական Համալսարանին մէջ:
ԵՊՀ դասախօս-փրոֆեսոր է 1998էն: 1991էն կը ղեկավարէ Այլընտրանք Հետազօտական Կեդրոնը, գլխաւոր խմբագիրն է *Այլընտրանք* գիտական

հանդէսին: Գիտական խորհրդատուութիւն կատարած է Շանհայի, Փեքինի, Էնթուլրփի, Քենզըսի, Սան Ֆրանսիսքոյի, Սալենթոյի, Լոնտոնի, Պանքոքի, Սթենֆորտի, Քալիֆորնիոյ համալսարաններուն մէջ: 2009–11 եղած է ՀՀ ազգային ժողովի նախագահի խորհրդական, 2003–7՝ ազգային ժողովի պատգամաւոր, 2001–2՝ Ռազմավարական եւ Ազգային Հետազօտութիւնների Կեդրոնի գիտական ղեկավար, 2000–1՝ ՀՀ արտաքին գործոց նախարարութեան նախարարի խորհրդական, 1998–9՝ ՀՀ նախագահին կից Քաղաքական Խորհուրդի Տնտեսական Ենթայանձնախումբի նախագահ, 1997–8՝ ՀՀ արդիւնաբերութեան եւ առեւտուրի փոխնախարարի պաշտօնակատար:
Հեղինակ է մեծաթիւ յօդուածներու եւ գիրքերու՝ տնտեսական անվտանգութեան, միջազգային նոր տնտեսակարգի, ֆինանսական շուկաներու, պատերազմի տնտեսագիտութեան եւ ռազմարդիւնաբերական համալիրի եւ տնտեսական բնոյթի հիմնախնդիրներու մասին:

Հայկ Մարտիրոսեան **hmartirosian76@gmail.com**
Ծնած է 1976ին, Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքը: 1999ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան Բաժանմունքը:
2006–7 քաղաքագիտութիւն դասաւանդած է Երեւանի Մշակոյթի Համալսարանին, իսկ 2008-12՝ հայոց պատմութիւն՝ Արմաւիրի Արարատ Համալսարանին մէջ: 2018էն գիտաշխատող է ԵՊՀ Սփիւռքագիտութեան Ամբիոնին:
Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն հայոց պատմութեան նոր եւ նորագոյն ժամանակաշրջանը, յատկապէս Հայաստանի Ա. Հանրապետութեան ժամանակաշրջանը:

Վարդան Մխիթարեան **vardan.mkhitaryan.g@gmail.com**
Ծնած է 1961ին, Երեւան: Մասնագիտութեամբ պատմաբան է, աշխարհագրագէտ, քարտիզագիր: Թեկնածուականը պաշտպանած է Երեւան, իսկ դոկտորականը՝ Ֆրանսա:
Աւագ գիտաշխատող է Հայագիտական Հետազօտութիւններու Հիմնարկին մէջ, կը դասաւանդէ ԵՊՀ Աշխարհագրութեան եւ Երկրաբանութեան Բաժանմունքին մէջ: Խմբագիրն ու վարիչը եղած է Հայոց Ցեղասպանութեան Քարտէս ծրագրին: 2018ին լոյս տեսած է իր հերթական ուսումնասիրութիւնը՝ «Պատմական Հետազօտութիւններում Հին Քարտէզների Ուսումնասիրութեան Ժամանակակից Մեթոդները»:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն պատմական աշխարհագրութիւնը եւ քարտիզագրութիւնը, աշխարհագրութիւնը:

Կարէն Մկրտչեան **K86Mkrtchyan@gmail.com**
Ծնած է 1986ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուականը ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկին մէջ:

2012էն կը պաշտօնավարէ ՀՀ Սփիւռքի նախարարութեան մէջ, որպէս համահայկական, միջազգային եւ եկեղեցական կառոյցներու հետ կապերու վարչութեան, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիի եւ այլ հոգեւոր կառոյցներու հետ կապերու բաժնի առաջին կարգի մասնագէտ:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն համաշխարհային նոր համակարգը, ՀՀ–Իրանի ԻՀ քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային յարաբերութիւնները, Իրանի հայ համայնքը, ղարաբաղեան հակամարտութիւնը, Հայոց Ցեղասպանութեան հարցերը: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Հեղինէ Մկրտչեան **heghmk@yahoo.com**
Ծնած է 1959ին, Երեւան: 1981ին աւարտած է Երեւանի Պոլիտեխնիկական Հիմնարկի (ներկայիս՝ Ճարտարագիտական Համալսարան), Հաշուիչ Տեխնիկայի բաժինը: 1994ին հետեւած է Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան Լրագրութեան Միջազգային Հիմնարկի դասընթացքներուն:
1997էն ցայսօր կը պաշտօնավարէ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, նախ իբրեւ Մամլոյ Դիւանի պատասխանատու, տեղեկատուական համակարգի մամուլի պատասխանատու, ապա՝ տեղեկատուական համակարգի խմբագիր: 1996էն հիմնադիր խորհուրդի անդամ է Երեւանի Մամուլի Ազգային Ակումբին: Աշխատակցած է հայկական եւ ոչ-հայալեզու մամուլին:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը: Խմբագրած է զանազան գիրքեր: Իր հրատարակած վերջին ուսումնասիրութիւնը վերնագրուած է «Կանանց Կուսութեան Ուխտի Նորայայտ Կարգ Երուսաղէմի ԺԷ. Դարի Մաշտոցում» (2015):

Ռուզան Մկրտչեան **ruzantrop55@mail.ru**
Ծնած է 1955ին, Երեւան: 1977ին աւարտած է ԵՊՀ Պատմութեան Հիմնարկը, հնագիտութիւն մասնագիտութեամբ: 1988ին պաշտպանած է թեկնածուական՝ Մոսկուայի Պետական Համալսարանին մէջ՝ «ԽՍՀՄ Հարաւեւրոպական Տարածաշրջանի Էնէօլիթեան Բնակչութիւնը» նիւթով:
2006էն դասախօս է ԵՊՀ Պատմութեան Հիմնարկի մշակութաբանութեան ամբիոնին:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հնամարդաբանութիւն, հնագիտութիւն, մշակութաբանութիւն: Հեղինակ է շարք մը գիրքերու, որոնց վերջինը՝ *Մարդու էթոլոգիա, Ուսումնամեթոդական Ուղեցոյց-Ծրագիր* (2016):

Եւա Մնացականեան **MnacakanyanEva@mail.ru**
Ծնած է 1972ին, Աշտարակ: 1998ին պաշտպանած է թեկնածուական ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան Գրականութեան Հիմնարկին մէջ: Այս օրերուն կը պատրաստէ դոկտորականը նոյն հաստատութենէն ներս:

2004էն աւագ գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Գրականութեան Հիմնարկին մէջ, իսկ 2012էն կը պաշտօնավարէ Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀին մէջ: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու, գիտաուսումնական փաթէթներու, գիրքերու, որոնցմէ վերջինն է *Բանավէճերը Գրական Հայերէնի Շուրջ եւ Յովհաննէս Թումանեանը* (2017):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայ գրականութեան հիմնահարցեր, գրականութեան տեսութեան խնդիրներ, ժամանակակից հայոց լեզուի եւ մանկական գրականութեան հիմնախնդիրներ, Թումանեանի կեանքի եւ ստեղծագործութեան տարեգրութիւնը: 2016էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Աստղիկ Մուշեղեան **a.musheghyan@gmail.com**
Ծնած է 1959ին, Երեւան: 2005ին պաշտպանած է թեկնածուական՝ «Համբարձում Չերչեանը եւ Արմաշի Դպրեվանքի Երաժշտական Աւանդոյթները» նիւթով:
1982էն իվեր աւագ գիտաշխատող է Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ: Հեղինակ է գիտական յօդուածներու:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայ միջնադարեան երաժշտութեան պատմութեան ու տեսութեան հիմնախնդիրները, Արմաշի Դպրեվանքի երաժշտական աւանդոյթները, Գրիգոր Խլաթեցիի, Համբարձում Չերչեանի երաժշտական գործունէութիւնը, միջնադարեան հայկական տաղերը եւ վանական երաժշտագիտական աւանդները: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Զաւէն Մսըրլեան
Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ մագիստրականը պաշտպանած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Պատմութեան Բաժանմունքին մէջ: 2003ին ՀՀ ԳԱ Ակադեմիան իրեն շնորհած է Պատուոյ Դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀԳԱԱ Արտասահմանեան Անդամ:
Ասպարէզով կրթական մշակ է: 1960ին սկսած է որպէս ուսուցիչ ծառայել Պէյրութի Հայ Աւետ. Գոլէճէն ներս, ուր 1967–2017՝ վարած է տնօրէնի պաշտօն: 2004էն ատենապետն է Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան Ռիչըրտ եւ Թինա Քարոլան Հրատարակչական Հիմնադրամին:
Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, վերջինը՝ *Armenian Participation in the Lebanese Legislative Elections 1934–2009* (2014): 1971էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Արսէն Շահինեան **a.shaginyan@spbu.ru**
Ծնած է 1975ին, Էջմիածին: Ներկայիս կը բնակի Սանկտ Պետերբուրգ: 2002ին, Ս. Պետերբուրգի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան

Բաժանմունքին մէջ պաշտպանած է թեկնածուականը: 2010ին, նոյն համալսարանին Պատմութեան Բաժանմունքին մէջ հետեւած է յետթեկնածուական դասընթացքներու:
2011էն կը պաշտօնավարէ իբրեւ փրոֆեսոր, Ս. Պետերբուրգի Պետական Համալսարանի Պատմութեան Հիմնարկին մէջ: Հրատարակած վերջին մենագրութիւնն է *Rannesrednevekovaja Geografija Armenii i Stran Južnogo Kavkaza* (Հայաստանի եւ Հարաւային Կովկասի երկիրներու վաղ միջնադարեան աշխարհագրութիւնը, 2014):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Մերձաւոր Արեւելքի եւ Հարաւային Կովկասի երկիրներու վաղ միջնադարեան պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, հայագիտութեան եւ կովկասագիտութեան պատմութիւնը Ս. Պետերբուրգի եւ Ռուսաստանի մէջ: 2010էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Սիպիլ Չեքմէն **sibil.cekmen@gmail.com**
Ծնած է 1983ին, Իսթանպուլ: Կենսաբանութիւն ուսանած է Փարիզի Փիէր եւ Մարի Քիւրի Համալսարանին, սինեմարուեստ՝ Իսթամպուլի Պիլկի Համալսարանին մէջ: Մագիստրականը պաշտպանած է Université Lumière-ի մէջ, Լիոն, սինեմարուեստի մասնագիտութեամբ:
Եղած է թղթակից, մշակութային ծրագրերու համադրող, թարգմանիչ: Ներկայիս կ'ամբողջացնէ դոկտորականը՝ նուիրուած Թուրքիոյ մէջ փաստագրական ֆիլմերու:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն նաեւ հայկական սինեման եւ սահմաններու գաղափարը՝ սինեմարուեստին մէջ:

Տիգրան Պետրոսեանց **tigranhayazn@mail.ru**
1982ին աւարտած է Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ Կուլտուրայի Բաժանմունքի Մատենագիտութեան բաժինը, 2000ին՝ նոյն համալսարանի Հայ Ժողովրդի Պատմութեան ամբիոնի թեկնածուականը, իսկ 2015ին՝ դոկտորականը:
Արցախեան ազատամարտի մասնակից է, մշակութաբան, խմբագիր, ՀՀ բանակի փոխգնդապետ (2000), Տոնի կազակական միաւորման հրամանատար (2013), Մոսկուայի Ազգային Անվտանգութեան Հիմնախնդիրներու Միջազգային Ակադեմիայի *գեներալ-մայոր*:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ԺԲ.–ԺԴ. դարերու հայոց պատմութեան Զաքարեան Հայաստանը, հայ զինուորականութեան պատմութիւնը, հայկական իշխանական զինանշաններ, հայ մշակոյթի կիր դէմքերը, Ապարանի պատմութիւնը:

Կարինէ Ռաֆայէլեան **karine.rafaelyan@mail.ru**
Ծնած է 1964ին, Երեւան: 1985ին աւարտած է Երեւանի Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀի Հայոց Լեզուի եւ Գրականութեան բաժինը:
1994էն Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի մասնաճիւղ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի վարիչն է: 2008էն իբրեւ մշակութային լրագրող կը պաշտօնավարէ «Իրատես» լրատուական ցանցին մէջ: Կազմած, վերծանած, հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է շարք մը երկեր: Հրատարակած է գրականագիտական ուսումնասիրութիւններ:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն գրականագիտութիւն, թանգարանագիտութիւն, մշակութաբանութիւն: 2014էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Ռուբէն Սահակեան **rubensahakyan58@gmail.com**
Ծնած է 1958ին, Երեւան: 2013ին պաշտպանած է դոկտորականը ՀՀ ԳԱ Պատմութեան Հիմնարկին մէջ:
Հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է բազմաթիւ ուսումնասիրական ձեռագրեր, հեղինակ է թարգմանութիւններու, բազմաթիւ գիտական յօդուածներու, մենագրութիւններու, վերջինը՝ *Արեւմտեան Հայաստանի Ռազմաքաղաքական եւ Վարչատնտեսական Իրավիճակը (1914 թ. Յուլիս – 1917 թ. Փետրուար)* (2015):
Գիտական հետաքրքրութիւններու ծիրն է արեւմտահայութեան ցեղասպանութիւնը եւ ինքնապաշտպանական կռիւները, Ա-ԴՕն, արցախահայութիւնը, Վանի Ա. Աշխարհամարտի տարիները, հայոց ոստիկանութեան պատմութիւնը: 2011էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Սվետլանա Սարգսեան **svetlana.sarkisyan@mail.ru**
Ծնած է 1945ին, Թիֆլիս: 1969ին աւարտած է Կոմիտասի անուան Պետական Երաժշտանոցը՝ երաժշտագիտութեան մասնագիտութեամբ: 1975ին պաշտպանած է թեկնածուական՝ Սանկտ Պետերբուրգի Պետական Երաժշտանոցին մէջ «Ի. Դարի 60ականների Հայ Երաժշտութեան Առանձնայատկութիւնները» նիւթով, 1999ին՝ դոկտորականը, Մոսկուայի Պետական Երաժշտանոցին մէջ՝ «Հայ Երաժշտութիւնը Ի. Դարի Համատեքստում» նիւթով:
Կոմիտասի անուան Պետական Երաժշտանոցի Երաժշտութեան Տեսութեան ամբիոնի փրոֆեսոր է, պարգեւատրուած է պետական շքանշաններով: Հեղինակ է մեծաթիւ յօդուածներու, որոնց վերջինը՝ «Տիգրան Մանսուրեան. Ռեքուիէմը Իբրեւ Գաղափար եւ Սեռ» (2018): Ունի նաեւ գիրքեր, որոնց վերջինն է *Դարերու Սահմանին. Երաժշտութիւնը եւ Իր Ոլորտները* (2014):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն արդի համաշխարհային եւ հայկական երաժշտութեան տեսագեղագիտական հիմնախնդիրները:

Լիլիթ Սէյրանեան **nazeliseyranyan@yahoo.com**
Ծնած է Երեւան, 1973ին: 1995ին աւարտած է ԵՊՀ Բանասիրականի, հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը եւ արժանանացած այդ տարուան ԵՊՀ «լաւագոյն շրջանաւարտ» պատուոգրին: 2002ին պաշտպանած է թեկնածուական՝ «Վահան Թէքէեանի Բանաստեղծական Աշխարհը»:
2012էն՝ դոցենտ: 2006էն աւագ գիտաշխատող է ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան Գրականութեան Հիմնարկի նորագոյն շրջանի հայ գրականութեան բաժինին, միաժամանակ 2003էն սկսեալ հայ գրականութիւն կը դասաւանդէ զանազան համալսարաններու մէջ:
Հեղինակ է բանաստեղծական հատորի, համահեղինակ է հայոց լեզուի ուսումնամեթոդական դասագիրքի, եզրաբանական բառարանի, գրականագիտական յօդուածներու ժողովածուի, ունի թարգմանութիւններ, կատարած է խմբագրումներ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն նորագոյն եւ արդի հայրենական եւ սփիւռքահայ գրականութեան պատմութիւն եւ տեսութիւն, արդի գրականագիտական ուղղութիւններ, մշակութաբանութիւն: 2008էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Լիլիթ Սիմոնեան **simonian_lilit@mail.ru**
Ծնած է 1968ին, Երեւան: 1991ին աւարտած է Երեւանի Կոմիտասի անուան Պետական Երաժշտանոցը, 1993ին պաշտպանած է թեկնածուական: 1995–97 ուսանած է ԵՊՀ Հոգեբանութեան ամբիոնը: 2013ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկը՝ «Հայկական Ժողովրդական Տոմար» նիւթով:
2009էն կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմնարկը, իբրեւ ֆոնտապահ, գիտաշխատող: 2007–9՝ ՀՀ մշակոյթի նախարարութեան ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան գլխաւոր մասնագէտ է: Հեղինակ է շարք մը ուսումնասիրութիւններու եւ գիրքերու, որոնց վերջինն է *Ծառ-Ծաղկաքաղիկ* (2017):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ազգագրութիւն, բանագիտութիւն, ժողովրդական երաժշտութիւն, խորհրդանշագիտութիւն, մշակութաբանութիւն, երաժշտական հոգեբանութիւն: 2000էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Յասմիկ Սիմոնեան **hassimonyan89@gmail.com**
Ծնած է 1989ին, Գիւմրի: 2012ին ստացած է մագիստրականը ԵՊՀ Պատմութեան Հիմնարկէն: Ներկայիս կ'աշխատի թեկնածուականին վրայ՝ ԵՊՀ Պատմութեան Հիմնարկին մէջ:

2014էն կը գիտաշխատի «Պատմամշակութային Արգելոց-Թանգարանների եւ Պատմական Միջավայրի Պահպանութեան Ծառայութիւն» ՊՈԱԿի մէջ: Մասնակցած է գիտաժողովներու, դաշտային հետազօտութիւններու եւ պեղումներու:
Համահեղինակ է բազմաթիւ յօդուածներու, որոնց վերջինը՝ «Էթիունի Երկիրը, Կովկասը եւ դաշտային աշխարհը»: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն կենսահնագիտութիւնը, հնամարդաբանութիւնը, հնախտաբանութիւնը եւ հնագիտութիւնը:

Գէորգ Ստեփանեան **sasun-07@mail.ru**
Ծնած է 1966ին, Սիսիան: 1992ին աւարտած է Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀի Պատմութեան եւ Աշխարհագրութեան բաժինը: 1996ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայերի Կոտորածներն ու Ինքնապաշտպանական Մարտերը Նուխի եւ Արէշ Գաւառներում 1918-1920թթ.» նիւթով: 2009ին պաշտպանած է դոկտորական՝ «Բաքուի Նահանգի Հայութիւնը ԺԹ. Դարի Երկրորդ Կէսին եւ Ի. Դարի Սկզբներին» նիւթով: 2013ին ստացած է փրոֆեսորի կոչում:
2008էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ Պատմութեան Հիմնարկի Հայ Գաղթօճախների եւ Սփիւռքի Պատմութեան բաժնին մէջ, զոր կը գլխաւորէ 2016 Դեկտեմբերէն:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Պաքուի եւ Գանձակ-Ելիզաւետպոլի նահանգներու հայութիւնը: Հեղինակած է շարք մը գիրքեր, որոնց վերջինը՝ *Համազասպ Սրուանձտեանց (*2016): 2000էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Անդրանիկ Տագէսեան **adakessian@haigazian.edu.lb**
Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը Ուէյլզի Համալսարանին մէջ:
1993–2016՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2016էն պատասխանատու խմբագիրն է *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին: Անդամ՝ *Հայագիտական Հարցեր* (2014էն) եւ *Ցեղասպանագիտական Հանդէս* (2018) պարբերականներու խմբագրակազմերուն: 2011էն տնօրէնն է Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին: Խմբագրած է տասնեակ մը գիրքեր, որոնց վերջինը՝ *Յորդանանի Հայերը Գիտաժողովի Նիւթերը* (2019), կազմած է շարք մը գիրքեր, որոնց վերջինը՝ *Բարսեղ Կանաչեան (1895-1967). Կեանքի Մը Երաժշտացումը* (2016), ունի մենագրութիւններ, որոնց վերջինը՝ *Լիբանանի Հայօճախը, Գիրք Ա., Համարկումին Խաչուղիները (1920-2005)* (2015):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ

պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Անի Փաշայեան **anipashayan@yahoo.com**
Ծնած է 1967ին, Երեւան: 1994ին աւարտած է ԵՊՀ Բանասիրական Բաժինը: 2008ին պաշտպանած է թեկնածուական՝ «Աղասի Այվազեանի Արձակի Արուեստը» նիւթով:
Ներկայիս վարիչն է Հայ-Ռուսական Համալսարանի Հայոց Լեզուի եւ Գրականութեան Ամբիոնին:

Կրեկոր Փելչինսքի **grzegorz.pelczynski@uwr.edu.pl**
Ծնած է 1962ին, Փոզնան: Ցեղագիտութիւն ուսանած է Փոզնանի Համալսարանը:
Ներկայիս փրոֆեսոր է Վրացլաւի Համալսարանի Ազգագրութեան եւ Մշակութային Մարդաբանութեան Բաժնին մէջ: Վերջերս հրատարակեց փոքր փոքրամասնութեանց եւ այլ նիւթերով խոհագրական հատոր մը:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ազգային փոքրամասնութիւնները, մանաւանդ հայերն ու քարայիմները, նաեւ՝ գրականութեան եւ ֆիլմարուեստի ընկերային եւ մշակութային երեսակները:

Փեթէր Փալ Քրանից **kranitz_peti@hotmail.com**
Ծնած է 1990ին, Պուտափեշթ: 2017ին պաշտպանած է դոկտորականը, պատմութեան մասնագիտութեամբ՝ Pázmány Péter Catholic Universityէն:
Ներկայիս արտասահմանեան լրատուութեան բաժնի խմբագիրն է Media Services and Support Trust Fundի: Հեղինակ է ուսումնասիրութիւններու եւ գիրքերու, որոնց վերջինն է՝ *Hungary in Georgia* (2017):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հունգար ներկայութիւնը Կովկասի մէջ, Հայկական Հարցը միջազգային ատեաններու մէջ, Հայաստանի Ա. Հանրապետութեան տեղը միջազգային ատեաններուն մէջ, ժողովրդագրական խնդիրները, Հայոց Ցեղասպանութիւնը 1920-40 շրջանի հունգար քաղաքական թատրերգութեան մէջ, վերապրողներ, գաղթականներ եւ ապաստան փնտռողներ, Հայոց Ցեղասպանութեան գաղթականներ՝ Հունգարիոյ մէջ: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին:

Աշոտ Փիլիպոսեան **piliposyan@yahoo.com**
Ծնած է 1952ին, Երեւան: 1974ին աւարտած է Խ. Աբովեանի Անուան ՀՊՄՀ Պատմա-աշխարհագրական Հիմնարկի, Պատմութեան եւ Հասարակագիտութեան բաժինը: 1997ին պաշտպանած է թեկնածուական, իսկ 2005ին՝ դոկտորական՝ «Հայկական Լեռնաշխարհը Մերձաւոր Արեւելքի Պատմա-

մշակութային Փոխառնչութիւնների Ոլորտում (մ.թ.ա. III-I հազարամեակներ)» նիւթով:
2007-9՝ «Էրեբունի» թանգարանի տնօրէն: 2015էն դասախօս է Խ. Աբովեանի Անուան ՀՊՄՀի եւ Հայոց Պատմութեան ամբիոնի վարիչ: 2016էն՝ փրոֆեսոր: 2017էն արտասահմանեան անդամ է Գերմանիայի Դաշնութեան "EWAN" Ակադեմիայի, 2016էն՝ Ռուսաստանի Բնական Գիտութիւններու Ակադեմիայի: Հեղինակ է ուսումնասիրութիւններու եւ գիրքերու, որոնց վերջինը՝ *Հին Արեւելքի Շրջանակաւոր Դաստրակով Դաշոյններն ու Սրերը* (1999):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հնագիտութիւն, հայոց պատմութիւն, հնամարդաբանութիւն, Հայաստանի պատմական աշխարհագրութիւն, անուանաբանութիւն, առասպելաբանութիւն, ազգաբանութիւն, հնաժողովրդագրութիւն, կնքագիտութիւն, զինանշանագիտութիւն, պատմական ժամանակագրութիւն, պատմական չափաբանութիւն, էթնոմշակութային կապեր, տոմարագիտութիւն:

ՎՐԻՊԱԿ

*Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼԸ. Հատոր*ին մէջ արձանագրուած են հետեւեալ վրիպակները, որոնց համար մեր աշխատակիցներուն եւ ընթերցողներուն ներողամտութեան կը վստահինք:

Ա.- Միհրան Մինասեանի «Անտիպ Փաստաթուղթեր Քեսապի 1909ի Կոտորածին Մասին» (էջ 655-677) նիւթին պարագային.-

1- Էջ 670ի տախտակը ամբողջութեամբ պէտք է տեղափոխուի էջ 659, «Ցաւ ի սիրտ…» սկզբնատողով նախադասութեամբ սկսող պարբերութենէն անմիջապէս առաջ:

2- 662-670 էջերուն տպուած ցուցակը առանձին փաստաթուղթ է որ չ'առնչուիր նախորդ էջերով տրուած փաստաթուղթին:

էջ 662ի (եւ յաջորդ էջերու) 6րդ եւ 7րդ սիւնակները կը վերաբերին զոհերուն, իսկ 8րդն ու 9րդը՝ վիրաւորներուն:

Բ.- Աստղիկ Մուշեղեանի «Հայոց Հնագոյն Տաղարանը» (էջ 155-180) յօդուածէն դուրս մնացած են «Այսօր Ցնծացէք Եղբարք» (տաղ Առաքելոց, ձայնագրութիւն՝ Նիկողայոս Թաշճեան) եւ «Ի Հանդէս Տօնի» (տաղ Հայրապետաց, ձայնագրութիւն՝ Ն. Թաշճեան) տաղերուն նոթաները, զորս յաջորդող երկու էջերուն վրայ կը հրատարակենք:

Այսօր ցնծացէք, եղբարք

Ծանր. **Largo**



Ի հանդէս տօնի քո

*Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի 38րդ Հատորին Շնորհանդէսը Պէյրութի ...

Աւելի քան քառորդ դարու ամէնամեայ աւանդութեան վերածուած, *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի անխափան լոյս ընծայումը աներկբայ վկայութիւնն է Հայկազեան Համալսարանի ունեցած դերին եւ յանձնառութեան՝ հայ դպրութեան սատարելու ընդհանուր ճիգերուն:

*Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին 38րդ հատորին շնորհանդէսը տեղի ունեցաւ 3 Հոկտեմբեր 2018ի երեկոյեան, Հայկազեան Համալսարանի հանդիսասրահին մէջ: Ներկայ էին Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ Վեր. Մկրտիչ Գարակէօզեան, Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթ-եան, Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Սամուէլ Մկրտչեան եւ համայնքի հետ կապերու կցորդ Դոկտ. Վլադիմիր Պօղոսեան, Լիբանանի հայոց առաջնորդ Նարեկ Արք. Ալէեմէզեանի ներ-կայացուցիչ Տէր Մկրտիչ քահանայ Քէշիշեան, Սուրիոյ հայ աւետարանա-կան համայնաքպետ Վեր. Յ. Սելիմեան, Հեթում Վրդ. Տաղլեան, լիբանա-հայ ե-րեք օրաթերթերու եւ համացանցի լրատուական սպասարկութեան պատասխանատու խմբագիրներ, կրթական, մամլոյ մշակներ եւ բարեկամներ:

Բարիգալուստի խօսքով հանդէս եկաւ *Հանդէս*ի խմբագիր, Հայ Աւետ. Գոլէճի տնօրէն Դոկտ. Արմէն Իւրնէշլեան: Ան արժեւորեց երջանկայիշատակ Հայր Անդրանիկ ծայրագոյն վարդապետ Կոռանեանի 27 տարիներու ծառայութիւնը *Հանդէս*ին՝ իբրեւ խմբագրապետ: Իւրնէշլեան ընդգծեց, որ «*Տարի մը անցաւ արդէն, եւ աշխատանքները չկաղացին, Հանդէսին որակը չփուժեց, կազմը համերաշխ գործեց: Կը նշանակէ, որ վարդապետը իսկապէ՛ս կրցած էր ոչ միայն գլխաւորել, այլեւ՝ ձեւաւորել աշխատանքային կազմ մը, որ առանց իրեն, բայց ի՛ր սկզբունքներով շարունակեց աշխատանքը. փաստը՝ այս հատորը*»: Ապա ան ներկայացուց հատորին բովանդակութիւնը, նշելով որ ան կը բաղկանայ 40 յօդուածներէ, հրապարակումներէ, քննարկումներէ ու հաղորդումներէ: Անդրադառնալով հեղինակներուն, Դոկտ. Իւրնէշլեան մատնանշեց, որ ի հեճուկս հայագիտութեան հանդէպ առկայ պարտուողական կարծիքներու, *Հանդէս*ին 38րդ այս հատորին մէջ 40էն նուազ տարիքի հեղինակներուն թիւը 13 է: Հուսկ, ան եզրափակեց իր խօսքը հաւաստելով, թէ՝ «հակառակ մեզ շրջապատող զանազան ժխտական երեւոյթներու եւ յուսահատութեան մղող ազդակներու, *Հանդէս*ը պիտի շարունակէ իր երթը նոյն յանձնառութեամբ, շնորհիւ համալսարանի ղեկավարութեան նեցուկին ու օժանդակութեան»:

Ապա ելոյթ ունեցաւ *Հանդէս*ի պատասխանատու խմբագիր Դոկտ. Անդրանիկ Տագէսեան: Ան շեշտեց, թէ «*հայ իրականութեան եռեւեփող առօրեային կշռութաւոր դարձած անկայունութեան մէջ*, Հայկազեան Հայագի-

տական Հանդէսը, *լիբանահայ մամուլը, կիրակնօրեայ պատարագն ու պաշտամունքը եւ մեր դպրոցները ունին կշռութաւոր եւ կայուն ներկայութիւն*»: Ան նշելով, որ «*համաշխարհայնացած մեծ պաստառին դիմաց, մեզմէ իւրաքանչիւրը իբրեւ անհատ, յաճախ ալ իբրեւ փոքրաթիւ ազգ՝ մենք զմեզ փոքրուկ կը զգանք*», ընդգծեց, որ «*չենք անդրադառնար, թէ մեզմէ դուրս գտնուող այդ մեծ ամբողջութիւնը կազմող համապատկերը ինքնին բաղկացած է փոքրամասնութիւններէ*»:

Դոկտ. Տագէսեան շեշտեց, որ *Հանդէս*ը պիտի շարունակէ քննականօրէն մօտենալ իր առաքելութեան, «*արժեւորելով իր իւրաքանչիւր նորածինը, ձգտելով աւելի լաւին ու արդիւնաւէտին, գերազանցելով ինքզինք*»:

Եզրափակելով իր խօսքը, Դոկտ. Տագէսեան յայտնեց, որ «*այսօր շուրջ յիսնամեայ իր երթի հզօր տարիքին հասած Հանդէսը, կոփուած տասնամեակներու իր արդիւնքով, ջրդեղուած իւրայատուկ փորձառութեամբ, ներդաշնակուած իր երէց, միջին ու կրտսեր սերունդներու աշխատակիցներու հետազօտութիւններով, առաւել ամրացած իր նորամուտ խմբագիր Տիկ. Սիլվա Փափազեանով, թիկունքաւորուած Հանդէսի ձեռնարկներուն ներկայ գտնուող գիտակից բարեկամներով, ընդհանրապէս իր աշխատանոցին մէջ եւ շուրջ ծաւալած հաղորդականութեամբ, առողջ ժողովրդավարութեամբ ու համախոհական տրամադրութիւններով յառաջացուցած է համանուագ մը, որ իւրայատուկ կոհակներ կ'արձակէ հայ միջավայրին: Հանդէսը դեռ երկար տարիներ պիտի շարունակէ հայր Կոռանեանին եւ այս խմբակին ու համալսարանի նախագահութեան կողմէ խմորուած ու մշակուած իւրօրինակ թարմ լաւաշ մատուցել հայութեան եւ գիտութեան*»:

Շնորհանդէսին իր սրտի խօսքը փոխանցեց դեսպան Պրն. Սամուէլ Մկրտչեան: Մեծարգոյ դեսպանը ողջունելով *Հանդէս*ին հրատարակութիւնը, յայտնեց, թէ հատորը ծանրակշիռ է իր հարուստ բովանդակութեամբ, որով հնարաւորութիւն կը յառաջանայ ծանօթանալու հայ ժողովուրդի մշակութային, պատմական, գրական եւ ազգագրական երեսակներու: Ան յոյս յայտնեց, որ Սփիւռքի մէջ իր նմանը չունեցող *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ը «*մեզ ուրախացնէ, լուսաւորէ եւ մտորումներու առիթ հանդիսանայ դեռ երկար տարիներ*», եւ մաղթեց որ *Հանդէս*ը շարունակէ իր առաքելութիւնը նո՛յն ոգիով եւ նո՛յն նուիրումով:

Շնորհանդէսի եզրափակման իր խօսքը փոխանցեց վերապատուելի Հայտօսթեան, որ հանդիսութիւնը բնութագրեց հետեւեալ խօսքերով. «*Այսպիսի հանդիսութեան մէջ դեր չունին հրավառութիւնն ու արտաքին պերճանքը, բազմութիւններն ու դահլիճներու փայլքը: Հուրի զօրութիւնը գրիչին մէջ է, պերճանքը՝ մտքի պայծառութեան, բազմութիւնը՝ նիւթերու խորքին զանազանութեան, իսկ փայլքը՝ հոգիի անկեղծութեան եւ անոր տարրական պարզութեան մէջ*»:

Վեր. Հայտօսթեան բարձր գնահատելով հայագիտական բնագաւառին մէջ գործող մշակները, ըսաւ. «*Հայագիտութեան նուիրական աշխատանքի*

լծուած անձեր, նամանաւանդ Սփիւռքի մէջ, յաճախ կը զգան թէ արտադրողականութեան կողքին կայ թանկարժէք բան մը պահելու, պահպանելու եւ տակաւին տարածելու լուրջ առաքելութիւնը: Ընդհանրապէս նախանձելի չեն այն ասպարէզները ուր մշակը պէտք է գործէ վայրընթացի մթնոլորտի կամ վտանգուածի հոգեբանութեամբ, եւ փոխանակ մշակութիւն եւ յառաջընթաց կատարելու յամառօրէն խաղայ կղզիացած կալուածի տնտեսի դերը»: Վեր. Հայտօսթեան 1970էն իվեր *Հանդէս*ին իւրայատկութեան ու դերին անդրադարձ կատարելէ ետք ապագայի ծրագրերու եւ յանձնառութեանց առումով մատնանշեց հետեւեալ շարք մը կէտերը.-

- Հայագիտութիւնը դիտել որպէս ապագայի գիտութիւն, զարգացող, ու այլ գիտութիւններու հետ քայլ պահող, եւ այդ բոլորը օգտագործել ամուր հիմքեր գտնելով:

- Ապահովել երիտասարդ սփիւռքահայ ուսումնասիրողներու ներդրումը:

- Պահպանել գիտական մակարդակը եւ շարունակաբար օգտագործել արդի մեթոտներ, լաւագոյնս օգտագործելով թուային աշխարհի հնարաւորութիւնները:

- Զարգացնել հայագիտական հանդէսներու եւ գիտաշխատողներու եւ հայագիտական կեդրոններու միջեւ գործակցութիւնը:

- Լեզուական թէ քերականական հմտութիւններու կորուստին զուգահեռ գծել սահմանները ընդունելիին ու անընդունելիին:

- Հայագիտութիւնը չվերածել գաղափարախօսութեան հարթակի:

- Զանազան լեզուներու օգտագործման իրականութեան մէջ չմոռնալ յատուկ կարեւորութիւնը արեւմտահայերէնին:

Եզրափակելով իր խօսքը, վերապատուելի Հայտօսթեան վերարժեւորեց տարի մը առաջ վախճանած երջանկայիշատակ հայր Անդրանիկ ծայրագոյն վարդապետ Կոռանեանը, եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ անոր շունչով բեղմնաւորուած խմբագրական կազմի պատասխանատու խմբագիր նշանակուած է *Հանդէս*ի երկար տարիներու պատասխանատու քարտուղար՝ Դոկտ. Անդրանիկ Տագէսեանը:

Հուսկ, Վեր. Հայտօսթեան շնորհակալութեան խօսք ուղղեց ներկաներուն իրենց քաջալերական ներկայութեան համար:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ աւանդական կարկանդակի հատում եւ հիւրասիրութիւն:

Հուրի Աթթարեան

...Արցախի

Չորեքշաբթի, 14 Նոյեմբերին, Արցախի Պետական Համալսարանին մէջ, ներկայութեամբ Արցախի կրթութեան, գիտութեան եւ մարմնամարզի նախարար Նարինէ Աղաբալեանի, մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ զբօսաշրջութեան նախարար Լեռնիկ Յովհաննիսեանի, Արցախի Համալսարանի նախագահ Դոկտ. Արմէն Սարգսեանի, Հայկազեան Հա-

մալսարանի նախագահ Վեր. Հայտօսթեանի, *Հանդէս*ի պատասխանատու խմբագիր Դոկտ. Տագէսեանի եւ աշխատակիցներու, Արցախի մտաւորականներու, բանասէրներու, մեծաթիւ ուսանողութեան եւ բարեկամներու տեղի ունեցաւ *Հանդէս*ի 38րդ հատորին շնորհանդէսը:

...Եւ Երեւանի Մէջ

Ուրբաթ, 16 Նոյեմբեր 2018ին, Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Հին Ձեռագիրերու Մատենադարան-Հիմնարկի թանգարանային համալիրի տեսասրահին մէջ տեղի ունեցաւ *Հանդէս*ի 38րդ հատորի շնորհանդէսը, ներկայութեամբ Հայաստանի, Սփիւռքի գիտամշակութային կեանքի կարկառուն ներկայացուցիչներու, *Հանդէս*ի ՀՀ աշխատակիցներու:

Բացման խօսքով հանդէս եկաւ պատասխանատու խմբագիր Դոկտ. Տագէսեան, որ համառօտակի ներկայացուց *Հանդէս*ի խմբագրութեան սահմանումը՝ հայագիտութեան, ընդգծելով որ ան կ'ընդգրկէ հասարակագիտական ուսմունքներու ծաւալուն երանգապնակը: Ան շեշտեց աշխատակիցներու բնակավայրի լայն ծիրն ու տարիքային եւ նիւթի մօտեցումներու այլազանութիւնը, ինչ որ առաւել աշխուժ կը դարձնէ *Հանդէս*ը:

Ողջոյնի իր խօսքին մէջ, Մատենադարանի տնօրէն Վահան Տէր-Ղեւոնդեան կարեւորեց Լիբանանի հայկական համայնքի դերը հայապահպանութեան գործին մէջ, ապա շնորհակալութիւն յայտնեց *Հանդէս*ի նախկին ու ներկայ խմբագիրներուն, խմբագրակազմի աշխատակիցներուն: «*Լիբանանի գաղութը շատ հայաշունչ կեդրոն է: ..Քաղաքացիական պատերազմի տարիներուն Հանդէսը անխափան տպագրելը բաւական դժուար էր, այդուհանդերձ յաջողապէս տպագրուեցաւ: Պէտք է գնահատանքի խօսք ըսել բոլոր նախկին խմբագիրներուն՝ Երուանդ Քասունիին, Անդրանիկ վարդապետ Կոռանեանին եւ ի հարկէ այսօրուան խմբագիրին՝ Անդրանիկ Տագէսեանին, Հայկազեան Համալսարանի ղեկավարութեան եւ հոգաբարձուներու խորհուրդին*»՝ իր խօսքին մէջ ըսաւ Մատենադարանի տնօրէնը:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ նաեւ Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Մակավարժական Համալսարանի Սփիւռք Կեդրոնի տնօրէն, վաստակաւոր գրականագէտ Դոկտ. Սուրէն Դանիէլեանը: Երէց մտաւորականը բարձր գնահատեց *Հանդէս*ին առաքելութիւնը եւ օրինակելի գտաւ անոր շուրջ եւ ետին կանգնող պատկան մարմիններուն յանձնառութիւնը:

Ողջոյնի ու գնահատանքի խօսքով հանդէս եկաւ նաեւ Հայկազեան Համալսարանի նախագահ վերապատուելի Դոկտ. Հայտօսթեան: Ան *Հանդէս*ի գալիք տարիներուն հիմնական խնդիր ու նպատակ նկատեց ե՛ւ անցեալով պարծենալը, ե՛ւ հին ու նոր ասպարէզներու վրայ կեդրոնանալը:

Խօսքի աւարտին, Վեր. Հայտօսթեան Նոյեմբեր 22ի՝ Լիբանանի անկախութեան օրուան առիթով Մատենադարանին նուիրեց Լիբանանի խորհրդանիշ մայրիի ծառի յուշանուէր, որմէ ետք ներկաները ոգեւորութեամբ թերթատեցին *Հանդէս*ի 38րդ հատորը, որ բաղկացած է մօտ 800 էջէ:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայկազեան Հայագիտական Հանդէս (ՀՀՀ) տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն իվեր, Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնին կողմէ:

Ան կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան պատմական, հնագիտական, աշխարհագրական, բանասիրական, կրօնական, լեզուագիտական, գրական, ազգագրական, մշակութային (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի, եւն.), տնտեսագիտական, իմաստասիրական, իրաւագիտական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի նիւթեր:

ՀՀՀն կը հրատարակէ հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն անտիպ գիտական յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, քննարկումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական-մատենագիտական ցանկեր, մահագրականներ, հրատարակուած նիւթերու տարակարծիք ուսումնասիրութիւններ: Բացառիկ պարագաներու ՀՀՀի խմբագրութիւնը իր հայեցողութեամբ նկատի կ'առնէ այլ բնոյթի նիւթեր եւս:

Ներկայացուած յօդուած-ուսումնասիրութիւնները եւ հրապարակումները պարտին ըլլալ նախընտրաբար՝ առաւելագոյնը շուրջ 10,000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), քննարկումները՝ առաւելագոյնը շուրջ 5000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), հաղորդումները՝ առաւելագոյնը 5000 բառ, գրախօսականները՝ 2000 բառ, մահագրականները՝ մինչեւ 1000 բառ, բոլորը՝ համակարգիչի ARMENIAN UNICODE ծրագրի շարուածքով:

Աշխատակցութիւնները պարտին ունենալ.- մուտք/ներածական, բուն նիւթը (ենթավերնագրերով մասնատուած) եւ եզրակացութիւն կառոյցը:

Ծանօթագրութիւնները պարտին ըլլալ հետեւեալ կերպ.-

Մամուլի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն», *մամուլի անուն* եւ տպագրութեան վայր, յօդուածի տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Յօդուածներու ժողովածուի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն»՝ *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Գիրքի պարագային՝ հեղինակ, *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Արխիւային փաստաթուղթերու պարագային՝ փաստաթուղթի հեղինակը, խորագիրը, գտնուած վայրը, թիւը:

Հարցազրոյցներու պարագային՝ մասնակիցներուն անունները եւ թուականը:

Կայքէջի պարագային՝ լրիւ հասցէն եւ թուականը:

Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն հակիրճ ամփոփում մը, շուրջ 150 բառ: Նիւթին պէտք է կցուած ըլլան նաեւ հեղինակային համառօտ ինքնակենսագրականը (ծննդեան թուական, ծննդավայր, բարձրագոյն ուսում, պաշտպանած գիտական բարձրագոյն աստիճանը եւ թեզին նիւթը, հրատարակած գիրքերու եւ նիւթերու ծիրը, վերջին երկու գիրքերուն անունները - թուական-հրատարակչատուն, վայր - ներկայ պաշտօնը եւ նկար մը) եւ ելեկտրոնային հասցէն առ ի հրատարակութիւն:

Հրատարակելի աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին լեզուական խմբագրումի: Այլ փոփոխութիւններ կը համաձայնեցուին հեղինակին հետ: Հայագիր յօդուածները կը հրատարակուին դասական ուղղագրութեամբ: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ լաւորակ պատկերներ, փաստաթուղթեր եւ քարտէզներ, որոնց աղբիւրը եւ հրատարակման արտօնութիւնը ապահովելու է հեղինակը:

Աշխատակցութիւնները կը ներկայացնեն հեղինակին տեսակէտը:

Աշխատակցութեան, թղթակցութեան, բաժանորդագրութեան, հատորներու ստացումի, հրատարակութիւններու փոխանակման եւ այլ հարցերով հաղորդակցիլ հետեւեալ կերպ.-

Dr. Antranik Dakessian
Haigazian Armenological Review
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երկու ամիս ետք:

Հատորի մը գրախօսուիլը փափաքողներ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք պարտին ՀՀՀի խմբագրութեան յղել այդ գիրքէն 2 օրինակ:

ՀՀՀի մէջ հրատարակուած նիւթերէն կարելի է մէջբերել: Հրատարակուած նիւթին հեղինակը կը ստանայ ՀՀՀի տուեալ հատորէն 1 օրինակ եւ իր աշխատակցութենէն 5 առանձնատիպ:

ՀՀՀի հատորները մատչելի են հետեւեալ կայքին վրայ.- http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx

NOTES TO CONTRIBUTORS

Haigazian Armenological Review has been published annually since 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University.

The *Review* is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with history, archaeology geography, philology, religion, linguistics, literature, ethnography, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, philosophy, politics, legal, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, investigative articles, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French. Other sorts of materials might be published at the discretion of the Editorial Board.

Articles submitted to *Haigazian Armenological Review* should preferably be not more than 10,000 words (including the endnotes), for investigative articles and briefings not more than 5000 words, for book reviews not more than 2000 words and for obituaries not more than 1000 words. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published in any language. It is preferred that manuscripts submitted for consideration are on CD with a hard copy.

Manuscripts should have an introduction, the body (with subtitles) and a conclusion. Endnotes should have the following details.-

In case of newspapers/periodicals: author, "title of the article", *name of the newspaper*, place of publication, date and page number.

In case of an article from a book: author, "title of the article", *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of books: author, *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of archival materials: author of the document, "title of the document", name of the document file, place reserved, number, date.

In case of interviews: names of the interviewer and interviewee, date and place.

In case of websites: the title, the address and date accessed.

Submitted manuscripts must include a 150 word summary in Armenian or English and a short biography of the author (birthplace and birth date, higher education, degree, title of the thesis defended, the scope of the books published, the titles of the last two books published – with date and publisher – current position, and a passport size photo).

The editors reserve the right to edit manuscripts to conform to the

review's style and format. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *Haigazian Armenological Review* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P.O.Box111748, Beirut Lebanon.
Fax: (01)341230/31 or (03)712058
Email: adakessian@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Derian Armenological Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *Haigazian Armenological Review*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to 5 offprints and one copy of the volume in which their contribution is published.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the website:
http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական	Յանձնառութիւն, Պահանջ, Երաշխիք	3

ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաթուլ Մանասէրեան	ՀՀ Տարածքների Համաչափ Զարգացումը եւ Տարաբնակեցումը Որպէս Համազգային Առաջնահերթութիւն	9
Լիլիթ Սիմոնեան	Միերի Դուռ. Քրիստոնեայ Ժողովրդի Նախաքրսիտոնէական Սրբավայրը	27
Հենրիկ Բախչինեան	Հայկական Հնագոյն Ժամերգերը եւ Սահակ Պարթեւը	39
Գէորգ Ղազարեան	Կիւրեղ Սկիւթապոլսեցու Տեղեկութիւնները Ե.-Զ. Դարերի Պաղեստինի Հայ Վանականների Մասին	47
Արսէն Շահինեան	Հայոց Հայրապետերի Իրաւասութեան եւ Հովանու Ներքոյ Գտնուող Տարածքները (Է.-Ը. Դարեր)	57
Մարիամ Գրիգորեան	Հայ Ազնուական Կանանց Նուիրատուական Գործունէութիւնն Անիում (Ժ.-ԺԴ. ԴԴ.)	81
Տիգրան Պետրոսեանց	Վաչէ Ա. Վաչուտեան՝ Կողմնակալ-Փոխարքայ (ԺԳ. Դարասկիզբ)	89
Աստղիկ Մուշեղեան	Հայ Երաժշտական Մշակոյթը Վան-Վասպուրականի եւ Մերձակայ Շրջանների Վանքերում (ԺԴ.-ԺԸ. ԴԴ.)	99
Արմէն Հայրապետեան	Դրուագներ Ալեքսանդրապոլի ՀՅԴ Կառոյցի՝ Երկիր Ձինամթերք Փոխադրելու Գործունէութիւնից (ԺՌ. Դարավերջ-Ի. Դարասկիզբ)	119
Եղիկ Ճէրէճեան	Վերստին Կարդալով Ժիրայրի Կենսագրութիւնը (Կարգ մը Վարկածներու Քննութիւն)	135
Սուրէն Դանիէլեան	Թռիչքի Առեղծուածը՝ «Վե՛ր, Աւելի Վե՛ր» (Զօհրապի Ստեղծագործութիւնը)	153
Հերվէ Ժորժըլէն	Հայ Աքսորականի մը Հայեացքը Կիներուն. Երուանդ Օտեանի Յուշերը	183

Ռուբէն Սահակեան	Հայ Ազգային-Ազատագրական Շարժման Անմար Դէմքերից՝ Կոստանդին Համբարձումեան	207
Արտակ Ասատրեան	Սիւնիք-Արցախի Գօտիների Գեղազարդման Ընդհանուր Բնութագիր (Ոճաւորում, Խորհրդիմաստ, Տարբերակներ, Զուգահեռներ, Յարգադրոշմներ)	225
Սվանթէ Լունտկերն	Սքանտինաւ Միսիոնարուհիներու Մասնակցութիւնը Հայասիրական Շարժումին	253
Գէորգ Ստեփանեան	Շամախու եւ Բաքուի Հայ Աւետարանական Համայնքները (Համառօտ Ակնարկ՝ Կազմաւորումից Մինչեւ 1918)	277
Կարինէ Ալեքսանեան	Թուրքական Ժխտողականութիւնը Կովկասում (1917-1918)	289
Եւա Մնացականեան	Թումանեանի Յայտնութիւնը 50ամեակի Յոբելենական Հրապարակումներում	313
Հայկ Մարտիրոսեան	Յովհաննէս Քաջազնունու Գործունէութիւնը Արտասահմանում	333
Վարդան Մատթէոսեան	Միհրան Խայեան՝ Հայաստանի Հանրապետութեան Օդուժի Ռահվիաներէն	353
Փեթէր Փալ Կրանից	Հայկական Հարցին Լուծարումը եւ Ազգերու Լիկային Տագնապը	375
Յասմիկ Եսայեան	Մշակութափոխման Դրսեւորումներ Ֆրեզնոյի Շրջանի Ա. եւ Բ. Սերնդի Հայերի Շրջանում (1900-1930ականներ)	407
Սվետլանա Սարգսեան	Հայ Երաժշտութեան Համարկումին Գործընթացները	417
Լիլիթ Լուսինէ Սէյրանեան	Գորգի Գեղագիտական Կշռոյթը Կեանքի եւ Գրի Զուգահեռներում	433
Կարինէ Ռաֆայէլեան	Հայ Քնարերգութիւնը Խորհրդային Եւ Անկախութեան Շրջանի Ճամփաբաժանին (Դիտարկումներ)	449

Քնարիկ Աբրահամեան	Իգնա Սարըասլանի Բանաստեղծութեան Հորիզոնները	471
Գաղթուհի Հանանեան	Դարձեալ Կ(ը) Եղանակիչի Մասին	485
Եուրի Աւետիսեան	Ժամանակակից Գրական Արեւելահայերէնի Անկանոն Բայերի Ուսումնասիրութիւնը եւ Ուսուցումը	493
Արմենակ Եղիայեան	Իմաստաբանութիւն Ա. (Ա-Հ)	509
Մելինէ Անումեան	Հայոց Ցեղասպանութեան եւ Հայկական Հարցի Թեմաներով 2008-18ին Թուրքիացի Մտաւորականների Ուսումնասիրութիւնները	553
Կրեկոր Փելչինսքի	Հայերը Լեհաստանի Մէջ Ի. Դարուն	571
Տ. Ներսէս Քահանայ	Գնդերէցների Ծառայութիւնը Հայոց Բնակում	587
Կարէն Մկրտչեան	Հայաստանի Հանրապետութիւն-Իրանի Իսլամական Հանրապետութիւն Տնտեսական Յարաբերութիւնները՝ Որպէս Տարածաշրջանի Անվտանգութեան Գործօն	595
Արման Մալոյեան	Օձուն. Թեմի Կազմաւորումը եւ Վանքապատկան Գիւղերի Տեղավայրերը (ԺԸ. Դարի Վերջին Քառորդ-ԻԱ. Դարասկիզբ)	631
Զաւէն Մսըրլեան	Հայոց Մասնակցութիւնը Լիբանանի Նախագահ Միշէլ Աունի (2016-) Նախագահութեան Շրջանի Խորհրդարանական Ընտրութիւններուն	647

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Զաւէն Կնեազեան	Քարաշամբի Գաւաթի Շեփորներուն Առեղծուածին Բացայայտումը	685
Հեղինէ Մկրտչեան	Սուրբ Վայրերում Հայ Եկեղեցու Կուսանոցների Գոյութեան Հարցը	693
Վարդան Մխիթարեան	Տարածաշրջանի Առաջին Ֆրանսերէն Քարտէզի Ստեղծման Աշխահրաքաղաքական Նախադրեալները	703

Յասմիկ Սիմոնեան Ռուզան Մկրտչեան, Աշոտ Փիլիպոսեան	Սեւանի Աւազանի Երկաթէդարեան Խմբային Թաղումների Երեւոյթը	713
Գալիա Դաւիդիովա	Արաքս Գիւղի Էթնօմշակութային Բնութագիրը (Ազգագրական Ակնարկ)	725
Քարլոս Անթառամեան	Ժամանակին Տերսիմի Մէջ. Հայաստանէն Դուրս՝ Վերադա՞րձ Քիւրտիստան	739
Սիպիլ Չեքմէն	*Երկիր*ի Սահմանին Կառչած Յիշողութիւն. *Կարօտ* եւ *Կարճ Հաղորդագրութիւն* Ֆիլմերը	751
Խորէն Գրիգորեան	Մուսալեռցիները «Ղարաբաղցի՞». Նախնիների ԻնքնութԵան Փնտռտուքները՝ 1915ի Ինքնապաշտպանական Մարտերից Յետոյ	763
Եղիա Թաշճեան	Հանքարդիւնաբերութիւն. Այո՞, Թէ՞ Ո՛չ: ՀՀ Յետյեղափոխութեան Տրամախօսութիւն Մը	775
	ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ	
Արծուի Բախչինեան	Եոհան Բլարամբերգի Վկայութիւնները Հայ Ժողովրդի Մասին (1836-1841)	789
Անդրանիկ Տագէսեան	Մատենագիտական Ճշտում մը եւ Տասնչորս Նամակներ Նազարէթ Տաղաւարեանէն Զապէլ Եսայեանին (26 Մարտ 1906--27 Մարտ 1908)	799
Ռիթա Մարիա Գազանճեան Անդրանիկ Տագէսեան	Թլկատինիցիին Վերստին Ծնունդը (Հայր Արսէն Ղազիկեանի եւ Բենիամին Նուրիկեանի Փոխանակած 23 Նամակները. 18 Նոյեմբեր 1925-31 Մարտ 1928)	825
	ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ	
Ա. Փիլիպոսեան	Նոր Պեղումներ Զօրաց Քարեր Հնավայրում	851
	ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ	
Զարուհի Յակոբեան	Կարէն Մաթեւոսեան, Աւետ Աւետիսեան, Արա Զարեան, Քրիստին Լամուրէ, *Դադիվանք. Վերածնուած Հրաշք*	861

Նիքոլաս Քուրէաս	Ժերար Տետէեան, *Հայերը Կիպրոսի մէջ (577-1211) Յուստինիանոս Բ.էն Հիւկ Ա. Լուսինեան*	864
Արծուի Բախչինեան	Համօ Սուքիասեան, Նարինէ Երանոսեան, *Խորհրդային Հայաստանի Երգիծական Մամուլը 1920ական Թուականներին*	870
Հենրիկ Բախչինեան	Յասմիկ Ստեփանեան, *Գէորգ Բամպուքճեան. Կեանքը, Գործը Եւ Ժամանակը (1923-1996)*	875
Յովհաննէս Ալեքսանեան	Արծուի Բախչինեան, *Հայերը Չինաստանում. Հայ-Չինական Պատմամշակութային Առնչութիւնները*	879
Անդրանիկ Տագէսեան	Հիտեմիցու Քուրոքի (խմբ.), *Մարդկային Շարժունակութիւնը եւ Բազմէթնիք Համակեցութիւնը Միջին Արեւելքի Քաղաքային Հասարակայնութեան Մէջ, Հտր. 1 եւ 2. Թեհրան, Հալէպ, Իսթանպուլ եւ Պէյրութ*	884
Համառօտ Կենսագրական Հատորին Աշխատակիցներուն		887
Վրիպակ		906
*Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի ԼԸ. Հատորին Շնորհանդէսները Պէյրութի, Արցախի եւ Երեւանի Մէջ		909
Աշխատակիցներու Ուշադրութեան		913
Բովանդակութիւն		917

Table of Contents

Editorial	Commitment, Demands, Guarantees	6

Articles

Tatoul Manaserian	The Asymmetric Development of the Republic of Armenia Districts: A National Challenge	9
Lilit Simonian	Mher's Door: The Prechristian Sanctuary of the Christian Folk	27
Henrik Bakhchinyan	Armenian Ancient Breviary Chants and Sahak Partev	39
Gevorg Kazaryan	The Testimonies of Cyril of Scythopolis about Armenian Monks in Palestine (V-VI centuries)	47
Arsen K. Shahinyan	The Territorial Jurisdiction and Protectorate of the Armenian Catholicoi in Arab Armīnīya in the 7th-8th Centuries	57
Mariam Grigoryan	The Charitable Activities of the Armenian Noblewomen of Ani in the 10th-14th Centuries	81
Tigran Petrosyants	Viceroyal Vatche Vatchoutian I (Early 13th Century)	89
Astghik Musheghyan	Armenian Music Culture in the Monasteries of Van-Vaspurakan and Nearby Regions (14th-18th Centuries)	99
Armen Hayrapetyan	The Activities of the Alexandropol ARF Branch in Ammunition Acquisition and Transportation to Western Armenia (Late 19th-Early 20th Centuries)	119
Yeghia Jerejian	Rereading Jirayr's Biography (Examining a Number of Hypotheses)	135
Souren Tanielian	The Enigma of the Flight: "Up and Further up" (Zohrab's Literature)	153

Hervé Georgelin	An Armenian Male Deportee's Vision of Women: Yervant Odian's Memories	183
Ruben Sahakian	Gosdantin Hampartsoumian: An Armenian National Liberation Movement Figure	207
Ardag Atasatryan	General Overview of the Silver Belts of Sunik- Artsakh (Style, Symbols, Variations, Parallels, Stamps)	225
Svante Lundgren	Scandinavian Women Missionaries as Part of the Armenophile Movement	253
Gevorg Stepanyan	An Overview of the History of the Armenian Evangelical Communities of Shamakha and Baku (From their Inception till 1918)	277
Kasrine Alexanian	Turkish Denialism in the Caucasus (1917-1918)	289
Eva Mnatsakanyan	Assessing Toumanyan's Literary Works on His 50th Birthday (1919)	313
Haig Martirosian	The Fund-Raising and Economic Negotiations Abroad of Hovhannes Kajaznuni	333
Vartan Matiossian	Mihran Khayan: A Pioneer of the Armenian Air Force	353
Péter Pál Kránitz	The Dissolution of the Armenian Question and The Crisis of the League of Nations	375
Hasmik Yesayan	Expressions of Acculturation in the Fresno Area Among First and Second Generation Armenians (1900-1930s)	407
Svetlana Sarkisyan	Processes of Integration in Armenian Music	417
Lilit-Lusine Seyranyan	The Aesthetic Rhythm of the Carpet in Parallel with Life and Writing	433
Karine Rafaelyan	Armenian Poetry at the Soviet/Independence Crossroads	449
Knarig Aprahamian	The Poetic Horizon of Igna Sariaslan	471

Kaghtuhi Hananian	The Modal Suffix Կը Revisited	485
Yuri Avetisyan	The Study and Tutoring of the Irregular Verbs in Current Eastern Armenian	493
Armenag Yeghiayan	Semasiology I. (A-H)	509
Meline Anumyan	Books about the Armenian Genocide and the Armenian Question Published by Scholars in Turkey Between 2008 and 2018	553
Grzegorz Pełczyński	Armenians in Poland in the 20th century	571
Fr. Nerses Asryan	The Service of Clerics in the Armenian Army	587
Karen Mkrtchyan	Economic Relations Between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran as a Factor in Security in the Region	595
Arman Maloyan	The Diocese of Odzun: The Formation and Topography of its Property Villages (From the Late 18th Century to Modern Times)	631
Zaven Messerlian	Armenian Participation in the Legislative Elections During the Presidency of Michel Aoun (2016-)	647

Investigative Articles

Zaven Kinasian	Resolving the Enigma of the Karashamp Horns	685
Heghine Mkrtchyan	The Likelihood oF Female Armenian Church Convents in the Holy Land	693
Vardan Mkhitaryan	The First French Map of the Caucasus and Related Geopolitical Considerations	703
Hasmik Simonyan, Ruzan Mkrtchyan, Ashod Pilibosyan	The Phenomenon of Collective Burials in the Vicinity of Lake Sevan during the Iron Age	713
Galya Davidova	Arax Village: An Ethnocultural Description	725
Carlos Antaramián	Once Upon A Time in Dersim Out of Armenia, back to Kurdistan?	739

Sibil Çekmen	Mémoire Coincée à la Frontière de *Yerkir: Karot (*Yearning*)* et *Kartch Haghgordagrutyun (*Short Message*)*	751
Khoren Grigorian	Did the Musaler Population Originate from Artsakh? Looking for the Identity of Ancestors After the 1915 Self Defense	763
Yeghia Tashjian	To Mine or Not to Mine? A Post-Revolutionary Debate on Mining in Armenia	775
	Unpublished Documents	
Artsvi Bakhchinyan	Johann Blaramberg's Accounts of the Armenians (1836-1841)	789
Antranik Dakessian	A Bibliographic Correction and 14 Leters from Nazareth Daghavarian to Zabel Yessayan (March 26, 1906--March 27, 1908)	799
Rita Maria Kazandjian Antranik Dakessian	The Rebirth of Telgadintsi: 23 Letters Exchanged between Peniamin Nourigian and Father Arsen Ghazigian (18 November 1925--31 March 1928)	825
	Briefings	
Ashot Pilibosyan	New Excavations at Zorats Karer	851
	Book Reviews	
Zaruhi Hakobyan	Karen Matevossian, Avet Avetissian, Ara Zarian, Christine Lamouré, *Dadivank: A Reborn Miracle*	861
Nicholas Coureas	Gerard Dedeyan, *Les Armeniens en Chypre (577-1211) de Justin II À Hugues 1er de Lusignan*	864
Artsvi Bakhchinyan	Hamo Sukiasyan, Nariné Yeranosian, *The Soviet Armenian Sarcastical Newspapers in the 1920s*	870
Henrik Bakhchinyan	Hasmik Stepanyan, *Gevorg Bampukchyan: His Life, Work and Time (1923-1996)*	875
Hovhannes Alexanian	Artsvi Bakhchinyan, *The Armenians in China: Armenian-Chinese Historicocultural Connections*	879

Antranik Dakessian Hidemitsu Kuroki (ed.), *Human Mobility and Multiethnic Coexistence in Middle Eastern Urban Societies 1 and 2: Tehran, Aleppo, Istanbul, and Beirut* 884

Brief Biographical Notes on the Contributors of this Volume 887

Errata 906

The Launching of the 38th Volume of the *Haigazian Armenological Review* in Beirut, in Artsakh and in Yerevan 909

Note to Contributors 913

Table of Contents 917

Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԹ
Տպաքանակ՝ 250
Գին՝ Լիբանան 30,000L. Ոսկի
Արտասահման 30 Տոլար
Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.

هايكازيان: مجلة الدراسات الارمنية, مجلد 39
مطبعة روحانا شمالي, درعون.

Haigazian Armenological Review, Vol. 38
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb